

ՄԵԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒ ԻՐ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՎ
ՍԱՏԱՆԱՅԻ ՈՒ ԻՐ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ
ՄԻՋԵՎ

Էլեն Ուայթ



ԵՐԵՎԱՆ
2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կենսասպասկան համառոտ ակնարկ.....	3
Նախաբան	4
1. ԱՐՈՒՄՅԱԿԻ ԱՆԿՈՒՄԸ.....	7
2. ՄԱՐԴՈՒ ԱՆԿՈՒՄԸ.....	9
3. ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ.....	11
4. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԳԱՆՈՒՄԸ.....	15
5. ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ.....	20
6. ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.....	24
7. ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆԸ.....	27
8. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԿԱՏԱՄԲ.....	31
9. ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԸ.....	37
10. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	42
11. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ.....	51
12. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ.....	53
13. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՄԱՀԸ.....	58
14. ՄԱՎՈՒԴԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	60
15. ՀՐԵԱՆԵՐԸ ՈՐՈՇՈՒՄ ԵՆ ՍՊԱՆԵԼ ՊՈԴՈՍԻՆ.....	62
16. ՊՈԴՈՍՆ ԱՅՑԵԼՈՒՄ Է ԵՐՈՒՄԱՂԵՄ.....	66
17. ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ.....	70
18. ԱՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ.....	74
19. ՄԱՀ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՏԱՆՁԱՆՔ.....	78
20. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ.....	83
21. ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ.....	87
22. ՈՒԻԼՅԱՄ ՄԻԼԼԵՐ.....	90
23. ԱՌԱՋԻՆ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ.....	93
24. ԵՐԿՐՈՐԴ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ.....	98
25. ԱԴՎԵՆՏԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԵՄԻԼԸ.....	101
26. ԱՅԼ ՏԵՄԻԼՔ.....	106
27. ՍՐԲԱՐԱՆ.....	111

28. ԵՐՐՈՐԴ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ.....	114
29. ԱՄՈՒՐ ՀԱՐԹԱԿ.....	119
30. ՈԳԵՀԱՐՅՈՒԹՅՈՒՆ.....	123
31. ԸՆՉԱՔԱՂՅՈՒԹՅՈՒՆ.....	127
32. ՄԱՂՈՒՄ.....	130
33. ԲԱԲԵԼՈՆԻ ՄԵՂՔԵՐԸ.....	134
34. ԲԱՐՁՐ ԱՂԱՂԱԿ.....	137
35. ԵՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է.....	140
36. ՀԱԿՈՔԻ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ.....	143
37. ՍՈՒՐԲԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ.....	146
38. ՍՈՒՐԲԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ.....	149
39. ԱՄԱՅԱՅԱԾ ԵՐԿԻՐԸ.....	151
40. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	153
41. ԵՐԿՐՈՐԴ ՄԱՀԸ.....	156

Կենսագրական համառոտ ակնարկ

Էլեն Ուայթ (1827-1915)

Մինչ 17 տարեկանը Հիսուս Քրիստոսի նվիրյալ հետևորդ Էլենը մեթոդիստ էր: 1843 թվականին նա եկեղեցուց վտարվեց՝ Քրիստոսի մոտալուտ գալստյանը հավատալու և այդ մասին խոսելու համար: Աստված տեսիլները և լուրն աշխարհին տարածելու առաքելությունը նրան վստահեց միայն այն քանից հետո, երբ երկու այլ անձինք հրաժարվեցին այդ պատասխանատու հանձնարարությունից: Նա գրել է խորհուրդներով և խրատներով լի բազմաթիվ հոդվածներ ու գրքեր: Առողջ կենսակերպի մասին պատգամը ստանալուց հետո նա դարձավ առողջության համոզված ջատագով՝ կոչ անելով օգտագործել Նդեմի պարտեզում ի սկզբանե տրված սննդակարգին նման սննդակարգ՝ գերծ մնալով վնասակար մթերքներից և բոլոր հարցերում զսպվածություն դրսևորելով:

Տիկին Ուայթը երբեք իրեն «մարգարե» չի համարել՝ թեև խնդիր չի ունեցել այն մարդկանց հետ, ովքեր իրեն այդպես են կոչել: Սակայն երբ նրան հարցնում էին այդ մասին, նա ինքն իրեն «լրաբեր» էր կոչում: Այդ պատասխանով նա ցույց էր տալիս, որ իր աշխատանքն ավելի շատ հիմնված է մեղքից ապաշխարության դրողի և ի նպաստ, այսպես կոչված, «խզումը վերականգնող» շարժման՝ առողջ կենսակերպի բարենորոգման վրա, քան այն առաքելության, ինչին կոչված էր մարգարեն, այն է՝ ապագա իրադարձությունների մասին Աստծո տեսանկյունից պատմելը: Նրա գրչին են պատկանում կրոնական դասական գրականության մի քանի ստեղծագործություններ, և նրանցից առավել հանրաճանաչ՝ «Քայլեր դեպի Քրիստոս» գիրքը: Սակայն, Ուայթի կարծիքով, այս գիրքը, որ կոչվում է «Մեծ հակամարտություն Քրիստոսի ու Իր հրեշտակների և սատանայի ու իր հրեշտակների միջև», իր գրքերից կարևորագույնն է:

Նախաբան

«Օրենքին ու վկայությանը դիմեք, եթե նրանք չխոսեն այս խոսքի համեմատ, նրանք արշալույս չունեն» (Եսայիա 8.20):

Այսօր՝ 21-րդ դարի սկզբին, թվում է՝ յուրաքանչյուրը սկսել է իրեն մարգարե անվանել: Նույնիսկ համացանցում կան մարգարեական կայքեր: Սակայն դրանցից շատերի կանխագուշակությունները բավականաչափ զարմանալի են: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ նրանք իրականում այնպիսին են, ինչպես իրենց անվանում են՝ Աստծո Խոսքի ազդարարներ: Պետք է համեմատել օրենքի և վկայության հետ: Հիրավի, Աստված, ով անցյալում տվել է այս խոսքերը և գրի առել դրանք (որոնք հետագայում դարձան Աստվածաշնչի գրքեր), Ինքն Իրեն չի հակասի:

Հիսուսն ուղղակիորեն մարգարեացավ այդ մասին՝ նախապես իմանալով, որ մարգարեության խնդիրը մեծ փորձություն կլինի վերջին օրերում. «Եվ շատ սուտ մարգարեներ դուրս կգան և շատերին կմոլորեցնեն» (Մատթեոս 24.11): Առավել հստակ շեշտադրության համար Աստված այս խոսքերը տվեց Հովհաննեսին. «Միրելիներ, ամեն մի հոգու մի՛ հավատացեք, այլ փորձեք հոգիները, թե արդյոք Աստծո՞ւց են. որովհետև շատ սուտ մարգարեներ են դուրս եկել աշխարհ» (Ա Հովհաննես 4.1): Իհարկե, Էլեն Ուայթը բացառություն չէ: Վերցրեք այս գիրքը և համեմատեք Սուրբ Գրքի հետ՝ համապատասխանո՞ւմ է, թե՞ ոչ: Աղոթենք մեր երկնային ողորմած Հորը, և Նա Իր Հոգին կողարկի՝ առաջնորդելու մեզ Իր ճշմարտության մեջ:

Թվում է՝ այժմ դժվար է հավատալ, սակայն մինչ 20-րդ դարի վերջին տարիները գրեթե բոլոր նրանք, ովքեր իրենց «քրիստոնյա» էին համարում, թշնամաբար էին վերաբերվում յուրաքանչյուրի նկատմամբ, ով պնդում էր, թե ունի Աստծո հայտնությունը: Իրենց տեսակետը հաստատելու համար նրանք սովորաբար մեջբերում էին

Հայտնություն 22.18,19-ը. «Որովհետև ես վկայում եմ ամենին, որ լսում է այս գրքի մարգարեության խոսքերը. եթե մեկը բան ավելացնի սրանց վրա, Աստված կավելացնի նրա վրա այն պատուհասները, որ այս գրքում գրված են: Եվ եթե մեկն այս գրքի մարգարեության խոսքերից բան պակասեցնի, Աստված կպակասեցնի նրա բաժինը կյանքի գրքից, և սուրբ քաղաքից, և այս գրքում գրվածներից»:

Սակայն մի՞թե սա վկայում է, թե Հովհաննեսի մահից հետո Աստծո մարգարեներ այլևս չեն լինի: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ Հիսուսը մեզ նախագուշացրեց «սուտ» մարգարեների մասին: Ինչո՞ւ Սուրբ Հոգին Հովհաննեսի միջոցով ասաց, որ ստուգենք մարգարեներին: Մի՞թե ավելի հեշտ չէր լինի, եթե մենք Հովհաննեսից հետո պարզապես մերժեինք բոլոր նրանց, ովքեր պնդում էին, թե ունեն Աստծո Խոսքը: Բայց դա չէ Աստծո ծրագիրը: Նա տալիս է նոր ճշմարտություն, եթե այն անհրաժեշտ է, և հայտնում էր կամքը, որպեսզի սրտով մաքուրները տեսնեն, որ դա է ճշմարտությունը, այնուհետև ուրախությամբ ընդունեն և հետևեն դրան: Իհարկե, սատանային նույնպես թույլ է տրված գործել: Եթե նրան արգելեին, նա կարող էր Աստծուն մեղադրել անարդարության մեջ:

Սուրբ Հոգին Պողոսի միջոցով Ա Կորնթացիս 12-րդ գլխում տալիս է շատ կարևոր և հաճախ չբացահայտված հարցեր: Մի՞թե ամենքն առաքյալներ են: Մի՞թե ամենքը մարգարեներ են: Մի՞թե ամենքը զորություններ անող են: Մի՞թե ամենքը բժշկության պարզև ունեն: Մի՞թե ամենքը լեզուներով են խոսում: Այնուհետև նա հայտարարում է, որ ցույց կտա «ավելի գերազանց ճանապարհ»՝ ասելով, որ այս բոլոր պարզևներն անօգուտ են մեզ համար, եթե չունենք ՍԵՐ: 14-րդ գլխում մեկ քայլ առաջ գնալով՝ Պողոսն ասում է. «Միրուն հետևեք, և հոգևոր պարզևներին նախանձավոր եղեք, և մանավանդ, որ մարգարեանաք»:
«Ուրեմն, եղբայրներ, ջանք արեք, որ մարգարեանաք, և լեզուներով խոսելը մի՛ արգելեք»:
«Հոգին մի՛ հանգցնեք: Մարգարեությունները մի՛ անարգեք: Ամեն բան փորձեք, բարին ամուր բռնեք» Ա Թեսաղոնիկեցիս 5.19-21:

«Մեծ պայքարի» տեսիլքը էլեն Ուայթին տրվել է 1858 թ. գարնանը ԱՄՆ-ի Օհայո նահանգում՝ Լովետա Գ-րովում: Դրա հետ կապած շատ բան նա տեսել էր ավելի քան 11 տարի առաջ, սակայն այս անգամ նրան հանձնարարվեց գրի առնել այդ ամենը, չնայած սատանան պետք է մեծ ջանքեր գործադրեր՝ խոչընդոտելու դրան: Որոշ մաս՝

հատկապես 30-րդ գլուխը, հրատարակվել է 1847 թ.՝ «Փոքր հոտ», 1851 թ.՝ «Քրիստոնեական փորձառություններ և տեսիլքներ», և 1854 թ.՝ «Հավելված» գրքույկներում: Այդ ամենը ներշնչվել է Սուրբ Հոգու կողմից, գրի առնվել փխրուն, սակայն աստվածավախ կնոջ կողմից, և առաջին անգամ տպագրվել 1858 թվականին:

Շատերը հարցնում են, թե ինչու այդքան խնդիրներ կան՝ կապված պատերազմների, հանցագործությունների, անբարոյականության և նույնիսկ կրոնական հավատալիքների հետ: Այս հարցերի պատասխանի հիմքը կարող ենք գտնել՝ հասկանալով Քրիստոսի և սատանայի միջև առկա մեծագույն հակամարտությունը, որը սկիզբ է առել մինչև մարդու արարումը:

Թող Աստված հեղի Իր լավագույն պարզները Քեզ վրա, Ընթերցող, քանզի Աստծո Խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով «Դու ստուգում ես այն ամենը», ինչ գրված է այս գրքում:

ԱՐՈՒՍՅԱԿԻ ԱՆԿՈՒՄԸ

Աստված ինձ ցույց տվեց, որ Արուսյակն առաջինն էր ծածկող քերովբեների մեջ՝ սուրբ և անարատ: Նրա դեմքի արտահայտությունը հանդարտ էր և երջանիկ՝ այլ հրեշտակների նման: Նրա ճակատը բարձր էր և լայն, ինչը ապացույց էր հանճարեղ մտքի: Նրա կազմվածքը կատարյալ էր: Նա ուներ վսեմ և մեծափառ վարքագիծ: Եվ ես տեսա, երբ Աստված ասաց Իր Որդուն. «Մեր պատկերով մարդ ստեղծենք», Արուսյակը նախանձեց Հիսուսին: Նա ցանկանում էր, որպեսզի մարդու արարման հետ կապված հարցերով խորհրդակցեի նաև իր հետ: Նա լցված էր նախանձով, խանդով և ատելությամբ: Նա ցանկանում էր Հայր Աստծուց հետո ամենաբարձրը լինել երկնքում և մեծ պատվի արժանանալ: Մինչ այդ պահը երկնքում տիրում էր կարգուկանոն, ներդաշնակություն և լիակատար հնազանդություն Աստծո կառավարման նկատմամբ:

Աստծո կառավարման և Նրա կամքի դեմ ըմբոստանալն ամենամեծ մեղքն էր: Թվում էր՝ ողջ երկինքը ալեկոծվել է: Հրեշտակները միավորվել էին խմբերով՝ յուրաքանչյուր խումբ իր ղեկավար հրեշտակի շուրջը: Բոլոր հրեշտակները հուզված էին: Արուսյակն ըմբոստացել էր Աստծո կառավարման դեմ՝ փառասիրությամբ մեծարելով իր անձը և չցանկանալով ենթարկվել Հիսուսի իշխանությանը: Հրեշտակների մի մասը կողմ էր Արուսյակին ըմբոստության հարցում, իսկ մյուսները վճռականորեն պայքարում էին Աստծո պատվի, իմաստության և Նրա Որդու իշխանության համար: Եվ հրեշտակների միջև տարածայնություն ծագեց: Սատանան և իր հետևորդները, ովքեր ձգտում էին հեղափոխել Աստծո իշխանությունը, ցանկանում էին ստանալ Նրա անհասանելի իմաստությունը՝ հասկանալու Հիսուսի փառահեղության պատճառը և նույնպիսի անսահմանափակ իշխանություն ապահովել:

լու Արուսյակի համար: Նրանք ըմբոստացան Աստծո Որդու իշխանության դեմ, և բոլոր հրեշտակները հավաքվեցին Հոր առջև, որպեսզի լուծեն այդ խնդիրը: Եվ որոշվեց, որ Արուսյակը պետք է վտարվի երկնքից, նրան միացած հրեշտակները նույնպես պետք է վտարվեին նրա հետ: Այդժամ պատերազմ տեղի ունեցավ երկնքում: Հրեշտակները մասնակցում էին պատերազմին. սատանան ցանկանում էր հաղթել Աստծո Որդուն և նրանց, ովքեր հնազանդվել էին Նրա կամքին: Սակայն բարի և ճշմարիտ հրեշտակները հաղթանակ տարան, և սատանան իր հետևորդների հետ վտարվեց երկնքից:

Երբ սատանան իր հետևորդների հետ ընկավ երկնքից, գիտակցեց, որ հավերժ կորցրել է իր ողջ անապականությունը և երկնքի փառքը: Այդժամ նա զոջաց և ցանկացավ նորից վերականգնել իր դիրքը երկնքում: Սակայն չէր կարելի երկինքը վտանգի ենթարկել: Այն կարող էր նորից գրավվել նրա կողմից. չէ՞ որ նա սկզբնավորեց մեղքը, և ապստամբության սերմերը նրա ներսում էին: Սատանան գտավ հետևորդներ՝ համակիրներ: Նա և իր հետևորդները գոյում էին, արտասպում և խնդրում վերադառնալ հետ և կրկին գտնել Աստծո բարեհաճությունը: Սակայն նրանց մեղքը, ատելությունը, նախանձը և խանդն այնքան մեծ էին, որ Աստված չէր կարող ծածկել դրանք: Նրանք պետք է մնային և վերջնական պատիժ կրեին:

Երբ սատանան լիովին գիտակցեց, որ հնարավորություն չունի նորից ընդունվել և ստանալ Աստծո բարեհաճությունը, սկսեց դրսևորել իր հանցագործ մտադրությունները և ատելությունը: Նա խորհրդակցեց իր հրեշտակների հետ և հղացավ ծրագիր՝ շարունակելու գործել Աստծո ղեկավարման դեմ: Երբ Ադամն ու Եվան բնակվեցին Եդեմում, սատանան կազմեց նրանց ոչնչացման ծրագիրը: Խորհրդակցություն անցկացվեց բոլոր չար հրեշտակների հետ: Այդ երջանիկ գույգը չէր կարող զրկվել ուրախությունից, քանի դեռ հնազանդվում էր Աստծուն: Սատանան ի գործու չէր հրամայել նրանց, քանի դեռ նրանք անհնազանդություն չէին ցուցաբերել Աստծո նկատմամբ և չէին զրկվել Նրա հովանավորությունից: Նրանք ինչ-որ ծրագիր պետք է մշակեին՝ այդ գույգին դրդելու անհնազանդության, ինչը կտրտմեցներ Աստծուն: Արդյունքում Ադամն ու Եվան կընկնեին նրանց ազդեցության տակ: Որոշվեց, որ սատանան կընդունի այլ տեսք և կշարժի մարդու հետաքրքրությունը: Նա պետք է Աստծո դեմ անվստահություն սերմաներ, կասկած առաջացներ Աստծո խոսքերի նկատմամբ, նաև

հարուցել նրանց հետաքրքրությունը՝ բացահայտելու Աստծո ան-
քննելի մտադրությունները:

Տե՛ս Եսայիա 14.12-20, Եզեկիել 28.1-19, Հայրնություն 12.7-9

ՄԱՐԳՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Ես տեսա, որ սուրբ հրեշտակները հաճախ էին այցելում Եդեմի պարտեզ և սովորեցնում Ադամին ու Եվային իրենց գործը, նաև տեղեկացնում սատանայի ըմբոստության և նրա անկման մասին: Հրեշտակները նախագուշացնում էին նրանց սատանայի մասին և հորդորում չհեռանալ միմյանցից, քանզի, հակառակ դեպքում, կարող էին հանդիպել այդ անկյալ արարածին: Հրեշտակները պատվիրում էին ուղղակիորեն հետևել Աստծուց իրենց տրված պատվերներին, քանի որ բացարձակ հնազանդության պայմաններում նրանք անվտանգ կլինեին և անկյալ թշնամին ոչ մի իշխանություն չէր ունենա նրանց վրա:

Սատանան իր աշխատանքը սկսեց Եվայի հետ նրա անհնազանդության պատճառով: Սկզբում նա հեռացավ իր ամուսնուց, այնուհետև ուշացավ արգելված ծառի մոտ, իսկ հետո լսեց փորձության ենթարկողի ձայնը և նույնիսկ համարձակվեց կասկածել Աստծո խոսքերին. «Նրանից կերած օրդ մահով պիտի մեռնես»: Նա կարծում էր. «Գուցե դա այն չէ, ինչ Աստված նկատի ուներ»: Նա հանդգնեց չհնազանդվել. մեկնեց իր ձեռքը, վերցրեց պտուղը և կերավ այն: Այն հաճելի տեսք ուներ և հրաշալի համ: Նրա սրտին տիրել էր նախանձը, որ Աստված արգելել էր մի բան, ինչ իրականում լավն էր: Եվան պտուղն առաջարկեց իր ամուսնուն՝ այդպիսով գայթակղելով վերջինիս: Նա Ադամին պատմեց ամենը, ինչ ասել էր օձը, և իր զարմանքն արտահայտեց թե ինչպես օձը կարող էր խոսել:

Ես տեսա, որ տխրություն հայտնվեց Ադամի դեմքին: Նա վախեցավ և ապշեց: Նրա ներսում, կարծես, պայքար էր տեղի ունենում: Ադամը վստահ էր, որ դա այն թշնամին է, որի մասին նախագուշացրել էին իրենց, և որ իր կինը պետք է մեռնի: Նրանք կբաժանվեն:

Եվայի նկատմամբ նրա սերն ամուր էր: Եվ հուսահատության մեջ նա որոշեց կիսել կնոջ ճակատագիրը: Նա խլեց պտուղը և արագորեն կերավ այն: Այդժամ սատանան ցնծում էր: Երբ նա ըմբոստացավ երկնքում, այնտեղ կային արարածներ, ովքեր համակրում էին նրան և միացան նրա ապստամբությանը: Նա ընկավ և մյուսներին էլ ստիպեց ընկնել իր հետ միասին: Եվ այժմ Ադամը գալթակողեց կնոջը՝ չվստահել Աստծուն, ձեռք բերել Նրա իմաստությունը և ներթափանցել Նրա իմաստուն ծրագրերի մեջ: Սատանան գիտեր, որ կինը միայնակ չի մեղանչի: Եվայի նկատմամբ սիրուց դրդված՝ Ադամը չինազանդվեց Աստծո պատվերին և ընկավ նրա հետ միասին:

Մարդու անկման լուրը տարածվեց ողջ երկնքում: Լռեցին բոլոր տավիղները: Հրեշտակները տրամությանը իրենց գլուխներից նետեցին պսակները: Ողջ երկինքն անհանգստացած էր: Հրավիրվեց խորհուրդ՝ որոշելու, թե ինչպես պետք է վարվել մեղավոր զույգի հետ: Հրեշտակները վախենում էին, որ նրանք կմեկնեն իրենց ձեռքը և կուտեն կյանքի ծառից և կդառնան անմահ մեղավորներ: Սակայն Աստված ասաց, որ կվտարի նրանց պարտեզից: Հրեշտակներն անհապաղ ուղարկվեցին պահպանելու դեպի կյանքի ծառը տանող ճանապարհը: Համաձայն սատանայի ծրագրի Ադամն ու Եվան պետք է անհնազանդություն դրսևորեին Աստծո հանդեպ, մերժվեին Նրանից, այնուհետև իրենց ձեռքը պետք է մեկնեին դեպի կյանքի ծառը, ուտեին նրա պտղից և հավերժ ապրեին մեղքի ու անհնազանդության մեջ. այդպիսով, մեղքը կդառնար հավիտենական: Սակայն սուրբ հրեշտակներն ուղարկվեցին, որպեսզի վտարեն նրանց պարտեզից, միևնույն ժամանակ հրեշտակների մեկ այլ խումբ ուղարկվեց պահպանելու կյանքի ծառը: Այդ գորեղ հրեշտակներից յուրաքանչյուրը, թվում էր, ինչ-որ բան ուներ աջ ձեռքում, որը փայլուն սուր էր հիշեցնում:

Սատանան հաղթանակել էր: Մյուսները պետք է տառապեին նրա անկման պատճառով: Նա վտարվեց երկնքից, իսկ Ադամն ու Եվան վտարվեցին Դրախտից (տես Ծննդոց 3):

Տես Ծննդոց 3-րդ գլուխ

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Տխրությունը պատել էր երկինքը, երբ բոլորը հասկացան, որ մարդը կորած է, իսկ Աստծո կողմից արարված աշխարհը լի է մահկանացու մարդկանցով՝ դատապարտված տանջանքների, ցավերի և մահվան, և օրինազանցների համար չկա փրկության ոչ մի ճանապարհ: Ադամի ողջ ընտանիքը պետք է մեռներ: Ես տեսա սքանչելի Հիսուսին. Նրա դեմքին նշմարվում էր մխիթարության և տրտմության արտահայտություն: Նա մոտեցավ Հորից ճառագող մեծափառ լույսին: Ինձ ուղեկցող հրեշտակն ասաց, որ Նա մտերիմ գրույց է վարում Իր Հոր հետ: Թվում էր՝ հրեշտակների անհանգստությունը մեծ էր, երբ Հիսուսը հաղորդակցվում էր Իր Հոր հետ: Երեք անգամ Նա ծածկվեց Իր Հոր մեծափառ լույսի ներքո, և երրորդ անգամ, երբ Նա եկավ Հոր գահից, դարձավ տեսանելի: Նրա դեմքը հանգիստ էր՝ ազատ որևէ շփոթմունքից և անախորժությունից, և փայլում էր այնպիսի բարյացակամությամբ ու գրավչությամբ, որը հնարավոր չէ խոսքերով նկարագրել: Այնուհետև Նա ասաց հրեշտակների բազմությանը, որ փրկության ուղի է ծրագրվել անկյալ մարդու համար, որ միջնորդել է Հորը՝ առաջարկելով Իր կյանքը տալ որպես փրկագին և մահն ընդունել, որպեսզի դրա շնորհիվ մարդը ներում գտնի: Իր արյան և Աստծո օրենքին հնազանդության զնով մարդիկ կկարողանան ստանալ Աստծո ողորմածությունը, վերադառնալ դրախտային պարտեզ և ուտել կյանքի ծառի պտղից:

Ի սկզբանե հրեշտակները չէին կարող ցնծալ, քանի որ Հրամանատարը ոչինչ չէր թաքցրել նրանցից և փրկության ծրագիրն ամբողջությամբ բացահայտել էր նրանց: Հիսուսն ասաց, որ Ինքը կկանգնի Իր Հոր ատելության և մեղավոր մարդու միջև, կկրի անարդարություն և ծաղրանք, և բոլորը չէ, որ կընդունեն Նրան որպես Աստծո Որդի,

շատերը նույնիսկ կատեն և կմերժեն Իրեն: Նա երկնքում կթողներ Իր փառքը և երկրի վրա կհայտնվեր որպես մարդ, կխոնարհեցներ Իր անձը, սեփական կյանքում կհանդիպեր տարբեր գալթակությունների, որոնք պարուրում են մարդուն, և միայն այդ ժամանակ կկարողանար հասկանալ, թե ինչպես կարելի է օգնել գալթակոված մարդուն: Եվ վերջապես, Իր առաքելության ավարտից հետո, Նա կտրվեր մարդկանց ձեռքը: Նա կենթարկվեր գրեթե բոլոր դաժանություններին և տառապանքներին, որոնց սատանան և իր հրեշտակները կարող էին ոգեշնչել չար մարդկանց՝ տանջանք պատճառելու Նրան: Հիսուսը պետք է մեռներ ամենադաժան մահով՝ երկնքի և երկրի միջև կախվելով որպես մեղավոր հանցագործ: Նա կվերապրեր հոգեվարքի սարսափելի ժամեր, որին չէին կարողանալու նայել նույնիսկ հրեշտակներ՝ իրենց դեմքը ծածկելով այդ իրադարձություններից: Նա ոչ միայն ֆիզիկապես, այլև մտովի հոգեվարք կվերապրեր, որը պարզապես հնարավոր չէր համեմատել մարմնականի հետ: Ողջ աշխարհի մեղքի բեռը կլիներ Նրա ուսերին: Հիսուսն ասաց նրանց, որ Ինքը կմեռնի, երրորդ օրը հարություն կառնի և կհամբարձվի Իր Հոր մոտ՝ բարեխոսելու քմահաճ և մեղավոր մարդկանց համար:

Հրեշտակները խոնարհվեցին Նրա առջև: Նրանք իրենց կյանքն առաջարկեցին: Հիսուսն ասաց նրանց, որ Իր կյանքով պետք է փրկի շատերին, իսկ հրեշտակների կյանքը չէր կարող քավել բոլորի մեղքը: Միայն Նրա կյանքը կարող էր Հոր կողմից ընդունվել իբրև մարդկային մեղքի փրկագին:

Հիսուսը նաև ասաց հրեշտակներին, որ նրանք կդառնան փրկության ծրագրի մասը՝ լինելով Նրա հետ և մշտապես աջակցելով Նրան. չէ՞ որ Նա Իր վրա պետք է առներ մարդու անկյալ էությունը, և նույնիսկ Նրա ուժը հավասար չէր լինի նրանց գործյալը: Նրանք կդառնային Նրա անարգանքների և մեծ տառապանքների վկաները: Եվ երբ նրանք կդառնային Նրա նկատմամբ մարդկանց ատելության վկաները, նրանք կլցվեին հոգեցունց զգացումներով: Շնորհիվ Նրա նկատմամբ իրենց սիրո՝ կցանկանային փրկել և ազատել Նրան մարդասպանների ձեռքից, սակայն չպետք է խանգարեին՝ կանխելով այն, ինչ պետք է տեղի ունենար, միայն պետք է մասնակցեին Նրա հարությանը, քանի որ փրկության ծրագիրը մշակված էր, և Հայրը հաստատել էր այն:

Սուրբ տխրությամբ Հիսուսը հանգստացրեց և քաջալերեց հրեշ-

տակներին՝ տեղեկացնելով, որ ապագայում էլ փրկվածները, կլինեին և հավիտյան կապրեին Իր հետ, և այս մահով Նա կփրկագնի շատերի մեղքերը և կոչնչացնի նրան, ով մահվան իշխանություն ունի: Հայրը Նրան կտա թագավորություն և մեծափառ տիրակալություն ողջ երկնքում, և Նա կթագավորի հավիտյանս հավիտենից: Սատանան և մեղավորները պետք է ոչնչանային, որպեսզի այլևս երբեք չխախտեին երկնային ներդաշնակությունը և չպղծեին մաքրագործված նոր երկիրը: Հիսուսը պատվիրեց երկնային բնակիչներին համակերպվել այն ծրագրի հետ, որն Իր Հայրն էր հաստատել, և ցնծալ, քանզի անկյալ մարդը Նրա մահվան շնորհիվ կրկին մեծարվել, կարող էր վայելել երկինքը և Աստծո բարեհաճությունը:

Ուրախությունը պարուրեց երկինքը: Եվ երկնային հրեշտակները երգեցին փառաբանության և երկրպագության երգեր: Նրանք դիպան իրենց քնարներին և ավելի բարձր նոտաներ հնչեցրին, քան երբևէ հնչեցրել էին՝ ի նշան Աստծո մեծ ողորմածության և ներողամտության, որով Նա թույլ տվեց Իր սիրելի Միածին Որդուն մեռնել հանուն ապստամբ մարդկային ցեղի: Փառք և երկրպագություն էր հեղվում հանուն Հիսուսի ինքնուրացության և զոհաբերության. Նա համաձայնել էր թողնել Հոր գիրկը և ընտրել էր տառապանքով ու տանջանքներով լի կյանք՝ մեռնել խայտառակ մահով՝ կյանք պարզելու մյուսներին:

Հրեշտակն ասաց ինձ. «Դուք կարծում եք, թե Հայրն Իր թանկագին Միածին Որդուց հեշտությամբ է հրաժարվել: Ոչ, ոչ»: Երկնային Աստված հոգեկան ծանր մաքառում է վերապրել՝ թույլ տալ մեղավոր մարդու՞ն կործանվել, թե՞ Իր սիրելի Միածին Որդուն թույլ տալ մեռնել հանուն նրանց: Հրեշտակներն այնքան հետաքրքրված էին մարդկության փրկությամբ, որ պատրաստ էին զիջել իրենց փառքը և իրենց կյանքը տալ հանուն կործանվող մարդկության: Սակայն ինձ ուղեկցող հրեշտակն ասաց, որ դա անօգուտ է: Մեղքն այնքան ահավոր էր, որ հրեշտակի կյանքը չէր կարող փրկագնել այն: Միայն Աստծո Որդու մահը և տանջանքները կվճարեին ու կփրկեին կորուսյալ մարդուն անհույս վշտերից ու տառապանքից:

Սակայն աշխատանք տրվեց նաև հրեշտակներին. նրանք պետք է բարձրանային և իջնեին երկնային սանդուղքով՝ Իր տանջանքներում մխիթարելով Աստծո Որդուն և սատարելով Նրան: Բացի այդ, նրանք պետք է հսկեին և պահպանեին Հիսուսին չար հրեշտակներից

ու այն խավարից, որով Նրան շրջապատելու էր սատանան: Ես տեսա, որ Աստծո համար անհնար էր մերժել կամ փոխել Իր օրենքը պահպանելու անկյալ, կործանվող մարդկությանը: Այդ պատճառով Նա Իր սիրելի Ռոդուն ուղարկեց երկիր, որպեսզի Նա մեռնի մարդկության մեղքերի համար:

Սատանան իր հրեշտակների հետ միասին ցնծում էր, քանզի մարդկանց անկումով Աստծո Ռոդուն կարողացել էր դրդել հրաժարվել Իր երկնային փառահեղ դիրքից: Նա իր հրեշտակներին ասաց, որ երբ Հիսուսն Իր վրա վերցնի մարդկային էությունը, ինքը կարող է ընկճել Նրան և խոչընդոտել փրկության ծրագրի իրականացմանը:

Արուսյակն ինձ ցույց էր տրվել իբրև երջանիկ, մեծափառ հրեշտակ: Հետո ես նրան տեսա ներկայիս վիճակում: Նա դեռևս վեհապանձ տեսք ուներ: Նրա դիմագծերը վեհասքանչ էին՝ չնայած իր անկյալ վիճակին: Նրա դեմքն արտահայտում էր անհանգստություն, հուզմունք, տխրություն, հանցագործ մտադրություններ, ատելություն, խաբեություն և չարություն: Ես հազիվ նշմարեցի նրա երբեմնի հիասքանչ հոնքերը: Նրա ճակատն աչքերից ետ էր ուղղված: Ես տեսա, որ նրա արժանապատվությունն այնքան էր խոցվել, որ բոլոր լավ հատկանիշները խաթարվել էին, և զարգացել էին բնավորության չար հատկանիշներ: Նրա աչքերը շատ խորամանկ ու նենգ էին և մեծ խորաթափանցություն էին արտահայտում: Կառուցվածքով նա խոշոր էր, սակայն համեմատած ձեռքերի և դեմքի հետ՝ մարմինը նվազ էր: Ես տեսա նրան նստած՝ ձախ ձեռքը դրած կզակի տակ: Թվում էր՝ նա մտասուզված էր: Նրա դեմքին կար ժպիտ, որն ինձ ստիպեց դողալ. նա լի էր այնքան մեծ չարությամբ և սատանայական խորամանկությամբ: Այդ ժպիտով նա ընտրում է իր հերթական գոհին, և երբ գոհն ընկնում է թակարդը՝ ժպիտն առավել ահավոր է դառնում:

Տե՛ս Եսայիա 53 գլուխ

Գլուխ 4

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՎԼՈՒՄՏԸ

Այնուհետև ես տարվեցի այն ժամանակաշրջանը, երբ Հիսուսը պետք է Իր վրա առներ մարդկային բնությունը, խոնարհեցներ Իրեն որպես մարդ և ենթարկվեր սատանայի փորձություններին:

Նրա ծնունդը զուրկ էր աշխարհային փառահեղությունից: Նա ծնվեց փարախում՝ մսուրի մեջ: Հրեշտակները հովիվներին երկնքից հայտնեցին Հիսուսի գալստյան մասին, և լույսն ու Աստծո փառքն ուղեկցեցին այդ վկայությանը: Երկնաբանակները դիպան իրենց քնարներին և փառաբանեցին Աստծուն: Նրանք մեծ հանդիսավորությամբ ազդարարեցին Աստծո Որդու՝ անկյալ աշխարհի գալստյան մասին, ով պիտի կատարեր փրկության գործը և Իր մահվամբ աշխարհին՝ երջանկություն, ուրախություն, իսկ մարդուն՝ հավիտենական կյանք պարգևեր: Աստված պատվեց Իր Որդու գալուստը: Հրեշտակները ծառայում էին Նրան:

Աստծո հրեշտակները ճախրում էին Նրա մկրտության վայրում, Սուրբ Հոգին աղավնու տեսքով իջավ և լուսավորեց Նրան: Եվ քանի որ մարդիկ մեծապես զարմացած էին, նրանց աչքերն ուղղված էին Նրան. Հոր ձայնը լսվեց երկնքից՝ ասելով. «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հավանեցի»:

Հովհաննեսը դեռևս չգիտեր, որ Նա, ում մկրտել էր Հորդանանում, Փրկիչն էր: Սակայն Աստված նրան խոստացել էր նշան, որով նա կարող էր ճանաչել Աստծո Գառնին: Եվ այդ նշանը տրվեց, երբ երկնքից իջավ աղավնին, և Աստծո փառքը շողաց Նրա վրա: Հովհաննեսը դեպի Հիսուսը մեկնեց իր ձեռքը և բարձր ձայնով աղաղակեց. «Ահա Աստծո Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը»:

Հովհաննեսն ասաց իր աշակերտներին, որ Հիսուսը խոստացված Մեսիան է՝ աշխարհի Փրկիչը: Քանի որ իր առաքելությունն

ավարտվում էր՝ նա իր աշակերտներին սովորեցնում էր հետևել Հիսուսին՝ որպես մեծագույն ուսուցչի: Հովհաննեսի կյանքն անցավ առանց ուրախության: Դա մի անձնագոհ կյանք էր: Նա ազդարարեց Քրիստոսի առաջին գալստյան մասին, սակայն դրանից հետո նրան թույլ չտրվեց տեսնել հրաշքները և վայելել Նրա գործությունը: Նա գիտեր, որ երբ Հիսուսը Ուսուցիչ դառնար, ինքը կմեռներ: Նրա ձայնը լսելի էր միայն վայրի տեղանքում: Հովհաննեսը միայնակ էր: Նա չէր ձգտում իր հոր ժառանգությանը, չէր ցանկանում վայելել այն, նա թողեց ամեն բան, որպեսզի կատարեր իր առաքելությունը: Թողնելով աղմկոտ քաղաքները և գյուղերը՝ շատերը խմբվում էին վայրի անապատում, միայն թե լսեին հիանալի մարգարեին: Հովհաննեսն աներկյուղ մեթոսն էր մեղքը և ճանապարհի պատրաստում Աստծո Գառի համար:

Հերովդեսն անհանգստացավ՝ Հովհաննեսի հզոր, շեշտադրված վկայությունները: Խոր հետաքրքրությամբ նա հարցրեց, թե ինչ պետք է անի, որպեսզի դառնա նրա աշակերտը: Հովհաննեսը գիտեր, որ Հերովդեսը պատրաստվում էր ամուսնանալ հարազատ եղբոր կնոջ հետ, երբ դեռևս եղբայրը կենդանի էր: Նա անկեղծորեն ասաց Հերովդեսին, որ դա անօրինական քայլ է: Հերովդեսը չէր ցանկանում զիջումների գնալ: Նա ամուսնացավ իր եղբոր կնոջ հետ և նրա ազդեցությամբ ձերբակալեց Հովհաննեսին ու նրան բանտ նետեց: Սակայն Հերովդեսը պատրաստվում էր նրան կրկին ազատ արձակել: Ձերբակալության պայմաններում Հովհաննեսն իր աշակերտներից տեղեկանում էր Հիսուսի զորավոր ծառայության մասին: Նա չէր կարող լսել Նրա հիասքանչ քարոզները, սակայն աշակերտները պատմում էին նրան և սփոփում իրենց լսածով: Հերովդեսի կնոջ միջոցով շուտով Հովհաննեսը գլխատվեց: Ես տեսա, որ Հիսուսին հետևող ամենափոքր աշակերտը, որը վկայում էր Նրա հրաշքների մասին և լսում էր Նրա շուրթերից դուրս եկող մխիթարական խոսքերը, մեծարվեց ավելի, քան Հովհաննես Սկրտիչը: Նրանք ավելի հարգված էին և ավելի մեծ պատվի արժանացան իրենց կյանքում:

Հովհաննեսը եկավ Եղիայի հոգով և գործությամբ՝ ազդարարելով Հիսուսի առաջին գալստյան մասին: Ես տեղափոխվեցի վերջին օրեր և տեսա, թե ինչպես էր Հովհաննեսը մարմնավորում նրանց, ովքեր Եղիայի հոգով և գործությամբ պետք է ազդարարեին դատաստանի և Հիսուսի երկրորդ գալստյան լուրը:

Հորդանանում մկրտվելուց հետո Հիսուսը Հոգով տարվեց անապատը, որպեսզի սատանայից փորձության ենթարկվեր: Սուրբ Հոգին նախապատրաստել էր Նրան այդ առանձնահատուկ փորձությունների համար: Քառասուն օր Նա փորձվեց սատանայից և ոչինչ չկերավ այդ օրերի ընթացքում: Հիսուսին շրջապատող ամեն ինչ տհաճ էր նրան, և Նրա մարդկային էությունը տրտմել էր: Նա վայրի կենդանիների և սատանայի հետ էր անապատում՝ այդ մեկուսի վայրում: Ես տեսա, որ ծոմից և տառապանքներից Աստծո Որդին զունատ էր և հյուծված: Սակայն Նրա ուղին կանխորոշված էր, և Նա պետք է կատարեր այն առաքելությունը, որի համար եկել էր:

Սատանան օգտվեց այն առավելությունից, որ Աստծո Որդին տառապում էր, և պատրաստվեց Նրան օղակել տարատեսակ փորձություններով՝ հուսալով հաղթանակ տանել Նրա նկատմամբ: Չէ որ Նա նվաստացել էր՝ ընդունելով մարդկային էությունը: Սատանան եկավ Նրա մոտ՝ ասելով. «Եթե Աստծո Որդի ես՝ ասա, որ այս քարերը հաց դառնան»: Նա գայթակղում էր Հիսուսին հավասարվել իրեն և ապացուցել, որ Ինքն էր Սեսիան՝ ցուցադրելով Իր աստվածային իշխանությունը: Հիսուսը հանգիստ պատասխանեց նրան. «Գրված է՝ ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»:

Սատանան մշտապես իր կասկածներն էր արտահայտում առ այն, թե Հիսուսն իրապե՞ս Աստծո Որդին էր: Նա օգտվում էր Նրա թույլ, տառապյալ վիճակից և միտումնավոր կերպով համոզում մարդկանց, որ ինքն՝ ավելի ուժեղ է Հիսուսից: Սակայն երկնքից հնչած խոսքերը՝ «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հավանեցի», օգնեցին Հիսուսին հաղթահարել բոլոր տառապանքները: Ես տեսա, որ Իր ողջ առաքելության ընթացքում Նա երբեք ոչինչ չարեց՝ վստահեցնելու սատանային Իր իշխանության կամ այն մասին, որ Ինքն իրապես աշխարհի Փրկիչն է: Սատանան ուներ Նրա դիրքի և իշխանության բավարար ապացույցներ: Հենց Հիսուսի իշխանությանը չենթարկվելու Նրա ցանկությունն էլ վտարեց նրան երկնքից:

Իր ուժը ցուցադրելու նպատակով, սատանան Հիսուսին տարավ Երուսաղեմ, կանգնեցրեց տաճարի աշտարակին և կրկին փորձեց Նրան՝ ասելով, որ եթե Նա Աստծո Որդի է, պետք է հաստատի դա՝ ընկնելով այդ գլխապառույտ բարձրությունից, որտեղ Նա կանգնեցրել էր Հիսուսին: Սատանան մոտեցավ ոգևորիչ խոսքերով՝ գրված է. «Իր

հրեշտակներին կիրամայի քեզ համար, և ձեռքերի վրա կբարձրացնեն քեզ, որ քո ոտքը քարի չղիպցնես երբեք»: Հիսուսը պատասխանեց նրան. «Մի՛ փորձիր Տիրոջը՝ քո Աստծուն»: Սատանան ցանկանում էր Հիսուսին ստիպել ինքնավստահությամբ օգտվել Աստծո ողորմածությունից և առաքելությունը կատարելուց առաջ Իր կյանքը վտանգի ենթարկել: Նա հույս ուներ, որ փրկության ծրագիրը կձախողվեր, սակայն ես տեսա, որ այն այնքան հանգամանորեն էր ծրագրված, որ սատանային չէր հաջողվի այն տապալել:

Ես տեսա, որ Քրիստոսն օրինակ էր բոլոր քրիստոնյաների համար, երբ նրանք փորձվում էին կամ վիճարկվում էին նրանց իրավունքները: Նրանք դա պետք է համբերությամբ կրեին: Նրանք չպետք է կարծեին, թե իրավունք ունեին խնդրել Աստծուն ցույց տալ Իր ուժը, որպեսզի հաղթանակեին թշնամիների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Աստված այդպես պետք է փառավորվեր և մեծարվեր: Ես տեսա, որ եթե Հիսուսն Իրեն վայր նետեր աշտարակից, դա չէր փառավորի Հորը, դրա մասին, բացի սատանայից և Աստծո հրեշտակներից ոչ ոք չէր վկայի: Դա կգայթակղեր Տիրոջը՝ Իր ուժը ցուցադրելու Իր ամենաոխերիմ թշնամուն, ինչը կնշանակեր զիջել նրան, ում Հիսուսը եկել էր հաղթելու:

«Դարձյալ առավ տարավ նրան սատանան մի շատ բարձր սար և ցույց տվեց նրան աշխարհի բոլոր թագավորությունները և նրանց փառքը: Եվ ասաց նրան. Այս ամենը քեզ կտամ, եթե ընկած երկրպագես ինձ: Այն ժամանակ ասաց նրան Հիսուսը. Դե՛ն գնա, սատանա, որովհետև գրված է, թե Տիրոջը՝ քո Աստծուն երկրպագիր և միայն նրան պաշտիր»:

Այստեղ սատանան Հիսուսին ցույց տվեց աշխարհի թագավորությունները: Նրանք ներկայացված էին ամենագրավիչ լույսի ներքո: Նա առաջարկեց դրանք Հիսուսին, եթե Նա այնտեղ երկրպագեր իրեն: Նա ասաց, որ կիրաժարվի երկրին տիրելու իր նկրտումներից: Սատանան զիտեր, որ իր իշխանությունը սահմանափակ էր և շուտով ամբողջովին կվերանար, եթե փրկության ծրագիրն իրականություն դառնար: Նա զիտեր, որ եթե Հիսուսը մեռներ՝ փրկագնելով մարդուն, իր իշխանությունը կդադարեր և ինքը կկործանվեր: Դա նրա մշակած ծրագիրն էր՝ կանխել մեծագույն գործի ավարտը, որը սկիզբ էր առել Աստծո Որդուց: Եթե մարդու փրկագնման ծրագիրն անհաջողության մատնվեր, նա կպահպաներ այն թագավորությունը, որն առաջար-

կում էր Հիսուսին: Եթե նա հաջողություն ունենար, հույս կփայփայեր մեծարվել որպես Աստծո երկնային ընդդիմության ղեկավար:

Սատանան ցնծում էր, երբ Հիսուսը քեց երկինքը և այնտեղ թողեց Իր իշխանությունն ու փառքը: Նա կարծում էր, թե Աստծո Որդին այժմ գտնվում է իր իշխանության ներքո: Եղեմում սուրբ զույգին զայթակղելն այնքան դյուրին էր, որ նա հույս ուներ իր սատանայական խորամանկությամբ և իշխանությամբ զայթակղել նույնիսկ Աստծո Որդուն և այդպիսով պահպանել իր կյանքն ու թագավորությունը: Եթե նա կարողանար հրապուրել Հիսուսին՝ հրաժարվելու Իր Հոր կամքից, ապա կհասներ իր նպատակին: Հիսուսը սատանային պատվիրեց հեռանալ Իրենից: Նա պետք է երկրպագեր միայն Իր Հորը: Եկել էր ժամանակը, երբ Հիսուսն Իր կյանքով կփրկագներ սատանայի գերիներին և շուտով ամեն ինչ երկնքում և երկրում Իրեն կպատկաներ: Սատանան երկրային թագավորությունների՝ իրեն ենթարկեցնելու նկրտումներ ուներ և առաջարկեց Հիսուսին խուսափել բոլոր տառապանքներից: Նա չպետք է մեռներ այս աշխարհի թագավորություններին տիրանալու համար: Հիսուսը կստանար իշխանություն երկրի նկատմամբ և տիրակալության փառք, եթե երկրպագեր սատանային: Հիսուսն աննկուն էր: Նա ընտրեց իր կյանքը՝ լի տառապանքով և սոսկալի մահով և այն ճանապարհը, որն Իր Հայրն էր որոշել՝ դառնալով երկրային թագավորության օրինական գահաժառանգը և ընդունելով Իրեն տրված հավերժական տիրակալությունը: Սատանան նույնպես կտրվի Նրա ձեռքը՝ ոչնչանալու մահվամբ՝ երբեք այլևս անախորժություն չպատճառելու Հիսուսին և փառահեղ սուրբերին:

Տե՛ս Երկրորդ Օրինաց 6.16, 8.3, ԲԹագավորաց 17.35,36, Սաղմոս 91.11,12, Ղուկաս 2-4 գլուխները:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՆՎՅՈՒԹՅՈՒՆԸ

Երբ սատանան ավարտեց իր փորձությունները, որոշ ժամանակով հեռացավ Հիսուսից, իսկ հրեշտակները անապատում սնունդ պատրաստեցին Հիսուսի համար ու զորակցեցին Նրան, և Աստծո օրհնությունը թևածում էր Նրա վրա: Սատանան անհաջողության մատնվեց իր դաժան փորձություններում, սակայն հույս ուներ, որ Հիսուսի ծառայության ժամանակ իր ամենատարբեր խորամանկությունները կօգտագործեր Հիսուսի դեմ: Նա դեռևս հավատում էր, թե կհաղթի Հիսուսին՝ Նրան չընդունողներին և ատողներին դրդելով վերացնել Նրան: Սատանան իր հրեշտակներին հատուկ խորհրդակցության հրավիրեց: Նրանք հիասթափված էին և զայրացած, քանի որ նրանց չհաջողվեց կործանել Աստծո Որդուն: Նրանք որոշեցին ավելի խորամանկ լինել և առավելագույնս օգտագործել իրենց իշխանությունը, որպեսզի մարդկանց սրտերում կասկած հարուցեն Հիսուսի նկատմամբ՝ որպես աշխարհի Փրկչի, և այդպիսով վիատեցնել Հիսուսին Իր առաքելության ընթացքում: Նշանակություն չունեք, թե որքան իրավացի էին հրեաները իրենց սովորություններում և զոհաբերություններում, եթե նրանք կարողանային իրենց աչքերը փակել մարգարեությունների նկատմամբ և հավատացնել, որ զորեղ աշխարհային թագավորը պետք է իրականացներ այդ մարգարեությունները, Մեսիայի գալստյան իրական նշանակության հարցում նրանք կպահեն նրանց խավարում:

Այնուհետև ես տեսա, որ սատանան և իր հրեշտակները Քրիստոսի ծառայության ընթացքում զբաղված էին մարդկանց անվստահություն, ատելություն և ծաղրանք ներշնչելով: Հաճախ, երբ Հիսուսն ասում էր նրանց մեղքերը դատապարտող որևէ կտրուկ ճշմարտություն, նրանք զայրանում էին: Սատանան և նրա հրեշտակները

դրդում էին մարդկանց սպանել Աստծո Որդուն: Մի անգամ նրանք ուզում էին քարկոծել Նրան, սակայն հրեշտակները պահպանեցին Հիսուսին և կատաղած ամբոխից հեռացնելով՝ ապահով վայր տարան Նրան: Երբ ակնհայտ ճշմարտությունը հնչեց Իր շուրթերից, ամբոխը կրկին հարձակվեց Նրա վրա և տարավ Նրան բարձունքի գագաթը, որպեսզի այնտեղից վայր նետի: Նրանց միջև վիճաբանություն ծագեց, թե ինչ պետք է անեին Հիսուսի հետ, և կրկին հրեշտակները քաքցրեցին Նրան ամբոխի հայացքից: Անցնելով ամբոխի միջով՝ Նա հեռացավ նրանցից:

Սատանան դեռևս հույս ուներ, որ փրկության մեծագույն ծրագիրն անհաջողության կմատնվի: Նա օգտագործեց իր ողջ ուժը՝ խստացնելու մարդկանց սրտերն ու զգացմունքները Հիսուսի հանդեպ: Նա հույս ուներ, որ մարդիկ, ովքեր Նրան կընդունեին որպես Աստծո Որդի, կլինեին այնքան սակավաթիվ, որ Հիսուսն Իր տառապանքները և զոհաբերությունը շատ մեծ կհամարեր այդքան փոքրաթիվ մարդկանց համար: Սակայն ես տեսա, որ եթե նույնիսկ լինեին ընդամենը երկու հոգի, ովքեր կընդունեին Հիսուսին որպես Աստծո Որդի, հանուն նրանց հոգիների փրկության՝ Նա կիրականացներ Իր ծրագիրը:

Հիսուսն Իր ծառայությունը սկսեց՝ կործանելով այն իշխանությունը, որը սատանան ուներ տառապանքների նկատմամբ: Նա բժշկեց նրանց, ովքեր տանջվում էին նրա չար իշխանությունից: Նա հիվանդներին պարզեցում էր առողջություն, բժշկում էր կաղերին և ստիպում, որ նրանց սրտերը բաբախեին ուրախությունից և փառաբանեին Աստծուն: Նա կույրերին տեսողություն էր պարզեցում, Իր զորությամբ վերադարձնում էր նրանց առողջությունը, ովքեր երկար տարիներ թույլ և ճնշված էին սատանայի դաժան իշխանությունից: Թույլ, դողդոջուն և հուսալքված մարդկանց Նա քաջալերում էր ոգևորող խոսքերով: Մեռյալներին հարություն էր պարզեցում, և նրանք փառաբանում էին Աստծուն Նրա ուժի զորեղ դրսևորման համար: Նա օգնում էր բոլոր Իրեն հավատացողներին: Տկարին, ում հանդեպ սատանան հաղթանակ էր տոնում՝ ենթարկելով տառապանքների, Հիսուսն ազատագրեց կապանքներից և Իր զորությամբ նրան տվեց մարմնի ամրություն, ուրախություն և երջանկություն:

Քրիստոսի կյանքը լի էր բարյացակամությամբ, մխիթարությամբ և սիրով: Նա մշտապես ունկնդրում էր բոլորի հոգսերը և օգնում բոլոր Իր մոտ եկողներին: Շատերն իրենց ծանոթներին վկայում էին

Նրա աստվածային ուժի մասին: Այդ հրաշքներից հետո ոմանք ամոթահար հեռանում էին խոնարհ, սակայն զորեղ Ուսուցչից: Քանի որ առաջնորդները չէին հավատում Նրան, չէին ցանկանում տառապել Հիսուսի հետ: Նա վշտի և ցավերի տեղյակ Մարդ էր: Սակայն քչերը կարող էին հանդուրժել Նրա զուսպ, անձնուրաց կյանքը: Նրանք ցանկանում էին վայելել այն ուրախությունները, որոնք աշխարհն էր առաջարկում: Շատերն էին հետևում Աստծո Որդուն և լսում էին Նրա քարոզները, որոնք այնքան բարեհաճությամբ էին արտաբերվում Նրա շուրթերից: Նրա խոսքերը իմաստությամբ լի էին, միաժամանակ՝ այնքան պարզ, որ ամենքը կարող էին հասկանալ:

Սատանան և նրա հրեշտակները զբաղված էին: Նրանք կուրացնում էին հրեաների աչքերը և խավարեցնում նրանց գիտակցությունը: Սատանան ժողովրդի ղեկավարներին և առաջնորդներին դրդում էր մահվան դատապարտել Հիսուսին: Նրանք ուղարկեցին ծառայողներին՝ Հիսուսին բերելու իրենց մոտ: Հենց ծառայողները մոտեցան, զարմանքից քար կտրեցին: Նրանք տեսան Հիսուսին՝ առատաձեռն և կարեկցանքով լի: Նրանք լսեցին թույլերին և տառապյալներին հուսադրող Նրա սիրառատ և մեղմ ձայնը: Նրանք նաև լսեցին տիրական, խրոխտ Նրա ձայնը, որը դատապարտում էր սատանայի իշխանությունը և նրա գերության մեջ գտնվողներին ազատություն պարգևում: Նրանք իմաստուն խոսքեր էին լսում, որոնք արտասանվում էին Հիսուսի շուրթերից. նրանք հմայված էին: Նրանք չէին կարող վնաս պատճառել Հիսուսին: Ծառայողները վերադարձան իրենց ղեկավարների և առաջնորդների մոտ առանց Հիսուսի: Նրանք հարցրեցին իրենց ենթականերին. «Ինչո՞ւ Նրան չբերեցիք»: Նրանք պատմում էին այն հրաշքների մասին, որոնց ականատես էին եղել, իմաստության այն սուրբ խոսքերի, սիրո և գիտելիքների մասին, որոնք նրանք լսել էին, և իրենց վկայությունն ավարտեցին հետևյալ խոսքերով. «Ոչ ոք չխոսեց այս Մարդու նման»: Քահանայապետերը մեղադրեցին նրանց խաբեության մեջ: Շատերն ամոթահար էին, որ չկարողացան բերել Հիսուսին: Քահանայապետերը ծաղրանքով հարցաքննում էին այն առաջնորդներին, ովքեր հավատացել էին Նրան: Ես տեսա, որ դատավորներից և ծեղերից շատերը հավատում էին Հիսուսին: Սակայն սատանան հնարավորություն չէր տալիս խոստովանել դա: Նրանք ավելի վախենում էին մարդկանցից, քան Աստծո դատապարտությունից:

Այսպիսով, սատանայի խորամանկությունը և ատելությունը չիսփանեց փրկության ծրագիրը: Մոտենում էր ժամանակը՝ հասնելու այն նպատակին, հանուն որի Հիսուսը եկել էր այս աշխարհ: Սատանան և իր հրեշտակները խորհրդակցեցին և որոշեցին ժողովրդին ոգեշնչել, դաժանությամբ, հակակրանքով և պահանջել Քրիստոսի արյունը: Սատանան հույս ուներ, որ Հիսուսը կվրդովվեր այդպիսի վերաբերմունքից և չէր պահպանի Իր համեստությունն ու խոնարհությունը:

Այնժամ, երբ սատանան ծրագրում էր Իր քայլերը, Հիսուսն Իր աշակերտներին մանրակրկիտ կերպով բացահայտում էր, թե ինչ կլինի Իր հետ. այն է՝ կիսաչվի և երրորդ օրը հարություն կառնի: Սակայն նրանք չհասկացան Իրեն: Նրանք չէին կարող ըմբռնել Հիսուսի խոսքերի ողջ խորությունը:

Տե՛ս Ղուկաս 4.29, Հովհաննես 7.45-48, 8.59

ԱՅԼԱԿԵՐԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Ես տեսա, որ աշակերտների հավատը մեծապես ամրապնդվեց այլակերպության ժամանակ: Աստված որոշեց Հիսուսի հետևորդներին տալ ամուր վկայություն, որ Ինքն է խոստացված Մեսիան, որ չնայած իրենց խորը վշտին և հիասթափությանը՝ նրանք չպետք է մի կողմ դնեն իրենց հավատը: Այլակերպության ժամանակ Աստված ուղարկեց Մովսեսին և Եղիային՝ Հիսուսի հետ խոսելու Նրա տառապանքների և մահվան մասին: Իր Որդու հետ խոսելու համար հրեշտակներին ընտրելու փոխարեն՝ Աստված ընտրեց նրանց, ովքեր երկրային փորձությունների փորձառություն ունեին: Նրա հետևորդներից ոմանց թույլ տրվեց լինել Հիսուսի հետ և տեսնել աստվածային փառքով շողացող Նրա դեմքը, ճերմակ և առկայծող Նրա հագուստը, լսել Աստծո մեծափառ և ահարկու ձայնը. «Դա է իմ սիրելի Որդին, նրան լսեցեք»:

Եղիան քայլում էր Աստծո հետ: Նրա աշխատանքը հաճելի չէր մարդկանց: Նրա միջոցով Աստված հանդիմանում էր մեղքը: Նա Աստծո մարգարե էր և ստիպված էր տեղից տեղ փախչել՝ փրկելու իր կյանքը: Նրան ցանկանում էին որսալ, ինչպես վայրի գազանի, որպեսզի ոչնչացնեն: Աստված երկինք փոխադրեց Եղիային: Հրեշտակները նրան առան երկնային փառքի և ցնծության մեջ:

Մովսեսն Աստծո համար պատվելի անձնավորություն էր: Նա ավելի մեծ էր, քան իր նախնիները: Մովսեսն առավելություն ունեցավ երես առ երես խոսել Աստծո հետ, ինչպես մարդը խոսում է ընկերոջ հետ: Նրան թույլ տրվեց տեսնել Հորը շրջապատող պայծառ լույսը և կատարյալ փառքը: Մովսեսի միջոցով Աստված Իսրայելի որդիներին ազատագրեց եգիպտական գերությունից: Մովսեսը միջնորդ էր Իսրայելի որդիների համար: Նա հաճախ կանգնում էր նրանց և Աստ-

ծո բարկության միջև: Երբ Աստծո բարկությունը բորբոքվում էր Իսրայելի դեմ նրանց անհավատության, դժգոհության և ծանր մեղքերի համար, փորձվում էր Մովսեսի սերը նրանց նկատմամբ: Աստված խոստացավ Մովսեսին, որ եթե վերջինս Իսրայելը թողնի և թույլ տա կործանվել, ապա Մովսեսից մեծ ժողովուրդ կստեղծի: Մովսեսն Իսրայելի նկատմամբ իր սերը ցույց տվեց իր անկեղծ աղաչանքով: Իսրայելի թշվառության պայմաններում նա աղաչեց Աստծուն ետ դառնալ Իր դաժան բարկությունից և ներել Իսրայելին կամ իր անունը ջնջել կյանքի գրքից:

Երբ Իսրայելը դժգոհում էր Աստծո և Մովսեսի դեմ, քանի որ չէին կարող ջուր գտնել, նրանք մեղադրում էին Մովսեսին՝ ասելով, որ նա իրենց ազատել է գերությունից՝ սպանելու և՛ իրենց, և՛ իրենց երեխաներին: Աստված լսեց նրանց դժգոհությունը և պատվիրեց Մովսեսին զարկել ժայռին, որպեսզի Իսրայելի որդիները ջուր ունենան: Մովսեսը բարկությամբ զարկեց ժայռին և ողջ փառքը վերագրեց իրեն: Իսրայելի որդիների շարունակվող անհնազանդությունն ու դժգոհությունը սաստիկ ցավ էին պատճառում Մովսեսին, և մի ակնթարթ նա մոռացավ, թե որքան երկար էր Աստված համբերել նրանց, իսկ նրանց դժգոհությունը ոչ թե Մովսեսի դեմ էր, այլ Աստծո: Մովսեսը մտածում էր միայն իր մասին և տրտմում, որ սխալ հասկացան իրեն և անշնորհակալ վերաբերմունք ցուցաբերեցին իր նկատմամբ՝ ի պատասխան նրանց հանդեպ իր խորունկ սիրո:

Երբ Մովսեսը զարկեց ժայռին, նա դրանով չպատվեց Արարչին և չմեծարեց Նրան Իսրայելի որդիների առջև՝ ի փառս Աստծո: Եվ Աստված բարկացավ Մովսեսի վրա և ասաց, որ նա չի մտնի ավետյաց երկիրը: Աստծո ծրագիրն էր՝ Իսրայելին մենակ չթողնել նեղության մեջ և այնուհետև իրենց մեծ անհրաժեշտության դեպքում ցույց տալ Իր ուժը, որպեսզի այն ապրեր նրանց հիշողության մեջ, և նրանք փառաբանեին Աստծուն:

Երբ Մովսեսը սարից իջավ երկու քարե տախտակներով և տեսավ Իսրայելին ոսկե հորթին երկրպագելիս, բորբոքվեց նրա բարկությունը, և նա քարե տախտակները նետեց ներքև ու ջարդեց դրանք: Ես տեսա, որ Մովսեսն իր այդ վարմունքով չմեղանչեց: Նա բարկացած էր Աստծո փոխարեն, նախանձավոր Նրա փառքի հանդեպ: Սակայն երբ Մովսեսը տեղի տվեց իր սրտի բնական մղումներին և Աստծուն պատկանող փառքը վերագրեց իրեն, նա մեղանչեց, և այդ մեղքի

համար Աստված թույլ չտվեց նրան մտնել ավետյաց երկիրը:

Սատանան փորձում էր ինչ-որ բան գտնել, որպեսզի Մովսեսին մեղադրեր հրեշտակների առջև: Նա հաղթանակ տոնեց՝ ստիպելով Մովսեսին հարուցել Աստծո գայրույթը, ցնծությամբ և ասաց հրեշտակներին, որ երբ աշխարհի Փրկիչը գա փրկելու մարդուն, ինքը կհաղթի Նրան: Այս արարքի համար Մովսեսն ընկավ սատանայի իշխանության տակ, հետևաբար մահվան իշխանության տակ: Եթե նա հաստատուն լիներ և չմեղանչեր՝ Աստծո փառքը վերագրելով իրեն, Աստված նրան կուղեկցեր ավետյաց երկիր և այնուհետև կտաներ երկինք՝ առանց մահ ճաշակելու:

Ես տեսա, որ Մովսեսը մեռավ, սակայն Միքայելն իջավ և նրան վերադարձրեց կյանքը՝ մինչ նա կփտեր ու կքայքայվեր: Սատանան հայտարարեց, որ Մովսեսի մարմինը պատկանում է իրեն, սակայն Միքայելը հարություն տվեց Նրան և տարավ երկինք: Սատանան փորձում էր պահել նրա մարմինը և ընդդիմանում էր Աստծուն՝ այդ քայլը համարելով անարդար, քանզի խլում են իր ավարը: Սակայն Միքայելը չհանդիմանեց սատանային, չնայած Աստծո ծառան մեղանչեց նրա ներգործությամբ: Քրիստոսը միայն համեստորեն նրան ուղարկեց Հոր մոտ՝ ասելով. «Աստված հանդիմանի քեզ»:

Հիսուսն ասաց աշակերտներին, որ Իր կողքին կանգնածներից ոմանք մինչ Աստծո արքայությունն իր ողջ մեծափառությամբ տեսնելը մահ չեն ճաշակի: Այլակերպության ժամանակ այդ խոստումն իրականացավ: Հիսուսի դեմքի արտահայտությունը փոխվեց. այն փայլեց արեգակի պես: Նրա հագուստը ճերմակ էր և լուսափայլ: Մովսեսը ներկա էր և խորհրդանշում էր նրանց, ովքեր հարություն պիտի առնեին Հիսուսի երկրորդ գալստյան ժամանակ: Եղիան, ով առանց մեռնելու երկինք տարվեց, ներկայացնում է նրանց, ովքեր անմահություն կհագնեն Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ և կհափշտակվեն երկինք: Աշակերտներն ահով և գնալված նայում էին Հիսուսի հիասքանչ մեծափառությանը, և նրանց վրա իջած ամպից հնչեց Աստծո վեհապանծ ձայնը, որն ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին՝ նրան լսեցեք»:

Տե՛ս Ելից 32-րդ գլուխ, Թվոց 30.7-12, Երկրորդ Օրինաց 34.5, ԴԹագավորաց 2.11, Մարկոս 9-րդ գլուխ, Հնդա 9

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Այնուհետև ես տեղափոխվեցի անցյալ, երբ Հիսուսը Ջատկի ընթրիքն էր ուտում Իր աշակերտների հետ: Սատանան մոլորեցրեց Հուդային և նրան ներշնչեց այն միտքը, որ ինքը Քրիստոսի ճշմարիտ աշակերտներից մեկն է, սակայն նրա սիրտը մշտապես մարմնական էր: Նա տեսել էր Հիսուսի գորեղ գործերը, նա Հիսուսի հետ էր Իր ծառայության ողջ ընթացքում և տեսել էր Հիսուսի՝ Մեսիա լինելու անհավանական վկայությունները, սակայն նա պարփակված էր և ժլատ: Նա սիրում էր դրամը: Հուդան իր գայրույթն արտահայտեց Հիսուսի վրա թանկարժեք յուղ լցնելու պատճառով: Մարիամը սիրում էր իր Տիրոջը: Նա ներել էր իր մեղքերը, որոնք քիչ չէին, հարություն էր տվել իր սիրելի եղբորը, և նա զգում էր, որ չկա մի նվեր, որով հնարավոր լինի շնորհակալություն հայտնել Հիսուսին: Թանկարժեք յուղը լավագույնն էր, ինչով Մարիամը կարող էր իր գոհությունն արտահայտել իր Փրկչին: Որպես իր ժլատության արդարացում՝ Հուդան ասաց, որ յուղը կարելի էր վաճառել և գումարը տալ աղքատներին: Սակայն նա մտահոգված չէր աղքատների խնդիրներով: Հուդան եսասեր էր և հաճախ իր սեփական կարիքների բավարարմանն էր ուղղում այն, ինչը վստահված էր իրեն աղքատների մասին հոգ տանելու համար: Հուդան ուշադիր չէր Հիսուսի հարմարավետության և ցանկությունների հանդեպ, և իր ժլատությունն արդարացնելու համար հաճախ հիշատակում էր աղքատներին: Իսկ Մարիամի կողմից մեծահոգության այդ փաստը մեծ հանդիմանություն էր նրա ժլատությանը:

Սատանայի գայթակղության ճանապարհը պատրաստված էր Հուդայի սրտում ընդունելություն գտնելու համար: Հրեաները ատում էին Հիսուսին, սակայն մարդկանց բազմությունը գալիս էր Նրա մոտ՝ Նրա իմաստուն խոսքերը լսելու և Նրա մեծագույն գործերի վկան

լինելու: Դա մարդկանց ուշադրությունը շեղում էր քահանայապետերից և ծերերից, քանզի մարդիկ սեծագույն հետաքրքրությամբ էին հետևում Հիսուսին և հափշտակված ունկնդրում էին այդ հրաշալի Ուսուցչի քարոզները: Դեկավարներից շատերը հավատում էին Հիսուսին, սակայն վախենում էին դավանել Նրա ուսմունքը՝ զգուշանալով վտարվել ժողովարանից: Քահանաները և ծերերը որոշեցին ինչ-որ բան ձեռնարկել, որպեսզի մարդկանց ուշադրությունը շեղվի Հիսուսից: Նրանք վախենում էին, որ բոլորը կհավատան Նրան: Նրանք զգում էին իրենց անձերին սպառնացող վտանգը: Քահանաները կա՛մ պետք է կորցնեին իրենց դիրքը, կա՛մ պիտի սպանեին Հիսուսին: Սակայն Հիսուսի մահից հետո էլ դեռևս կային մարդիկ, ովքեր Նրա փառքի կենդանի հուշարձանն էին: Հիսուսը հարություն էր տվել Ղազարոսին: Նրանք վախենում էին, որ եթե սպանեն Հիսուսին, Ղազարոսը բոլորին կպատմի Նրա գործքան մասին: Մարդիկ հավաքվում էին՝ տեսնելու նրան, ով մեռյալներից հարություն էր առել: Այդ էլ պատճառը, որ դեկավարները որոշել էին սպանել նաև Ղազարոսին՝ հանդարտեցնելու հուզումները: Այդժամ նրանք կկարողանային մարդկանց վերադարձնել նախկին ավանդույթներին և համոզմունքներին, անանուխից և փեզենայից տասանորդ վերադարձնելուն, և կրկին կվերականգնվեր մարդկանց նկատմամբ նրանց ազդեցությունը: Նրանք համաձայնեցին Հիսուսին բռնել այն պիտի պահի, երբ Նա միայնակ կլիներ, քանի որ եթե Հիսուսին բռնեին ամբոխի մեջ, մարդիկ կքարկոծեին նրանց:

Հուդան գիտեր, թե քահանաները որքան բուռն ցանկություն ունեին բռնել Հիսուսին, և առաջարկեց Նրան մատնել քահանայապետերին և ծերերին արծաթե ընդամենը մի քանի մետաղադրամներով: Դրամի նկատմամբ նրա սերը ստիպեց նրան Իր Տիրոջը մատնել չարագործների ձեռքը: Սատանան գործում էր անմիջականորեն Հուդայի միջոցով, և վերջին ընթրիքի ամենաազրու պահին նա ծրագիր էր մտահղանում, թե ինչպես մատներ Հիսուսին: Հիսուսն Իր աշակերտներին տխրությամբ ասաց, որ նրանք բոլորն այդ գիշեր կլքեն Իրեն: Սակայն Պետրոսը կտրուկ կերպով հայտարարեց, որ եթե նույնիսկ բոլորն ուրանան Նրան, ինքը չի ուրանա: Հիսուսն ասաց Պետրոսին. «Ահա սատանան ձեզ ուզեց, որ մաղի ցորենի պես: Բայց ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատը չպակասի, և դու երբ որ դառնաս, եղբայրներիդ հաստատիր»:

Այնուհետև ես տեսա Հիսուսին Իր աշակերտների հետ պարտեզում: Խորին տխրությամբ Նա պատվիրեց նրանց լինել արթուն և աղոթել, որպեսզի չընկնեն փորձության մեջ: Հիսուսը գիտեր, որ նրանց հավատը պետք է փորձվի, նրանք հուսախաբ կլինեին և մեծագույն ուժի կարիք կունենային, ինչը նրանք կարող էին ստանալ միայն ջերմեռանդ աղոթքների միջոցով: Բարձր աղաղակով և լացով Հիսուսը խնդրում էր. «Իմ Հայր, եթե կարելի է՝ թող այս բաժակն Ինձանից անցնի, սակայն ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու»: Աստծո Որդին տանջահար աղոթում էր: Քրտնքի արնանման կաթիլները հոսում էին Նրա դեմքից և գլորվում հողին: Հրեշտակները ճախրում էին՝ վկա դառնալով այդ տեսարանին, այն դեպքում, երբ միայն մեկն էր լիագործված գալ և գորակցել Աստծո Որդուն Իր հոգեվարքի պահին: Ոչ մի ուրախություն չկար երկնքում: Երկնային հրեշտակները մի կողմ էին նետել իրենց պսակներն ու քնարները և մեծագույն հետաքրքրությամբ լուռ հետևում էին Հիսուսին: Նրանք ցանկանում էին շրջապատել Աստծո Որդուն, սակայն գլխավոր հրեշտակներն արգելում էին այդպես վարվել, որպեսզի չկանխեն Հուդայի դավաճանությունը և չազատեն Նրան. չէ՞ որ հենց այդպես էր ծրագրված, և այդ ամենը պետք է ճշգրտությամբ կատարվեր:

Աղոթքից հետո Հիսուսն եկավ Իր աշակերտներին տեսնելու: Նրանք քնած էին: Այդ ահռելի պահին Նրան խիստ անհրաժեշտ էին Իր աշակերտների աջակցությունն ու աղոթքները: Պետրոսը, ով քիչ առաջ լի էր եռանդով, շատ խորը քնած էր: Հիսուսը նրան հիշեցրեց իր լավատեսական հայտարարությունները և ասաց. «Այդպես՝ մեկ ժամ էլ չկարողացաք ինձ հետ արթուն մնալ»: Երեք անգամ Աստծո Որդին հոգեվարքի մեջ աղոթում էր, երբ հրոսակախմբով հայտնվեց Հուդան: Նա, ըստ սովորության, ողջունեց Հիսուսին: Ամբողջ շրջապատեց Հիսուսին, սակայն Նա ցույց տվեց Իր աստվածային իշխանությունն՝ ասելով. «Ո՞ւմ եք փնտրում: Ես եմ»: Բոլորը ընկրկեցին: Հիսուսն այդպես վարվեց, որպեսզի նրանք տեսնեն Իր զորությունը և հասկանան, որ եթե ցանկանար, կարող էր Իրեն ազատել նրանց ձեռքից:

Աշակերտների մոտ հույս ծագեց, երբ փայտերով և սրերով զինված ամբոխը նահանջեց: Երբ նրանք վեր ելան և նորից շրջապատեցին Աստծո Որդուն, Պետրոսը հանեց սուրը և կտրեց քահանայապետի ծառայի ականջը: Հիսուսն արգելեց նրան սուր բարձրացնել և ասաց. «Կարծում ես՝ չե՞մ կարող իմ Հորն աղաչել, որ հասցնի ինձ

ավելի քան տասներկու գունդ հրեշտակներ»։ Ես տեսա, որ այս խոսքերից հետո հրեշտակների դեմքերը պայծառացան։ Նրանք ցանկանում էին շրջապատել իրենց Հրամանատարին և ցրել կատաղի ամբոխը։ Սակայն նորից տխրություն իջավ նրանց վրա, երբ Հիսուսն ավելացրեց. «Բայց ինչպե՞ս կկատարվեն գրքերը, թե այսպես պետք է լինի»։ Աշակերտների սրտերում կրկին հուսահատություն և խոր հիասթափություն տիրեց, երբ Հիսուսին բռնեցին ու տարան։

Աշակերտներն անհանգստացած էին իրենց կյանքի համար, և նրանցից յուրաքանչյուրը գնաց իր ճանապարհով, իսկ Հիսուսը մնաց միայնակ։ Օ՛հ, ինչպիսի հաղթանակ էր տոնում սատանան։ Եվ այդժամ ինչպիսի թախիժ և տխրություն էր պատել Աստծո հրեշտակներին։ Սուրբ հրեշտակների բազմաթիվ խմբեր՝ յուրաքանչյուրն իր հրամանատար հրեշտակի գլխավորությամբ, ուղարկվեցին վկայելու այս իրադարձության մասին։ Նրանք պետք է գրանցեին Աստծո Որդու նկատմամբ կատարված յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր անարգանք ու դաժանություն և չարչարանքի յուրաքանչյուր սուր ցավ, որը Հիսուսը պետք է կրեր։

Տե՛ս Մատթևոս 26.1-56, Մարկոս 14.1-52, Ղուկաս 22.1-46, Հովհաննես 11-րդ գլուխ, 12.1-11, 18.1-12:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԿԱՏԱՐԱՐ

Հրեշտակները, թողնելով երկինքը, տխրությամբ մի կողմ դրեցին իրենց փառահեղ պսակները: Նրանք չէին կարող կրել դրանք, քանի դեռ իրենց Հրամանատարը տառապում էր և ստիպված էր կրել փշե պսակը: Սատանան և նրա հրեշտակները դատավարության դահլիճում զբաղված էին մարդասիրության և կարեկցանքի ոչնչացմամբ: Մթնոլորտը ճնշող էր և աղտոտված նրանց ազդեցությամբ: Քահանայապետերը և ավագները ոգեշնչվել էին նրանցից, որպեսզի մարդկային էության համար ընդունելի ամենադաժան կերպով վիրավորեն և անարգեն Հիսուսին: Սատանան հույս ուներ, որ այդպիսի անարգանքը և տառապանքը Աստծո Որդու մոտ դժգոհություն կամ բողոք կառաջացներ, կամ Նա կդրսևորեր Իր աստվածային գործությունը և Իրեն կազատեր կատաղի ամբոխի ձեռքից, և այդպիսով փրկության ծրագիրը, վերջապես, անհաջողության կմատնվեր:

Պետրոսը մատնությունից հետո հետևում էր Տիրոջը: Նա մտահոգ էր տեսնելու, թե ինչ կկատարվի Հիսուսի հետ: Սակայն երբ Պետրոսին մեղադրեցին, որ նա նույնպես Հիսուսի աշակերտներից մեկն է, նա ուրացավ: Պետրոսը վախենում էր իր կյանքի համար, և երբ նրան ասացին, որ նա նրանցից մեկն է, հայտարարեց, որ չգիտի այդ մարդուն: Աշակերտները տարբերվում էին իրենց խոսքերի մաքրությամբ, և Պետրոսը, ով պիտի ապացուցեր, որ ինքը Քրիստոսի աշակերտներից չէ, երրորդ անգամ հրաժարվեց անեծքով և երդմամբ: Հիսուսը, ով գտնվում էր Պետրոսից ոչ հեռու, Իր վշտալի հանդիմանական հայացքն ուղղեց նրան: Այդժամ Պետրոսը հիշեց վերնատանն իրեն ուղղված Հիսուսի խոսքերը և իր եռանդուն հայտարարությունը. «Թեև ամենը գայթակղվեն քեզանից, ես երբեք չեմ գայթակղվի»: Նա ուրացավ իր Տիրոջը նույնիսկ անեծքով և երդմամբ, սակայն Հիսուսի

հայացքը կանգնեցրեց Պետրոսին և փրկեց նրան: Նա դառնապես լաց եղավ և գոջաց իր ահավոր մեղքի համար, ապաշխարեց և այնուհետև արդեն պատրաստ էր ամրապնդելու իր եղբայրներին:

Ամբոխը Հիսուսի արյունն էր պահանջում: Նրան դաժանաբար մտրակեցին, հին ծիրանի հագցրին և Նրա սուրբ գլուխը պատեցին փշե պսակով: Նրանք գավազան տվեցին Նրա ձեռքը՝ ծաղրաբար խոնարհվելով Նրա առջև և ողջունելով հետևյալ խոսքերով. «Յնձա՛, ով Հրեաների Թագավոր»: Այնուհետև Նրա ձեռքից վերցնելով փայտը՝ խփեցին Նրա գլխին՝ պսակի փշերը խրելով քունքը, իսկ արյունը հոսում էր Նրա դեմքի և մորուքի վրայով:

Հրեշտակների համար ծանր էր այդ տեսարանիը: Նրանք Հիսուսին կազատեին նրանց ձեռքից, սակայն հրամանատար հրեշտակներն արգելել էին՝ ասելով, որ դա մեծագույն փրկանք էր, որն անհրաժեշտ էր վճարել մեղավոր մարդու համար, այն կկատարվի, և մահվան կղատապարտվի Նա, ով իշխանություն ունի մահվան նկատմամբ: Հիսուսը գիտեր, որ հրեշտակներն Իր անարգանքի վկաներն էին: Ես տեսա, որ նույնիսկ ամենաթույլ հրեշտակը կարող էր ազատագրել Հիսուսին և այդ ամբոխին ստիպել անգոր ընկնել Նրա առջև: Նա գիտեր, որ եթե խնդրեր Իր Հորը, հրեշտակներն անհապաղ կազատագրեին Իրեն: Սակայն անհրաժեշտ էր, որպեսզի Հիսուսը կրեր չարամիտ մարդկանց պատճառած ամենաժանր տառապանքները՝ իրականացնելու փրկության ծրագիրը:

Հիսուսը հեզաբարո և խոնարհությամբ կանգնել էր կատաղի ամբոխի առջև, մինչդեռ նրանք Իրեն ամենադաժան վիրավորանքներն էին հասցնում: Նրանք թքում էին Նրա դեմքին՝ այն դեմքին, որից մի օր կցանկանան թաքնվել, որը լույս կտա Աստծո քաղաքին և կշողա արևից ավելի պայծառ, սակայն Նա բարկացկոտ հայացքով չէր նայում Իրեն անարգողներին: Նա համեստորեն բարձրացրեց ձեռքը և սրբեց դեմքը: Նրանք Հիսուսի գլուխը ծածկեցին հին հագուստով, կապեցին Նրա աչքերը և այնուհետև ապտակելով Նրա դեմքին՝ բացականցեցին. «Մարգարեացիր, Քրիստոս, ո՞վ հարվածեց քեզ»: Հուզումներ առաջացան հրեշտակների շրջանում: Նրանք անհապաղ կփրկեին Նրան, սակայն նրանց հրամանատար հրեշտակը զսպեց նրանց:

Աշակերտներին թույլ տրվեց ներկա գտնվել և Նրա դատավարության վկաները դառնալ: Նրանք ակնկալում էին, որ Նա ցույց

կտա Իր աստվածային ուժը, Իրեն կփրկի թշնամիների ձեռքից և նրանց կպատժի: Տարբեր իրավիճակներում նրանց հույսը երբեմն բոցավառվում էր, երբեմն՝ մարում: Երբեմն նրանք տարակուսում էին և վախենում, որ խաբված են: Սակայն Այլակերպության սարի վրա նրանք լսել էին ձայնը և տեսել փառքը, որոնք վկայում էին նրանց և հաստատում, որ Նա Աստծո Որդին էր: Անցյալում նրանք զարմանահրաշ իրավիճակների էին ականատես եղել, երբ Հիսուսը բժշկում էր հիվանդներին, բացում էր կույրերի աչքերը, խուլերի ականջները, հանում դևերին և հեռու վանում նրանց, մեռյալներին հարություն տալիս և նույնիսկ սաստում փոթորիկը: Նրանք չէին կարող հավատալ Հիսուսի մահին: Նրանք հույս ունեին, որ Նա Իր հրամայական ձայնով կցրի այդ արնախում ամբոխն այնպես, ինչպես որ մուտք գործեց տաճար և վռնդեց նրանց, ովքեր Աստծո տունը առևտրի վայր էին դարձրել, իսկ նրանք փախան Հիսուսի առջևից, ասես, զինվորների խումբ էր հետապնդում իրենց: Ի վերջո աշակերտները հույս ունեին, թե Հիսուսը կդրսևորի Իր ուժը և կհավաստիացնի բոլորին, որ Ինքն Իսրայելի թագավորն է:

Հուդան լի էր զոչումով և ամոթ էր զգում Հիսուսին դավաճանելու նենգ քայլի համար: Եվ երբ դարձավ Հիսուսի տառապանքների վկան, ապշած էր: Նա սիրում էր Հիսուսին, սակայն փողն ավելի էր սիրում: Նա չէր կարծում, թե իր բերած մարդիկ տառապանք կպատճառեն Հիսուսին: Հուդան մտածում էր, որ Հիսուսը հրաշքով Իրեն կազատի նրանց ձեռքից: Սակայն երբ կատաղած ամբոխին տեսավ դատարանի դահլիճում, ովքեր Նրա արյունն էին պահանջում, խորապես գիտակցեց իր մեղքը և այնժամ, երբ շատերը վճռականորեն մեղադրում էին Հիսուսին, Հուդան լռեց՝ վկայելով, որ նա մեղանչել է՝ անմեղ արյուն մատնելով: Նա նրանց փող առաջարկեց և խնդրեց նրանց ազատել Հիսուսին՝ հայտարարելով, որ Նա միանգամայն անմեղ է: Չայրույթը և շփոթությունը քահանաներին ստիպեցին կարճ ժամանակ լռել: Նրանք չէին ցանկանում, որպեսզի մարդիկ իմանային, որ իրենք վարձել են Հիսուսի մտերիմ հետևորդներից մեկին, որպեսզի Նրան մատնի իրենց ձեռքը: Նրանք Հիսուսին բռնել էին ինչպես ավազակի և դա գաղտնի էին արել: Սակայն Հուդայի խոստովանությունը, նրա տառապանքը և մեղքից ապաշխարումը ամբոխի առջև բացահայտեց քահանաներին՝ երևան հանելով այն ատելությունը, որը ստիպել էր նրանց բռնել Հիսուսին: Քանի որ Հուդան բարձրաձայն հայտարարել

էր, թե Հիսուսն անմեղ է, քահանաները պատասխանեցին. «Մե՞զ ինչ: Դու տես»: Նրանք իշխանություն ունեին Հիսուսի նկատմամբ և լի էին նրան ստիպելու վճռականությամբ: Հուդան, ճնշվելով մեղքի զգացումից, դրամները, որոնք այժմ արհամարհում էր, նետեց այն մարդկանց ոտքերի մոտ, ովքեր վարձել էին իրեն, և տանջահար ու իր արարքի դաժանության գիտակցումով գնաց և ինքնասպան եղավ:

Այդ մարդկանց շրջանում Հիսուսը բազում համակիրներ ուներ, և բազմաթիվ հարցերին ի պատասխան Նրա լռությունն ապշեցրել է նրանց: Չնայած բոլոր վիրավորանքներին և ծաղրանքին՝ Հիսուսի դեմքի արտահայտությունը ո՛չ մռայլ էր, ո՛չ էլ անհանգիստ: Այն վեհապանձ էր և զուսպ: Հիսուսը կատարյալ և վեհաքանչ տեսք ուներ: Ականատեսները զարմանքով էին նայում Հիսուսին: Նրա անխռով դեմքը, հաստատականությունը և վեհապանձ վարքագիծը նրանք համենատում էին նրանց հետ, ովքեր դատարանում նստած էին Նրա առջև և միմյանց ասում էին, որ Նա ավելի շատ էր նման Թագավորություն ունեցող Թագավորի, քան առաջնորդներից որևէ մեկը: Հիսուսի դեմքը հանցավորության ոչ մի նշույլ չուներ: Նրա աչքերը մեղմ էին, ջինջ և անայլայլ, ճակատը՝ լայն և բարձր: Յուրաքանչյուր դիմագիծ խիստ ընդգծված էր բարյացակամության և վստեմության փայլով: Նրա համբերատարությունը և զսպվածությունն այնքան տարբեր էին մարդկային սկզբունքներից, որ շատերը ցնցված էին: Նույնիսկ Հերովդեսը և Պիղատոսն էին անհանգստացած Նրա վստեմությունից և աստվածանման վարքից:

Պիղատոսը հենց սկզբից ասում էր, որ Նա հասարակ մարդ չէ: Նա հավատում էր, որ Հիսուսը միանգամայն կատարյալ անձնավորություն է: Հրեշտակները, ովքեր ողջ կատարվածի վկաներն էին, մատնանշում էին Պիղատոսի խորը համոզումները և նրա համակրանքն ու կարեկցանքը Հիսուսի հանդեպ: Հիսուսին խաչելության մատնելու տակալի քայլին մասնակցելուց նրան փրկելու համար հրեշտակը երազում նրան հայտնվեց Պիղատոսի կնոջը և հայտնեց, որ Պիղատոսը մասնակցում է Աստծո Որդու դատավարությանը, և որ Նա անմեղ տառապյալ է: Կինը Պիղատոսին անհապաղ լուր ուղարկեց, որ ինքը երազում տանջվել է Հիսուսի պատճառով, և զգուշացրեց նրան ոչինչ չանել սուրբ մարդու հետ: Լրաբերն արագորեն անցավ ամբոխի միջով և ուղերձը հանձնեց Պիղատոսին: Ընթերցելուց հետո նա դողաց և գունատվեց: Պիղատոսն անմիջապես որոշեց, որ ոչինչ չի անի,

և եթե պահանջեն Հիսուսի արյունը, նա մասնակցություն չի ունենա դրանում, այլ կփորձի ազատել Նրան:

Երբ Պիղատոսը լսեց, որ Հերովդեսը գտնվում է Երուսաղեմում, ուրախացավ և հույս ուներ իրեն լիովին ազատել այդ տիաճ պարտականությունից և չմասնակցել Հիսուսի դատապարտությանը: Նա Հիսուսին Իր մեղադրողների հետ ուղարկեց Հերովդեսի մոտ: Հերովդեսը դաժան էր դարձել: Հովհաննեսի սպանությունը հետք էր թողել նրա խղճի վրա, ինչը նա ինքնուրույն չէր կարող մաքրել, և երբ լսեց Հիսուսի և Նրա կատարած գործերի մասին, կարծեց, թե դա մեռելներից հարություն առած Հովհաննեսն է: Նա վախենում էր և դողում, քանզի իր խղճի վրա կրում էր մեղքի բեռը: Պիղատոսը Հիսուսին տվեց Հերովդեսի ձեռքը: Հերովդեսն այդ քայլը գնահատեց իբրև Պիղատոսի կողմից իր իշխանության, հեղինակության և դատավճռի հաստատում: Նրանք նախկինում թշնամիներ էին, իսկ այժմ ընկերներ դարձան: Հերովդեսն ուրախ էր տեսնել Հիսուսին, քանի որ ակնկալում էր, թե Հիսուսը որոշ հրաշքներ կգործի՝ ի վկայություն Իր ուժի: Սակայն Հիսուսի առաքելությունը Նրա հետաքրքրասիրությունը բավարարելը չէր: Նրա աստվածային և հրաշագործ ուժը պետք է օգտագործվեր այլոց փրկության, ոչ թե իր օգուտի համար:

Հիսուսը ոչինչ չպատասխանեց Հերովդեսի բազմաթիվ հարցադրումներին և չարձագանքեց Իր թշնամիներին, ովքեր մեղադրանքներ էին հղում Իր հասցեին: Հերովդեսը կատաղեց, քանզի Հիսուսը չէր վախենում նրա իշխանությունից և զինվորներից, ովքեր ծիծաղում, ծաղրում և դաժանաբար էին վերաբերում Աստծո Որդուն: Հերովդեսն ապշել էր Հիսուսի վեհապանձ, աստվածաման դեմքից և Նրան դատապարտելու մտքից ամոթահար և վախեցած՝ Նրան ետ ուղարկեց Պիղատոսի մոտ:

Սատանան և նրա հրեշտակները գայթակղում էին Պիղատոսին՝ փորձելով առաջնորդել նրան իր ավերակներով: Նրանք ներշնչեցին նրան, որ եթե նա չմասնակցի Հիսուսի դատապարտությանը, այլոք կանեն դա, ամբոխը պահանջում էր Նրա արյունը, և եթե նա Հիսուսին ազատեր խաչելությունից, նա կկորցներ իր իշխանությունը և աշխարհային փառքը, կդատապարտվեր որպես ինքնակոչի կողմնակից, ինչպես նրանք անվանում էին Հիսուսին: Իր իշխանությունը և հեղինակությունը կորցնելու վախից դրդված՝ Պիղատոսը համաձայնեց Հիսուսին մահվան դատապարտել: Եվ չնայած նա Հիսուսի

արյունը դրեց Նրա մեղադրողների վրա, դրան համաձայնելով՝ ամբոխն աղաղակեց. «Նրա արյունը մեզ վրա և մեր որդկանց վրա», միևնույնն է, Պիղատոսն արդար չէր, նա մեղավոր էր Քրիստոսի արյան հարցում: Ելնելով իր եսասիրական շահերից և այս աշխարհի մեծերի կողմից փառքի արժանանալու ձգտումից՝ նա անմեղ մարդուն մահվան դատապարտեց: Եթե Պիղատոսը հետևեր իր համոզմունքներին, Հիսուսին չէր դատապարտի:

Հիսուսի նկատմամբ դատավարությունը և դատավճիռը դեռևս քազում մարդկանց ստեբերում էին, իսկ Նրա հարությունից հետո Նրա ազդեցությունը ավելի տարածվեց: Նրանցից շատերը, ում համոզմունքները արմատավորվել էին Հիսուսի դատավարության ժամանակ, միացան եկեղեցուն:

Սատանայի ատելությունն ահռելի էր: Տեսնելով, որ ողջ դաժանությունը, որը նա ներշնչել էր քահանայապետերին՝ դրսևորելու Հիսուսի նկատմամբ, Նրա մոտ դժգոհության ոչ մի նշույլ չէր արթնացրել, նա կատաղել էր: Ես տեսա, որ թեև Հիսուսը ստացել էր մարդկային էություն, աստվածային ուժը և տոկունությունը նեցուկ եղան Նրան, և Նա նույնիսկ այդ պարագայում չիրաժարվեց Հոր կամքից:

Տես Մատթեոս 26.57-75, 27.1-31, Մարկոս 14.53-72, 15.1-20, Ղուկաս 22.47-71, 23.1-25, Հովհաննես 18-րդ գլուխ, 19.1-16

ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Աստծո Որդին տրվեց մարդկանց ձեռքը՝ խաչվելու: Նրանք ուղեկցում էին քանկազին Փրկչին: Նա թույլ էր ու տկար: Սակայն Հիսուսի ուսին դրեցին ծանր խաչը, որին շուտով պետք է գամեին Նրան: Հիսուսն ընկավ այդ ծանրությունից: Երեք անգամ Հիսուսի ուսին դրեցին ծանր խաչը, և երեք անգամն էլ Նա ընկավ: Այդժամ նրանք բռնեցին Նրա հետևորդներից մեկին՝ մարդու, ով բացեիքաց չէր արտահայտում իր հավատն առ Քրիստոս, սակայն հավատում էր Նրան: Այդ մարդու վրա դրեցին խաչը, և նա տարավ այն խաչելության վայրը: Հրեշտակների խմբերը ճախրում էին օդում: Հիսուսի աշակերտներից շատերը տառապալից լացով ուղեկցում էին Նրան դեպի Գողգոթա սարը: Նրանք մտաբերում էին Հիսուսի վերջին փառահեղ մուտքը Երուսաղեմ, երբ հետևում էին Նրան՝ բացականչելով՝ «Օվսաննա բարձունքներում» և ճանապարհին փռելով իրենց հագուստներն ու արմավենու գեղեցիկ ճյուղերը: Հրեշտակները կարծում էին, թե Հիսուսը շուտով կստանձնի թագավորությունը և հավերժ կգահակալի Իսրայելում: Ինչպե՞ս փոխվեց իրավիճակը: Ինչպե՞ս հոդս ցնդեցին ապագայի նրանց ծրագրերը: Նրանք հետևում էին Հիսուսին, սակայն ո՛չ ցնծությամբ, ո՛չ ուրախ սրտով և պայծառ հույսերով, այլ տագնապով և հիասթափությամբ: Դանդաղ, տրտում քայլերով ուղեկցում էին Նրան՝ ստորացված և խայտառակված մեկին, ով շուտով պետք է մեռներ:

Այնտեղ էր Հիսուսի մայրը: Նրա սիրտը լի էր հոգեմաշ տառապանքով, ինչպիսին կարող էր զգալ միայն սիրառատ մայրը: Նա էլ, աշակերտների նման, դեռևս հույս ուներ, որ իր Որդին գորեղ հրաշքներ կկատարի և Իրեն կազատի մարդասպանների ձեռքից: Սակայն ամեն ինչ պատրաստ էր: Հիսուսին պառկեցրին խաչի վրա: Բերվել

էին մուրճ և գամեր: Աշակերտների սրտերը քարացան: Հիսուսի մայրը տագնապեց, և երբ պարզեցին Հիսուսի ձեռքերը և պատրաստվում էին երկաթե մեխերով խաչափայտին գամել Նրան, աշակերտները նրա մորը հեռու տարան այդ վայրից, որպեսզի նա չլսեր մեխերի հարվածները, երբ դրանք մխրճվում էին Նրա նուրբ ձեռքերի և ոտքերի ոսկրերի ու մկանների մեջ: Հիսուսը չէր դժգոհում, այլ հառաչում էր հոգեվարքի մեջ: Նրա դեմքը գունատ էր, և քրտինքի մեծ կաթիլները գլորվում էին ճակատից: Սատանան ցնծում էր այն տանջանքներից, որ կրում էր Աստծո Որդին, սակայն միաժամանակ վախենում էր, որ իր թագավորությունը կվերանա, և ինքը կկործանվի:

Հիսուսին գամելուց հետո բարձրացրին խաչը և ուժգնությամբ խրեցին հողի մեջ, որտեղ նա պետք է հառներ՝ պատառոտելով մարմինը և դաժան տառապանքներ պատճառելով Նրան: Նրա մահը դարձրին ամոթալի, որքան դա հնարավոր էր: Հիսուսի հետ՝ Նրա աջ և ձախ կողքերին խաչեցին երկու ավազակների: Ավազակներին բերեցին ուժով, նրանց ձեռքերը հետ պարզվեցին ու նրանց գամեցին խաչին: Հիսուսը խոնարհությամբ հնազանդվում էր: Նրա ձեռքերը ուժով խաչին գամելու անհրաժեշտություն չկար: Այն ժամանակ, երբ ավազակներն անիծում էին իրենց դահիճներին, Հիսուսը հոգեվարքի մեջ աղոթում էր Իր թշնամիների համար. «Հայր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»: Հիսուսը միայն մարմնական հոգեվարք չէր ապրում, Նրա վրա էր դրված ողջ աշխարհի մեղքը:

Երբ Հիսուսին գամեցին խաչին, որոշ մարդիկ տարուբերում էին իրենց գլուխները և ասում Նրան. «Ո՛վ տաճարը քանդող և երեք օրում շինող, ազատի՛ր քեզ: Եթե Աստծո Որդի ես, իջի՛ր խաչից»: Սատանան նույն խոսքերն օգտագործեց անապատում Քրիստոսի հետ խոսելիս. «Եթե Աստծո Որդի ես...»: Քահանայապետերը, ծերերը և դպիրները ծաղրանքով ասում էին. «Ուրիշներին ազատեց, ինքն իրեն չի կարողանում ազատել: Թե որ Իսրայելի թագավորն է, իջնի հիմա խաչից և կհավատանք նրան»: Հրեշտակները վրդովվել էին, քանի որ լսում էին ծաղրական խոսքերը. «Եթե Աստծո Որդին է, թող ազատի իրեն»: Նրանք ցանկանում էին գալ և փրկել Հիսուսին՝ ազատելով Նրան, սակայն նրանց թույլ չէր տրված այդ անել: Նրա առաքելությունը գրեթե կատարված էր: Թեպետև Հիսուսն այդ ծանր հոգեվարքի պահին գամված էր խաչին, սակայն չէր մոռացել Իր մորը: Նա չէր կարող հեռու մնալ տառապանքի տեսարանից: Հիսուսի

վերջին դասը կարեկցանքի և մարդասիրության դասերից մեկն էր: Նա նայեց Իր մորը, ում սիրտը պայթում էր վշտից, այնուհետև՝ Իր սիրելի աշակերտին՝ Հովհաննեսին ու ասաց. «Ահա քո մայրը»: Եվ դրանից հետո Հովհաննեսը Հիսուսի մորն իր տուն տարավ:

Հիսուսը ծարավ էր հոգեվարքի մեջ, սակայն Նրան ավելի էին վիրավորում ջրի տեղ քացախ տալով: Հրեշտակները տեսան իրենց սիրելի Հրամանատարի խաչելության սահմուկեցուցիչ տեսարանը, այլևս չկարողացան նայել և իրենց երեսը ծածկեցին: Արեգակն անգամ հրաժարվեց նայել այդ զարհուրելի տեսարանին: Հիսուսը բարձրաձայն աղաղակեց, ինչը սարսափ սփռեց Նրա դահիճների սրտերում. «*Կարարված է*»: Այդժամ տաճարի վարագույրը վերևից ներքև պատռվեց, երկիրը ցնցվեց, և ժայռերը փշրվեցին: Անթափանց խավար էր իջել երկրի վրա: Թվում էր՝ աշակերտների վերջին հույսը մարել էր. չէ՞ որ Հիսուսը մահացել էր: Նրա հետևորդներից շատերը դարձան Նրա տառապանքի և մահվան վկաները, և նրանց հոգու բաժակը լի էր դառնությամբ:

Այս ամենից հետո սատանան չէր ցնծում: Նա հույս ուներ, թե կարող է խափանել փրկության ծրագիրը, սակայն դա անհնարին էր: Ընդդիմ Հիսուսի մահվան՝ այժմ նա հասկացավ, որ վերջապես ինքը կմեռնի, և իր թագավորությունը կտրվի Հիսուսին: Նա խորհրդակցեց իր հրեշտակների հետ: Սատանան չկարողացավ գերազանցել Աստծո Ռոբուն, և հիմա նա և իր հեռշտակները պետք է ավելացնեին իրենց ջանքերը՝ ուժով ու խորամանկությամբ հաղթելու Հիսուսի հետևորդներին: Նրանք հնարավորինս պետք է խանգարեին մարդկանց՝ ձեռք բերել Հիսուսի պարգևած փրկությունը: Այդպես սատանան տակավին կարող էր շարունակել Աստծո իշխանության դեմ պայքարը: ‘Դա նաև իր շահերից էր բխում՝ Հիսուսից հեռացնել բոլոր նրանց, ում հնարավոր է, քանի որ այն մեղքերը, որոնք քավված են Քրիստոսի արյունով, ի վերջո կդրվեն մեղքի սկզբնաղբյուրի՝ սատանայի վրա:

Հիսուսի կյանքն անցել է առանց աշխարհային շքեղության կամ շռայլության: Նրա խոնարհ, անձնուրաց կյանքը բացարձակապես նման չէր քահանաների և ծերերի կյանքին, ովքեր սիրում էին անբռնազբոսիկ վարքն ու աշխարհային փառքը: Հիսուսի սուրբ կյանքը նրանց համար իրենց մեղքերի դատավճիռն էր: Նրանք ծաղրում էին Հիսուսին Իր համեստության և անմեղության համար: Սակայն նույն

այդ ծաղր անողները մի օր Նրան կտեսնեն երկնային շքեղությամբ և Իր Հոր անգերազանցելի փառքով: Դատարանի դահլիճում Հիսուսը շրջապատված էր թշնամիներով, ովքեր ծարավ էին Նրա արյանը, սակայն նրանք, ովքեր գոռում էին. «Նրա արյունը մեր և մեր որդիների վրա», կպատվեն Նրան որպես երկնային Արքա: Երկնքի բոլոր բնակիչները կուղեկցեն Նրան հաղթանակի երգերով, փառաբանությամբ և մեծափառությամբ ինչպես մեկին, ով մահացել էր, սակայն կրկին ապրում է որպես սրտերի հզոր նվաճող: Աղքատ, թույլ, դժբախտ մարդը թքում էր փառքի Արքայի դեմքին, մինչ գազանաբարո ցնծության աղաղակները վերաճեցին խուժանի ստորացուցիչ վիրավորանքների: Նրանք հարվածներով այլանդակեցին Հիսուսի դեմքն այնպիսի դաժանությամբ, որ ողջ երկինքը համակվեց սարսափով: Նրանք այդ դեմքը կրկին կտեսնեն՝ պայծառ, ինչպես կեսօրվա արեգակը, և կփորձեն թաքնվել Նրա երեսից: Վայրագ ցնծությամբ աղաղակելու փոխարեն՝ նրանք սարսափահար կփախչեն Հիսուսից: Նա ցույց կտա խաչելության սպիներով պատված Իր ձեռքերը: Այդ դաժանության հետքերը Նա հավերժ կկրի Իր ձեռքերին: Մեխի յուրաքանչյուր նշան կպատմի մարդու հրաշալի փրկագնման և թանկ գնի մասին, որով նա գնվել է: Նույն մարդիկ, ովքեր նիզակը խրել են կյանքի Տիրոջ կողը, կտեսնեն նիզակի հետքը և խորունկ տառապանքով կողբան այն քայլը, որով տանջանք են պատճառել Նրա մարմնին: Նրա դահիճներն անհանգստացած էին **«Հրեաների Թագավոր»** գրվածքից, որը տեղադրված էր խաչի վրա՝ Նրա գլխավերևում: Սակայն այդժամ նրանք կտեսնեն Հիսուսին Իր ողջ փառքով և թագավորական իշխանությամբ: Նրանք կտեսնեն Նրա հագուստի և ազդրի վրա գրված հետևյալ բառերը. **«Թագավորների Թագավոր և Տերերի Տեր»**: Նրանք ծաղրանքով աղաղակում էին, երբ Նա գամված էր խաչին. «Թող Քրիստոսը՝ Իսրայելի Թագավորը, իջնի խաչից, որ տեսնենք և հավատանք»: Այնուհետև նրանք կտեսնեն Նրան արքայական գործությամբ և իշխանությամբ: Նրանք ոչ մի ապացույց չէին պահանջում Հիսուսի՝ Իսրայելի Թագավոր լինելու վերաբերյալ, սակայն ցնցված Նրա գործությամբ և մեծափառությամբ՝ նրանք հարկադրված կընդունեն. «Օրինյալ է Տիրոջ անունով եկողը»:

Երկրաշարժը, փշրված ժայռերը, երկրի վրա սփռված խավարը և Հիսուսի բարձրաձայն աղաղակը. «Կատարվեց», շփոթեցրեց Նրա թշնամիներին և դահիճներին ստիպեց դողալ: Աշակերտները զար-

մացան այդ իրադարձությունների անսովորությունից, նրանց հույսը վերջնականապես մարեց: Նրանք վախենում էին, որ հրեաները կփորձեն իրենց նույնպես ոչնչացնել, և կարծում էին, որ Աստծո Որդու նկատմամբ այդպիսի ատելությունը շարունակություն կունենա: Աշակերտները տրտում էին, միայնակ, դառնացած ու հիասթափված: Նրանք սպասում էին, թե Հիսուսը կգահակալի, սակայն նրանց հույսերը մարեցին: Նրանք վշտից և հիասթափությունից նույնիսկ տարակուսում էին, թե արդյոք Հիսուսը չի՞ մոլորեցրել իրենց: Հիսուսի մայրն ընկճված էր, և նույնիսկ նրա հավատը սասանվեց:

Թեև աշակերտները հուսախաբ էին եղել, բայց նրանք դեռևս սիրում էին Հիսուսին և ցանկանում էին հոգ տանել Ուսուցչի մարմնին, սակայն չգիտեին, թե ինչպես ստանալ այն: Բարեպաշտ խորհրդատու Արիմաթացի Հովսեփը մեծ ազդեցություն ուներ և Հիսուսի ճշմարիտ աշակերտներից էր: Նա գաղտնի, սակայն համարձակությամբ մոտեցավ Պիղատոսին և խնդրեց Նրա մարմինը: Նա չհամարձակվեց բացահայտորեն ասել այդ մասին, քանզի հրեաների ատելությունն այնքան մեծ էր, որ աշակերտները վախենում էին, թե նրանք կփորձեն խոչընդոտել Հիսուսի մարմնին ըստ արժանվույն հողին հանձնելուն: Սակայն Պիղատոսը բավարարեց նրա խնդրանքը, և երբ նրանք Հիսուսի մարմնին իջեցրին խաչից, նրանց տխրությունը սաստկացավ. խորագույն վշտով նրանք սգում էին իրենց Ուսուցչի մահը և ցավում խորտակված հույսերի համար: Նրանք Հիսուսի մարմինը ծածկեցին սավանով, և Հովսեփը Նրան դրեց իր սեփական գերեզմանոցում: Կանայք, ովքեր Հիսուսի խոնարհ հետևորդներն էին, մնացին Նրա կողքին մահ մահից հետո և չթողեցին Նրան, մինչ տեսան, որ Հիսուսի սուրբ մարմինը տեղափոխեցին գերեզման և մուտքին գլորեցին մեծ քար, որպեսզի թշնամիները չգողանան այն: Սակայն նրանք չպետք է վախենային, քանզի ես տեսա, որ հրեշտակների բազմությունն անասելի ուշադրությամբ ու հետաքրքրությամբ հետևում էր Հիսուսի գերեզմանին: Նրանք պահպանում էին գերեզմանը՝ սպասելով հրամանի՝ կատարելու փառքի Արքային բանտից ազատագրելու իրենց մասնաբաժինը:

Քրիստոսի դահիճները վախենում էին, թե Նա կկենդանանա և կհեռանա իրենցից: Նրանք խնդրեցին Պիղատոսին գերեզմանը հսկել մինչև երրորդ օրը: Նրա գերեզմանը պահպանելու համար Պիղատոսը զինվորներ տվեց, կնքեց մուտքին գլորված քարը. Հնարա-

վոր է, Հիսուսի աշակերտները գողանալին Նրա մարմինը՝ ասելով, թե մեռելներից հարություն է առել:

Տե՛ս Մատթեոս 21.1-11, 27.32-66, Մարկոս 15.21-47, Ղուկաս 23.26-56, Հովհաննես 19.17-42, Հայրնություն 19.11-16:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ օրն աշակերտները հանգստանում էին՝ սգալով իրենց Տիրոջ մահը: Հիսուսը՝ փառքի Արքան, հանգչում էր գերեզմանում: Տակավին մութ էր: Հրեշտակները ճախրում էին գերեզմանի վրայով և գիտեին, որ Աստծո սիրելի Որդուն՝ իրենց սիրելի Հրամանատարին ազատելու ժամանակը հասել է: Եվ մինչ նրանք ամենախորը հուզմունքով սպասում էին Նրա հաղթանակի ժամին, հզոր և ուժեղ հրեշտակն եկավ՝ սրընթաց իջնելով երկնքից: Նրա դեմքը մման էր կայծակի, իսկ հագուստը ճերմակ էր, ինչպես ձյունը: Նրա լույսն իր հետևից ցրեց խավարը, և չար հրեշտակները, ովքեր հսկում էին Հիսուսի մարմինը, սարսափահար փախան նրա պայծառությունից և փառքից: Հրեշտակներից մեկը, ով ականատես էր եղել Հիսուսի վիրավորանքների տեսարանին և հետևում էր Նրա հանգստյան սուրբ վայրին, միացավ երկնային հրեշտակին, և նրանք միասին իջան գերեզմանի մոտ: Երկիրը ցնցվեց և դողաց, և ուժգին երկրաշարժ եղավ: Ուժեղ և զորեղ հրեշտակը մոտեցավ քարին, և գերեզմանի մուտքից արագորեն այն հեռու գլորելով՝ նստեց վրան:

Պահապաններին սարսափ պատեց: Ո՞ր էր այժմ Հիսուսի մարմինը պահպանելու նրանց ուժը: Նրանք չէին մտածում իրենց պարտականությունների կամ աշակերտների մասին, ովքեր կարող էին զողանալ Նրա մարմինը: Նրանք ապշած և վախեցած էին, քանի որ հրեշտակների պայծառ լույսը շրջակայքն պայծառ էր լուսավորում, քան արեգակը: Հռոմեական պահակախումբը տեսավ հրեշտակներին, և բոլոր մեռյալների մման ընկան գետնին: Մի հրեշտակ քարը հաղթականորեն հետ գլորեց և պարզ ու զորեղ ձայնով բացականչեց. «Աստծո՛ր Որդի: Քո Հայրը կանչում է Քեզ: Գո՛րք եկ»: Մահն այլևս չէր կարող իշխել Նրա վրա: Հիսուսը հարություն առավ մեռելներից: Մեկ

այլ հրեշտակ մտավ գերեզման, և երբ Հիսուսը հաղթականորեն հարություն առավ, հրեշտակն արձակեց վարշամակը, որով փաթաթված էր Նրա գլուխը, և Հիսուսը խրոխտ կեցվածքով դուրս եկավ գերեզմանից: Հանդիսավոր վախի պայմաններում երկնաբնակները հետևում էին այդ տեսարանին: Եվ երբ Հիսուսն Իր մեծափառությամբ դուրս եկավ գերեզմանից, լուսավոր հրեշտակները խոնարհվեցին մինչ գետինը և երկրպագեցին Նրան, այնուհետև ողջունեցին Նրան հաղթանակի և ցնծության երգերով, քանզի մահն այլևս չէր կարող գերության մեջ պահել աստվածային գերուն: Այժմ սատանան չէր ցնծում: Նրա հրեշտակները փախան երկնային հրեշտակների կուրացուցիչ լույսից: Նրանք դառնությամբ դժգոհում էին իրենց թագավորին, որ իրենց ավարն ուժով վերցվեց իրենցից, և Նա, ում նրանք այդքան ասում էին, մեռելներից հարություն առավ:

Սատանան և նրա հրեշտակները վայելում էին իրենց հաղթանակի ակնթարթները, երբ անկյալ մարդու նկատմամբ նրանց իշխանությունը Տիրոջը գերեզման իջեցրեց, սակայն նրանց դժոխային հրրճվանքը կարճ տևեց: Երբ Հիսուսն Իր բանտից դուրս եկավ որպես մեծագույն նվաճող՝ սատանան գիտեր, որ ինքը պետք է մեռնի, և իր թագավորությունը կտրվի Նրան, ով ունի դրա իրավունքը: Նա ողբում և մոլեգնում էր, որ չնայած իր բոլոր ջանքերին և իշխանությանը՝ Հիսուսը չպարտվեց, այլ փրկության ուղի բացեց մարդու համար, և բոլոր նրանք, ովքեր կքայլեն այդ ճանապարհով, կփրկվեն:

Սատանան կարճ ժամանակ տխուր էր և վերապրում էր իր վիշտը: Նա իր հրեշտակների հետ խորհուրդ հրավիրեց՝ քննարկելու, թե ինչ քայլ պետք է ձեռնարկել Աստծո կառավարման դեմ: Սատանան ասաց. «Դուք պետք է շտապեք քահանայապետերի և ծերերի մոտ: Մեզ հաջողվեց խաբել նրանց և կուրացնել նրանց աչքերը, նրանց սրտերը տրամադրել Հիսուսի դեմ: Մենք ստիպեցինք նրանց հավատալ, թե Հիսուսն ինքնակոչ է: Հռոմեացի պահակախումբը զարշեղի լուրեր կրերի, թե Քրիստոսը հարություն է առել: Մենք պատվիրել ենք քահանաներին և ծերերին ասել Հիսուսին և սպանել Նրան: Այժմ նրանց պարզ լույսի ներքո ներկայացրեք, որ իրենք Նրան սպանողներն են, և եթե հայտնի դառնա, որ Հիսուսը հարություն է առել, նրանք կքարկոծվեն այդ մարդկանց կողմից, քանի որ անմեղ մարդու են սպանել»:

Երբ հրեշտակների խումբը վերադարձավ երկինք, և լույսն ու

փառքը վերացավ, ես տեսա հռոմեական պահակախմբին, որը վեր կացավ տեսնելու, թե արդյո՞ք անվտանգ են իրենք: Նրան խիստ զարմացած էին, քանի որ տեսել էին, թե ինչպես էր մեծ քարը գլորվել քարանձավի դռնից, և Հիսուսը հարություն էր առել: Նրանք շտապեցին քահանայեպետերի և ծերերի մոտ այն հրաշալի պատմությամբ, որն իրենք տեսել էին, և երբ այդ մարդասպանները լսեցին զարմանալի լուրը, գունատվեցին: Մարսափը պատեց նրանց: Նրանք հասկացան, որ եթե լուրը ճշմարիտ է, ապա իրենք կործանված են: Մի սկնթարթ ապշած էին և լռությամբ նայում էին միմյանց՝ չիմանալով ինչ անել կամ ինչ խոսել: Նրանք գտնվում էին այնպիսի վիճակում, որը երբևէ չէին էլ կարող պատկերացնել, մինչև այն դարձավ իրենց սեփական դատավճիռը: Նրանք հեռացան խորհրդակցելու: Եթե տարածվեր Հիսուսի հարության և այդքան զարմանալի փառքի լուրը, որը պահակախմբին ստիպել էր մեռյալների մնան ընկնել հողին, ապա դա մարդկանց կհասցներ կատաղության, և նրանք կսպանեին իրենց: Նրանք որոշեցին կաշառել զինվորներին, որպեսզի այդ լուրը գաղտնի մնա: Նրանք զինվորներին մեծ գումար առաջարկեցին՝ ասելով. «Ասեք, որ Նրա աշակերտները գիշերը եկան և գողացան Նրան, այն ժամանակ, երբ մենք քնած էինք»: Եվ երբ պահակախումբը հարցրեց, թե ինչ կանեն իրենց հետ պահակակետում քնելու համար, քահանաներն ու ծերերն ասացին, որ կբարեխոսեն նրանց համար: Հանուն փողի հռոմեական պահակախումբը վաճառեց իր պատիվը և համաձայնեց հետևել քահանաների և ծերերի խորհրդին:

Երբ խաչի վրա գամված Հիսուսն աղաղակեց. «Կատարվեց», ժայռերը ճեղքվեցին, երկիրը շարժվեց, և որոշ գերեզմաններ բացվեցին: Երբ Հիսուսը մեռելներից հարություն առավ և հաղթանակեց մահվան ու գերեզմանի նկատմամբ, երբ Իր գերեզմանից դուրս եկավ որպես հաղթական նվաճող, երբ երկիրը դորդում ու ճոճվում էր, և երկնքի կատարյալ փառքը պատել էր այդ սուրբ վայրը՝ հնազանդվելով Հիսուսի ձայնին, մեռած արդարներից շատերը նույնպես հարություն առան՝ որպես Նրա հարության վկաներ: Հարություն առած այդ արտոնյալ սրբերը փառքով դուրս եկան գերեզմաններից: Դրանք որոշ ընտրյալ և սուրբ մարդիկ էին, ովքեր տարբեր դարերում ապրել էին երկրի արարչագործությունից մինչև Քրիստոսի օրերը: Եվ մինչ քահանայապետերը և փարիսեցիները ձգտում էին թաքցնել Քրիստոսի հարության լուրը, Աստված որոշեց գերեզմաններից հարություն տալ

մարդկանց մի խմբի, որպեսզի նրանք վկայեին, որ Հիսուսը հարություն է առել, և հռչակեին Նրա փառքը:

Հարություն առածները տարբեր էին իրենց հասակով և մարմնի կառուցվածքով: Ես իմացա, որ երկրի բնակիչները ետաճ էին ապրել՝ կորցնելով իրենց ուժը և տեսքը: Սատանան իշխանություն ունի հիվանդության և մահվան նկատմամբ, և յուրաքանչյուր դարում անեծքն առավել տեսանելի է, մարդկանց նկատմամբ սատանայի իշխանությունը՝ առավել ակնհայտ: Հարություն առածներից ոմանք ավելի բարետես և բարեկազմ էին, քան մյուսները: Ես իմացա, որ նրանք, ովքեր ապրել էին Նոյի և Աբրահամի ժամանակներում, արտաքին կազմվածքով, տեսքով և ուժով առավել նման էին հրեշտակներին: Սակայն յուրաքանչյուր հաջորդ սերունդ ավելի թույլ է և հակված հիվանդանալու, նրանց կյանքն ավելի կարճ տևողություն ունի: Սատանան տիրապետում է մարդկային ցեղը կործանելու մարտավարությանը:

Սրբերը, ովքեր հարություն առան Հիսուսի հարությունից հետո, հայտնվեցին շատերին՝ նրանց հայտնելով, որ հանուն մարդկանց գոհաբերությունը կատարված է, և Հիսուսը, ում հրեաները խաչեցին, մեռյալներից հարություն է առել: Նրանք ավելացնում էին. «Մենք հարություն ենք առել Նրա հետ միասին»: Նրանք կրում էին այն վկայությունը, որ շնորհիվ Հիսուսի հզոր իշխանության՝ իրենք հարություն առան գերեզմաններից: Չնայած սուտ լուրերի տարածմանը՝ հարությունը չէր կարող քողարկվել սատանայի, նրա հրեշտակների կամ քահանայապետների կողմից, քանի որ գերեզմանից հարություն առած սրբերի խումբը տարածում էր հրաշալի, ուրախ լուրը: Նաև Հիսուսն անձամբ հայտնվեց վշտացած, կոտրված սրտերով Իր աշակերտներին՝ մեղմելով նրանց երկյուղը, պարզելով երջանկություն և ուրախություն:

Քանի որ լուրը տարածվում էր գյուղից գյուղ և քաղաքից քաղաք, հրեաներն իրենց հերթին վախենում էին իրենց կյանքի համար և թաքցնում էին այն ասելությունը, որը տաժում էին աշակերտների հանդեպ: Նրանց միակ հույսը սուտ լուրեր տարածելն էր: Եվ նրանք, ովքեր ցանկանում էին, որպեսզի այս սուտը ճշմարտություն դառնա, հավատում էին դրան: Պիղատոսը դողում էր: Նա հավատացել էր այն հզոր վկայությանը, որ Հիսուսը մեռյալներից հարություն է առել, և Նրա հետ միասին շատերն են հարություն առել: Խաղաղությունը

մեկընդմիջտ լքեց նրան: Աշխարհային փառքի հանդեպ սիրուց և իր հեղինակությունն ու կյանքը կորցնելու վախից դրդված՝ նա Հիսուսին մահվան դատապարտեց: Այժմ նա լիովին համոզված էր, որ Հիսուսը սովորական անմեղ մարդ չէր, և այն արյունը, որի հեղման համար ինքն էր մեղավոր, Աստծո Որդու արյունն էր: Պիղատոսի կյանքը թշվառ էր, խղճուկ՝ մինչև կյանքի վերջը: Հուսահատությունը և տանջանքները խորտակեցին նրա բոլոր հույսերն ու ուրախ զգացումները: Նա հրաժարվեց հարմարավետությունից և մեռավ ամենաողորմելի մահով:

Հերովդեսի սիրտն ավելի դաժան էր դարձել, և երբ նա լսեց, որ Հիսուսը հարություն է առել, այնքան էլ չանհանգստացավ: Նա սպանել էր Հակոբոսին և երբ տեսավ, որ դա դուր եկավ հրեաներին, բռնեց նաև Պետրոսին, որպեսզի շուտով նրան էլ սպանի: Սակայն Աստված առաքելություն ունեցավ Պետրոսի համար և ուղարկեց Իր հրեշտակին, ով էլ ազատեց Պետրոսին: Հերովդեսը շուտով դատապարտվեց: Աստված հարվածեց նրան մեծաթիվ ամբոխի առաջին, երբ ինքն իրեն մեծարում էր Հերովդեսը մեռավ սարսափելի մահով:

Վաղ առավոտյան՝ մինչ արևածագը, սուրբ կանայք եկան գերեզմանի մոտ՝ բերելով անուշահոտ համեմունքներ՝ օձելու Հիսուսի մարմինը: Նրանք տեսան, որ ծանր քարը հեռու է գործել գերեզմանի մուտքից, և Հիսուսի մարմինն այնտեղ չէ: Նրանց սրտերը տրտմած էին, և տազնապեցին: Կարծեցին, թե իրենց թշնամիները տարել են մարմինը: Եվ ահա նրանք տեսան այնտեղ կանգնած սպիտակ հանդերձանքով երկու հրեշտակների, որոնց դեմքերը պայծառ էին և փայլուն: Նրանք հասկացան սուրբ կանանց հանձնարարությունը և անհապաղ ասացին, որ իրենք փնտրում են Հիսուսին: Սակայն Հիսուսն այստեղ չէ, Նա հարություն է առել, և նրանք միայն կարող են տեսնել այն վայրը, որտեղ պառկած է եղել Նա: Հրեշտակները պատվիրեցին նրանց գնալ և պատմել աշակերտներին, որ Նա իրենցից առաջ կլինի Գալիլեայում: Սակայն կանայք վախեցած և զարմացած էին: Նրանք շտապ վագեցին աշակերտների մոտ, ովքեր սգում էին և չէին մխիթարվում, քանի որ իրենց Տերը խաչվել էր: Կանայք հապշտապ նրանց պատմեցին այն ամենը, ինչ տեսել և լսել էին: Աշակերտները չէին կարող հավատալ, որ Նա հարություն է առել, սակայն լուրը բերող կանանց հետ արագորեն վագեցին գերեզմանի մոտ և տեսան, որ Հիսուսն իրոք այնտեղ չէ: Այնտեղ էին միայն Նրա կտավից հան-

դերձները: Աշակերտները չէին կարող հավատալ այն բարի լուրին, որ Հիսուսը մեռյալներից հարություն է առել: Նրանք վերադարձան տուն՝ ապշած նրանից, ինչ տեսել էին և ինչ իրենց ասել էին կանայք: Սակայն Մարիամը ցանկացավ մնալ գերեզմանի մոտ՝ խորհելով իր տեսածի մասին: Նրան անհանգստացնում էր այն միտքը, որ ինքը կարող էր խաբված լինել: Նա զգում էր, որ նոր փորձություններ են սպասվում իրեն: Մարիամի վիշտը նորոգվեց, և նա դառնությամբ լաց եղավ: Նա կրկին իր հայացքն ուղղեց գերեզմանին և տեսավ սպիտակ հանդերձներով երկու հրեշտակներին: Նրանց դեմքերը շողում էին: Հրեշտակներից մեկը պառկել էր Հիսուսի գլխի, մյուսը՝ ոտքերի տեղում: Նրանք քնքշությամբ խոսեցին Մարիամի հետ և հարցրին, թե ինչու է լալիս: Մարիամը պատասխանեց. «Նրանք վերցրել են իմ Տիրոջը, և ես չգիտեմ, թե որտեղ են դրել նրան»:

Եվ երբ նա գերեզմանից հետ շրջվեց, տեսավ Հիսուսին՝ կանգնած իր կողքին, սակայն չճանաչեց Նրան: Հիսուսը քնքշությամբ խոսեց Մարիամի հետ և հարցրեց նրա տխրության պատճառը, և թե ում է նա փնտրում: Նա կարծեց, թե Հիսուսն այգեպանն է, և հարցրեց Նրան, թե ուր են տարել Տիրոջը: Նա ասաց, որ ինքը կգնա ու կվերցնի Նրան այնտեղից: Հիսուսն Իր երկնային ձայնով խոսեց նրա հետ և ասաց. «Մարիամ»: Նա ճանաչեց այդ թանկագին ձայնը և արագ արձագանքեց. «Վարդապետ»: Ուրախությունն ու ցնծությունը պատեցին Մարիամին, և նա ցանկացավ գրկել Հիսուսին, սակայն Հիսուսը հետ քաշվեց և ասաց. «Մի՛ դիպչիր ինձ, որովհետև դեռ վեր չեմ ելել իմ Հոր մոտ, բայց դու գնա իմ եղբայրների մոտ և նրանց ասա. Ես վեր եմ ելնում իմ Հոր մոտ և ձեր Հոր մոտ, իմ Աստծո մոտ և ձեր Աստծո մոտ»: Ուրախությամբ նա վազեց աշակերտների մոտ բարի լուրով: Հիսուսն արագ համբարձվեց Իր Հոր մոտ, որպեսզի Նրա շուրթերից լսի, որ զոհն ընդունված է, և այն ամենը, ինչ Նա կատարել է, ճիշտ է, և որպեսզի Իր Հորից ընդունի ողջ իշխանությունը երկնքում և երկրի վրա:

Ամպերի մման հրեշտակները շրջապատել էին Աստծո Որդուն և բացել էին դարպասները, որոնց միջով պետք է մտներ փառքի Արքան: Ես տեսա, որ այն ժամանակ, երբ Հիսուսն այդ պայծառ երկնաբնակների հետ էր՝ Իր Հոր ներկայությամբ, և Աստծո փառքը շրջապատել էր Նրան, Նա չէր մոռացել երկրի վրա գտնվող Իր թշվառ աշակերտներին: Նա Իր Հորից իշխանություն ստացավ, որ պետք է

վերադառնա իրենց մոտ և ուժ հաղորդի նրանց: Նույն օրը Հիսուսը վերադարձավ և Իրեն ցույց տվեց աշակերտներին: Նա թույլ տվեց նրանց դիպչել Իրեն, քանի որ արդեն համբարձվել էր Իր Հոր մոտ և իշխանություն ստացել:

Սակայն այդ օրը Թովմասն աշակերտների հետ չէր: Նա խոնարհությամբ չէր ընդունել աշակերտների լուրը, այլ ուղղակիորեն և ինքնավստահությամբ արտահայտվել էր, թե ինքը չի հավատա, մինչև իր մատներով չդիպչի վերքերին, և իր ձեռքը չդնի կողին՝ նիզակից ստացած վերքին: Սրանով նա անվստահություն ցուցաբերեց իր եղբայրների հանդեպ: Եթե բոլորն այդպիսի վկայություն խնդրեին, ապա միայն քչերը կընդունեին Հիսուսին, և քչերը կհավատային Նրա հարությանը: Սակայն Աստծո կամքն էր, որպեսզի աշակերտների լուրը փոխանցվեր մեկից մյուսին, և շատերն ընդունեին այն մարդկանց շուրթերից, ովքեր տեսել և լսել էին: Եվ երբ Հիսուսը կրկին հանդիպեց Իր աշակերտներին, Թովմասը նրանց հետ էր: Այն պահին, երբ նա տեսավ Հիսուսին, հավատաց: Սակայն նա հայտարարել էր, որ չի բավարարվի առանց շոշափելի ապացույցների, և Հիսուսը նրան ներկայացրեց այն ապացույցը, որը վերջինս ցանկանում էր: Թովմասը բացականչեց. «Ո՛վ իմ Տեր, և ո՛վ իմ Աստված»: Սակայն Հիսուսը հանդիմանեց Թովմասին իր անհավատության համար: Նա ասաց. «Որովհետև տեսար Ինձ՝ հավատացիր, երանի նրանց, որ չեն տեսել և հավատում են»:

Ես տեսա, որ նրանք, ովքեր չեն վերապրել առաջին և երկրորդ հրեշտակների լուրերը¹, պետք է այդ լուրերը ստանան նրանցից, ովքեր վերապրել են դրանք, և հետևեն դրանց: Ես տեսա, որ նման Հիսուսին, այդ պատգամներն էլ խաչվեցին: Եվ ինչպես աշակերտներն ազդարարեցին, որ չկա այլ փրկություն երկնքի տակ այլ անունով, որ տրված լինի մարդկանց, այդպես էլ Աստծո ծառաները հավատարմությամբ և անվեհերաբար պետք է ազդարարեն, որ նրանք, ովքեր ընդունում են երրորդ հրեշտակի լուրի² հետ կապված ճշմարտությունները, պետք է ուրախությամբ ընդունեն առաջին, երկրորդ և երրորդ պատգամները, որոնք Աստված տվել է իրենց: Հակառակ դեպքում, նրանք բաժին չեն ունենա Նրա հետ:

Ես տեսա, որ այն ժամանակ, երբ սուրբ կանաչը հայտնում էին լուրը, թե Հիսուսը հարություն է առել, հռոմեական պահակախումբը տարածում էր այն սուտը, որը նրանց շուրթերին էր դրվել քահանա-

յապետերի և ծերերի կողմից՝ այն է՝ աշակերտները գիշերը եկել էին, երբ նրանք քնած էին, և գողացել էին Հիսուսի մարմինը: Մատանան այդ սուտը դրեց քահանայապետերի սրտերում և շուրթերին, և մարդիկ պատրաստ էին ընդունել նրանց խոսքերը: Սակայն Աստված այդ փաստը կասկածելի դարձրեց և տվեց այս կարևոր վկայությունը, որի վրա հիմնված է փրկությունը. այն աներկբա էր, և քահանայապետերն ու ծերերը չէին կարող կոծկել այն: Վկաները մեռյալներից հարություն առան, որպեսզի հավաստեն Քրիստոսի հարությունը:

Քառասուն օր Հիսուսը մնաց Իր աշակերտների հետ՝ նրանց սրտերին ուրախություն և երջանկություն պատճառելով և նրանց լիակատարությամբ բացահայտելով Աստծո Արքայության իրականությունը: Նա հանձնարարեց նրանց վկայել այն ամենի մասին, ինչ տեսել և լսել էին Իր՝ մեղքի համար գոհաբերության, տառապանքների, մահվան և հարության մասին, այն մասին, որ բոլոր նրանք, ովքեր կցանկանային, կարող էին գալ նրա մոտ և կյանք ստանալ: Նա բարեխիղճ մեղմությամբ ասաց նրանց, որ իրենց կհետապնդեն և կհալածեն, սակայն նրանք աջակցություն կգտնեն՝ հիշելով այն խոսքերը, որ Նա խոսել է իրենց հետ: Հիսուսն ասաց նաև, որ հաղթահարել է սատանայի փորձությունները և հաղթանակի է հասել փորձությունների և տառապանքների միջով, որ սատանան այլևս իշխանություն չունի Իր նկատմամբ, այլ ավելի մեծ դաժանությամբ նա իր փորձությունները և ուժը կկիրառի իրենց և բոլոր նրանց հանդեպ, ովքեր հավատում են Հիսուսին: Հիսուսը հավաստիացրեց, որ իրենք կարող են հաղթել այնպես, ինչպես Ինքը կարողացավ հաղթել: Հիսուսն Իր աշակերտներին օժտեց հրաշքներ գործելու իշխանությամբ և ասաց նրանց, որ թեև տկար մարդիկ գուցե իրենց ենթարկեն նրանց մարմինը, որոշ դեպքերում Նա կուղարկի Իր հրեշտակներին և կազատի նրանց: Նրանց երկրային կյանքը չի կարող դադարել, քանի դեռ չի ավարտվել նրանց առաքելությունը: Երբ նրանց վկայությունն ավարտվի, նրանց կյանքն անհրաժեշտ կլինի հաստատելու համար այն վկայությունը, որը նրանք կրել են: Հիսուսի ջանադիր հետևողները հաճույքով լսում էին Նրա դասերը: Նրանք եռանդուն կերպով հիանում էին յուրաքանչյուր բառով, որը դուրս էր գալիս Նրա սուրբ շուրթերից: Այդժամ նրանք հաստատակամորեն գիտակցում էին, որ Նա է աշխարհի Փրկիչը: Յուրաքանչյուր բառ խորունկ իմաստով լցրեց նրանց սրտերը, և նրանք տխրեցին, քանի որ պետք է բաժանվեին իրենց օրինյալ

երկնային Ուսուցչից, կարճ ժամանակ անց նրանք այլևս մխիթարող, գթասիրտ խոսքեր չեն լսի Նրա շուրթերից: Սակայն նրանց սրտերը կրկին ջերմացան սիրով և մեծագույն ուրախությամբ, երբ Հիսուսը նրանց ասաց, որ կգնա և բնակարան կպատրաստի նրանց համար: Եվ կրկին կգա, որպեսզի նրանց Իր մոտ առնի, և նրանք հավերժ կմնան Իր հետ: Հիսուսն ասաց, որ կուղարկի Մխիթարիչին՝ Սուրբ Հոգուն, որպեսզի Նա դեկավարի, օրհնի և նրանց առաջնորդի դեպի ճշմարտությունը: Այնուհետև Նա բարձրացրեց Իր ձեռքերը և օրհնեց նրանց:

1. Տե՛ս Հայրնություն 14.6-8: Բացատրությունն՝ այս գրքի 23-րդ և 24-րդ գլուխներում:

2. Տե՛ս Հայրնություն 14.9-12: Բացատրությունն՝ այս գրքի 28-րդ գլխում:

Տե՛ս Մարթեոս 27.52,53, 28-րդ գլուխ, Մարկոս 16.1-18, Դուկաս 24.1-50, Հովհաննես 20-րդ գլուխ, Գործք առաքելոց 12-րդ գլուխ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԸ

Ողջ երկինքը սպասում էր հաղթական ժամին, երբ Հիսուսը կհամբարձվեր Իր Հոր մոտ: Հրեշտակներն եկան՝ ընդունելու փառքի Արքային և հաղթականորեն ուղեկցելու Նրան դեպի երկինք: Իր աշակերտներին օրհնելուց հետո Հիսուսն առանձնացավ նրանցից և համբարձվեց: Քանի որ Նրա ճանապարհը դեպի երկինք էր, բազմաթիվ գերիններ, ովքեր հարություն առան Նրա հետ միասին, հետևեցին Նրան: Ներկա էր երկնաբնակների մեծ բազմություն. բազմաթիվ հրեշտակներ սպասում էին Նրա գալստյանը: Երբ նրանք մոտեցան սուրբ քաղաքին, հրեշտակները, ովքեր ուղեկցում էին Հիսուսին, բացականչեցին. «Քարձրացրե՛ք ձեր գլուխները, դարպասներ, և բարձրացե՛ք, հավիտենական դռներ, և փառքի Արքան մուտք կգործի»:

Քաղաքում գտնվող հրեշտակները, ովքեր սպասում էին Նրա գալուստին, հիացմունքով բացականչեցին. «Ո՞վ է այս փառքի Արքան»:

Հիսուսին ուղեկցող հրեշտակները հաղթական ձայնով պատասխանեցին. «Ուժեղ և հզոր Տերը, պատերազմում գորեղ Տերը: Բարձրացրե՛ք ձեր գլուխները, դարպասներ, և հավիտենական դռներ, և փառքի Արքան մուտք կգործի»:

Երկնաբնակները կրկին բացականչեցին. «Ո՞վ է այս փառքի Արքան»:

Հիսուսին ուղեկցող հրեշտակները քաղցրալուր ձայնով պատասխանեցին. «Բազմությունների Տերը: Նա՛ է փառքի Արքան»:

Եվ երկնաբնակները մտան քաղաք: Այդժամ բոլոր երկնաբնակները շրջապատեցին Աստծո Որդուն՝ իրենց փառահեղ Հրամանատարին, և ամենախոր հարգանքով Նրան երկրպագեցին՝ իրենց պսաղուն պսակները նետելով Նրա ոտքերի մոտ: Այնուհետև նրանք դիպան իրենց ոսկե քնարներին, և քաղցրահնչյուն մեղեդիներ կինքը լցրեց հարուստ երաժշտությամբ և երգով՝ նվիրված Գառնին,

ով սպանվեց, սակայն կրկին կենդանի է և ապրում է մեծափառությամբ:

Այնուհետև ինձ ցույց տրվեցին աշակերտները, ովքեր տխրությամբ ակնապիշ նայում էին երկինք՝ տեսնելու իրենց համբարձվող Տիրոջ վերջին հետքը: Սպիտակ հանդերձներով երկու հրեշտակներ կանգնեցին նրանց առջև և ասացին. «Ո՛վ Գալիլեացի մարդիկ, ի՞նչ եք կանգնել և նայում երկնքին: Այս Հիսուսը, որ համբարձվեց երկինք, այնպես կգա, ինչպես նրան տեսաք երկինք գնալիս»: Հիսուսի մոր հետ միասին աշակերտները վկայում էին Աստծո Որդու համբարձման մասին, և այդ գիշեր նրանք քննարկում էին այն զարմանալի գործերը, տարօրինակ և փառահեղ իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել այդ կարճ ժամանակահատվածի ընթացքում:

Սատանան խորհրդակցեց իր հրեշտակների հետ, և քանի որ Նա երկրի վրա պահպանել էր իր իշխանությունը և հեղինակությունը, Աստծո կառավարման նկատմամբ խորունկ ատելությամբ պատվիրեց իր հրեշտակներին, որ Հիսուսի հետևորդների դեմ ուղղված իրենց ջանքերը տասնապատկեն: Նրանք ոչինչ չկարողացան հակադրել Հիսուսին, սակայն Նրա հետևորդներին պետք է հաղթել, եթե հնարավոր է, այդ գործը շարունակել յուրաքանչյուր սերնդի հետ՝ մոլորեցնելու նրանց, ովքեր կհավատան Հիսուսին, Նրա հարությանը և համբարձմանը: Սատանան իր հրեշտակներին ասաց, որ Հիսուսն Իր աշակերտներին իշխանություն է տվել դևեր հանելու, հանդիմանելու և բուժելու նրանց, ում ինքը կտանջի: Այնուհետև սատանայի հրեշտակները մոլեգնած առյուծների նման հեռացան՝ փնտրելով Հիսուսի հետևորդներին ոչնչացնելու նրանց:

Տե՛ս Սաղմոս 24.7-10, Գործք 1.1-11

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ

Հգոր իշխանությամբ աշակերտները քարոզում էին խաչյալ և հարուցյալ Փրկչին: Նրանք բժշկում էին հիվանդներին և նույնիսկ նա, ով ի ծնե կաղ էր, դարձավ կատարելապես ամրակազմ և նրանց հետ մտավ տաճար՝ քայլելով, թռչկոտելով և Աստծուն փառավորելով բոլոր ներկաների առջև: Լուրը տարածվեց, և մարդիկ սկսեցին խմբվել աշակերտների շուրջը: Շատերը քայլում էին նրանց հետ՝ զարմացած և ապշած նրանց կատարած բժշկությամբ:

Երբ Հիսուսը մեռավ, քահանայապետերը կարծում էին, թե այլևս հրաշքներ չեն լինի, հուզումները կմարեն, և մարդիկ կրկին կվերադառնան մարդկային սովորություններին: Բայց ահա հենց նրանց շրջանում աշակերտները կատարում էին հրաշքներ, և մարդիկ ապշած էին և զարմանքով ակնապիշ նայում էին նրանց: Հիսուսն արդեն խաչվել էր, և նրանք զարմանում էին, թե ինչպես են աշակերտներն այդպիսի ուժ ձեռք բերել: Երբ Հիսուսը կենդանի էր, նրանք կարծում էին, թե Նա էր իշխանությամբ օժտել Իր աշակերտներին. երբ Հիսուսը մեռավ, նրանք սպասում էին, թե այդ հրաշքները կավարտվեն: Պետրոսը հասկացավ նրանց շփոթությունը և ասաց նրանց. «Ով իսրայելացի մարդիկ, ինչո՞ւ եք զարմացել սրա վրա, կամ մեզ վրա ինչո՞ւ եք սաստիկ նայում, իբր թե մենք մեր գործությամբ և քաջությամբ արած լինենք, որ նա ման գա: Աբրահամի և Իսահակի և Հակոբի Աստվածը՝ մեր հայրերի Աստվածը, փառավորեց իր Որդի Հիսուսին, որին դուք մատնեցիք և ուրացաք Պիղատոսի առաջ, երբ որ նա վճռեց, որ արձակի նրան: Եվ դուք այն Սուրբին և Արդարին ուրացաք, և խնդրեցիք, որ մի մահապարտ մարդ շնորհի ձեզ: Իսկ կյանքի Առաջնորդին սպանեցիք, որին Աստված մեռելներից հարություն տվեց, որի վկաներն ենք մենք»: Պետրոսը նրանց ասաց, որ հավատն առ Հիսուս այս կատարյալ ամ-

րությունը պարզևեց մարդուն, ով մինչ այդ կաղ էր:

Քահանայապետերը և ծերերը չէին կարող լսել այս խոսքերը: Նրանք բռնեցին աշակերտներին և սաստեցին նրանց: Սակայն հազարավորներ դարձի եկան և հավատացին Քրիստոսի հարությանն ու համբարձմանը՝ լսելով միայն աշակերտների քարոզը: Քահանայապետերը և ծերերն անհանգստացած էին: Նրանք սպանեցին Հիսուսին, որպեսզի մարդկանց մտքերն ուղղվեն իրենց, սակայն իրավիճակն այժմ նախկինից ավելի վատ էր: Նրանք Հիսուսի աշակերտների կողմից բացահայտորեն մեղադրվում էին նրանում, որ իրենք Աստծո Որդու սպանողներն են, և այժմ նրանք չէին կարող պատկերացնել, թե ինչի կհանգեցնեն նրանց մեղադրանքները, և ինչպես նրանք կներկայացվեն մարդկանց առջև: Նրանք հաճույքով մահվան կմատնեին Հիսուսի աշակերտներին, սակայն չէին համարձակվում, քանի որ մարդիկ կարող էին քարկոծել իրենց: Նրանք կանչեցին աշակերտներին՝ բերելով վերջիններիս խորհրդի առջև: Այն մարդիկ, ովքեր անհամբեր տենչում էին Միակ Արդարի արյանը, այնտեղ էին: Նրանք լսել էին Պետրոսի անեծքով և երդմամբ երկչոտ ուրացումը, երբ նրան մեղադրում էին Հիսուսի աշակերտ լինելու մեջ: Նրանք կարծում էին, թե կարող են վախեցնել Պետրոսին, սակայն այժմ նա դարձի էր եկել: Պետրոսին հնարավորություն էր տրվել փառավորել Հիսուսին: Նա մեկ անգամ ուրացել էր Հիսուսին, սակայն այժմ կարող էր մաքրել այդ ամոթալի ուրացման հետքը և փառավորել Նրան, ում ուրացել էր: Ոչ մի երկչոտ անհանգստություն այժմ չէր կարող ազդել Պետրոսի վրա: Սուրբ համարձակությամբ և Սուրբ Հոգու զորությամբ նա աներկյուղ հայտարարեց. «Հիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու անունով, ում դուք խաչեցիք, և ում Աստված հարություն տվեց մեռելներից, նրանով սա հիմա ձեր առջև առողջ կանգնած է: Նա է ձեզանից՝ շինողներիցդ անարգված քարը, որ անկյունի գլուխ եղավ: Եվ էլ մի ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի տակ մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել»:

Մարդիկ ապշած էին Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունից: Նրանք տեղեկացնում էին, որ իրենք եղել են Հիսուսի հետ. նրանց մեծահոգի, աներկյուղ վարքը այժմ համեմատվում էր Հիսուսի վարքի հետ, երբ Նա հետապնդվում էր Իր թշնամիներից: Հիսուսը կարեկցության և դառնության մեկ հայացքով դարձի բերեց Պետրոսին, երբ նա ուրացավ Իրեն, և այժմ, երբ նա համարձակությամբ ճանա-

չում է իր Տիրոջը, Պետրոսն ընդունվում և օրհնվում է: Որպես Հիսուսի կողմից հավանության նշան՝ նա լցվեց Սուրբ Հոգով:

Քահանայապետերը չէին համարձակվում արտահայտել այն աստվածությունը, որը նրանք տաժում էին աշակերտների հանդեպ: Նրանք պատվիրեցին աշակերտներին հեռանալ խորհրդից, և միմյանց հետ խորհրդակցելով՝ ասացին. «Ի՞նչ անենք այս մարդկանց, որ երևելի նշան եղավ սրանց միջոցով, որ Երուսաղեմի մեջ բոլոր բնակվողներին հայտնի է, և չեն կարող ուրանալ»: Նրանք վախենում էին, որ այս գործերը կտարածվեն: Այդ դեպքում քահանայապետերը կկորցնեին իրենց ազդեցությունը և կներկայացվեին որպես Հիսուսի մարդասպաններ: Նրանք կարողացան միայն սպառնալ աշակերտներին և պատվիրել, որ այլևս Հիսուսի անունով չքարոզեն, հակառակ դեպքում մահվան կդատապարտվեն: Սակայն Պետրոսը համարձակությամբ հայտարարեց, որ իրենք չեն կարող չխոսել այն մասին, ինչ տեսել և լսել են:

Հիսուսի իշխանությամբ աշակերտները շարունակում էին բժշկել բոլոր վշտացածներին և հիվանդներին, ում բերում էին իրենց մոտ: Քահանայապետերը և ծերերը, ինչպես նաև նրանք, ովքեր առնչվում էին նրանց հետ, անհանգստացած էին: Հարյուրավոր մարդիկ ամեն օր հանդես էին գալիս խաչյալ, հարուցյալ և համբարձված Փրկչի դրոշի ներքո: Նրանք բանտարկեցին առաքյալներին և հույս ունեին, թե հուզումները կնվազեն: Սատանան ցնծում էր, չար հրեշտակները հրճվում էին, սակայն Աստծո հրեշտակներն ուղարկվեցին և բացեցին բանտի դռները, և ի հակառակ քահանայապետերի և ծերերի պատվերների՝ նրանց առաջարկեցին գնալ տաճար և այնտեղ խոսել կյանքի խոսքը: Խորհուրդը հավաքվեց և կանչեց բանտարկյալներին: Սպասավորները բացեցին բանտի դռները, սակայն բանտարկյալները, ում նրանք փնտրում էին, այնտեղ չէին: Նրանք վերադարձան քահանաների և ծերերի մոտ և ասացին. «Բանտը բոլոր զգուշությամբ փակած գտանք, և պահապաններն էլ դուրսը դռան մոտ կանգնած, բայց երբ որ բաց արինք, ներսում ոչ մեկին չգտանք: Եվ մեկն եկավ նրանց պատմեց, թե՛ ահա այն մարդիկ, որ բանտի մեջ դրեցիք, տաճարում կանգնած սովորեցնում են ժողովրդին: Այն ժամանակ իշխանը սպասավորների հետ գնաց նրանց բերեց առանց բռնության, որովհետև ժողովրդից վախենում էին, որ չքարկոծեն: Եվ երբ որ բերեցին նրանց, կանգնեցրին ատյանում, և քահանայապետը

հարցրեց նրանց. չէ՞ որ պատվիրելով պատվիրեցինք ձեզ, որ չսովորեցնեք այդ անունով, և ահա Երուսաղեմը լցրեցիք ձեր ուսմունքով և կամենում եք այն մարդու արյունը մեզ վրա բերել»:

Նրանք կեղծավոր էին և մարդկային փառքը սիրում էին ավելի, քան Աստծուն: Նրանց սրտերը կարծրացել էին, և առաքյալների գորավոր գործերը միայն կատաղեցնում էին նրանց: Նրանք գիտեին, որ եթե աշակերտները քարոզեն Հիսուսին, Նրա խաչելությունը, հարությունը և համբարձումը, դա կավելացնի նրանց մեղքը, և նրանց Հիսուսին սպանողներ կհայտարարի: Այժմ նրանք այնպես չէին տենչում ստանալ Հիսուսի արյունը, ինչպես այն ժամանակ, երբ ջանադիր գոչում էին. «Նրա արյունը մեր և մեր երեխաների վրա»:

Առաքյալները համարձակությամբ հայտարարում էին, որ իրենք Աստծուն պետք է ավելի շատ հնազանդվեն, քան մարդուն: Պետրոսն ասաց. «Մեր հայրերի Աստվածը հարություն տվեց Հիսուսին, որին դուք փայտից կախած սպանեցիք: Աստված նրան Առաջնորդ և Փրկիչ բարձրացրեց իր աջով, որ Իսրայելին ապաշխարություն և մեղքերի թողություն տա: Եվ մենք նրա վկաներն ենք այս բաների համար, և Սուրբ Հոգին էլ, որ Աստված իրեն հնազանդողներին տվեց»: Այլժամ մարդասպանները կատաղեցին: Նրանք ցանկանում էին կրկին իրենց ձեռքերն աղտոտել արյունով՝ սպանելով առաքյալներին: Նրանք ծրագրում էին՝ ինչպես դա անել, երբ հրեշտակն Աստծո կողմից ուղարկվեց Գամաղիելի մոտ՝ խորհուրդ տալու քահանայապետին և ղեկավարներին: Գամաղիելն ասաց. «Հեռու կացեք այդ մարդկանցից և թողեք դրանց, որովհետև եթե այդ խորհուրդը մարդկանցից է՝ կքանդվի: Բայց եթե Աստծուց է՝ չեք կարող քանդել դրան, միգուցե Աստծո ղեմ կռիվ անող էլ գտնվեք»: Չար հրեշտակներն ազդում էին քահանաների և ծերերի վրա, որպեսզի սպանեն առաքյալներին, սակայն Աստված Իր հրեշտակին ուղարկեց, որպեսզի կանխի դա՝ թույլ տալով ավելի խրոխտ հնչեցնել աշակերտների ձայնը:

Առաքյալների աշխատանքն ավարտված չէր: Նրանք պետք է տարվեին արքաների մոտ՝ վկայելու Հիսուսի մասին և պատմելու այն, ինչ տեսել և լսել են: Սակայն, մինչ նրանց բաց թողնելը՝ քահանայապետերը և ծերերը ծեծեցին նրանց և պատվիրեցին այլևս չքարոզել Հիսուսի անունով: Նրանք խորհրդից դուրս եկան՝ փառաբանելով Աստծուն, որ արժանի եղան տառապել հասնուն Նրա անվան: Նրանք շարունակում էին իրենց առաքելությունը՝ քարոզե-

լով տաճարում և յուրաքանչյուր տանը, ուր հրավիրում էին իրենց: Աստծո խոսքը մեծարվում էր և տարածվում: Սատանան դրդում էր քահանայապետերին և ծերերին կաշառել հռոմեական պահակախմբին՝ ստելու, թե աշակերտները գողացել են Հիսուսի մարմինը, երբ իրենք քնած էին: Այդ խաբեության միջոցով նրանք հույս ունեին թաքցնել փաստերը, սակայն, ահա, նրանց շուրջն ամեն ինչ դարձավ Հիսուսի հարության գորեղ ապացույց: Աշակերտները համարձակորեն ազդարարում էին այն բոլոր իրադարձությունների մասին, որոնք տեսել և լսել էին, և Հիսուսի անունով գորեղ հրաշքներ էին գործում: Նրանք Հիսուսի արյունը անվախորեն վերագրում էին նրանց, ովքեր տենչում էին այդ արյանը, երբ իշխանություն ունեին Աստծո Որդու հանդեպ:

Ես տեսա, որ Աստծո հրեշտակները լիագորված էին առանձնահատուկ կերպով պահպանել այդ սուրբ, կարևոր ճշմարտությունները, որոնք պետք է ծառայեին որպես խաբիսիս՝ բոլոր սերունդների մեջ ամրապնդելու Քրիստոսի աշակերտներին:

Սուրբ Հոգին յուրահատուկ ձևով ընդունեցին առաքյալները, ովքեր վկաներն էին Հիսուսի խաչելության, Նրա հարության և համբարձման՝ կարևորագույն ճշմարտությունների, որոնք պետք է դառնային Բսրայելի հույսը: Բոլորը պետք է նայեին աշխարհի Փրկչին՝ որպես իրենց միակ հույսի, և քայլեին Հիսուսի ճանապարհով՝ գոհաբերելով իրենց սեփական կյանքը և հետևելով Աստծո օրենքին ու կյանքին: Ես տեսա աշակերտներին զորությամբ օժտելու Հիսուսի իմաստությունը և բարեհոգությունը, երբ Նա նրանց պատրաստում էր այդ գործի համար, որը հրեաներին ստիպել էր ատել և սպանել Նրան: Նրանք իշխանություն ունեյին սատանայի նկատմամբ: Նըրանք նշաններ և հրաշքներ էին կատարում Հիսուսի անունով, ով չար ձեռքերով ծաղրվել և սպանվել էր: Լույսի և փառքի արծիվը ճախրում էր Հիսուսի մահվան և հարության ժամանակ՝ հավերժացնելով սուրբ փաստերն այն մասին, որ Նա աշխարհի Փրկիչն է:

Տե՛ս Գործք 3-5

ՄՏԵՓՈՍԻ ՄԱՔՐ

Երուսաղեմում աշակերտների թիվն ավելանում էր: Աստծո Խոսքը տարածվում էր, և քահանաներից շատերը հնազանդվում էին հավատքին: Ստեփանոսը, հավատով լի, մեծ հրաշքներ և զարմանալի գործեր էր կատարում մարդկանց շրջանում: Շատերը բարկացած էին, քանի որ քահանաները հրաժարվում էին իրենց ավանդույթներից, զոհաբերություններից և ընծաներից, և Հիսուսին ընդունում էին որպես մեծագույն զոհ: Ի վերուստ տրված իշխանությամբ Ստեփանոսը հանդիմանում էր քահանաներին և ծերերին և նրանց առջև փառավորում Աստծուն: Նրանք չէին կարող դիմակայել Ստեփանոսի խոսքերի իմաստությանն ու ճշմարտացիությանը, և հասկանալով, որ չեն կարող ոչինչ հակադրել նրան, վարձեցին մարդկանց, ովքեր կվկայեին, թե իբր լսել են Մովսեսի և Աստծո դեմ Ստեփանոսի հայհոյությունը: Նրանք մարդկանց տրամադրեցին Ստեփանոսի դեմ, բռնեցին նրան և սուտ վկաների միջոցով նրան մեղադրեցին տաճարի և օրենքի դեմ հանդես գալու մեջ: Նրանք կեղծ վկայություն տվեցին, թե Ստեփանոսն ասել է, որ Նազովրեցի այս Հիսուսը կքանդի այն ավանդույթները, որը Մովսեսն է իրենց տվել:

Բոլոր նրանք, ովքեր դատարանում վկայում էին ընդդեմ Ստեփանոսի, Աստծո փառքի լույսը տեսան նրա դեմքին: Նրա դեմքը փայլում էր՝ նման հրեշտակների դեմքին: Նա վեր կացավ՝ լի հավատով և գորացած Սուրբ Հոգով, և սկսելով մարգարեներից՝ ողբկցեց նրանց մինչ Հիսուսի գալուստը, Նրա խաչելությունը, հարությունը և համբարձումը, և ցույց տվեց, որ Աստված բնակվում է ոչ ձեռագործ տաճարներում: Նրանք ծառայում էին տաճարում: Տաճարի դեմ ուղղված յուրաքանչյուր խոսք նրանց համակում էր առավել մեծ բարկությամբ, քան Աստծո դեմ ուղղված խոսքը: Ստեփանոսի

հոգին լի էր երկնային գայրույթով, երբ նա աղաղակեց՝ մեղադրելով նրանց հանցավոր և սրտով անթլփատ լինելու համար. «Դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակվում եք»: Նրանք հետևում էին արտաքին ծեսերին, մինչդեռ նրանց սրտերը այլասերված և մահացու չարով էին լցված: Ստեփանոսը նրանց հիշեցրեց մարգարեներին հալածելու նրանց հայրերի դաժանությունն՝ ասելով. «Եվ սպանեցին նրանց, որ առաջուց պատմեցին այն Արդարի գալստյան համար, որի դուք հիմա մատնիչներն ու սպանողներն եղաք»:

Քահանայապետերը և առաջնորդները կատաղել էին, քանի որ ակնհայտ, սուր ճշմարտությունն ազդարարված էր. նրանք հարձակվեցին Ստեփանոսի վրա: Երկնային լույսը լուսավորել էր նրան, և երբ նա աննկուն վեհությանը նայում էր երկինք, նրան տրվեց Աստծո փառահեղ տեսողությունը. հրեշտակները ճախրում էին նրա շուրջը: Նա բացականչեց. «Ահա տեսնում եմ երկինքը՝ բացված, և Մարդու Որդին՝ կանգնած Աստծո աջ կողմում»: Մարդիկ չէին լսում նրան: Նրանք աղաղակում էին ավելի բարձր ձայնով: Փակելով իրենց ականջները՝ նրանք միահամուռ կերպով հարձակվեցին նրա վրա, դուրս տարան քաղաքից և քարկոծեցին նրան: Ստեփանոսը ծնկի իջավ և բարձր ձայնով աղաղակեց. «Տեք, այդ մեղք մի համարիք դրանց համար»:

Ես տեսա, որ Ստեփանոսն Աստծո գորեղ մարդկանցից էր և կարևոր տեղ պետք է զբաղեցներ եկեղեցում: Սատանան ցնծում էր, երբ նա քարկոծվեց, քանզի գիտեր, որ աշակերտները ծանր կվերապրեին նրա կորուստը: Սակայն սատանայի հրճվանքը կարճ տևեց, քանի որ այդ ամբողջում կար Ստեփանոսի մահը վկայող մի մարդ, ում Հիսուսը կբացահայտեր իրեն: Չնայած նա մասնակցություն չունեի Ստեփանոսի քարկոծմանը, միևնույնն է, նա համաձայն էր նրա մահվան հետ: Սավուղը ջանասեր էր Աստծո եկեղեցուն հալածելու, նրա հետևորդներին որսալու, տներում բռնելու և դահիճների ձեռքը հանձնելու գործում: Սատանան Սավուղին արդյունավետ կերպով օգտագործում էր: Սակայն Աստված կարող է կործանել չարի ուժը և ազատել գերյալներին: Սավուղը կրթված մարդ էր, և սատանան նրա տաղանդներն ուրախությամբ օգտագործում էր Աստծո Որդու և բոլոր նրանց դեմ, ովքեր հավատում էին Նրան: Սակայն Հիսուսը Սավուղին ընտրեց՝ քարոզելու Իր անունը, սրտապնդելու աշակերտներին իրենց գործում, ինչպես նաև լրացնելու Ստեփանոսի տեղը:

Մավուղը մեծապես հարգված էր հրեաների կողմից: Նրա ջանասիրությունը և գիտելիքները գոհացնում էին վերջիններիս և վախեցնում աշակերտներից շատերին:

Տես Գործք առաքելոց 6-րդ և 7-րդ գլուխները

ՍԱՎՈՒՂԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Սավուղն իշխանություններին ուղղված նամակներով ուղեվորվեց Գամասկոս, որպեսզի Հիսուսին դավանող բոլոր տղամարդկանց և կանանց բռնի և կապված բերի Երուսաղեմ, չար հրեշտակները ցնծում էին նրա շուրջը: Սակայն երբ նա ժամանեց, հանկարծ երկնային լույսը փայլեց նրա շուրջը, որը չար հրեշտակներին ստիպեց փախչել, իսկ Սավուղին՝ արագորեն ընկնել հողին: Նա ձայն լսեց, որն ասում էր. «Սավուղ, Սավուղ, ինչո՞ւ ես ինձ հալածում»: Սավուղը հարցրեց. «Ո՞վ ես, Տեր»: Եվ Տերն ասաց. «Ես Հիսուսն եմ, որին դու հալածում ես, դժվար է քեզ խթանին քացի տալ»: Եվ Սավուղը դողալով ու զարհուրելով ասաց. «Տեր, ի՞նչ ես կամենում, որ անեմ»: Եվ Տերն ասաց. «Կանգնիր և մտիր քաղաքը, և կասվի քեզ, թե ինչ է պետք քեզ անել»:

Մարդիկ, ովքեր նրա հետ էին, լսում էին ձայնը, սակայն ոչ մեկին չտեսնելով՝ պապանձված կանգնել էին: Երբ լույսն անհետացավ, Սավուղը վեր կացավ հողից և բացեց իր աչքերը, սակայն ոչ մեկին չտեսավ: Երկնային փառքի լույսը կուրացրել էր նրան: Նրանք, Սավուղի ձեռքը բռնած, նրան ուղեկցեցին դեպի Գամասկոս: Երեք օր նա ոչինչ չտեսավ, ոչ էլ կերավ կամ խմեց: Այնուհետև Աստված Իր հրեշտակին ուղարկեց այն մարդկանցից մեկի մոտ, ում Սավուղը հույս ուներ ձեռքակալել, և տեսիլքում նրան ցույց տվեց, որ նա պետք է զնա Ուղիղ կոչվող փողոցով և Հուդայի տանը հարցնի ոմն Տարսունացի Սավուղին. նա աղոթելիս կլինի և տեսիլքում կտեսնի Անանիա անունով մի մարդու, ով կգա, նրա վրա կդնի իր ձեռքը, և նրա տեսությունը կվերականգնվի:

Անանիան անհանգստացած էր, որ ինչ-որ սխալմունք կա, և Տիրոջն ասաց իր լսածը Սավուղի մասին: Աստված ասաց Անանիային.

«Գնա, որովհետև նա ինձ համար ընտրված անոթ է, որ իմ անունը տանի հեթանոսների, քազավորների և Իսրայելի որդկանց առաջ: Որովհետև ես ցույց կտամ նրան, թե որչափ պիտի չարչարվի իմ անունի համար»: Անանիան հետևեց Աստծո պատվերներին և մտավ այն տունը, ձեռքերը դրեց Սավուղի վրա և ասաց. «Սավո՛ղ, եղբա՛յր, Տերն ուղարկեց ինձ, այն Հիսուսը, որ երևաց քեզ ճանապարհին, որ գալիս էիր, որ տեսնես և Սուրբ Հոգով լցվես»:

Սավուղի տեսողությունն անմիջապես վերականգնվեց, նա վեր կացավ և մկրտվեց: Այնուհետև Սավուղը ժողովարաններում քարոզում էր Աստծո Որդու մասին: Բոլոր նրանք, ովքեր նախկինում լսել էին Սավուղին, զարմացած էին և հարցնում էին. «Չէ՞ որ սա էր, որ Երուսաղեմում հալածում էր այս անունը կանչողներին, և հենց նրա համար է այստեղ եկել, որ սրանց կապած տանի քահանայապետերի մոտ»: Սակայն Սավուղն ավելի էր գորանում և շփոթության էր մատնում հրեաներին: Նրանք կրկին մտահոգված էին: Սավուղն իր փորձառությունը պատմում էր Սուրբ Հոգու գործությամբ: Բոլորին ծանոթ էր Սավուղի ընդդիմությունն Աստծուն և Նրա անունին հավատացողներին հետապնդելու ու մահվան դատապարտելու նրա մեծ եռանդը: Նրա հրաշալի ասպաշխարությունը շատերին ապացուցեց, որ Հիսուսն Աստծո Որդին է: Սավուղը պատմում էր իր փորձառությունը, թե ինչպես էր ուղևորվում Դամասկոս՝ հետապնդելու, ձերբակալելու և բանտ ուղարկելու տղամարդկանց և կանանց, երբ հանկարծ երկնային պայծառ լույսը պարուրեց նրան. Հիսուսը բացահայտեց Իրեն ու հայտնեց, որ Ինքն Աստծո Որդին է: Եռանդուն կերպով քարոզելով Հիսուսին՝ Սավուղը մեծ ազդեցություն ունեցավ մարդկանց վրա: Նա գիտեր Սուրբ Գիրքը, և նրա ասպաշխարությունից հետո աստվածային լույսը նրան բացահայտեց Հիսուսին վերաբերող մարգարեությունները, որոնք թույլ տվեցին պարզորոշ և հստակ կերպով ներկայացնել ճշմարտությունը և շտկել Աստվածաշնչի ցանկացած խեղաթյուրում: Շնորհիվ իր վրա հեղված Սուրբ Հոգու՝ պարզ և համոզիչ վարքագծով նա իր ունկնդիրներին մարգարեների ժամանակներից ուղեկցում էր մինչ Քրիստոսի առաջին գալուստը և ցույց տալիս, որ Քրիստոսի չարչարանքների, մահվան և հարությանը վերաբերող մարգարեությունները կատարվել են:

Տես Գործք առաքելոց 9-րդ գլուխ

ՀՐԵԱՆՏԵՐԸ ՈՐՈՇՈՒՄ ԵՆ ՍՊԱՆՏԵԼ ՊՈՂՈՍԻՆ

Քահանայապետերը և առաջնորդները Պողոսի դեմ ասելու-թյամբ էին լցված, քանի որ իրենք նրա աշխատանքի արդյունքների վկաներն էին: Նրանք տեսել էին, որ Պողոսը համարձակությամբ քարոզում էր Հիսուսին և հրաշքներ կատարում Նրա անունով, ամբոխը լսում էր նրան և հրաժարվում իր ավանդույթներից, իսկ նրանց դիտում որպես Աստծո Որդու մարդասպաններ: Նրանց բարկությունը եռում էր, և նրանք հավաքվեցին խորհրդակցելու, թե որն է հուզումները ճնշելու լավագույն միջոցը: Նրանք որոշեցին, որ իրենց համար միակ անվտանգ ելքը Պողոսին մահվան դատապարտելն էր: Սակայն Աստված գիտեր նրանց մտադրությունները, և հրեշտակները լիազորված էին պաշտպանել Պողոսին, որպեսզի նա շարունակեր ապրել՝ կատարելու իր առաքելությունը և տառապելու հանուն Հիսուսի անվան:

Պողոսին զգուշացրել էին, որ հրեաները որոնում են իրեն: Սատանան անհավատ հրեաներին ուղարկեց զօրուգիշեր Դամասկոսի դարպասներին հետևելու, քանի որ Պողոսը պետք է դուրս գար դարպասներով, և իրենք անմիջապես կարող էին սպանել նրան: Սակայն գիշերն աշակերտները նրան զամբյուղով պատից ցած իջեցրին: Այսպես հրեաներն ամոթահար եղան իրենց ձախողումից, և սատանան պարտություն կրեց: Պողոսը գնաց Երուսաղեմ՝ միանալու աշակերտներին, սակայն բոլորը վախենում էին Պողոսից: Նրանք չէին կարող հավատալ, որ Պողոսն աշակերտ է: Դամասկոսում հրեաները ցանկանում էին որսալ նրան, և իր եղբայրներն անգամ չընդունեցին նրան, սակայն Բառնաբասը վերցրեց նրան և բերեց առաքյալների մոտ՝ հայտարարելով, թե ինչպես է նա Տիրոջը տեսել ճանապարհին և Դամասկոսում համարձակ քարոզել Հիսուսի անունով:

Սակայն սատանան գրգռում էր հրեաներին՝ վերացնել Պողոսին, և Հիսուսը նրան առաջարկեց լքել Երուսաղեմը: Նա գնաց այլ քաղաքներ՝ քարոզելով Հիսուսին և հրաշքներ գործելով: Շատերն ապաշխարեցին, և երբ մի մարդ, ով ի ծնե անդամալույծ էր, բժշկվեց, մարդիկ, ովքեր երկրպագում էին կուռքերին, ցանկացան զոհաբերություն կատարել աշակերտների համար: Պողոսը բարկացավ և ասաց, որ իրենք ընդամենը մարդիկ են, և նրանք պետք է երկրպագեն Աստծուն, ով ստեղծել է երկինքն ու երկիրը, ծովը և նրա բոլոր գործերը: Պողոսն Աստծուն փառավորեց նրանց առջև, սակայն դժվարությամբ կարողացավ զսպել նրանց: Ենթադրյալ Աստծո նկատմամբ հավատի առաջնակարգ գիտելիքները, երկրպագությունը և հարգանքը Նրա հանդեպ ձևավորվել էին նրանց մտքում, և լսելով Պողոսին՝ սատանան այլ քաղաքների անհավատ հրեաներին դողեց հետևել Պողոսին՝ կործանելու նրա բարի գործը: Հրեաները գրգռում և հեթանոսների մտքերը բոցավառում էին Պողոսի դեմ ուղղված սուտ վկայություններով: Մարդկանց զարմանքն ու հիացմունքն այժմ վերածվեցին ատելության, և նրանք, ովքեր բոլորովին վերջերս պատրաստ էին երկրպագելու աշակերտներին, քարկոծեցին Պողոսին և տարան քաղաքից դուրս՝ կարծելով, թե նա մահացել է: Սակայն երբ աշակերտները կանգնած էին Պողոսի շուրջը և ողբում էին նրա համար, հուրախություն նրանց՝ Պողոսը վեր կացավ և նրանց հետ մտավ քաղաք:

Երբ Պողոսը քարոզում էր Հիսուսի մասին, մի կին, ով գուշակության ոգի ուներ և հետևում էր աշակերտներին, աղաղակելով կանչեց. «Այս մարդիկ Բարձրյալ Աստծո ծառաներն են, որ ձեզ պատմում են փրկության ճանապարհը»: Եվ այդպես, նա շատ օրեր քայլեց աշակերտների հետ: Սակայն Պողոսը բարկացավ, քանի որ իրենց հետևից հնչող այդ աղաղակը մարդկանց մտքերը վանում էր ճշմարտությունից: Այս կնոջը դողելու սատանայի նպատակն էր՝ ատելություն առաջացնել մարդկանց մեջ և վերացնել աշակերտների ազդեցությունը: Սակայն Պողոսը զայրացավ և դիմելով կնոջը՝ ասաց ոգուն. «Հիսուս Քրիստոսի անունով պատվիրում եմ քեզ, դուրս ել դրանից», և չար ոգին դուրս եկավ և լքեց նրան:

Կնոջ տեղերը գոհ էին, երբ նա գոռում էր աշակերտների հետևից, սակայն երբ չար ոգին թողեց նրան, և նրանք այդ կնոջ մեջ տեսան Քրիստոսի խոնարհ աշակերտի, կատաղեցին: Նրանք մեծ

գումար էին հավաքում նրա գուշակություններով, և այժմ նրանց եկամտի հույսը կորավ: Սատանան պարտություն կրեց, սակայն նրա ծառաները բռնեցին Պողոսին ու Շիղային և նրանց բերեցին շուկա՝ դեկավարների և դատավորների մոտ՝ ասելով. «Այս մարդիկ խռովեցնում են մեր քաղաքը՝ իրենք հրեաներ լինելով»: Ամբոխը վեր կացավ նրանց դեմ, և դատավորները, հանելով նրանց հագուստները, պատվիրեցին ծեծել նրանց: Բազմաթիվ հարվածներից հետո նրանց բանտ նետեցին՝ բանտապետին պատվիրելով ապահովել նրանց կյանքը: Բանտապետը, այդպիսի հրահանգ ստանալով, նրանց բանտարկեց ներքին բանտում և նրանց ոտքերը կապեց շղթաներով: Սակայն Աստծո հրեշտակներն ուղեկցում էին նրանց բանտի պատերի ներսում: Նրանց բանտարկությունը փառաբանում էր Աստծուն և ցույց տալիս մարդկանց, որ Աստված գործում է և Իր ընտրյալ ծառաների հետ է, որ բանտի պատերը կարող են դողալ, և ծանր երկաթյա ճաղերը կարող են հեշտությամբ բացվել նրա կողմից:

Կեսգիշերին, երբ Պողոսն ու Շիղան աղոթում էին և փառաբանության սաղմուներ երգում Աստծուն, հանկարծ մեծ երկրաշարժ եղավ, այնպես, որ բանտի հիմերը դողացին, և ես տեսա, որ Աստծո հրեշտակը բոլորին անմիջապես ազատեց շղթաներից: Բանտապետն արթնացավ և ահաբեկվեց՝ տեսնելով, որ բանտի դռները բաց են: Նա կարծում էր, թե բանտարկյալները փախել են, և ինքը մահապատժի պետք է ենթարկվի: Երբ նա ցանկանում էր ինքնասպան լինել, Պողոսը բարձր ձայնով աղաղակեց՝ ասելով. «Անձիդ չար բան չանես, որովհետև ամենքս այստեղ ենք»: Աստծո ուժը դարձի բերեց բանտապետին: Նա լամպ պահանջեց, ներս վազեց և դողալով ընկավ Պողոսի ու Շիղայի առջև, նրանց դուրս տարավ և ասաց. «Տերեր, ես ի՞նչ պետք է անեմ, որ փրկվեմ»: Եվ նրանք ասացին. «Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվես դու և քո տունը»: Այնուհետև բանտապետը հավաքեց իր ողջ ընտանիքը, և Պողոսը քարոզեց նրանց Հիսուսի մասին: Բանտապետի սիրտը միաբանվեց այդ եղբայրների հետ, և նա լվաց նրանց վերքերը, ինքն ու իր ողջ ընտանիքն այդ գիշեր մկրտվեցին: Այնուհետև նա կերակուր դրեց նրանց առջև և ուրախացավ՝ իր ողջ ընտանիքով հավատալով Աստծուն:

Երկրի սահմաններից դուրս տարածվում էր բանտի դռների բացմամբ և բանտապետի ու նրա ընտանիքի ապաշխարությամբ դրսևորված Աստծո վեհափառ գործության հրաշալի լուրը: Ղեկավար-

ները լսեցին այս իրադարձությունների մասին և վախեցան՝ բանտապետին պատվիրելով Պողոսին և Շիղային ազատ արձակել: Սակայն Պողոսը չէր ցանկանում բանտը գաղտնի լքել: Նա ասաց նրանց. «Հրապարակավ ծեծեցին մեզ՝ անմեղներիս, որ հռոմեացի մարդիկ ենք, և բանտ գցեցին, և հիմա մեզ թաքո՞ւն են հանում: Ոչ, այլ թող իրենք գան մեզ հանեն»: Պողոսը և Շիղան չէին ցանկանում, որպեսզի Աստծո զորության դրսևորումը գաղտնի լինի: Պատվիրակներն այս խոսքերը պատմեցին իրենց դատավորներին, և վերջիններս վախեցան, երբ որ լսեցին, թե Պողոսն ու Շիղան հռոմեացիներ են: Նրանք եկան և ազատեցին նրանց ու խնդրեցին, որ հեռանան քաղաքից:

Տե՛ս Գործք առաքելոց 14-րդ և 16-րդ գլուխներ

ՊՈՂՈՍՆ ԱՅՅԵԼՈՒՄ Է ԵՐՈՒՍԱԿԵՄ

Ապաշխարությունից հետո Պողոսն այցելեց Երուսաղեմ և քարոզում էր Հիսուսին և Նրա շնորհի հրաշքները: Նա պատմում էր իր զարմանահրաշ ապաշխարության մասին, որը կատաղեցնում էր քահանայապետերին և ղեկավարներին: Նրանք որոնում էին, որպեսզի սպանեին նրան: Սակայն որպեսզի Պողոսի կյանքը նորից փրկվի, Հիսուսը տեսիլքում կրկին հայտնվեց նրան, երբ նա աղոթում էր և ասաց նրան. «Շտապի՛ր, դո՛ւրս եկ Երուսաղեմից, որովհետև այստեղ չեն ընդունի իմ մասին վկայությունը»: Պողոսն անկեղծորեն խնդրում էր Հիսուսին. «Տե՛ր, նրանց հայտնի է, որ քեզ հավատացողներին ես բանտարկել եմ և ծեծել տաճարում: Եվ երբ թափվեց նահատակ Ստեփանոսի արյունը, ես նույնպես կանգնած էի նրա կողքին, կամակից էի նրա սպանությանը և պահում էի նրան քարկոծողների զգեստները»: Պողոսը կարծում էր, թե Երուսաղեմի հրեաները չէին կարող ընդդիմանալ նրա վկայությանը, որ նրանք կկարծեն, թե իրենում կատարված մեծագույն փոփոխությունը կատարվել է միայն Աստծո զորությամբ: Սակայն Հիսուսն ասաց. «Գնա, քանզի ես քեզ ուղարկում եմ հեռու հեթանոսների մեջ»:

Երուսաղեմից բացակայության պայմաններում Պողոսը բազմաթիվ մամակներ էր հղում տարբեր վայրեր՝ պատմելով իր փորձառությունը և դրանով հանդերձ հզոր վկայություն տալով: Սակայն շատերը ցանկանում էին վերացնել այդ մամակների ազդեցությունը: Նրանք պետք է հաստատեին, որ նրա մամակները կարևոր և զորեղ էին, սակայն հայտարարում էին, թե նրա ֆիզիկական ներկայությունն անուժ էր, իսկ նրա խոսքը՝ արժանի արհամարհանքի:

Ես տեսա, որ Պողոսը մեծագույն ուսուցիչ էր, իսկ նրա իմաստությունը և վարվելակերպը հիացնում էին նրա ունկնդիրներին: Կրթված

մարդիկ հավանում էին նրա գիտությունը, և նրանցից շատերը հավատացին Հիսուսին: Թագավորների և մեծ ժողովների առջև նա հեղում էր իր պերճախոսությունը և հիացնում նրանց: Մա մեծապես զայրացնում էր քահանաներին և երեցներին: Պողոսն ունակ էր պատրաստակամությամբ մուտք գործել մարդկանց մտածողության խորքերը, մտքով վեր թռչել և մարդկանց իր հետևից տանել դեպի ամենավեհ մտքերն ու ցույց տալ Աստծո ողորմության խորը հարըստությունը, նրանց ներկայացնել Քրիստոսի զարմանահրաշ սերը: Հաճախ նա պարզությամբ խոնարհվում էր հասարակ մարդկանց առջև, և ամենահզոր միջոցներով օգտագործելով իր փորձը՝ գրգռում Քրիստոսի աշակերտներ լինելու նրանց ցանկությունը:

Տերը Պողոսին բացահայտեց, որ նա կրկին պետք է գնա Երուսաղեմ, որտեղ և կձերբակալվի և փորձության կենթարկվեր հանուն Իրեն: Եվ չնայած Պողոսը երկար ժամանակ բանտարկված էր, սակայն Աստված Իր հատուկ աշխատանքն էր կատարում նրա միջոցով: Պողոսի կապանքները Քրիստոսի մասին գիտության տարածման միջոցներն էին և այդպիսով փառաբանում էին Աստծուն: Երբ նա քաղաքից քաղաք էր ճանապարհորդում, Հիսուսի վկայությունը և իր ապաշխարության հետ առնչվող հետաքրքիր միջադեպերը ներկայացվում էին թագավորների և առաջնորդների առջև, ովքեր չպետք է մնային առանց Հիսուսի մասին վկայությունն իմանալու: Հագարավորներ հավատացին Հիսուսին և ցնծում էին Նրա անունով: Ես տեսա, որ Աստծո հատուկ նպատակն իրականացավ Պողոսի ծովային ճանապարհորդության ընթացքում, երբ նավի անձնակազմը Պողոսի միջոցով ստացավ Աստծո զորության վկայությունը, և հեթանոսները նույնպես կարողացան լսել Հիսուսի մասին: Շատերը վերափոխվեցին նրա ուսուցման և նրա գործած հրաշքների վկայության միջոցով: Թագավորները և առաջնորդները հնայված էին նրա դատողությամբ, ջանասիրությամբ ու Մուրբ Հոգու զորությամբ Հիսուսի մասին նրա քարոզներով: Միահյուսելով իր փորձառության հետաքրքիր իրադարձությունները՝ նա համոզում էր նրանց, որ Հիսուսն Աստծո Որդին է, և այն ժամանակ, երբ բոլորը զարմանքով լսում էին Պողոսին, նրանցից մեկն աղաղակեց. «Դու ինձ գրեթե համոզեցիր դառնալ քրիստոնյա»: Մարդիկ մտածում էին, թե ապագայում իրենք երբևէ կքննարկեին այն, ինչ լսել էին: Սատանան օգտվեց հետաձգման այդ առավելությունից, և քանի որ նրանք մերժեցին այդ հնարավորու-

թյունը, դա հավիտենական նշանակություն ունեցավ: Նրանց սրտերը կրկին խստացան:

Ինձ ցույց տրվեց սատանայի աշխատանքը, երբ նա առաջին անգամ կուրացրեց հրեաների աչքերը, որպեսզի նրանք Հիսուսին չընդունեին որպես իրենց Փրկիչ, այնուհետև Նրա գործած հրաշքների պատճառով լցվելով նախանձով. նրանք ցանկանում էին սպանել Նրան: Սատանան մտավ Հիսուսի հետևորդներից մեկի սիրտը, և մղեց նրան Հիսուսին մատնել նրանց ձեռքը, և նրանք խաչեցին կյանքի և փառքի Տիրոջը: Գերեզմանից Հիսուսի հարությունից հետո հրեաներն ավելացնում էին իրենց մեղքերը՝ փորձելով ծածկել հարության փաստը՝ վարձելով հռոմեացի զինվորներին՝ սուտ վկայություն տալու համար: Սակայն Հիսուսի հարությունը կրկնակի արժանահավատ էր շնորհիվ այն բազմաթիվ վկաների, ովքեր հարություն առան Նրա հետ միասին: Հիսուսը հայտնվեց Իր աշակերտներին և հինգ հարյուրից ավելի մարդկանց: Նրանք, ովքեր հարություն առան Հիսուսի հետ մասին, միաժամանակ տարածում էին Նրա հարության լուրը:

Սատանան հրեաներին դրդում էր ապստամբել Աստծո դեմ՝ հրաժարվելով ընդունել Նրա Որդուն և խաչելով Նրան՝ իրենց ձեռքերն աղտոտելով ամենաթանկագին արյամբ: Չնայելով, թե որքան ակընհայտ է Հիսուսի՝ Աստծո Որդի, աշխարհի Փրկիչ լինելու փաստը, նրանք սպանեցին Նրան և չընդունեցին Նրա շնորհի վկայությունները: Նրանց միակ հույսը և մխիթարությունը Աստծո Որդու նկատմամբ հաղթանակ տոնելու փորձն էր, ինչպես փորձում էր վարվել սատանան իր անկումից հետո: Նրանք շարունակում էին իրենց ըմբոստությունը՝ հալածելով Քրիստոսի աշակերտներին և մատնելով նրանց մահվան: Ոչինչ այնքան տհաճ չէր նրանց ականջներին, որքան Հիսուսի անունը, ում նրանք խաչել էին, և վստահաբար որոշել չընդունել Նրա շնորհի վկայությունը: Այդպես էր և Ստեփանոսի դեպքում, երբ Սուրբ Հոգին նրա միջոցով ազդարարում էր Հիսուսի՝ Աստծո Որդի լինելու մեծագույն վկայությունը, իսկ նրանք փակում էին իրենց ականջները, որպեսզի չհամոզվեն դրանում: Եվ քանի դեռ Ստեփանոսը պարուրված էր Աստծո փառքով, նրանք քարկոծելով սպանեցին նրան: Սատանան Հիսուսին սպանողներին արագորեն վերցրեց իր տիրապետության ներքո: Մեղավոր գործերով նրանք անձնատուր եղան նրա կամքին, և նրանց միջոցով սատանան անհանգստացնում և գրգռում էր Քրիստոսի հետևորդներին: Նա աշխատում էր հրեա-

ների միջոցով՝ հեթանոսներին բորբոքելով Հիսուսի դեմ: Սակայն Աստված ուղարկեց Իր հրեշտակներին, որպեսզի աշակերտներին զորացնի իրենց գործում, որպեսզի վերջիններս վկայեին այն, ինչ տեսել և լսել էին, և վերջապես, լինելով աննկուն՝ իրենց արյամբ կնքեին այդ վկայությունները:

Սատանան ցնծում էր, որ հրեաներն ապահով էին իր ծուղակում: Նրանք դեռևս շարունակում էին իրենց անօգուտ ծիսակատարությունները, գոհաբերությունները և արարողությունները: Երբ խաչափայտից կախված Հիսուսն աղաղակեց. «Կատարվեց», տաճարի վարագույրը վերից վար երկու մասի կիսվեց, որը խորհրդանշում էր, որ Աստված այլևս երբեք տաճարում չի հանդիպի քահանաներին՝ ընդունելու նրանց գոհաբերությունները և ծեսերը, ինչպես նաև այն, որ հրեաներին և հեթանոսներին բաժանող պատն ալևս քանդված է: Հիսուսն Իրեն գոհաբերեց երկուսի համար, և նրանք բոլորը փրկված են, երկուսն էլ պետք է հավատան Հիսուսին՝ որպես մեղքի միակ գոհաբերության և աշխարհի Փրկչի:

Այնժամ, երբ Հիսուսը կախված էր խաչափայտից, և զինվորը նիզակով խոցեց նրա կողը, արյուն և ջուր հոսեց, երկու առանձին շիթեր՝ մեկն արյան, մյուսը՝ մաքուր ջրի: Արյունը պետք է մաքրեր բոլոր նրանց մեղքերը, ովքեր հավատացել էին Նրա անվանը: Ջուրը խորհրդանշում էր կենդանի ջուրը, որը բխում էր Հիսուսից, որպեսզի կյանք տա Իրեն հավատացողին:

Տես Մատթեոս 27.51, Հովհաննես 19.34, Գործք 24 և 26 գլուխներ

ՄԵԾԱԽՈՒՅՆ ՈՒՐԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ես տեղափոխվեցի այն ժամանակաշրջանը, երբ հեթանոս կռապաշտները դաժանորեն հետապնդում էին քրիստոնյաներին և սպանում նրանց: Առատ արյուն էր հեղվում: Մեծաճղի, կրթված և հասարակ մարդիկ առանց գթասրտության միակամորեն սպանում էին: Հարուստ ընտանիքներն աղքատության էին մատնվում, քանզի չէին հրաժարվում իրենց կրոնից: Չնայած հետապնդումներին և տանջանքներին՝ այդ քրիստոնյաները համբերում էին, չէին դավաճանում իրենց սկզբունքներին: Նրանք անարատ պահեցին իրենց կրոնը: Ես տեսա, որ սատանան ցնծում էր և հրճվանք ապրում՝ տանջելով Աստծո ժողովրդին: Սակայն Աստված մեծ հավանությամբ էր նայում Իր հավատարիմ մարտիրոսներին և այն քրիստոնյաներին, ովքեր ապրում էին այդ դաժան ժամանակներում՝ մեծագույն սեր դրսևորելով Նրա նկատմամբ, քանի որ նրանք հանուն Իրեն կամենում էին տառապել: Նրանց կրած յուրաքանչյուր տառապանք ավելացնում էր նրանց պարգևները երկնքում: Չնայած սատանան ցնծում էր սրբերի տառապանքով, սակայն նա դեռևս բավարարված չէր: Նա ցանկանում էր տիրել նրանց մտքին այնպես, ինչպես նրանց մարմինն էր կառավարում: Քրիստոնյաների կրած տառապանքները նրանց ավելի մոտեցրեցին Տիրոջը և դրդեցին սիրել միմյանց: Սատանան փափագում էր նրանց մղել զայրացնելու Աստծուն. այդպես նրանք կկորցնեին իրենց ուժը, հոգու կորովը և վճռականությունը: Չնայած շատերը սպանված էին, ոտքի էին կանգնում այլք՝ զբաղեցնելու նրանց տեղը: Սատանան տեսնում էր, որ կորցնում է իր հպատակներին, և թեև նրանք հետապնդումների և մահվան էին դատապարտվում, սակայն դեռևս պաշտպանված էին Հիսուս Քրիստոսի կողմից՝ լինելու Նրա արքայության հպատակները: Սատանան մշա-

կեց Աստծո կառավարության դեմ առավել հաջողությամբ պայքարելու և եկեղեցին կործանելու իր ծրագրերը: Նա այդ հեթանոս կռապաշտներին դրդում էր մասնակիորեն ընդունել քրիստոնեական հավատը: Նրանք առերես՝ առանց վերափոխվելու, հավատում էին Քրիստոսի խաչելությանը և հարությանը և առաջարկում էին միաբանվել Հիսուսի հետևորդների հետ: Ինչպիսի՜ ահավոր վտանգ եկեղեցու համար: Գա հոգեկան տառապանքների ժամանակաշրջան էր: Որոշ մարդիկ կարծում էին, որ եթե նվազեցնեին իրենց չափանիշները և միավորվեին այդ կռապաշտների հետ, ովքեր մասնակիորեն ընդունում էին քրիստոնեական հավատը, կնպաստեր նրանց ապաշխարությանը: Սատանան ձգտում էր վնասել աստվածաշնչյան ուսմունքը: Ի վերջո, ես տեսա, որ չափանիշները նվազեցվում էին, և հեթանոսները միանում էին քրիստոնյաներին: Նրանք կռապաշտներ էին, և չնայած հայտարարում էին, որ քրիստոնյաներ են, սակայն չէին հրաժարվում կռապաշտությունից: Նրանք միայն իրենց երկրպագության առարկաներն էին փոխել՝ սրբերի պատկերներ և նույնիսկ Քրիստոսի և Մարիամի՝ Հիսուսի մոր պատկերը: Քրիստոնյաներն աստիճանաբար միավորվեցին նրանց հետ, և քրիստոնեական կրոնը խեղաթյուրվեց, եկեղեցին կորցրեց իր անեղծությունն ու զորությունը: Որոշ մարդիկ հրաժարվում էին միավորվել նրանց հետ, պահպանում էին իրենց մաքրությունը և երկրպագում միայն Աստծուն: Նրանք չէին խոնարհվում ոչ մի պատկերի՝ ոչ վերը՝ երկնքում, ոչ ցածր՝ երկրի վրա:

Սատանան ցնծում էր այդ բազմության անկման համար, և անկյալ եկեղեցուն նա ստիպեց հետապնդել նրանց, ովքեր պահպանում էին իրենց կրոնի անեղծությունը, որպեսզի վերջիններս կա՛ն ենթարկվեին իրենց ծիսակատարություններին և պատկերների երկրպագությանը, կա՛ն մահվան դատապարտվեին: Հետապնդման կրակը կրկին վառվեց Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցու դեմ, և միլիոնավոր մարդիկ սպանվեցին առանց գթասրտության:

Այն իմ առջև հայտնվեց հետևյալ կերպ. հեթանոս կռապաշտների մեծ բազմությունը կրում էր սև դրոշ, որի վրա երևում էին արևի, լուսնի և աստղերի պատկերներ: Ամբոխը դաժան և զայրացած էր երևում: Այնուհետև ինձ ցույց տրվեց մարդկանց խումբ, որը կրում էր սպիտակ մաքուր դրոշ, որի վրա գրված էր. «Մաքրություն և Սրբություն Տիրոջ առջև»: Նրանց դեմքերին դրոշմված էր վճռականություն և երկնային խոնարհություն: Ես տեսա, թե ինչպես հեթանոս կռա-

պաշտները մոտեցան նրանց, և մեծ արյունահեղություն տեղի ունեցավ: Քրիստոնյաները հավվում էին նրանց առջև, սակայն քրիստոնեական խումբն ավելի համախմբված էր և դեռևս ամուր պահում էր դրոշը: Մինչ շատերն ընկնում էին, մյուսները համախմբվում էին դրոշի շուրջը և զբաղեցնում նրանց տեղերը:

Ես տեսա, որ կռապաշտների խումբը խորհրդակցում էր: Նրանք չկարողացան հաղթել քրիստոնյաներին և համաձայնեցին այլ ծրագրով գործել: Ես տեսա, որ նրանք իջեցրին իրենց դրոշը և մոտեցան հավատարիմ քրիստոնյաների խմբին և իրենց առաջարկները ներկայացրին նրանց: Ի սկզբանե նրանց առաջարկներն ամբողջապես մերժվեցին: Այնուհետև ես տեսա, որ քրիստոնյաների խումբն էր խորհրդակցում: Ոմանք ասում էին, որ իրենք պետք է իջեցնեն դրոշը, ընդունեն նրանց առաջարկները և պահպանեն իրենց կյանքը: Այդպիսով նրանք կկարողանան ուժ ձեռք բերել հեթանոս կռապաշտների շրջանում՝ բարձրացնելու իրենց դրոշը: Սակայն ոմանք չհամաձայնեցին այս ծրագրի հետ, այլ հաստատակամորեն գերադասեցին մեռնել՝ պահելով այս դրոշը: Այնուհետև ես տեսա, որ այդ քրիստոնյաներից շատերն իջեցրին դրոշը և միավորվեցին հեթանոսների հետ, մինչդեռ ամուրները և հաստատակամները վերցրեցին այն և կրկին բարձր ծածանեցին: Ես տեսա անհատների, ովքեր լքում էին խումբը, որը կրում էր մաքրության դրոշը և միավորվում կռապաշտների հետ. այդպիսով նրանք միավորվում էին սև դրոշի ներքո՝ հետապնդելու նրանց, ովքեր կրում էին սպիտակ դրոշը: Շատերը սպանվեցին, սակայն սպիտակ դրոշը դեռևս բարձր ծածանվում էր, իսկ անհատները հառնում էին վեր և միավորվում նրա շուրջը:

Հրեաները, ովքեր առաջինն էին հեթանոսներին գրգռել Հիսուսի դեմ, չխուսափեցին պատժից: Դատարանի դահլիճում, երբ Պիղատոսը վարանում էր դատապարտել Հիսուսին, կատաղած հրեաներն աղաղակում էին. «Նրա արյունը մեր և մեր որդիների վրա»: Հրեա ազգը զգաց այս ահավոր անեծքի իրականացումը, որը նրանք բերեցին իրենց գլխին: Հեթանոսները և անվանական քրիստոնյաներն նրանց թշնամիները դարձան: Անվանական քրիստոնյաները, ձգտելով դեպի Քրիստոսի խաչը, կարծում էին. քանզի հրեաները խաչեցին Հիսուսին, ուրեմն, որքան շատ տանջանքներ իրենք պատճառեն հրեաներին, այնքան հաճելի կլինեն Աստծուն: Այդ անհավատ հրեա-

ներից շատերը սպանվեցին, մինչդեռ մյուսները, տեղից տեղ փախչելով, ամեն քայլափոխի պատժվում էին:

Քրիստոսի և նրա աշակերտների արյունը, ում նրանք մահվան էին մատնել, իրենց վրա էր, և բոլորին էլ ահավոր դատաստան էր սպասվում: Աստվածային անեծքը հետապնդում էր նրանց, և նրանք ծաղրի ենթարկվում էին հեթանոսների և քրիստոնյաների կողմից: Նրանցից խուսափում էին, նրանց մերժում և ատում էին, կարծես Կայենի կնիքը լիներ նրանց վրա: Սակայն ես տեսա, որ Աստված հրաշքով պահպանեց այս մարդկանց և սփռեց ողջ աշխարհով մեկ, որպեսզի բոլորը տեսնեն, որ նրանք կրում են Աստծո անեծքը: Ես տեսա, որ Աստված հրեաներին՝ որպես ազգ լքեց, սակայն դեռևս կային մարդիկ, ովքեր կարողացան այդ քողը վեր առնել իրենց սրտից: Ոմանք դեռևս կտեսնեն իրենց վերաբերող մարգարեության կատարումը, նրանք կընդունեն Հիսուսին՝ որպես աշխարհի Փրկիչ, և կտեսնեն իրենց ազգի մեծագույն մեղքը՝ Հիսուսին մերժելը և խաչելության մատնելը: Հրեաներից ոմանք կապաշխարեն, սակայն որպես ազգ նրանք հավերժ լքված են Աստծուց:

ԱՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Սատանայի մտահղացումն էր, որպեսզի մարդկանց մտքերը Հիսուսից ուղղի դեպի մարդիկ և կործանի անհատական պատասխանատվությունը: Սատանայի մտահղացումներն անհաջողության մատնվեցին, երբ նա փորձության ենթարկեց Աստծո Որդուն: Մինչդեռ նա հաջողությունների հասավ՝ այցելելով կորուսյալ մարդուն: Քրիստոնեական ուսմունքը խաթարվեց: Պապերը և քահանաները փորձում էին բարձր դիրք զբաղեցնել և մարդկանց սովորեցնում էին մեղքերը խոստովանել իրենց այնինչ պետք էր դիմել Քրիստոսին: Աստվածաշունչը ծածկված էր մարդկանցից. չէ՞ որ անհրաժեշտ էր թաքցնել այն ճշմարտությունները, որոնք կարող էին դատապարտել իրենց:

Մարդիկ լիովին խաբված էին: Նրանք կարծում էին, թե պապերը և քահանաները Քրիստոսի ներկայացուցիչներն են, մինչդեռ վերջիններս միայն սատանայի փաստացի ներկայացուցիչներն էին, և երբ մարդիկ երկրպագում էին նրանց, ապա երկրպագում էին հենց սատանային: Մարդիկ Աստվածաշնչի կարիքն ունեին, սակայն քահանայապետերը վտանգավոր էին համարում թույլ տալ նրանց ունենալ և ընթերցել Աստծո Խոսքը: Չէ՞ որ նրանք կլուսավորվեին, և քահանայապետերի մեղքերն ի հայտ կգային: Մարդկանց սովորեցնում էին նայել այս խաբեբաներին և յուրաքանչյուր բան այնպես ընդունել նրանցից, ասես Աստված էր դրանք ասում: Նրանք այնպիսի իշխանություն ունեին մարդկանց մտքերի նկատմամբ, ինչպիսի իրավունք ունի միայն Աստված: Եվ եթե որևէ մեկը համարձակվեր հետևել սեփական համոզմունքներին, նրան կսպառնար նույն ատելությունը, ինչը սատանան և հրեաները տաժում էին Հիսուսի հանդեպ: Ինձ ցույց տրվեց մի այնպիսի ժամանակաշրջան, երբ սատանան առանձ-

նահատուկ հաղթանակ տոնեց: Բազմաթիվ քրիստոնյաներ ահավոր դաժանությամբ սպանվեցին, քանի որ նրանք պահպանում էին իրենց կրոնի անաբատությունը:

Աստվածաշունչն ատելի էր, և մեծ ջանքեր գործադրվեցին՝ երկիրն ազատագրելու Աստծո թանկարժեք Խոսքից: Մահվան սպառնալիքով Աստվածաշունչն արգելում էին ընթերցել, և այրվում էին Սուրբ Գրքի բոլոր հայտնաբերվող օրինակները: Սակայն ես տեսա, որ Աստված առանձնահատուկ կերպով հոգ էր տանում Իր Խոսքի նկատմամբ: Նա պաշտպանում էր այն: Որոշ ժամանակաշրջանների ընթացքում գոյություն ունեին Աստվածաշնչի միայն մի քանի օրինակներ, սակայն, միևնույնն է, Աստված չէր կարող թույլ տալ, որպեսզի Իր Խոսքը կորչեր: Եվ վերջին օրերում Աստվածաշնչի օրինակներն այնքան շատացան, որ այժմ այն կա գրեթե յուրաքանչյուր ընտանիքում: Ես տեսա, որ երբ կային Աստվածաշնչի դեռևս եզակի օրինակներ, Հիսուսի հետևորդները հսկում և պահպանում էին դրանք՝ որպես հարստություն: Աստվածաշունչը գաղտնի էին ընթերցում և դա մեծագույն առավելություն էին համարում, ասես հաղորդակցվում էին Աստծո հետ, Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Նրա աշակերտների հետ: Սակայն այս օրինված առավելությունն արժեցավ նրանցից շատերի կյանքը: Եթե ինչ-որ մեկին նկատում էին Աստվածաշունչ ընթերցելիս, խաչում էին կամ բանտ նետում՝ սովանահ անելով:

Սատանան չէր կարող խոչընդոտել փրկության ծրագիրը: Հիսուսը խաչվել էր և երրորդ օրը հարություն առել: Նա իր հրեշտակներին ասաց, որ նույնիսկ խաչելությունը և հարությունն իր օգտին կկիրառի: Սատանան ցանկանում էր, որ Քրիստոսին հավատացողները կարծեին, թե հրեական գոհաբերությունները և նվիրատվությունները կարգավորող օրենքները դադարել են Քրիստոսի մահվամբ, և եթե դա նրան հաջողվեր, ապա նա կստիպեր նրանց հավատալ, որ Տասը պատվիրանները նույնպես վերացնել են Քրիստոսի մահվամբ:

Ես տեսա, որ շատերը պատրաստակամությամբ ընկնում են սատանայի թակարդը: Ողջ երկինքը վրդովված էր՝ տեսնելով, թե ինչպես է ոտնահարվում Աստծո օրենքը: Հիսուսը և բոլոր երկնաբնակները հասկանում էին Աստծո օրենքի էությունը, նրանք գիտեին, որ Աստված չի փոխի կամ չեղյալ չի հայտարարի այն: Մարդու անհույս վիճակը

խորագույն տրամաբյուն պատճառեց երկնքին, և Հիսուսին դրոշեց մահվան՝ հանուն Աստծո սուրբ օրենքն անարգողների: Եթե Աստծո օրենքը չեղյալ հայտարարվեր, մարդը կարող էր փրկվել առանց Հիսուսի մահվան: Քրիստոսի մահը չկործանեց Նրա Հոր օրենքը, այլ մեծարեց և հարգարժան դարձրեց այն, ստիպեց հնազանդվել Նրա սուրբ պատվերներին: Եթե եկեղեցին մնար մաքուր և ամուր, ապա սատանան չէր կարող խաբել նրան և ստիպել ոտնահարել Աստծո օրենքը: Այդ համարձակ ծրագրում սատանան նշան էր բռնել անմիջականորեն Աստծո՝ երկնքում և երկրի վրա կառավարման հիմքերի դեմ: Սատանայի ապստամբությունը ստիպեց նրան ավելի հեռանալ երկնքից: Երբ սատանան ապստամբեց՝ փրկելու ինքն իրեն, ցանկանում էր որ Աստված փոխի Իր օրենքը, սակայն Աստված ողջ երկնաբնակների առջև սատանային ասաց, որ Իր օրենքն անխախտ է: Սատանան գիտեր, որ եթե իրեն հաջողվի մյուսներին ստիպել խախտել Աստծո օրենքը, ապա նրանք հավատարիմ կմնան իրեն, քանի որ յուրաքանչյուր օրինազանց պետք է մեռնի:

Սատանան որոշեց ավելի հեռուն գնալ: Նա ասաց իր հրեշտակներին, որ ոմանք այնքան ջերմեռանդ կլինեն Աստծո օրենքի հանդեպ, որ նրանց չեն կարողանա թակարդը գցել, որ այդ Տասը պատվիրաններն այնքան պարզ են, որ շատերը կկարծեն, թե դրանք դեռևս գործում են: Այդ իսկ պատճառով իրենք պետք է ձգտեն խեղաթյուրել չորրորդ պատվիրանը, որտեղ մարդկանց ներկայացվում է կենդանի Արարիչը: Նա իր ներկայացուցիչներին հանձնարարեց փորձել փոխել շաբաթը, փոխել Տասը պատվիրաններից միակը, որտեղ ներկայացվում է ճշմարիտ Տերը՝ երկրի և երկնքի Արարիչը: Սատանան նրանց ներկայացրեց Հիսուսի փառավոր հարությունը և ասաց, որ Նրա հարությունը կատարվել է շաբաթվա առաջին օրը, և այդ պատճառով Նա շաբաթը յոթերորդից տեղափոխել է շաբաթվա առաջին օրը: Այդպիսով, սատանան հարությունն օգտագործեց իր նպատակին հասնելու համար: Նա և իր հրեշտակները ցնծում էին, որ իրենց խաբեությունը կշփոթեցնի Քրիստոսի թվացյալ հետևորդներին: Մեկ բան է՝ նայել կրոնական զարհուրանքին, մեկ այլ բան՝ ստանալ այն: Շատ խաբեություններ եղան և ջանադրաբար պաշտպանվեցին: Նրա խոսքերում ակնհայտորեն արտահայտվող Աստծո կամքը քողարկված էր սխալների և ավանդույթների ներքո, որոնք ուսուցանվում էին որպես Աստծո պատվիրաններ: Սակայն, չնայած

այդ երկնային պատվերն անարժանաբար մոռացվել էր և նսեմացվել բոլոր դարերի ընթացքում՝ ընդհուպ մինչ Հիսուսի երկրորդ գալուստը, ուրացողության և սխալների այդ ժամանակաշրջանում Աստված, միննույնն է, առանց վկաների չմնաց: Կային ճշմարիտ և նվիրված վկաներ, ովքեր խավարի և եկեղեցու հետապնդման ժամանակաշրջանում պահում էին Աստծո պատվիրանները:

Ես տեսա, որ հրեշտակները հիացմունքով լի հետևում էին փառքի Արքայի տառապանքներին և մահվանը: Տեսա մահ, որ երկնաբնականների համար հրաշք չէր այն, որ կյանքի և փառքի Արքան, ով ողջ երկինքը լցրել էր ուրախությամբ և հիացմունքով, արձակեց մահվան կապանքները և հաղթանակած դուրս եկավ գերեզմանից: Եթե այս իրադարձություններից որևէ մեկը պետք էր նշել որպես հանգստյան օր, դա, անկասկած, խաչելությունն էր: Ես տեսա, որ այս իրադարձություններից ոչ մեկը չէր կարող փոխել կամ չեղյալ համարել Աստծո օրենքը, սակայն նրանք անփոփոխության շատ ուժեղ ապացույց առաջադրեցին:

Այս երկու իրադարձություններն էլ հիշարժան էին: Մասնակցելով Տիրոջ ընթրիքին՝ հացի կտտրմամբ և խաղողի հյութն ըմպելով, մենք վկայում ենք Տիրոջ մահը, մինչ Նա կգա: Հիշելով սա՝ Նրա տառապանքի և մահվան դրվագները կրկին հայտնվում են մեր մըտքում: Քրիստոսի հարությունը հիշատակվում է մկրտության ժամանակ Նրա հետ ջրի սուզմամբ և ջրային գերեզմանից վեր հանելով. հենց այդպես Նա հարություն առավ, որպեսզի մենք ապրենք նորոգված կյանքով:

Ինձ ցույց տրվեց, որ Աստծո օրենքը հավերժ կլինի և գոյություն կունենա Նոր երկրում՝ հավիտենության մեջ: Արարչագործության ժամանակ, երբ դրվեց երկրի հիմքը, Աստծո որդիները հիացմունքով էին նայում Արարչի աշխատանքին, և ողջ երկնաբնականները ցնծությամբ բացականչում էին: Այդ ժամանակ դրվեց շաբաթի հիմքը: Արարչագործության վեցերորդ օրվա ավարտին Աստված հանգիստ առավ յոթ օրերի ընթացքում Իր կատարած ամբողջ աշխատանքից. Նա օրհնեց յոթերորդ օրը և սրբեց այն, որովհետև այդ օրը Նա հանգստացավ Իր բոլոր գործերից: Շաբաթը հիմնադրվեց Եղենում մինչ մեղանչելը, և այն պահում էին Ադամը, Եվան և ողջ երկնաբնականները: Աստված հանգստացավ յոթերորդ օրը և օրհնեց ու սրբեց նրան, և ես տեսա, որ շաբաթն այլևս չեղյալ չի հայտարարվի, իսկ

փրկված սրբերը և երկնաբնականները այն հավիտյան կպահեն ի պատիվ մեծագույն Արարչի:

Տես Ղանիել 7-րդ գլուխը, Բ Թեսաղոնիկեցիս 2-րդ գլուխը:

ՄԱՔ, ԱՅԼ ՈՋ ԹԵ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՏՄՆՉՈՒՄ

Սատանան իր խաբեությունը սկսեց Եդեմում: Նա ասաց Եվային. «Դուք չեք մեռնի»: Սա սատանայի առաջին դասն էր հոգու անմահության հարցում, և այդ պահից մինչ օրս նա շարունակում է խաբել և կշարունակի խաբել՝ մինչ Աստծո որդիները կազատվեն կապանքներից: Ես տեղափոխվեցի Եդեմի պարտեզ՝ Ադամի և Եվայի մոտ: Նրանք ճաշակեցին արգելված ծառի պտուղը, այնուհետև հրեղեն սուրը դրվեց կյանքի ծառի մոտ: Նրանք վտարվեցին պարտեզից, որպեսզի այլևս չճաշակեն կյանքի ծառի պտղից և հավերժ մեղավորներ չդառնան: Կյանքի ծառը նախատեսված էր անմահությունը հավերժացնելու համար: Ես լսեցի, թե ինչպես հրեշտակը հարցրեց. «Ադամի սերնդից ո՞վ անցավ այդ հրեղեն սրի տակով և ճաշակեց կյանքի ծառի պտուղը»: Ես լսեցի հրեշտակի պատասխանը. «Ադամի սերնդից ոչ ոք չանցավ այդ հրեղեն սրի տակով և չճաշակեց այդ ծառի պտղից, այդ պատճառով անմահ մեղավորներ չկան»: Հոգին, որը մեղք է գործել, կմեռնի հավերժ մահով, մահ, որտեղ հարության ոչ մի հույս չի լինի. այնուհետև կդադարի Աստծո զայրույթը:

Ինձ համար հրաշք էր, որ սատանան կարող էր այդպիսի հմտությամբ համոզել մարդկանց, որ «մեղանշող անձը պիտի մեռնի» Աստծո խոսքերը ենթադրում են, որ մեղավոր անձը չի մեռնի, բայց հավերժ կապրի տանջանքների մեջ: Հրեշտակն ասաց. «Կյանքը կյանք է՝ լինի ցավի, թե երջանկության մեջ: Մահն առանց ցավի, ուրախության և ատելության է»:

Սատանան իր հրեշտակներին պատվիրեց առանձնահատուկ ջանքեր գործադրել՝ Եդեմում ի սկզբանե Եվային ասված խաբեությունն ու սուտը տարածելու համար. «Ոչ, դուք չեք մեռնի»: Եվ քահանի որ խաբեությունն ընդունվեց մարդկանց կողմից, և նրանք հավա-

տացին, որ մարդն անմահ է, սատանան ավելի շատ խորացրեց իր սուտը՝ ասելով, որ մեղավորը հավերժական տանջանքներ կկրի: Այդ- ժամ սատանայի համար ճանապարհ բացվեց աշխատելու իր ներկայացուցիչների միջոցով՝ մարդկանց առջև Աստծուն ներկայացնելու որպես վրիժառու բռնապետ, քանի որ նրանց, ովքեր չեն պատվում Աստծուն, Նա կմատնի դժոխքին և կստիպի զգալ Իր գայրույթը: Նրանք աննկարագրելի տանջանքներ կկրեն, իսկ Նա բավարարվածությամբ կնայի ներքև, երբ նրանք կջղածով են ահավոր տառապանքներից և հոգեվարքից: Սատանան գիտեր, որ եթե իր խաբեությունն ընդունվի, շատերը կվախենան և կատեն Աստծուն՝ Նրան սիրելու և Նրանով հպարտանալու փոխարեն: Շատերը կկարծեն, թե Աստծո սպառնալիքները բառացիորեն չեն կատարվի, քանի որ Իր արարածներին տանջանքների մատնելը հակասում է Նրա բարեհաճ և սիրառատ էությանը: Սատանան որոշեց մեկ այլ ծայրահեղության մատնել մարդկանց՝ ամբողջովին մերժելով Աստծո արդարադատությունը և Նրա Խոսքի սպառնալիքները՝ Նրան ներկայացնելով որպես ամենատղորմած էակ, ով ոչ մեկին չի կործանի, այլ բոլորը՝ և՛ սուրբերը, և՛ մեղավորները, վերջապես կփրկվեն Նրա Արքայության մեջ: Հոգու անմահության և հավերժական տանջանքների ուսմունքի տարածման արդյունքում սատանան մեկ այլ առավելությունից է օգտվում՝ մարդկանց ստիպելով արժեզրկել Աստվածաշունչը՝ որպես Աստծուց ներշնչված գիրք: Նրանք կարծում են, թե այն շատ լավ խրատներ է տալիս, սակայն չեն կարող հուսալ նրան և սիրել այն, քանի որ մարդիկ սովորել են, որ այն, իբրև թե, ազդարարում է հավերժական տանջանքների դավանանքը:

Սատանան օգտվեց մեկ այլ առավելությունից և մարդկանց դրո- դեց ժխտել Աստծո գոյությունը: Նրանք չեն կարող տեսնել Աստվածաշնչի Աստծո իրական էությունը, եթե Նա մարդկության մի մասին տանջի հավիտենական ահավոր չարչարանքներով: Նրանք մերժում են Աստվածաշունչը և նրա Հեղինակին, իսկ մահը որակում են որպես հավերժ քուն:

Սատանան ուղղորդում է մարդկանց մեկ այլ խմբի, ովքեր լի են վախով և երկյուղած են մեղքի նկատմամբ, և երբ նրանք մեղանչում են, նա ներկայացնում է, որ մեղքի վարձքը մահը չէ, այլ հավիտենական կյանքը ահավոր տանջանքներով: Սատանան նրանց տկար մտքերի առջև վեր է հանում անվախճան դժոխքի սարսափը

և կառավարում նրանց միտքն այնպես, որ նրանք կորցնում են իրենց բանականությունը: Այդժամ սատանան և նրա հրեշտակները ցնծում են, իսկ անհավատներն ու աթեիստները միաբանվում են՝ հանդիմանելով քրիստոնեությունը: Նրանք այդ հանրահայտ մոլորության ընդունման ահավոր հետևանքները գնահատում են որպես Աստվածաշնչի և նրա Հեղինակի նկատմամբ հավատի բնական դրսևորումներ:

Ես տեսա, որ երկնաբնակները լի զայրությով էին լցված սատանայի այդ հանդուգն արարքի նկատմամբ: Ես հարցրի, թե ինչու պետք է տեղի ունենան այդ մոլորությունները և ազդեն մարդկանց մտքերի վրա, եթե Աստծո հրեշտակները գորեղ են և լիազորված են կոտրելու թշնամու գորությունը: Այդժամ ես տեսա ու հասկացա, որ Աստված գիտեր. սատանան գործադրելու է բոլոր ջանքերը՝ կործանելու մարդուն: Այդ իսկ պատճառով Նա տվեց Իր Խոսքը և այն դարձրեց այնքան պարզ և հասկանալի մարդուն, որպեսզի ամենատկարն էլ չմոլորվի: Այնուհետև Նա խնամքով պահպանեց Իր Խոսքը, որպեսզի սատանան և նրա հրեշտակները իրենց գործակալների կամ ներկայացուցիչների միջոցով չկարողանան ոչնչացնել այն: Այն դեպքում, երբ այլ գրքեր կարող են ոչնչացվել, Սուրբ Գիրքը պետք է անմահ լինի: Եվ ժամանակի ավարտին, երբ սատանայի մոլորությունը կմեծանա, այս Գրքի օրինակներն այնքան կտարածվեն, որ մարդկանց տրված Աստծո հայտնությունը ձեռք բերել ցանկացողները կատանան այն և կկարողանան դիմակայել սատանայի խաբեությանն ու կեղծ հրաշքներին:

Ես տեսնում էի, որ Աստված առանձնահատուկ կերպով էր պահպանում Աստվածաշնչի այդ մի քանի օրինակները՝ երբ նույնիսկ գիտնականները որոշ տեղերում փոփոխում էին խոսքերը՝ կարծելով, թե ավելի հասկանալի կդարձնեն այն: Սակայն, հակառակը, անբացատրելի էին դարձնում այն, ինչը հասկանալի էր՝ այնտեղ ներառելով ավանդույթներով ողողված սեփական հայացքները: Սակայն ես տեսա, որ Աստծո Խոսքն ամբողջական կատարյալ շղթա է. Սուրբ Գրքի մի մասը պարզաբանում է մյուսը: Ճշմարտության իսկական որոնողները չպիտի մոլորվեն, քանի որ ոչ միայն Սուրբ Գիրքն է պարզորոշ կերպով և հստակ կերպով ներկայացնում դեպի կյանք տանող ուղին, այլև Սուրբ Հոգին է առաջնորդում դեպի հավիտենական կյանքի շավիղները:

Ես տեսա, որ Աստծո հրեշտակները երբեք չեն կառավարել մարդու կամքը: Աստված մարդուն առաջարկում է կյանքը կամ մահը: Նա կարող է ընտրություն կատարել: Շատերը ցանկանում են ապրել, սակայն շարունակում են քայլել լայն ճանապարհով, քանզի չեն ընտրել կյանքը:

Աստծո ողորմությունն ու կարեկցանքը ես տեսա նրանում, որ հանուն մեղավոր մարդու Իր Որդուն մահվան մատնեց: Նրանք, ովքեր չեն ընդունել փրկությունը, որն այդքան թանկ գնով գնվեց, պետք է պատժվեն: Աստծո ստեղծած արարածներն ընտրեցին Նրա կառավարման դեմ ապստամբությունը, սակայն ես տեսա, որ Աստված նրանցից վերջնականապես երես չթեքեց: Նա չէր կարող նրանց երկինք տանել. եթե Նա նրանց սուրբ և մաքուր հասարակության մեջ ընդուներ, նրանց կատարյալ դժբախտ կդարձներ: Նա լիովին կոչնչացնի նրանց և կանի այնպես, ասես, նրանք երբևէ չեն էլ եղել, իսկ այնուհետև կագոարարվի Նրա արդարադատությունը: Նա հողի փոշուց արարեց մարդուն, և անհնազանդներն ու անարդարները կոչնչացվեն կրակով և կրկին փոշի կդառնան: Ես տեսա, որ Աստծո այսպիսի բարյացակամությունն ու կարեկցանքը կողդի հիանալ Նրա բնավորությամբ և երկրպագել Նրան, իսկ այնուհետև, երբ չարը վերանա երկրի վրայից, երկնաբնակները կասեն. «Ամեն»:

Սատանան մեծ հիացմունքով էր նայում նրանց, ովքեր դավանում էին Քրիստոսի անունը և միևնույն ժամանակ կառչած էին սատանայի առաջարկած մոլորություններից: Նրա աշխատանքն է՝ անդադար նոր մոլորություններ հորինել: Նրա իշխանությունն աճում էր, և նա ավելի հմուտ էր դառնում: Նա առաջնորդում էր իր ներկայացուցիչներին՝ պապերին և քահանաներին, որպեսզի նրանք մեծարեին իրենց և մարդկանց գրգռեին դաժան հալածանքների ենթարկել Աստծուն սիրողներին, ովքեր չէին ցանկանում զիջել նրա մոլորություններին: Սատանան գործում էր իր գործակալների միջոցով՝ ոչնչացնելու Քրիստոսի նվիրված հետևորդներին: Ինչպիսի՞ հալածանքներ և հոգեվարք կրեցին նրանք՝ հնազանդվելով Աստծուն: Հրեշտակները պահպանել են այդ ամենի ճշգրիտ գրառումները: Սակայն սատանան և նրա չար հրեշտակները ցնծում էին, և հալածվող սուրբերին աջակցող և գորացնող հրեշտակներին ասում էին, որ կսպանեն նրանց, որպեսզի երկրի վրա ճշմարիտ քրիստոնյաներ չմնան: Ես տեսա, որ այդ ժամանակ Աստծո եկեղեցին մաքուր

էր: Աստծո եկեղեցում խեղաթյուրված սրտերի հայտնվելու վտանգ չկար. ճշմարիտ քրիստոնյայի համար, ով ազդարարում էր իր հավատի մասին, փորձությունների, հետապնդումների և տարբեր հալածանքների վտանգ էր սպառնում, որոնք սատանան և նրա չար հրեշտակները կարող էին հնարել և դրոշմել մարդկանց գիտակցության մեջ:

Տե՛ս Ծննդոց 3-րդ գլուխը, Ժողովող 9.5-ը, 12.7-ը, Ղուկաս 21.33-ը, Հովհաննես 3.16-ը, Բ Տիմոթեոս 3.16-ը, Հայրնություն 20.14-15-ը, 21.1-ը, 22.12-19-ը:

ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒԹՅՈՒՆ

Չնայած սուրբերի բոլոր հետապնդումներին և սպանություններին՝ Աստծո կենդանի վկաները մեծաթիվ էին մնում: Աստծո հրեշտակները կատարում էին իրենց վստահված աշխատանքը: Նրանք ամենամոթ վայրերում փնտրում և խավարից հանում էին մարդկանց, ովքեր մաքուր ու ազնիվ սիրտ ունեին: Նրանք բոլորը մոլորված էին, սակայն Աստված, միևնույնն է, ընտրում էր նրանց, ինչպես Սավուղին ընտրեց՝ ազդարարելու Իր ճշմարտությունը: Աստծո հրեշտակները գործում էին Մարտին Լյութերի, Մելանքտոնի միջոցով այլևայլ վայրերում, ուր ժողովուրդը ծարավ էր Աստծո Խոսքի կենդանի վկայությանը: Թշնամին եկավ ջրհեղեղի պես, և ճշմարտության չափանիշները պետք է վեր հաննեին նրա դեմ: Լյութերն ընտրվեց, որպեսզի պայքարի փոթորկի դեմ և դիմակայի անկյալ եկեղեցու ցասմանը՝ ամրապնդելու այն քչերին, ովքեր նվիրված էին իրենց սուրբ դավանանքին: Նա միշտ վախենում էր ընդդիմանալ Աստծուն: Լյութերը փորձում էր իր գործերով հաճոյանալ Աստծուն, սակայն նա բավարարված չէր, քանի դեռ երկնային լույսի շողը չէր լուսավորել նրա գիտակցության խավարը և չէր ուղղորդել նրան՝ վստահելու ոչ թե գործերին, այլ շնորհին՝ Քրիստոսի արյան արժանիքներին: Նա պետք է ինքնուրույն գար Աստծո մոտ, և ոչ թե պապի կամ խոստովանահայրերի, այլ միայն Հիսուս Քրիստոսի միջոցով: Օ՛, որքա՛ն թանկ էր այս գիտակցումը Լյութերի համար: Նա գնահատում էր այս նոր և թանկարժեք լույսը, որը լուսավորել էր նրա խավար գիտակցությունը և վանել նրա սնահավատությունը ավելի, քան երկրի ամենաթանկ գանձը: Աստծո Խոսքը նորություն էր: Ամեն ինչ փոխվեց: Գիրքը, որից նա այդքան սարսափում էր, քանզի չէր տեսնում նրա գեղեցկությունը, կյանք էր, ԿՅԱՆՔ նրա համար:

Այն իր ուրախությունն էր, իր մխիթարությունը, օրհնյալ ուսուցիչը: Ոչինչ չէր կարող նրան ստիպել հրաժարվել այն ուսումնասիրելուց: Նա վախենում էր մահից, սակայն երբ կարդաց Աստծո Խոսքը, նրա տազնապան անհետացավ: Նա հիացած էր Աստծո բնավորությամբ և սիրեց Նրան: Լյութերն Աստծո Խոսքը փնտրում էր հենց իր համար: Նա բերկրանք զգաց այնտեղ պարունակվող գանձերի հարստությունից և այնուհետ այն բացահայտեց եկեղեցուն: Նա ատելություն զգաց այն մարդկանց մեղքերի հանդեպ, ում փրկություն էր շնորհվել: Լյութերը տեսավ շատերին, ովքեր նույն խավարում էին, որը երբևէ պարուրել էր նաև իրեն: Նա անհանգստությամբ հնարավորություն էր փնտրում նրանց հայացքն ուղղել Աստծո Գառին՝ Միակին, ով Իր վրա էր վերցրել աշխարհի մեղքը: Նա իր ձայնը բարձրացրեց պապական եկեղեցու սխալների և մեղքերի դեմ և անկեղծորեն ձգտում էր խորտակել խավարի շղթան, որն օղակել էր հազարավոր մարդկանց և ստիպել նրանց հավատալ գործերով փրկությանը: Լյութերը ձգտում էր նրանց բացահայտել Աստծո շնորհի ճշմարիտ հարստությունները և Հիսուս Քրիստոսի շնորհիվ պարզևված փրկության կատարելությունը: Նա խիզախորեն բարձրացրեց իր ձայնը և Սուրբ Հոգու գործությամբ ընդդիմացավ եկեղեցու ղեկավարների գործած մեղքերին: Թեպետև քահանաների կողմից ընդդիմության մեծ ալիք բարձրացավ, սակայն նա չընկրկեց, քանի որ անսասանորեն տրվել էր Աստծո զորեղ ձեռքը և արիությամբ վատահում էր Նրա հաղթանակին: Քանի որ Լյութերն իրավիճակն ավելի ու ավելի էր սրում, քահանայապետերի գալրույթը բորբոքվեց նրա դեմ: Նրանք չէին ցանկանում բարեփոխվել: Ուզում էին հանգիստ ապրել անառակ հաճույքների, պղծության և անբարոյության մեջ: Նրանք ցանկանում էին, որպեսզի եկեղեցին խավարում մնա:

Ես տեսա, որ Լյութերը եռանդուն և նախանձախնդիր էր, մեղքը դատապարտելու և արդարությունը պաշտպանելու հարցում՝ անվախ և համարձակ: Նա չէր վախենում չար մարդկանցից և սատանայից: Լյութերը գիտեր, որ Նա, ով իր հետ է, ավելի զորեղ է, քան իր բոլոր թշնամիները: Լյութերն ուներ կրակ, եռանդ, քաջություն և համարձակություն և ժամանակ առ ժամանակ կարող էր հեռուն գնալ, սակայն Աստված կանչեց Մելանքտոնին, ով նրա հակապատկերն էր: Նա պետք է օգներ Լյութերին և շարունակեր բարենորոգության աշխատանքը: Մելանքտոնը երկչուտ էր, անվճռական,

զգուշավոր և համբերատար: Նա շատ սիրված էր Աստծուց: Հիանալի գիտեր Սուրբ Գիրքը, և նրա դատողությունն ու իմաստությունը հիասքանչ էին: Նրա սերն Աստծո հանդեպ հավասար էր Լյութերի սիրուն: Այդ սրտերն Աստված միացրեց. նրանք ընկերներ էին, որոնց հնարավոր չէր բաժանել: Լյութերը նեցուկ էր Մելանքտոնի համար, երբ նա վտանգի մեջ էր հայտնվում: Մելանքտոնը երկչու էր, դանդաղաշարժ: Վերջինս նույնպես օգնում էր Լյութերին՝ նրան ետ պահելու հապշտապ գործողություններից: Մելանքտոնի հեռատես զգուշավորությունը հաճախ կանխում էր անախորժությունները, որոնք կարող էին տեղի ունենալ, եթե Լյութերը միայնակ լիներ: Միևնույն ժամանակ, աշխատանքն անհաջողության կմատնվեր Մելանքտոնի դանդաղաշարժության պատճառով, եթե նա ևս միայնակ լիներ: Ինձ ցույց տրվեց Աստծո իմաստությունն այս երկու՝ բնավորությամբ տարբեր մարդկանց ընտրության հարցում, որպեսզի շարունակվի բարենորոգության աշխատանքը:

Դրանից հետո ես տեղափոխվեցի հետ՝ առաքյալների օրերը, և տեսա, որ Աստված իբրև ուղեկիցներ ընտրեց եռանդուն և նախանձախնդիր Պետրոսին և մեղմ, համբերատար, համեստ Հովհաննեսին: Երբեմն Պետրոսը պռթկուն էր: Սիրելի աշակերտը հաճախ կանգնեցնում էր Պետրոսին, երբ նրա եռանդն ու նախանձավորությունը նրան շատ հեռու էին տանում, սակայն դա չփոխեց նրան: Երբ Պետրոսը ուրացավ իր Տիրոջը և զղջաց ու փոխվեց, նրա միակ կարիքը Հովհաննեսի մեղմ զգուշացումն էր, որպեսզի փորձվեր նրա խանդավառությունն ու նախանձախնդրությունը: Քրիստոսի գործը կտուժեր, եթե այն թողնվեր միայն Հովհաննեսին: Անհրաժեշտ էր Պետրոսի եռանդը: Նրա համարձակությունն ու կորովը նրանց հաճախ հետ էին պահում դժվարություններից և լռեցնում թշնամիներին: Հովհաննեսը նույնպես հաղթահարում էր խոչընդոտները: Նա շատերին բերեց Քրիստոսի մոտ՝ շնորհիվ իր համբերատար զապվածության և խորը նվիրվածության:

Աստված գտավ մարդկանց, որպեսզի նրանք աղաղակեին պապական եկեղեցու ներկա մեղքերի դեմ և առաջ մղեն բարենորոգությունը: Մատանան ձգտում էր ոչնչացնել այդ կեղանի վկաներին, սակայն Աստված պատնեշ ստեղծեց նրանց շուրջը: Որպեսզի փառավորեին Աստծո անունը, որոշ մարդիկ կանչված էին իրենց վկայությունը կնքել արյունով, սակայն կային և այլ ազդեցիկ այրեր,

ովքեր Լյութերի և Մելանքտոնի օրինակով Աստծուն լավագույնս կարող էին փառավորել՝ ապրելով և բարձրաձայն վկայելով պապի, քահանաների և թագավորների մեղքերի դեմ: Նրանք դողում էին Լյութերի ձայնից: Շնորհիվ այդ ընտրված մարդկանց՝ լույսի շողերը սկսել էին ցրել խավարը, և շատ շատերը ուրախությամբ լույս էին ստացել և քայլում էին նրանում: Երբ սպանում էին մի վկայի, երկուս կամ ավելի խիզախ այրեր էին հայտնվում՝ նրա տեղը լրացնելու համար:

Սակայն սատանան բավարարված չէր: Նա իշխանություն ուներ միայն մարմնի նկատմամբ: Նա չէր կարող հավատացյալներին ստիպել հրաժարվել իրենց հավատից և հույսից: Եվ նույնիսկ մեռնելով՝ նահատակները հաղթանակ էին տոնում՝ խիզախելով անմահության վառ հույսով, որը նրանք կստանային հարությունից հետո: Նրանք ունեին ավելին, քան մահկանացու եռանդն էր: Նրանք ոչ մի վայրկյան չէին թուլանում: Քաջարի մարտիկները պաշտպանվեցին քրիստոնեական գրահով, որը պատրաստված էր ոչ միայն հոգևոր հակառակորդների, այլև մարդկային կերպարով սատանայի և նրա գործակալների հետ բախման համար, ովքեր ասում էին. «Ուրացե՛ք ձեր հավատը, այլապես կմեռնենք»: Այն քրիստոնյաները, ովքեր գորեղ էին Աստծով, Նրա կողմից ավելի գնահատվեցին, քան աշխարհի կեսը, ովքեր կրում էին Քրիստոսի անունը, բայց մնում էին թուլասիրտ ու վեհերոտ: Այն ժամանակ, երբ եկեղեցին հալածվում էր, միասնական էր և սիրառատ: Նրանք գորեղ էին Աստծով: Ո՛չ մեղավորներին, ո՛չ էլ խաբեբաներին ու խաբվածներին թույլ չէր տրվում միանալ նրանց: Միայն նրանք կարող էին Քրիստոսի աշակերտները լինել, ովքեր պատրաստ էին հանուն Նրա ամեն ինչ թողնել: Նրանք գերադասեցին լինել աղքատ, համեստ, միայն թե՛ նման Քրիստոսին:

*Տե՛ս Ղուկաս 22.61-62, Հովհաննես 18.10, Գործք 3-րդ և 4-րդ գլ.
Հեղազա ուսումնասիրության համար տե՛ս «Բարեկորոպություն»
բառը հանրագիտարանում:*

ԵԿԵՂԵՅՈՒ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Այնուհետև սատանան խորհրդի հրավիրեց իր հրեշտակներին, և նրանք տեսան, թե ինչ արդյունքների են հասել: Ճիշտ է, նրանք մի քանի վախկոտ հոգիների մահվան սարսափի միջոցով հեռու էին պահել ճշմարտության գիտությունից, սակայն շատերը, նույնիսկ ամենատերկչոտները, ճանաչեցին ճշմարտությունը: Նրանց վախն ու երկչոտությունն անհապաղ լքեցին նրանց: Երբ նրանք տեսան իրենց եղբայրների մահը, տեսան նրանց հաստատակամությունը և համբերությունը, և հասկացան, որ Աստված և հրեշտակներն օգնում են իրենց հաղթահարել անօրինակ տառապանքները, և նրանք էլ դարձան համարձակ ու անվախ: Երբ կանչվեցին նվիրաբերելու իրենց անձերը, նրանք իրենց հավատը պահպանեցին այնպիսի համբերությամբ և հաստատակամությամբ, որ նույնիսկ մարդասպաններին ստիպեցին սարսափ: Սատանան և նրա հրեշտակները որոշեցին, որ կար հոգիները կործանելու ավելի հաջող և, վերջապես, առավել հուսալի միջոց: Նրանք տեսան, որ թեև ստիպում էին քրիստոնյաներին տառապել, նրանց համարձակությունը և վառ հույսը, որը ոգևորում էր իրենց, ստիպում էր ամենաթույլին անգամ այնքան զորանալ, որ կախադանը և կրակը չէին կարող ահաբեկել նրանց: Նրանք մարդասպանների նկատմամբ վարվում էին Քրիստոսի նույն մեծահոգությամբ և շատերը համոզվեցին ճշմարտության մեջ՝ դառնալով նրանց հարատևության և նրանց վրա հանգչող Աստծո փառքի վկաները: Սատանան որոշեց, որ մեղմ միջոց պետք է ընտրել: Նա խեղաթյուրեց աստվածաշնչյան ուսմունքը և ավանդույթները, որոնք պետք է կործանեին միլիոնավոր մարդկանց: Նա սահմանափակեց իր ատելությունը և որոշեց իր օգնականներին չդրդել առավել դաժան հետապնդումների, այլ ուղղորդել եկեղեցուն՝ պայքարելու ոչ թե հանուն սրբերի երբեմնի ավանդած

հավատի, այլ հանուն տարբեր ավանդույթների: Երբ նա եկեղեցուն դրդեց փնտրել աշխարհի բարեհաճությունը և փառքը՝ ի շահ կեղծ պատրվակների, եկեղեցին սկսեց կորցնել Աստծո հաճությունը: Աստիճանաբար եկեղեցին կորցրեց իր ուժը, քանի որ խուսափում էր պարզ ճշմարտությունների հռչակումից, որոնք դուր չէին գալիս հաճույքների սիրահարներին և աշխարհիկ բարեկամներին:

Եկեղեցին բաղկացած չէր առանձին և յուրահատուկ անհատներից, ինչպիսին մախկինում էր, երբ նրա դեմ էր ուղղված հետապնդումների կրակը: Ինչպե՞ս փոխվեց ոսկին: Ինչպե՞ս խամրեց լավագույն ոսկու փայլը: Ես տեսա, որ եթե եկեղեցին միշտ պահպանի իր սուրբ և առանձնահատուկ էությունը, ապա Սուրբ Հոգու զորությունը, որը տրվել էր աշակերտներին, միշտ կլինի նրա հետ. հիվանդը կառողջանա, դևերը կվտարվեն, եկեղեցին կգորանա և կահաբեկի իր թշնամիներին:

Ես տեսա, որ մարդկանց շատ մեծ խումբ կրում է Քրիստոսի անունը, սակայն Աստված նրանց չի ընդունում իբրև յուրայինների, և նրանք հաճելի չեն Աստծուն: Թվում է՝ սատանան նրանց կրոնական էություն է տվել և շատ է ուզում, որ մարդիկ իրենց քրիստոնյաներ անվանեն: Նա շատ էր ցանկանում, որպեսզի նրանք հավատալին Հիսուսին, Նրա խաչելությանը և հարությանը: Սատանան և նրա հրեշտակները լիովին հավատում էին այդ ամենին և սարսափում էին: Սակայն եթե այդ հավատը չի դրդում բարի գործերի և չի ուղղորդում քրիստոսակերպ անձնագոհ կյանքի ընդօրինակմանը, մարդիկ պարզապես ընդունում են քրիստոնյա անունը, մինչդեռ նրանց սիրտը մնում է նույնը, և սատանան ունակ է նրանց ավելի լավ օգտագործել իր ծառայության համար, քան եթե այդ մարդիկ չընդունեն Քրիստոսին: Քրիստոնյա անվան տակ նրանք թաքցնում են իրենց թերությունները: Նրանք մնում են իրենց անսուրբ բնավորությամբ, իսկ նրանց չար կրքերը մի կերպ զսպվում են: Դա անհավատների համար առիթ է դառնում հայհոյելու Հիսուս Քրիստոսին, հանդիմանելու Նրան և այն մարդկանց, ովքեր մաքուր և անապական կրոնը փոխարինում են անմիտ կրոնով:

Ծառայողներն անցկացնում են մեղմ քարոզներ՝ բավարարելու մարմնավոր քրիստոնյաներին: Մա այն է, ինչ ցանկանում էր անել սատանան: Նրանք չեն համարձակվում քարոզել Հիսուսի և Աստվածաշնչի սուր ճշմարտությունների մասին, քանի որ այդ պա-

րագայում մարմնավոր քրիստոնյաները չեն լսի նրանց: Նրանցից շատերը թանկ են և պետք է մնան եկեղեցում, չնայած նրանցից ավելի մեծ օգուտ չկա, քան սատանայից և նրա հրեշտակներից: Հիսուսի կրոնը ստեղծված է, աշխարհի աչքերում հանրաճանաչ և ողորմած երևալու համար: Մարդկանց ասում են, որ նրանք, ովքեր դավանում են կրոնը, ավելի կհարգվեն աշխարհի կողմից: Այդպիսի ուսմունքն առանցքային կերպով տարբերվում է Քրիստոսի ուսմունքից: Նրա դավանանքը և աշխարհը չեն կարող հաշտ լինել: Նրանք, ովքեր հետևում են Քրիստոսին, պետք է հրաժարվեն աշխարհից: Այս մեղմ քարոզները սկիզբ են առել սատանայից և նրա հրեշտակներից: Նրանք կազմել են ծրագիր, և անվանական հավատացյալները հավանության են արժանացրել այն: Կեղծավորները և մեղավորները միավորվում են եկեղեցում: Հաճելի առասպելներն ուսուցանվում և պատրաստակամությամբ ընդունվում են: Սակայն եթե ճշմարտությունն ուսուցանվեր իր մաքրությամբ, եկեղեցում կեղծավորներ և մեղավորներ չէին լինի: Ոչ մի տարբերություն չկա Քրիստոսի այդպիսի ձևական հետևորդների և աշխարհի միջև: Ես տեսա, որ եթե կեղծ դիմակները պատռվեին եկեղեցու այդ անդամների դեմքերից, ապա կարելի էր տեսնել այնպիսի անօրենություն, նողկանք և այլասերվածություն, որ նույնիսկ Աստծո ամենաերկչոտ զավակները նրանց իրական անուններով կանվանեին՝ սատանայի զավակներ: Հիսուսը և բոլոր երկնաբնակները զգվանքով են նայում այդ տեսարանին, սակայն Աստված լուր ունի եկեղեցու համար, որը սուրբ է և կարևոր: Եթե այն ընդունվի, լիակատար բարենորոգություն կլինի եկեղեցում. կբացահայտվի կենդանի վկայությունը, որը այն կմաքրի կեղծավորներից և մեղավորներից, և եկեղեցին կրկին կստանա Աստծո բարեհաճությունը:

Տես Եսայիա 30.8-21, Հակոբոս 2.19, Հայրնություն 3-րդ գլուխը:

ՈՒԻՅԱՄ ՄԻՎԵՐ

Ես տեսա, որ Աստված ուղարկեց Իր հրեշտակին՝ արթնացնելու անհավատ ազարակատիրոջ սիրտը, և առաջնորդելու նրան ուսումնասիրելու մարգարեությունները: Աստծո հրեշտակները բազմիցս այցելել էին այդ ընտրյալ մարդուն, ուղղորդել նրա միտքը և բացել նրա ըմբռնողությունը մարգարեությունների հանդեպ, որոնք երբևէ մութ են եղել Աստծո ժողովրդի համար: Նրան տրվել էր ճշմարտության շղթայի նախնական օղակը, և նա պետք է փնտրեր օղակ օղակի հետևից, մինչ զարմանքով և հիացմունքով իր համար կբացահայտեր Աստծո Խոսքը: Նա այնտեղ ճշմարտության կատարյալ շղթա էր տեսնում: Խոսքը, որը նա նախկինում ոգեշնչված չէր համարում, այժմ նրա առջև բացահայտվել էր գեղեցկությամբ և փառքով: Նա տեսավ, որ Սուրբ Գրքի մի հատվածը պարզաբանում է մյուսը, և երբ որևէ հատված անհասկանալի էր նրան, նա մեկ այլ տեքստ էր փնտրում Սուրբ Գրքում, որը կպարզաբաներ այն: Նա ուրախությամբ, խորին հարգանքով ու ակնածանքով էր վերաբերվում Աստծո Սուրբ Գրքին:

Երբ Միլերն ուսումնասիրեց բոլոր մարգարեությունները, հասկացավ, որ երկրի բնակիչներն ապրում են համաշխարհային պատմության վերջին փուլում, բայց չգիտեն այդ մասին: Նա նայում էր եկեղեցիների կաշառվածությանը և տեսնում, որ նրանց սերն ուղղված չէ Հիսուսին, այլ սփռված է երկրով մեկ: Նրանք փնտրում էին աշխարհային փառք. երկնքում գանձեր դիզելու փոխարեն՝ նրանք աշխարհային հարստություն էին տենչում: Նա ամենուր տեսնում էր միայն կեղծավորություն, խավար և մահ: Նրա հոգին խռովվեց: Աստված կոչ արեց նրան թողնել իր ազարակը, ինչպես Եղիսեն ժամանակին կանչվեց թողնելու եզներն ու արտը և հետևելու Եղիային: Ուիլյամ Միլերն սկսեց մարդկանց բացահայտել Աստծո

թագավորության գաղտնիքները: Յուրաքանչյուր ջանքից հետո նա ավելի հաստատակամ էր դառնում: Նա մարգարեություններով մարդկանց ուղեկցում էր դեպի Քրիստոսի երկրորդ գալուստը: Ինչպես Հովհաննես Մկրտիչն էր ազդարարում Հիսուսի առաջին գալստյան մասին և ճանապարհ պատրաստում Նրա գալստյան համար, այդպես էլ Ուիլյամ Միլլերը և նրա համախոհներն էին ազդարարում Աստծո Որդու երկրորդ գալստյան մասին:

Ես տեղավորվեցի անցյալ՝ աշակերտների օրերը, և ինձ ցույց տրվեց սիրելի Հովհաննեսը, ում համար Աստված առանձնահատուկ գործ ուներ կատարելու: Սատանան մտադրվել էր խոչընդոտել այդ աշխատանքն և իր ծառաներին հրամայեց վերացնել Հովհաննեսին: Սակայն Աստված ուղարկեց Իր հրեշտակին և հրաշքով պահպանեց նրան: Բոլոր նրանք, ովքեր վկայել էին Հովհաննեսի փրկության գործում Աստծո մեծ գործքյան մասին, զարմացած էին, իսկ շատերը համոզված էին, որ Աստված նրա հետ էր, և Հիսուսի մասին նրա վկայությունը ճշմարտացի էր: Նրանք, ովքեր ձգտում էին վերացնել Հովհաննեսին, վախենում էին կրկին փորձել սպանել նրան. նրան թույլ էր տրվել տառապել հանուն Հիսուսի: Նրա թշնամիները կեղծ մեղադրանքներ ներկայացին. և շուտով նա ուղարկվեց անմարդաբնակ կղզի, ուր Աստված ուղարկեց Իր հրեշտակին՝ նրան բացահայտի այն իրադարձությունները, որոնք տեղ էին ունենալու երկրի վրա. եկեղեցու վիճակը մինչև աշխարհի վերջը, այն է՝ նրա նահանջը և այն դիրքորոշումը, որը եկեղեցին պետք է ունենա, եթե ցանկանում է ընդունել Աստծուն և, ի վերջո հաղթանակել: Երկնային հրեշտակը վեհությամբ այցելեց Հովհաննեսին: Նրա դեմքը փայլում էր երկնքի կատարյալ փառքով: Նա Հովհաննեսին բացահայտեց Աստծո եկեղեցուն վերաբերող հոգնեցուցիչ տեսարանները, ներկայացրեց այն վտանգավոր բախումները, որոնք պետք է կրեն նրանք: Հովհաննեսը տեսավ մարդկանց, ովքեր անցնում էին կրակի փորձությունների միջով՝ դառնալով թրծված և մաքուր և, վերջապես, նա տեսավ բոլոր հաղթողներին, ովքեր փառքով փրկված էին Աստծո Արքայության մեջ: Հրեշտակի դեմքը փայլում էր ուրախությամբ և մեծ փառքով, երբ նա Հովհաննեսին ցույց տվեց Աստծո եկեղեցու վերջնական հաղթանակը: Հովհաննեսը հափշտակվեց՝ տեսնելով եկեղեցու վերջնական փրկությունը, և երբ ցույց տրվեց փառավոր դրվագը, նա խոր հարգանքով և վախով ընկավ հրեշտակի ոտքերի

մոտ՝ երկրպագելու նրան: Հրեշտակն անմիջապես բարձրացրեց նրան և մեղմորեն նախատեց. «Ձգո՛ւյշ կաց, մի՛ անհիր, ես ծառայակից եմ քեզ և քո եղբայրներին, որ Հիսուս Քրիստոսի վկայությունն ունեն. Տեր Աստծուն երկրպագիր, որովհետև Հիսուսի վկայությունը մարգարեության հոգին է»: Այնուհետև հրեշտակը Հովհաննեսին ցույց տվեց երկնային քաղաքն իր ողջ շքեղությամբ և շլացուցիչ փառքով: Հովհաննեսը հափշտակվեց և ցնցվեց քաղաքի փառքով: Նա մոռացավ հրեշտակի զգուշացումը և կրկին ընկավ հրեշտակի ոտքերի մոտ, որպեսզի երկրպագի նրան, սակայն նա կրկին ասաց. «Ձգո՛ւյշ կաց, մի՛ անհիր, ես ծառայակից եմ քեզ և քո եղբայրներին, որ Հիսուս Քրիստոսի վկայությունն ունեն, Տեր Աստծուն երկրպագիր»:

Քարոզիչները և հասարակ մարդիկ Հայտնություն գիրքը համարել են խորհրդավոր և պակաս կարևոր, քան Աստվածաշնչի մյուս գրքերը: Սակայն ես տեսա, որ այդ գիրքն իրական հայտնություն է՝ տրված հատուկ վերջին օրերում ապրողների օգտի համար՝ նրանց ուղղորդելու հասկանալ իրենց իրական դիրքորոշումը և պարտականությունները: Աստված Ուիլյամ Միլլերի միտքն ուղղորդել է դեպի մարգարեությունները և մեծ լույս պարզել Հայտնություն գրքին:

Եթե Դանիելի տեսիլքները հասկանալի լինեին, մարդիկ ավելի լավ կըմբռնեին Հովհաննեսի տեսիլքը: Սակայն Աստված ճիշտ ժամանակին վեր հանեց Իր ընտրյալ ծառային, ով պարզությամբ և Սուրբ Հոգու զորությամբ բացահայտեց մարգարեությունները և ցույց տվեց Դանիելի ու Հովհաննեսի տեսիլքների և Աստվածաշնչի այլ հատվածների ներդաշնակությունը՝ մարդկանց սրտերին ներկայացնելով Խոսքի սուրբ, ահավոր նախագուշացումները՝ նրանց պատրաստելով Մարդու Ռոդու գալստյանը: Մեղավորները և անարդարները դարձան Աստծուն, որպեսզի նախապատրաստվեն դատաստանի առջև կանգնել:

Իր առաքելության ընթացքում Աստծո հրեշտակներն ուղեկցում էին Ուիլյամ Միլլերին: Նա վճռական էր, անվեհեր, և անվախորեն ազդարարում էր իրեն վստահված լուրը: Չարի մեջ ընկղմված երկիրը և սառը աշխարհիկ եկեղեցին բավարար էին նրա եռանդը գործարկելու և նրան ուղղորդելու պատրաստակամությամբ կրելու ծանր աշխատանքը, զրկանքներն ու տառապանքը: Չնայած նա հանդիպեց աստանայից և նրա հրեշտակներից ոգեշնչված քրիստոնյաների և աշխարհի ընդդիմությանը, չդադարեց մարդկանց քարոզել

հավիտենական ավետարանը, և ամենուր, որտեղ հրավիրում էին նրան, հնչում էր այս աղաղակը. «Վախեցե՛ք Աստծուց և փառք տվե՛ք նրան, որովհետև նրա դատաստանի ժամը եկավ»:

Տե՛ս Գ. Թագավորաց 19.16-21-ը, Դանիել 7-12 գլուխները, Հայր-նություն 1-ին գլուխը, 14.7-ը, 19.8-10, 22.6-10-ը:

ԱՌԱՋԻՆ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ

Ես տեսա, որ 1843 թվականին Աստված էր ազդարարում ժամանակի մասին: Նրա նպատակն էր վեր հանել մարդկանց և թույլ տալ փորձվել, որպեսզի նրանք որոշում կայացնեին: Ծառայողները համոզված էին մարգարեական ժամանակաշրջաններից արված եզրակացությունների ճշմարտացիության մեջ: Նրանք թողնում էին իրենց հպարտությունը, իրենց աշխատավարձը և եկեղեցիները, որպեսզի վայրից վայր մեկնեն և ազդարարեն այդ լուրը: Մակայն քանի որ երկնային պատգամը կարող էր արձագանք գտնել Քրիստոսին բացահայտորեն ծառայողներից միայն քչերի սրտերում, այդ աշխատանքը հանձնարարվեց նաև այնպիսիներին, ովքեր քարոզիչներ չէին: Ոմանք թողել էին իրենց արտերը, որպեսզի ազդարարեն այդ լուրը, իսկ այլք կանչվեցին իրենց խանութներից և առևտրից: Նույնիսկ որոշ մասնագետներ ստիպված էին թողնել իրենց մասնագիտությունը՝ մասնակցելու առաջին հրեշտակի լուրն ազդարարելու հասարակական համակրանք չվայելող գործին: Ծառայողները թողեցին իրենց հերձվածողական հայացքներն ու զգացմունքները և միավորվեցին՝ ազդարարելու Հիսուսի գալուստը: Մարդիկ տպավորված էին ամենուր, ուր հասնում էր այդ լուրը: Մեղավորները զղջում էին, արտասվում և աղոթում ներման համար, և նրանք, ում կյանքն անարդարության դրոշմ էր կրում, ձգտում էին վերափոխվել:

Ծնողները խորապես մտահոգված էին իրենց երեխաների համար: Նրանք, ովքեր ընդունել էին պատգամը, դրանով կիսվում էին իրենց անհավատ ընկերների և բարեկամների հետ՝ նախագուշացնելով և աղերսելով նրանց պատրաստվել մարդու Որդու գալստյանը: Եվ երբ սրտերն այնքան էին կարծրացել, որ չէին ընդունվում ծան-

րակշիռ վկայությունները, օգտագործվում էին մտերմիկ տոնով ասվող նախազգուշացումները: Այդ հոգին մաքրագործող աշխատանքը դրդում էր հրաժարվել աշխարհային գործերից, ինչը առաջներում չլսված նվիրաբերում էր: Հազարավոր մարդիկ հրապուրված էին Ուիլյամ Միլլերի քարոզած ճշմարտությամբ, և Աստծո ծառաները Եղիայի հոգով և գորությամբ վեր էին հառնում՝ ազդարարելու այդ պատգամը: Նրանք, ովքեր քարոզում էին այդ փառավոր պատգամը, նման Հիսուսի նախակարապետ Հովհաննեսին՝ զգում էին, որ կացինը դրված է ծառի արմատին, և կոչ էին անում մարդկանց ապաշխարության արժանի պտուղներ բերել: Նրանց վկայությունը նախատեսված էր եկեղեցիների արթնության, վերածննդի և նրանց ճշմարիտ էությունն ի հայտ բերելու համար: Եվ երբ նրանք ազդարարեցին գալիք բարկության հանդիսավոր նախազգուշացումը, տարբեր եկեղեցիներում շատերն ընդունեցին այդ բժշկող լուրը. նրանք տեսան իրենց նահանջը և զղջման արցունքներով ու սրտի խորը հոգեվարքով խոնարհվեցին Աստծո առջև: Երբ Աստծո Հոգին դիպավ նրանց, նրանք միաբանվեցին՝ ազդարարելով. «Վախեցեք Աստծուց և փառք տվեք նրան, որովհետև նրա դատաստանի ժամը եկավ»:

Վերջին ժամանակի քարոզը մեծ ընդդիմություն առաջացրեց մարդկանց բոլոր խավերի շրջանում՝ ամբիոնի քարոզիչներից մինչև ամենաանխոհեմ աստվածահայհոյիչ մեղավորները: «Ոչ ոք չգիտի ո՛չ օրը, ո՛չ ժամը», - հնչում էր կեղծավոր ծառայողների և համարձակ ծաղրողների շուրթերից: Նրանցից ոչ ոք չէր խոսում այն մասին, որ կան տեքստեր, որոնք ցույց են տալիս մարգարեական ժամանակաշրջանի ավարտը, և որ գալստյան նշանները մատնացույց են անում, որ Քրիստոսը մոտ է դռներին: Հոտի շատ հովիվներ, ովքեր Հիսուսի անկեղծ նվիրյալներից էին, ասում էին, որ իրենք չեն ընդդիմանում Քրիստոսի գալստյան քարոզչությանը, սակայն դեմ են որոշակի ժամանակահատվածի ազդարարմանը: Աստծո ամենատես աչքը կարողում էր նրանց սիրտը: Նրանց դուր չէր գալիս, որ Հիսուսը մոտ է: Նրանք գիտեին, որ իրենց ոչ քրիստոնեական կյանքը չի դիմակայի փորձությանը, քանի որ նրանք չէին քայլում Հիսուսի առաջարկած նեղ ճանապարհով: Այս կեղծ հովիվները կանգնած էին Աստծո ծառայության ուղու վրա: Իր վերափոխող գորությամբ մարդկանց քարոզվող ճշմարտությունը դրդեց մարդկանց բանտի պահապանի պես ազդարարել. «Ի՞նչ անեմ, որպեսզի փրկվեմ»: Սակայն այդ

հովիվները կանգնած էին ճշմարտության և մարդկանց միջև և քարոզում էին շողոքոքոթող խոսքեր՝ մարդկանց հետ պահելու ճշմարտությունից: Նրանք միաբանվեցին սատանայի և նրա հրեշտակների հետ և աղաղակեցին. «Խաղաղություն, ապահովություն», երբ խաղաղություն չկար: Ես տեսա, որ Աստծո հրեշտակները նշեցին այդ ամենը, իսկ այդ անհաղորդ հովիվների հագուստները ողողված էին հոգիների արյամբ: Նրանք, ում դուր էր գալիս իրենց վիճակը և Աստծուց հեռու լինելը, դրոշմված չէին իրենց մարմնական անվտանգությունից:

Շատ ծառայողներ ոչ միայն շրնդունեցին այդ փրկության լուրը, այլև խոչընդոտեցին նրանց, ովքեր կարող էին ընդունել այն: Այդպիսի մարդկանց արյունը նրանց վրա է: Քարոզիչները և շատ անհատներ միավորվեցին՝ ընդդիմանալու այդ երկնային լուրին: Նրանք հետապնդում էին Ուիլյամ Միլլերին և նրանց, ովքեր միաբանորեն աշխատում էին նրա հետ: Կեղծ լուրերը շրջանառվում էին նրա ազդեցությունը թուլացնելու նպատակով, և երբ նա, ունկնդիրների սրտերին սուր ճշմարտություններով դիպչելով, տարբեր ժամանակաշրջաններում հստակորեն հրապարակեց Աստծո կամքը, մարդիկ գայրացան, իսկ երբ լքեց հավաքատեղին, որոշ մարդիկ ցանկացան սպանել նրան: Սակայն Աստծո հրեշտակներն ուղարկվեցին պահպանելու նրա կյանքը և անվտանգ ուղեկցեցին նրան գայրացած ամբոխի միջով: Նրա աշխատանքը դեռևս չէր ավարտվել:

Առավել նվիրված մարդիկ ուրախությամբ ընդունում էին պատգամը: Նրանք գիտեին, որ այն բխում էր Աստծուց և ճիշտ ժամանակին էր տրված: Հրեշտակները խորագույն հետաքրքրությամբ հետևում էին երկնային լուրի արդյունքին, և երբ եկեղեցիները երես թեթեցին նրանից և մերժեցին այն, նրանք տխրությամբ խորհրդակցեցին Հիսուսի հետ: Նա Իր հայացքը հետ դարձրեց եկեղեցիներից և հրամայեց Իր հրեշտակներին հավատքով նայել այն թանկագին անձանց, ովքեր չէին մերժել վկայությունը, և ում վրա դեռևս տարածվում էր անգին լույսը:

Ես տեսա, որ եթե իրենց քրիստոնյա անվանողները սիրեին իրենց Փրկչին, եթե նրանց հույսը լիներ Փրկիչը, նրանք ուրախությամբ կողջունեին Նրա վերադարձի առաջին ազդարարումը: Սակայն նրանց վերաբերմունքը, երբ լսեցին, որ Տերը գալիս է, ապացուցում էր, որ նրանք չեն սիրում Փրկչին: Սատանան և նրա հրեշ-

տակները ցնծում էին, և Հիսուսին և Նրա սուրբ հրեշտակներին հեգնանքով ասացին, որ հավատացյալ մարդիկ այնքան քիչ սեր են տածում Հիսուսի հանդեպ, որ նույնիսկ չեն ցանկանում տեսնել Նրա երկրորդ գալուստը:

Ես տեսա, որ Աստծո ժողովուրդն ուրախությամբ սպասում էր իր Տիրոջը: Սակայն Աստված գիտեր, որ նրանք պետք է փորձվեն: Միայն մարգարեական ժամանակահատվածի հաշվարկի մեջ էր: Տիրոջը սպասողները չբացահայտեցին դա: Աստված կանխատեսել էր, որ Իր ժողովուրդը հիասթափություն կապրեր: Ժամանակն անցել էր, և նրանք, ովքեր ուրախության հույսով սպասում էին Փրկչին, դարձան տխուր և հուսահատ, մինչդեռ, երբ նրանք, ովքեր սարսռում էին Հիսուսի գալուստից, այժմ ցնծում էին: Նրանց խոստովանությունը չփոխեց նրանց սրտերը և նրանց կյանքը չմաքրեց: Անցյալ ժամանակը ճիշտ էր հաշվարկվել, որպեսզի բացվեին նման սրտերը: Նրանք առաջին մարդկանց թվին էին պատկանում, ովքեր ծաղրում էին Փրկչին ճշմարտապես սիրող վշտաբեկներին և հուսահատներին: Ես Աստծո իմաստությունը տեսա այն բանում, որ Նա փորձեց իր ժողովրդին, և նրանցից յուրաքանչյուրին տրվեց փորձություն՝ բացահայտելու նրանց, ովքեր կրնկրկեին և փորձության ժամին հետ կվերադառնային:

Հիսուսը և բոլոր երկնաբնականները կարեկցանքով և սիրով էին նայում նրանց, ովքեր քաղցր հույսով սպասում էին տեսնել Նրան, ում ողջ սրտով սիրում էին: Հրեշտակները ճախրում էին նրանց շուրջը, որպեսզի փորձության ժամին սատարեին նրանց: Երկնային պատգամը մերժողները թողնվեցին խավարում, և Աստծո զայրույթը բորբոքվեց նրանց վրա, քանի որ նրանք չէին ընդունել Աստծուց իրենց ուղարկված լույսը: Հավատարիմ և հուսահատ մարդիկ, ովքեր չէին կարող հասկանալ, թե ինչու չվերադարձավ Տերը, չթողնվեցին խավարում: Նրանք կրկին դիմեցին Աստվածաշնչին՝ ուսումնասիրելու մարգարեական ժամանակաշրջանները: Տիրոջ ձեռքը հեռացվեց թվերից, և սխալն ակնհայտ դարձավ: Նրանք տեսան, որ մարգարեական ժամանակաշրջանները հասնում են մինչև 1844 թվականը, և նույն վկայությունը, որը վերջանում էր 1843 թվականին, ապացուցում է, որ ժամկետն իր ավարտին է մոտենում 1844 թվականին: Աստծո Խոսքի շողերը լուսավորում էին նրանց, և նրանք բացահայտեցին ճշգրիտ ժամանակը: «Եթե տեսիլը հապաղի, սպա-

սեք նրան»։ Հիսուսի գալստյան հանդեպ սիրուց դողված՝ նրանք բաց թողեցին այդ տեսիլի իմաստը, որը տրվել էր նրա կատարմանը սպասողներին։ Նրանք կրկին ժամկետ նշանակեցին։ Ես տեսա, որ նրանցից շատերը չէին կարող ուշքի գալ լուրջ հիասթափությունից և նույն եռանդն ունենալ, որն ունեին 1843 թվականին։

Սատանան և նրա հրեշտակները տոնում էին իրենց հաղթանակը, և նրանք, ովքեր չէին ընդունել լուրը, իրենք իրենց շնորհավորում էին հեռատես դատողություններով և իմաստությամբ, որ իբր իրենք չեն ընդունել մոլորությունը։ Նրանք չէին գիտակցում, որ մերժված էին Աստծուց և աշխատում էին սատանայի և նրա հրեշտակների հետ համախմբված՝ շփոթեցնելու Աստծո ժողովրդին, որն ապրում էր երկնքում սկիզբ առած պատգամով։

Այս լուրին հավատացողները հարստահարվում էին եկեղեցիներում։ Որոշ ժամանակ նրանց պահում էր վախը, այնպես որ նրանց զործողությունները չէին բխում սրտից, այլ ժամանակն էր վեր հանում նրանց իրական զգացմունքները։ Մարդիկ ցանկանում էին լռեցնել հավատացյալների այն վկայությունը, որ 1844 թվականին ավարտվում էր մարգարեական ժամանակաշրջանը։ Նրանք հստակորեն բացատրեցին իրենց սխալը և Տիրոջը 1844 թվականին սպասելու պատճառները։ Հակառակորդները չէին կարող ոչ մի փաստարկ բերել առաջարկված հզոր պատճառների դեմ։ Եկեղեցիների ատելությունը բորբոքվեց։ Նրանք որոշեցին չլսել որևէ ապացույց և նրանց վկայությունը հեռացնել եկեղեցուց, որպեսզի մյուսները չկարողանան լսել այն։ Նրանք, ովքեր համարձակվում էին մյուսներից թաքցնել Աստծո լույսը, վտարվեցին եկեղեցուց, սակայն Հիսուսը նրանց հետ էր։ Նրանք ցնծում էին Հիսուսի ներկայության լույսից և պատրաստվում էին ընդունել երկրորդ հրեշտակի պատգամը։

Տե՛ս Դանիել 8.14-ը, Ամբակում 2.1-4-ը, Մաղաքիա 3-րդ և 4-րդ գլուխները, Մարթեոս 24.36-ը, Հայրնություն 14.6-7-ը։

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՏՊԱՄԸ

Եկեղեցիները չընդունեցին առաջին հրեշտակի պատգամը: Մեր-
ժելով երկնային լույսը՝ նրանք կորցրին Աստծո բարեհաճությունը:
Նրանք հուսացել էին իրենց սեփական ուժերին և առաջին լուրին:
Սեփական ընդդիմությամբ նրանք հայտնվեցին այնպիսի վիճակում,
երբ չէին կարող տեսնել երկրորդ հրեշտակի լուրի շողերը: Սակայն
Աստծո սիրելիները, ովքեր ընկճված էին, արձագանքեցին այդ լուրին.
«Ընկավ Բաբելոնը», և լքեցին անկյալ եկեղեցիները:

Երկրորդ հրեշտակի լուրի ավարտին ես տեսա երկնքից մի մեծ
լույս, որը լուսավորում էր Աստծո ժողովրդին: Այդ լույսի շողերն արե-
գակի պես պայծառ էին: Եվ ես լսեցի աղաղակող հրեշտակների
ձայները. «Ահա՛, փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմավորելու»:

Կեսգիշերային աղաղակը հնչեց, որպեսզի զորություն հաղորդի
երկրորդ հրեշտակի լուրին: Հրեշտակները երկնքից ուղարկվեցին
արթնացնելու հուսահատ սրբերին և պատրաստելու նրանց գալիք
մեծագույն աշխատանքի համար: Առաջինները, ովքեր ստացան
այդ պատգամը, ամենատաղանդավոր մարդիկ չէին: Հրեշտակներն
ուղարկվեցին համեստ և նվիրյալ մարդկանց մոտ և դրդեցին նրանց
բարձրաձայնել. «Ահա՛, փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմա-
վորելու»: Մուրբ Հոգու ուժով լցված աղաղակով նրանք արթնացնում
էին իրենց հուսահատ եղբայրներին: Այդ աղաղակը հիմնված էր ոչ
թե մարդկանց իմաստության և գիտության, այլ Աստծո զորության
վրա, և Նրա սրբերը, ովքեր լսում էին այն, չէին կարող ընդդիմանալ
նրան: Առավել հոգևոր մարդիկ այդ լուրն անմիջապես ընդունեցին:
Եղան մարդիկ, որ թեև ուշ ընդունեցին այն, բայց օժանդակեցին լու-
րի ազդարարմանը. «Ահա՛, փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմա-
վորելու»:

Երկրի բոլոր ծայրերում տարածվեց երկրորդ հրեշտակի պատգամը, և հազարավորները տարածում էին աղաղակը: Այն տարածվում էր քաղաքից քաղաք և գյուղից գյուղ, մինչև Աստծուն սպասող բոլոր մարդիկ արթնացան: Շատերը թույլ չէին տալիս, որպեսզի այդ լուրը ներթափանցի եկեղեցիներ, և մարդկային մեծ խմբերը, որ կենդանի վկայություն էին ստացել, լքեցին անկյալ եկեղեցիները: Վիթխարի աշխատանքը կատարվեց կեսգիշերային աղաղակի շնորհիվ: Լուրը ներթափանցում էր սրտերը և դրդում հավատացյալներին փնտրել անձնական կենդանի փորձառություններ: Նրանք գիտեին, որ չեն կարող հուսալ միմյանց:

Սուրբերը հուզված սպասում էին իրենց Տիրոջը՝ ծոմով, հույսով և գրեթե անդադար աղոթքով: Նույնիսկ որոշ մեղավորներ այդ ժամին տազնապով էին սպասում, այն դեպքում, երբ մարդկանց մեծ խմբերը, թվում էր, ընդդիմանում էին այդ լուրին և դրսևորում աստանայի ոգին: Նրանք ծաղրում և ծիծաղում էին, և ամենուր լսվում էր. «Ոչ ոք չգիտի ո՛չ օրը, ո՛չ ժամը»: Չար հրեշտակները ցնծում էին նրանց շուրջը՝ դրդելով նրանց կարծրացնել իրենց սրտերը և մերժել երկնային լույսի յուրաքանչյուր շող, որպեսզի թակարդը գցի նրանց: Շատերը ձևացնում էին, թե փնտրում են Տիրոջը: Աստծո փառքը, որի մասին վկայում էին նրանք, գալուստին սպասողների խոնարհությունը, խորը նվիրվածությունը և ծանրակշիռ վկայությունները ստիպեցին շատերին ձևացնել, թե ընդունել են ճշմարտությունը: Սակայն նրանք չէին ապաշխարել: Եվ պատրաստ էլ չէին: Սուրբերն աղոթում էին լրջորեն և հանդիսավորապես: Հրեշտակներն ամենախորը հետաքրքրությամբ էին հետևում արդյունքներին և վեր էին հանում նրանց, ովքեր ընդունել էին երկնային պատգամը՝ նրանց գատելով երկրային գործերից, որպեսզի նրանք մեծ պաշարներ ստանան փրկության ակունքից: Այնուհետև Աստծո ժողովուրդն ընդունվեց Նրա կողմից: Հիսուսը նրանց նայեց բավարարվածությամբ: Նրա պատկերն արտացոլվեց նրանցում: Սուրբերն իրենց անօրինակ զոհաբերությունների դիմաց անմահությամբ շուտափույթ փոխհատուցում էին ակնկալում: Սակայն նրանք կրկին խորապես հիասթափվեցին: Սպասման ժամն անցավ: Նրանք դռնս երկրի վրա էին, և անեծքի հետևանքներն ավելի քան ակնհայտ էին: Նրանք իրենց կապվածությունները թողել էին երկնքում և քաղցր անհամբերու-

թյամբ ճաշակում էին անմահ ազատագրումը, սակայն նրանց հույսերը չարդարացան:

Վախը, որը տիրել էր շատերի սրտերին, չանհետացավ: Նրանք նույն պահին չէին տոնում հիասթափված մարդկանց նկատմամբ տարած հաղթանակը: Սակայն երբ զգացին Աստծո անտեսանելի բարկությունը, ուշքի եկան վերապրած սարսափից և սկսեցին ծիծաղել ու ծաղրել: Աստծո ժողովուրդը կրկին փորձվեց: Աշխարհը ծիծաղում էր, ծաղրում և պարսավում նրանց: Իսկ նրանք, ովքեր վստահությամբ հավատում էին, որ Հիսուսը շուտով կգա և հարություն կտա մեռածներին, կվերափոխի կենդանի սուրբերին, կսկսի հավիտյան թագավորել, իրենց Քրիստոսի աշակերտների պես զգացին. «Իմ Տիրոջը վեր առան, և չգիտեմ, թե ուր դրեցին նրան»:

Տես Մատթեոս 24.36, 25.6-ը, Հովհաննես 20.13-ը, Հայրնություն 14.8-ը:

ԱՊՎԵՆՏԻՍԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԵՍԻԸ

Ես տեսա մարդկանց բազմաթիվ խմբեր, ովքեր, թվում էր, միմյանց կապված էին պարաններով: Այս խմբերից շատերը լիակատար խավարում էին: Նրանց աչքերն ուղղված էին դեպի ներքև՝ երկրին և, թվում էր, ոչ մի կապ չկար նրանց և Հիսուսի միջև: Ես տեսա անհատների՝ սփռված այդ տարբեր խմբերի միջև, ում դեմքերը լուսավոր էին, և աչքերն ուղղված էին դեպի վեր՝ երկնքին: Հիսուսից ճառագող լույսի շողերն արեգակի շողերի պես ուղղված էին նրանց: Հրեշտակը պատվիրեց ինձ ուշադիր զննել, և ես հրեշտակ տեսա յուրաքանչյուրի կողքին, ով ուներ լույսի շող, մինչդեռ չար հրեշտակները շրջապատել էին նրանց, ովքեր խավարում էին: Ես լսեցի հրեշտակի բարձր ձայնը. «Վախեցեք Աստծուց և փառք տվեք նրան, որովհետև նրա դատաստանի ժամը հասավ»:

Փառավոր լույսն ընկավ այս մարդկանց վրա՝ լուսավորելով նրանց: Ոմանք, ովքեր խավարում էին, ստացան լույսը և ցնծացին, մինչդեռ այլք ընդդիմանում էին երկնային լույսին և ասում, որ դա խաբեություն է: Լույսը հեռացավ նրանցից, և նրանք մնացին խավարում: Նրանք, ովքեր Հիսուսից ստացան լույսը, ուրախությամբ փայփայում էին այդ թանկագին պարզևր: Նրանց հայացքն ուղղված էր վեր և շողում էր սուրբ ցնծությամբ, նրանք խորը հետաքրքրությամբ նայում էին վեր՝ Հիսուսին, և նրանց ձայները ներդաշնակ էին հրեշտակի ձայնին. «Վախեցեք Աստծուց և փառք տվեք նրան, որովհետև նրա դատաստանի ժամը հասավ»: Երբ նրանք բարձրացրեցին այս աղաղակը, ես տեսա, որ խավարում գտնվողներն ուսերով մի կողմ էին հրում նրանց: Այնուհետև շատերը, ովքեր փայփայում էին սուրբ լույսը, քանդեցին իրենց պատող կապանքները և առանձնացան այդ խմբերից: Տարբեր խմբերի պատկանող հար-

գարժան մարդիկ անցան այդ բազմության միջով: Ոմանք հաճելի խոսքերով, մյուսները զայրալից հայացքներով և դեմքի սպառնալից արտահայտությամբ ամրացնում էին նրանց թուլացած կապանքները և անընդհատ արտասանում. «Աստված մեզ հետ է: Մենք լույս ունենք: Մենք ճշմարտությունն ունենք»: Ես հարցրի, թե ովքեր էին այդ մարդիկ: Ինձ ասացին, որ նրանք այն ծառայողներն ու առաջնորդներն էին, ովքեր մերժել էին լույսը և չէին ցանկացել, որպեսզի ուրիշներն էլ ընդունեն այն: Ես տեսա, որ նրանք, ովքեր փայփայում էին լույսը, հետաքրքրությամբ և փափագով նայում էին դեպի վեր՝ սպասելով, որ Հիսուսը կգա և նրանց Իր մոտ կառնի: Շուտով ամպը հանգրվանեց նրանց վրա, ովքեր ցնծում էին լույսից, և նրանց դեմքերը մռայլվեցին: Ես հարցրի այդ ամպի նշանակության մասին: Ինձ ցույց տրվեց, որ դա նրանց հիասթափությունն էր: Այն ժամանակը, երբ նրանք սպասում էին իրենց Փրկչին, անցել էր, և Հիսուսը չէր եկել: Հուսահատությունը պատել էր նրանց, իսկ այն մարդիկ, ում մասին նախկինում հիշատակել էի՝ ծառայողները և առաջնորդները, ցնծում էին: Նրանք, ովքեր անտեսել էին լույսը, հաղթանակ էին տոնում, այդժամ սատանան և նրա հրեշտակները նույնպես ցնծում էին նրանց շուրջը:

Այնուհետև ես լսեցի մյուս հրեշտակի ձայնը, որ աղաղակում էր. «Ընկավ, ընկավ Բաբելոնը»: Լույսը շողաց այդ հուսահատ մարդկանց վրա, և գալստյան վառ ցանկությամբ նրանք կրկին իրենց հայացքներն ուղղեցին Հիսուսին: Այդժամ ես տեսա, որ բազում հրեշտակներ խոսում էին երկրորդ հրեշտակի հետ, որն աղաղակում էր. «Ընկավ, ընկավ Բաբելոնը»: Եվ այդ հրեշտակներն իրենց ձայները միաձուլեցին երկրորդ հրեշտակի ձայնին և աղաղակեցին. «Ահա՛, փեսան գալիս է: Դուրս եկեք նրան դիմավորելու»: Թվում էր՝ այդ հրեշտակների մեղեդային ձայնը տարածվում էր ամենուր: Անսահման վառ և փառահեղ լույսի շողերը տարածվում էին նրանց շուրջը, ովքեր փայփայում էին իրենց տրված լույսը: Նրանց դեմքը փայլում էր կատարյալ փառքից, և նրանց ձայները միացան հրեշտակների աղաղակին. «Ահա՛, փեսան գալիս է: Դուրս եկեք նրան դիմավորելու»: Նրանք, ովքեր մերժել էին լույսը, հրում էին նրանց և զայրալից հայացքներով ծաղրում: Մակայն Աստծո հրեշտակներն իրենց թևերով ծածկեցին հետապնդողներին:

Այդժամ ես լսեցի մի ձայն, որը պատվիրում էր նրանց, հալածվողներին դուրս գալ նրանց միջից և չդիպչել անմաքուրներին:

Շատերն արձակեցին իրենց կապանքները, հնազանդվեցին ձայնին, թողեցին խավարում գտնվողներին ու միավորվեցին նրանց հետ, ովքեր նախկինում արձակել էին կապանքները՝ ցնծությամբ միավորելով իրենց ձայները: Ես ջանադիր, տանջալից աղոթք լսեցի նրանցից, ովքեր դեռևս գտնվում էին խավար խմբերի հետ: Ծառայողները և առաջնորդները շրջապատել էին այս խմբերին՝ ավելի ամրացնելով կապերը, սակայն ես դեռևս լսում էի ջանադիր աղոթքի մրմունջները: Այնուհետև ես տեսա աղոթողներին, ովքեր իրենց ձեռքը մեկնում այն միացյալ խմբին, որն ազատ էր և ցնծում էր Աստծով: Քանի որ նրանք անկեղծորեն դիմում էին երկնքին և իրենց հայացքն ուղղել էին վեր, նրանց պատասխանեցին. «Գուրս եկեք նրանցից և բաժանվեցեք»: Ես տեսա անհատների, ովքեր պայքարում էին ազատության համար: Վերջապես նրանք քանդեցին իրենց կաշկանդող կապանքները: Նրանք ընդդիմանում էին կապերն ավելի ամրացնելու գործադրված ջանքերին և ուշադրություն չէին դարձնում կրկնվող պնդումներին. «Աստված մեզ հետ է: Մենք ճշմարտությունն ունենք»: Այդ մարդիկ շարունակում էին լքել խավարում գտնվող խմբերը և միաբանվում էին ազատ խմբերի հետ, որոնք, թվում է, ազատ տարածության մեջ էին և բարձրանում էին երկրից: Նրանց անթաքթ հայացքն ուղղված էր վեր, Աստծո փառքը հանգչում էր նրանց վրա, և նրանք փառաբանում էին Աստծուն: Նրանք միավորված էին, և թվում էր՝ ողողված էին երկնային լույսով: Այս խմբի կողքին կային մարդիկ, ովքեր գտնվում էին լույսի ազդեցության ներքո, սակայն լիովին չէին միացել այդ խմբին: Բոլոր նրանք, ովքեր փայլալույսում էին նրանց վրա շողացող լույսը, մեծագույն հետաքրքրությամբ անթաքթ վեր էին նայում: Հիսուսը նրանց էր նայում հաճելի համակրանքով: Նրանք ակնկալում էին, որ Հիսուսը կգա: Նրանք փափագում էին Հիսուսի գալստյանը և ամենևին երկրի կողմը չէին նայում: Ես կրկին տեսա, որ ամպն իջավ սպասողների վրա: Ես տեսա, որ նրանք խոնարհել էին իրենց հոգնաձ աչքերը: Հարցրեցի այդ փոփոխության պատճառը: Ինձ ուղեկցող հրեշտակը պատասխանեց. «Նրանք կրկին հիասթափված են իրենց սպասումների մեջ: Հիսուսը դեռևս չի կարող երկիր վերադառնալ: Նրանք տակավին պետք է տառապանքներ կրեն հանուն Հիսուսի, պետք է հրաժարվեն իրենց սխալներից և մարդկանցից ավանդված սովորույթներից և իրենց հայացքն ուղղեն Աստծուն և Նրա Խոսքին: Նրանք պետք է մաքրվեն և փորձության ենթարկվեն:

Եվ ովքեր կհաղթահարեն այդ դաժան փորձությունը, կարժանանան հավիտենական հաղթանակի»:

Հիսուսը չեկավ երկիր, ինչպես ակնկալում էր ցնծությամբ սպասող խումբը, որպեսզի Սրբարանը մաքրի երկիրը մաքրող կրակով: Ես տեսա, որ նրանք իրավացի էին մարգարեական ժամանակաշրջանների իրենց հաշվարկի մեջ: Մարգարեական ժամանակաշրջանն ավարտվել էր 1844 թվականին: Նրանց սխալն այն էր, որ չէին հասկացել Սրբարանի և նրա մաքրման էությունը: Հիսուսը մտել էր Սուրբ Սրբոցը, որպեսզի ժամանակի վախճանին մաքրի Սրբարանը: Ես կրկին տեսա հիասթափված խմբին: Նրանք տխուր էին, քանզի մանրամասնորեն ստուգել էին մարգարեական ժամանակաշրջանները և ոչ մի սխալ չէին կարողացել գտնել: Ժամանակը լրացել էր, բայց ո՞ր էր նրանց Փրկիչը: Նրանք կորցրել էին Փրկչին:

Այնուհետև ինձ ցույց տրվեց աշակերտների հիասթափությունը, երբ նրանք եկան գերեզման և չգտան Հիսուսի մարմինը: Մարիամն ասաց. «Իմ Տիրոջը վեր առան, և չգիտեմ, թե ուր դրեցին»։ Հրեշտակները տրտմած աշակերտներին հայտնեցին, որ իրենց Տերը հարություն է առել և իրենցից առաջ Գալիլեայում կլինի:

Ես տեսա, որ Հիսուսը հուսահատ մարդկանց նկատմամբ ամենախորը կարեկցանք ցուցաբերեց: Նա ուղարկեց Իր հրեշտակներին, որպեսզի նրանց մտքերն ուղղորդի գտնելու Իրեն և հետևելու, որտեղ էլ որ Ինքը լինի: Նրանք պետք է հասկանային, որ երկիրը Սրբարան չէ, որ Ինքը պետք է մտնի Երկնային Սրբարանի Սուրբ Սրբոցը, որպեսզի սրբագործի այն՝ առանձնահատուկ քավություն կատարելու Իսրայելի համար և ստանալու Իր Երկնային Հոր արքայությունը: Իսկ այնուհետև կվերադառնա երկիր և նրանց Իր մոտ կառնի, որպեսզի նրանց հետ հավերժ ապրի: Աշակերտների հիասթափությունը պարզորոշ արտահայտում էր այն մարդկանց հուսախաբությունը, ովքեր Տիրոջը սպասում էին 1844 թվականին: Ես տեղափոխվեցի ավելի վաղ ժամանակներ, երբ Զրիստոսը հանդիսավորապես մուտք էր գործում Երուսաղեմ: Երջանիկ աշակերտները կարծում էին, թե Նա շուտով պետք է ընդուներ թագավորությունը և կառավարեր գահը: Նրանք իրենց Արքային հետևում էին մեծ հույսերով. արմավենու գեղեցիկ ճյուղեր էին պոկում, հանում էին իրենց վերնահանդերձը և ջանադրաբար նետում Նրա ճանապարհին, ոմանք գնում էին առջևից, մյուսները հետևում էին Նրան՝ աղաղակելով. «Օվսանա,

Գավթի որդի: Օրինյալ է Տիրոջ անունով եկող թագավորը: Խաղաղություն լինի երկնքում, և փառք՝ բարձունքներում»: Փարիսեցիներին դա դուր չեկավ, և նրանք ցանկանում էին, որպեսզի Հիսուսը հանդիմաններ Իր աշակերտներին: Սակայն Նա ասաց նրանց. «Եթե սրանք լռեն, քարերն են աղաղակելու»: Չաքարիա 9.9-ի մարգարեությունը պետք է կատարվեր, և ես տեսա, որ աշակերտները մատնված էին դառը հիասթափության: Մի քանի օր անց նրանք Հիսուսի հետևից գնացին Գողգոթա և ակամատես եղան, թե ինչպես էր Նա արնահոսում և խեղվում խաչի վրա: Նրանք տեսան Հիսուսի հոգեվարքը և Նրան դրեցին գերեզմանի մեջ: Նրանց սրտերը լի էին տխրությամբ: Նրանց սպասումները չիրականացան: Նրանց հույսերը մարեցին Հիսուսի հետ: Սակայն երբ Հիսուսը մեռյալներից հարություն առավ և հայտնվեց Իր սգացող աշակերտներին, նրանց հույսը վերածնվեց: Նրանք թեև կորցրեցին իրենց Փրկչին, սակայն կրկին գտան նրան:

Ես տեսա, որ նրանց հիասթափությունը, ովքեր հավատում էին 1844 թվականին Տիրոջ գալստյանը, հավասարազոր չէր աշակերտների հուսախաբությանը: Մարգարեությունը կատարվել էր առաջին և երկրորդ հրեշտակների լուրի մեջ: Դրանք տրվել էին ճիշտ ժամանակին և իրագործում էին այդ առաքելությունը, որը նրանց համար Աստված էր պատրաստել:

Տես Դանիել 8.14-ը, Մալքեոս 21.4-16-ը, 25.6-ը, Մարկոս 16.6-7-ը, Ղուկաս 19.35-40-ը, Հովհաննես 14.1-3-ը, 20.13-ը, Բ Կորնթացիս 6.17-ը, Հայրնություն 10.8-11-ը, 14.7-8-ը:

ԱՅԼ ՏԵՍԻԼՔ

Ինձ ցույց տրվեց այն հետաքրքրությունը, որը տաժում էր ողջ երկինքը երկրի վրա տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Հիսուսը ուժեղ և զորեղ հրեշտակին լիագորել էր իջնել և երկրի բնակիչներին նախազգուշացնել, որ նրանք պետք է պատրաստվեն Իր երկրորդ գալստյանը: Ես տեսա, որ զորեղ հրեշտակի առջև տարածվում էր անասելի պայծառ և փառասեղ լույս: Ինձ ցույց տրվեց նրա առաքելությունը, իր փառքով նա պիտի լցներ երկիրը և մարդկանց նախազգուշացներ Աստծո վերահաս բարկության մասին: Շատերը ստացան լույսը: Ոմանք, թվում էր, շատ սուրբ էին, մյուսները՝ երջանիկ ու հիացած: Լույսը լուսավորում էր բոլորին, սակայն ոմանք պարզապես հայտնվել էին նրա ազդեցության տակ՝ չընդունելով այն իրենց սրտում: Բոլոր նրանք, ովքեր ստացել էին այդ պատգամը, իրենց դեմքն ուղղել էին երկնքին և փառաբանում էին Աստծուն: Շատերը լցվել էին մեծագույն գայրույթով: Ծառայողներն ու ժողովուրդը միավորվել էին և նողկանքով ու հանդգնորեն ընդդիմանում էին հզոր հրեշտակի սփռած լույսին: Սակայն բոլոր նրանք, ովքեր ընդունել էին այդ լույսը, հեռացել էին աշխարհից և սերտորեն միաբանվել միմյանց:

Սատանան և նրա հրեշտակները զբաղված էին. նրանք փրկություն էին մարդկային մտքեր, որոնց կարող էին շեղել լույսից: Այն խումբը, որը մերժել էր լույսը, մնաց խավարում: Ես տեսա, թե ինչպիսի հետաքրքրությամբ էր հրեշտակը հետևում Աստծո հավատարիմ ժողովրդին՝ գրի առնելու նրանց բնավորության էությունը, որը նրանք ձեռք էին բերել, երբ երկնային լույսը ներկայացվել էր նրանց: Շատերը, որ նախկինում սեր էին ցուցաբերել Հիսուսի նկատմամբ, այժմ երկնային լույսին արձագանքում էին արհամարհանքով, ծաղրանքով և ատելությամբ: Հրեշտակը, մագաղաթը ձեռքին, նրանց մասին ամո-

թալի գրառումներ էր կատարում: Ողջ երկինքը լի էր վրդովմունքով, քանի որ Հիսուսն անարգված էր Իր բացահայտ հետևորդներից:

Ես տեսա հավատարիմների հիասթափությունը: Նրանք իրենց Տիրոջը չտեսան սպասված ժամին: Աստծո մտադրությունն էր՝ ծածկել ապագան և Իր ժողովրդին վճռական որոշման դրդել: Առանց դրա Աստծո ծրագրած գործը չէր իրականանա: Սատանան շատ խելացի մարդկանց մտքերն ուղղեց դեպի հեռավոր ապագա: Քրիստոսի գալստյան մասին լուրի ազդարարման ժամանակահատվածը պետք է ազդեր մարդկանց վրա, որպեսզի վերջիններս եռանդուն կերպով ձգտեին ներկա նախապատրաստությանը: Քանի որ ժամանակն անցել էր, նրանք, ովքեր լիովին չէին ընդունել հրեշտակի պատգամը, միավորվեցին երկնային լուրն արհամարհողների հետ և իրենց ծաղրանքն ուղղեցին հիասթափված մարդկանց: Ես տեսա երկնքում Հիսուսի հետ խորհրդակցող հրեշտակներին: Նրանք գրառումներ էին կատարում Քրիստոսի ձևական հետևորդների մասին: Անցած ճշգրիտ ժամանակահատվածը փորձում և հաստատում էր նրանց կարծիքը, շատերը կշռվեցին և թեթև գտնվեցին: Նրանք բոլորը բարձրաձայն հայտարարում էին, թե քրիստոնյաներ են, թեև իրականում չէին հետևում Քրիստոսին: Սատանան ցնծում էր: Չէ՞ որ նրանց իր թակարդն էր գցել: Նա շատերին էր դրդել թողնել ուղիղ ճանապարհը, և այժմ նրանք փորձում էին այլ ուղիներով մագլցել երկինք: Հրեշտակները տեսան, թե ինչպես էին մաքուր, անարատ և սուրբ մարդիկ խառնվել Սիոնի մեղավորների և աշխարհատենչ փարիսեցիների հետ: Նրանք հետևում էին Հիսուսի ճշմարիտ հետևորդներին, սակայն մեղավորներն ազդեցություն էին գործել սուրբերի վրա:

Շատերին, ում սրտերը բոցավառված էին Հիսուսին տեսնելու անհազ ցանկությամբ, անվանական քրիստոնյաներն արգելել էր խոսել Նրա գալստյան մասին: Հրեշտակները տեսնում էին ողջ տեսարանը և բարյացակամ էին մնացորդի հանդեպ, որ տենչում էր Հիսուսի գալստյանը: Մեկ այլ գորեղ հրեշտակ իրավագործեց իջնել երկիր: Հիսուսը նրա ձեռքը տվեց մի գրություն, և երբ նա ժամանեց երկիր, ազդարարեց. «Ընկավ, ընկավ Բաբելոնը»: Այնուհետև ես տեսա, որ հուսահատ մարդիկ կրկին ցնծացին, բարձրացրին իրենց աչքերը դեպի երկինք՝ հավատով ու հույսով դիմավորելու իրենց Տիրոջը: Սակայն շատերը, կարծես, մնացին քնած, և ես խորը հիասթափության հետք տեսա նրանց դեմքին: Հիասթափված մարդիկ Աստվածաշնչում

կարդացին, որ իրենք պետք է համբերությամբ սպասեն տեսիլքի իրականացմանը: Նույն վկայությունը, որը 1843 թվականին նրանց դրդել էր սպասել իրենց Տիրոջը, նրանց դրդում էր Նրան սպասել նաև 1844 թվականին: Ես տեսա, որ մարդկանց մեծամասնությունն այլևս չունեի այն եռանդը, որը 1843 թվականին ամրապնդում էր նրանց հավատը: Հիասթափությունը թուլացրել էր նրանց հավատը: Սակայն երբ հուսահատ մարդիկ միավորվեցին երկրորդ հրեշտակի աղաղակից, երկնաբնակներն ամենախորը հետաքրքրությամբ էին նայում և նշում այդ լուրի ազդեցությունը: Նրանք տեսնում էին մարդկանց, ովքեր կրում էին քրիստոնյա կոչումը, սակայն ծաղրում էին հուսախաբվածներին: Երբ այս խոսքը դուրս եկավ ծաղրողների շուրթերից. «Դուք դեռ չեք մեծացել», հրեշտակը գրի առավ այն: Նա ասաց. «Նրանք ծաղրում են Աստծուն»:

Ես վերադարձա Եդիայի ժամանակաշրջանը: Նրա վերաբերյալ ընկավ Եդիսի վրա, և չար երեխաները հետևում էին նրան՝ ծաղրելով և աղաղակելով. «Վեր եկ, կնդակ, վեր եկ, կնդակ»: Նրանք հայհոյեցին Աստծուն ու անմիջապես ստացան իրենց պատիժը: Նրանք դա սովորել էին իրենց ծնողներից: Եվ նրանց, ովքեր ծաղրում էին սրբերի համբարձման գաղափարը, կհասներ Աստծո պատիժը, որպեսզի հասկանային, թե ծաղրելը մանրուք չէ:

Հիսուսն այլ հրեշտակների իրավագործել էր արագ թռչել՝ վերածնելու և ամրապնդելու Իր ժողովրդի թույլ հավատը և նախապատրաստելու նրանց, որպեսզի հասկանային երկրորդ հրեշտակի պատգամը և երկնքում շուտով կատարվելիք կարևոր իրադարձության իմաստը: Ես տեսա, որ այդ հրեշտակները մեծ իշխանություն և լույս ստացան Հիսուսից և արագ թռան երկիր՝ կատարելու իրենց հանձնարարությունը՝ նպաստելով երկրորդ հրեշտակի աշխատանքին: Հզոր լույսը շողում էր Աստծո ժողովրդի վրա, երբ հրեշտակներն աղաղակեցին. «Ահա՛, փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմավորելու»: Այնուհետև ես տեսա վեր հառնող հուսահատ մարդկանց, ովքեր երկրորդ հրեշտակի հետ ներդաշնակորեն ազդարարում էին. «Ահա փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմավորելու»: Հրեշտակների լույսը ներթափանցում էր խավարի միջով: Մատանան և նրա հրեշտակները ցանկանում էին խոչընդոտել այս լույսի տարածմանը և նրա առանձնահատուկ արդյունքներին: Նրանք պայքարում էին Աստծո հրեշտակների դեմ և ասացին, որ Աստված խաբել է մարդ-

կանց, և իրենց ողջ լույսով և գործությամբ նրանք չեն կարող մարդկանց ստիպել հավատալ, թե Հիսուսը գալու է: Աստծո հրեշտակները շարունակում էին իրենց գործը, չնայած սատանան ձգտում էր մարդկանց մտքերը հեռացնել լույսից: Նրանք, ովքեր ստացել էին այդ լուրը, շատ երջանիկ տեսք ունեին: Նրանք իրենց հայացքներն ուղղել էին երկինք և տենչում էին Հիսուսի գալատյանը: Ոմանք խորապես հիասթափված էին, լալիս էին և աղոթում: Նրանց աչքերը, թվում էր, ուղղված էին ներքև. նրանք չէին համարձակվում վեր նայել:

Երկնքի թանկագին լույսը նրանցից ցրեց խավարը, և նրանց աչքերը հուսահատությամբ ուղղվեցին դեպի վեր, մինչդեռ նրանցից յուրաքանչյուրի հոգին լի էր գոհունակությամբ և սուրբ ուրախությամբ: Հիսուսը և ողջ երկնաբնակները հավանությամբ նայում էին հավատարիմներին և սպասողներին:

Նրանք, ովքեր մերժել էին առաջին հրեշտակի լուրից ճառագող լույսը, կորցրին նաև երկրորդ լուրի լույսը: Եվ «Ահա, փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմավորելու» լուրի ուժը և փառքը ոչ մի օգուտ չտվեցին: Նրանք մերժվեցին Աստծուց: Լուրը ստացածները, պարուրված էին փառքի ամպով: Նրանք սպասում էին, հետևում և աղոթում՝ ջանալով հասկանալ Աստծո կամքը: Նրանք երկյուղում էին, որպեսզի հանկարծ չվիրավորեն Աստծուն: Ես տեսա սատանային և նրա հրեշտակներին, ովքեր ձգտում էին այդ աստվածային լույսը ծածկել Աստծո ժողովրդից: Քանի դեռ սպասողները փայփայում էին լույսը և իրենց աչքերը երկրից ուղղել էին Հիսուսին, սատանան ոչ մի կերպ չէր կարող նրանց զրկել այդ թանկագին պարզևից: Երկնքից տրված պատգամը կատաղեցրեց սատանային, նրա հրեշտակներին և նրանց, ովքեր պնդում էին, թե սիրում էին Հիսուսին, սակայն ծաղրում էին Նրա գալուստը՝ ծաղրուծանակի ենթարկելով Հիսուսին հավատարիմ մարդկանց: Սակայն հրեշտակը նշում էր յուրաքանչյուր վիրավորանք, յուրաքանչյուր խաբեություն, որ նրանք ստանում էին իրենց անվանական եղբայրներից: Շատերը բարձրացրին իրենց ձայնը՝ աղաղակելու. «Ահա՛, փեսան գալիս է», և թողեցին իրենց եղբայրներին, ովքեր չէին ընդունում Հիսուսի վերադարձը և չէին սպասում Նրա երկրորդ գալստյանը: Ես տեսա, որ Հիսուսն Իր երեսը թեքեց նրանցից, այնուհետև պատվիրեց Իր հրեշտակներին դուրս գալ անմաքուրների միջից, որպեսզի չպղծվեն: Այս լուրին հնազանդներն այժմ ազատ և միաբան էին: Սուրբ և հիասքանչ լույսը շողում էր

նրանց վրա: Նրանք հրաժարվել էին աշխարհից, հեռացրել էին իրենց կապվածությունները և զոհաբերել իրենց երկրային հետաքրքրությունները: Նրանք թողել էին իրենց երկրային գանձերը, և նրանց անհանգիստ, անթաթ հայացքն ուղղված էր երկնքին՝ ակնկալելով տեսնել սիրելի Փրկչին: Սուրբ ցնծությունը փայլում էր նրանց դեմքին և վկայում նրանց ներսում տիրող խաղաղության և ուրախության մասին: Հիսուսը պատվիրեց հրեշտակներին գնալ և գորացնել նրանց, քանի որ անցել էր նրանց փորձության ժամը: Ես տեսա, որ այդ սպասող մարդիկ դեռևս չէին փորձվել այնքան, որքան կարող էին: Նրանք զերծ չէին սխալներից: Եվ ես տեսա Աստծո ողորմածությունն ու բարեհոգությունը, երբ Նա նախազգուշացում ուղարկեց երկրագնդի բնակչությանը և կրկնեց լուրերը, որպեսզի նրանց բերի ժամանակի լրմանը, ուղղորդի ինքնուրույն ուսումնասիրության և այն սխալների ուղղմանը, որոնք նրանց էին փոխանցվել հեթանոսներից և պապականության կողմից: Այդ լուրերի միջոցով Աստված կանչեց Իր ժողովրդին, ում միջոցով Նա կարող էր ավելի մեծ գորությամբ գործել, և ովքեր կարող էին պահել բոլոր պատվիրանները:

Տես՝ 4 Թագավորաց 2.11-25-ը, Դանիել 8.14-ը, Ամբակում 2.1-4-ը, Մապոթնու 25.6-ը, Հայրնություն 14.8-ը, 18.1-5-ը:

ՍՐԲԱՐԱՆ

Ինձ ցույց տրվեց Աստծո ժողովրդի տրտմագին հիասթափությունը: Նրանք սպասված ժամին չտեսան Հիսուսին և չգիտեին, թե ինչու չեկավ իրենց Փրկիչը: Նրանք ոչ մի վկայություն չէին կարող գտնել, թե ինչու չավարտվեց մարգարեական ժամանակաշրջանը: Հրեշտակն ասաց. «Արդյո՞ք Աստծո Խոսքը սխալ էր: Արդյո՞ք Աստված չկատարեց Իր խոստումը: Ոչ, Նա կատարեց այն, ինչ խոստացել էր: Հիսուսը համբարձվեց, փակեց Երկնային Սրբարանի դուռը և բացեց Սուրբ սրբոցի դուռը՝ մտնելով այնտեղ, որպեսզի սրբի այն: Հրեշտակն ասաց. Բոլոր նրանք, ովքեր համբերությամբ սպասում են, կհասկանան գաղտնիքը: Մարդը սխալվել է, սակայն Աստված անսխալական է: Այն, ինչ Աստված էր խոստացել, կատարվել էր, սակայն մարդը սխալմամբ նայում էր երկրին՝ հավատալով, թե դա է Սրբարանը, որը պետք է մարգարեական ժամանակաշրջանի ավարտին մաքրվի: Անհաջողության մատնվեցին մարդկանց սպասումներն, բայց ոչ ամենևին՝ Աստծո խոստումը»: Հիսուսն ուղարկեց Իր հրեշտակներին, որպեսզի նրանք ղեկավարեն հիասթափված մարդկանց և նրանց հայացքն ուղղեն Սուրբ սրբոցին, ուր մտավ Նա, որպեսզի մաքրի Սրբարանը և Աստծո Իսրայելի համար առանձնահատուկ քավություն կատարի: Հիսուսը հրեշտակներին ասաց, որ բոլոր նրանք, ովքեր փնտրում են Իրեն, կհասկանան այն գործը, որն Ինքը պետք է կատարեր: Ես տեսա, որ քանի դեռ Հիսուսը Սուրբ սրբոցում էր, պետք է նշանվեր Նոր Երուսաղեմի հետ: Սուրբ սրբոցում Իր կատարած աշխատանքից հետո Հիսուսը թագավորական մեծափառությամբ կիջներ երկրի վրա և Իր մոտ կառներ նրանց, ովքեր համբերությամբ սպասել էին Իր վերադարձին:

Այնուհետև ինձ ցույց տրվեց, թե ինչ տեղի ունեցավ երկնքում

1844 թվականին՝ մարգարեական ժամանակաշրջանի ավարտին: Ես տեսա, որ երբ Սուրբ սբբոցում ավարտվեց Հիսուսի ծառայությունը, և Նա փակեց այդ բաժնի դուռը, մեծագույն խավար իջավ նրանց վրա, ովքեր լսել, սակայն մերժել էին Քրիստոսի գալստյան լուրը. նրանք իրենց հայացքից կորցրեցին Հիսուսին: Այնուհետև Հիսուսը հագավ թանկարժեք հանդերձները: Նրա հագուստի քղանցքին տեսա զանգակ և նուռ: Նա ուսերին յուրահատուկ լանջապանակ էր կրում: Եվ երբ շարժվում էր, այն փայլում էր ադամանդի պես՝ տեսանելի դարձնելով տառերը, որոնք նման էին գրված կամ փորագրված անունների: Հիսուսի գլխին կար մի բան, որը թագ էր հիշեցնում էր. հրեշտակները շրջապատեցին Նրան, և Նա հրեղեն կառքով տեղափոխվեց երկրորդ սրահ: Գրանից հետո ինձ առաջարկեցին տեսնել երկնային սրբարանի երկու սրահները: Վարագույրը կամ դուռը բաց էր, և ինձ թույլ տվեցին ներս մտնել: Առաջին սրահում ես տեսա յոթ ճրագներով ճրագակալը. այն հարուստ և փառահեղ տեսք ուներ: Տեսա սեղանը, որի վրա առաջավորության հացն էր, տեսա նաև խունկի սեղանը և բուրվառը: Այս սրահի ողջ կահույքը մաքուր ոսկուց էր և արտացոլում էր Նրա պատկերը, ով ներս էր մտել: Այս երկու սրահները բաժանող վարագույրը շքեղ էր: Այն պատրաստված էր բազմագույն և տարբեր նյութերից, զարդարված էր գեղեցիկ եզրերով և հրեշտակներին պատկերող ոսկյա նկարներով: Վարագույրը բացվեց, և ես տեսա երկրորդ սրահը: Այնտեղ ես տեսա տապանակը, որն ամենահիասքանչ ոսկուց էր պատրաստված: Տապանակի վերին մասում պսակ կար: Այն մաքուր ոսկուց էր: Տապանակի մեջ Տասը պատվիրանները կրող քարե տախտակներն էին: Տապանակի յուրաքանչյուր ծայրին կար թևերը տարածած հիասքանչ քերովբե: Նրանց թևերը բարձրանում էին վեր և դիպչում միմյանց Հիսուսի գլխավերևում, երբ Նա կանգնած էր տապանակի կողքին: Նրանց դեմքերն ուղղված էին միմյանց և նայում էին ներքև՝ տապանակին՝ ներկայացնելով հրեշտակներին, ովքեր հետաքրքրությամբ նայում են Աստծո օրենքին: Քերովբեների միջև կար ոսկե բուրվառ: Երբ սուրբերի աղոթքները հավատքով ուղղվում էին Հիսուսին, և Նա դրանք բերում էր Իր Հոր առջև, բուրվառից հաճելի բույր էր տարածվում: Այն հիշեցնում էր ամենաչքնաղ ծաղիկների բույրը: Հիսուսի կանգնած տեղից վեր՝ տապանակի առջև, ես տեսա այնքան անսահման պայծառ փառք, որին չէի կարող նայել: Այն հայտնվեց Աստծո բնակության գահի պես: Երբ խունկի բույրը վեր

ելավ Հոր մոտ, Հոր գահից կատարյալ փառքը ողողեց Հիսուսին, և Հիսուսից այդ փառքը տարածվեց նրանց վրա, ում աղոթքները մատուցվել էին անուշաբույր խունկի նման: Լույսը և փառքն առատորեն ողողեցին Հիսուսին, ստվեր գցեցին ողորմածության աթոռին, և փառքը լցրեց տաճարը: Ես չեի կարող երկար նայել այդ փառքին: Ոչ մի լեզվով հնարավոր չէ նկարագրել այն: Ես ցնցված էի և շրջվեցի տեսարանի մեծափառությունից:

Ինձ ցույց տրվեց երկու սրահից բաղկացած երկրային Սրբարանը: Այն նման էր երկնային սրբարանին: Ինձ ասվեց, որ երկրային սրբարանը կառուցվել է երկնայինի նմանությամբ: Երկրային սրբարանի առաջին սրահի կահավորանքը նման էր երկնքում առաջին սրահի կահավորանքին: Վարագույրը բացված էր, և ես տեսա Սուրբ սրբոցը, տեսա, որ կահավորանքը նույնն էր, ինչ երկնային սրբարանի Սուրբ սրբոցում: Քահանաները ծառայում էին երկրային երկու սրահներում: Առաջին սրահում նրանք ծառայում էին տարվա ընթացքում ամեն օր, իսկ Սուրբ սրբոց մտնում էին տարեկան մեկ անգամ՝ այն մաքրելու մեղքերից: Ես տեսա, որ Հիսուսը ծառայում էր երկնային սրբարանի երկու սրահներում: Նա երկնային սրբարան մտավ՝ գոհելով Իր արյունը: Երկրային քահանաները փոխվում էին մահվան պատճառով, ուստի նրանք չէին կարող երկար ծառայել: Սակայն ես տեսա, որ Հիսուսը հավիտենական քահանա է: Երկրային սրբարան բերված գոհերի և ընծաների միջոցով Իսրայելի զավակները պետք է հասկանային Փրկչի գալստյան բոլոր առավելությունները: Եվ շնորհիվ Աստծո իմաստության՝ Նրա ծառայության մանրամասնությունները փոխանցվել են մեզ, որպեսզի մենք հասկանանք Հիսուսի կատարած աշխատանքը երկնային Սրբարանում:

Իտաչի վրա Հիսուսն աղաղակեց. «Կատարվեց», և տաճարի վարագույրը վերից մինչև վար երկու մասի բաժանվեց: Դա պետք է ցույց տար, որ երկրային սրբարանում ծառայությունը ընդմիջտ ավարտված է, և Աստված երկրային տաճարում այլևս չի հանդիպի մարդկանց՝ ընդունելու նրանց գոհաբերությունները: Այդժամ թափվեց Հիսուսի արյունը, և այժմ Նա պետք է ծառայեր երկնային սրբարանում: Եվ ինչպես քահանաները երկրային սրբարանում տարին մեկ անգամ էին մտնում Սուրբ սրբոց՝ սրբարանը մաքրելու այնպես էլ Հիսուսը մուտք գործեց երկնային Սուրբ սրբոց Դանիել 8-րդ գլխի 2300 օրերի ավարտին՝ 1844 թվականին, որպեսզի վերջնական սրբագործում կատարի

բոլոր նրանց համար, ում օգնել էր Իր միջնորդությամբ, և մաքրի սրբա-
րանը:

*Տե՛ս Ելից 25-28 գլուխները, Ղևրացոց 16-րդ գլուխը, 4 Թագավորաց
2.11-ը, Դանիել 8.14-ը, Մատթեոս 27.50-51-ը, Եբրայեցիս 9-րդ գլուխը,
Հայրնություն 21-րդ գլուխը:*

ԵՐՐՈՐԴ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ

Երբ Հիսուսի ծառայությունն ավարտվեց Սրբաբանում և Նա տեղափոխվեց Սուրբ սրբոց ու կանգնեց տապանակի առջև, որտեղ գտնվում էր Աստծո օրենքը, երրորդ պատգամով Նա երկիր ուղարկեց մեկ այլ զորեղ հրեշտակի: Հիսուսը մագաղաթը դրեց հրեշտակի ձեռքում, և նա փառքով ու զորությամբ իջավ երկիր ու ազդարարեց զարհուրելի նախագգուշացումը՝ ամենասարսափելի սպառնալիքը, որ երբևէ ստացել է մարդը: Այս պատգամը նախատեսված էր Աստծո զավակներին պահպանելու և նրանց ցույց տալու նախկին փորձության ու տառապանքի ժամը: Հրեշտակն ասաց. «Նրանք կպատերազմեն գազանի և նրա դրոշմի հետ: Հավիտենական կյանքի նրանց միակ հույսը պետք է լինի հավատարմությունը: Չնայած նրանց կյանքը վտանգի տակ է, այդուհանդերձ, նրանք պետք է հետևեն ճշմարտությանը»: Երրորդ հրեշտակն իր պատգամն ավարտեց հետևյալ խոսքերով. «Այստեղ է սուրբերի համբերությունը, այստեղ են Աստծո պատվիրանները և Հիսուսի հավատը պահողները»: Երբ նա կրկնեց այս խոսքերը, մատնացույց արեց երկնային Սրբաբանը: Այս պատգամն ընդունածների մտքերն ուղղվեցին Սուրբ սրբոցին, որտեղ Հիսուսը կանգնած էր տապանակի առջև՝ Իր վերջին միջնորդական ծառայությունը կատարելով բոլոր նրանց համար, ում համար դեռևս շարունակվում է շնորհի ժամանակը, և հանուն նրանց, ովքեր, անիրազեկ լինելով, խախտել են Աստծո օրենքը: Այս քավությունը կատարվել է ինչպես կենդանի, այնպես էլ հանգուցյալ հավատացյալների համար: Հիսուսը քավություն կատարեց նրանց համար, ովքեր մահացել են՝ չստանալով Աստծո պատվիրանների լույսը, և նրանց համար, ովքեր անգիտությամբ են մեղանչել:

Երբ Հիսուսը բացեց Սուրբ սրբոցի դուռը, երևաց Շաբաթի լույսը,

և Աստծո ժողովուրդը փորձության ենթարկվեց, ինչպես նախկինում Աստված փորձեց Իսրայելի զավակներին՝ համոզվելու, որ նրանք կհնազանդվեն Իր օրենքին: Ես տեսա երրորդ հրեշտակին, ով մարդկանց հայացքներն ուղղում էր վեր՝ հիասթափվածներին ցույց տալով երկնային սրբարանի Սուրբ սրբոց տանող ուղին: Նրանք վստահությամբ հետևեցին Հիսուսին դեպի Սուրբ սրբոց: Այնտեղ նրանք կրկին գտան Հիսուսին և նորից լցվեցին ուրախությամբ և հույսով: Ես տեսա, թե ինչպես էին նրանք ետ նայում՝ վերանայելով անցյալը՝ Հիսուսի երկրորդ գալստյան լուրն ազդարարելուց մինչ 1884 թվականի ավարտը: Մարդիկ տեսան իրենց հիասթափության բացատրությունը, և այժմ ուրախությունն ու համարձակությունը կրկին պարուրեցին նրանց: Երրորդ հրեշտակը լուսավորեց անցյալը, ներկան և ապագան, և նրանք իմացան, որ Աստված իրապես նրանց առաջնորդում էր Իր խորհրդավոր նախախնամությամբ:

Ինձ ներկայացվեց, որ այդ մնացորդը հետևում էր Հիսուսին դեպի Սուրբ սրբոցը և տեսավ տապանակը, ողորմության աթոռը՝ հիանալով դրանց փառքով: Հիսուսը բարձրացրեց տապանակի կափարիչը, և ահա քարե տախտակները՝ Տասը պատվիրաններով: Նրանք ուսումնասիրում էին բոլոր պատվիրանները, սակայն սարսուռով ընկրկեցին, երբ չորրորդ պատվիրանը տեսան Տասը սուրբ պատվիրանների շարքում, քանի որ պայծառ լույսը ավելի շատ էր լուսավորում այն, քան մյուս ինը պատվիրանները: Չորրորդ պատվիրանը պարտրված էր լուսապսակ փառքով: Նրանք այնտեղ ոչինչ չգտան, որը վկայեր, թե Շաբաթը վերացել է կամ փոխարինվել շաբաթվա առաջին օրով: Պատվիրանն Աստծո շուրթերով հանդիսավորապես և տուկալի շքեղությամբ կարդացվեց սարի վրա, երբ նրա շուրջը փայլատակեց կայծակն, ու ճայթեց ամպրոպը, և այն Նրա սուրբ մատով գրվեց քարե տախտակների վրա: «Վեց օր աշխատիր և քո բոլոր գործն արա, բայց յոթերորդ օրը քո Տեր Աստծո հանգստության օրն է»: Մարդիկ զարմացած էին Տասը պատվիրանների նկատմամբ այդպիսի հոգատարությունից: Նրանք տեսան, որ իրենք ոտնահարել են Տասնաբանյալի չորրորդ պատվիրանը և Եհովայի կողմից սրբված օրվա փոխարեն պահել են հեթանոսներից և պապականությունից իրենց տրված օրը: Նրանք խոնարհեցրին իրենց անձերն Աստծո առջև և ողբում էին իրենց նախկին զանցանքների համար:

Ես զգացի անուշահոտ խունկի բույրը, երբ Հիսուսն Իր Հորը ներ-

կայացրեց մարդկանց ապաշխարությունը և աղոթքները: Խնկի բույրի հետ պայծառ լույսը ողողեց Հիսուսին և ողորմածության արքա: Անկեղծորեն աղոթող մարդիկ, ովքեր լրջորեն անհանգստացած էին, քանզի հասկացել էին, որ մեղանչել էին Աստծո օրենքի առջև, օրհնվեցին, և նրանց դեմքերը փայլեցին հույսով և ուրախությամբ: Նրանք, ովքեր օժանդակում էին երրորդ հրեշտակի աշխատանքին, բարձր ձայնով և ազդարարեցին հանդիսավոր նախազգուշացումը: Լուրն առաջինը ստացածներից միայն քչերը շարունակեցին եռանդագին ազդարարել նախազգուշացումը: Այնուհետև ես տեսա, որ շատերը ստացան երրորդ հրեշտակի պատգամը, և իրենց ձայները միավորեցին նրանց հետ, ովքեր առաջինն էին ազդարարում այդ նախազգուշացումը: Նրանք միասին մեծարում էին Աստծուն և փառաբանում Նրան՝ պահելով Նրա սուրբ հանգստյան Օրը:

Նրանցից շատերը, ովքեր ստացել էին երրորդ պատգամը, չէին վերապրել երկու նախորդ պատգամները: Սատանան հասկացել էր դա, և նրա չար հայացքն ուղղված էր նրանց, սակայն երրորդ հրեշտակը նրանց ուղղորդեց դեպի Սուրբ սրբոց: Նրանք, ովքեր ունեին նախկին լուրերի փորձառությունը, իրենց հայացքն ուղղեցին երկնային Սրբարանին: Հրեշտակների պատգամների մեջ շատերը նկատել էին ճշմարտության կատարյալ շոքան և բարեհաճությամբ ընդունել էին այն: Նրանք հետևել էին Հիսուսին՝ հավատարիվ երկնային սրբարանին: Այս պատգամներն ինձ ներկայացվեցին որպես մարմինը պահող խարիսխ: Եվ քանի որ մարդիկ ընդունել և հասկացել էին դրանք, նրանք պաշտպանված էին սատանայի բազում մոլորություններից:

1844 թվականի մեծագույն հիասթափությունից հետո սատանան և նրա հրեշտակները զբաղված էին թակարդներ հնարելով, որպեսզի ընկճեն նրանց հավատը: Նա ազդում էր անհատների մտքերի վրա, ովքեր անձնական փորձառություններ ունեին այդ իրադարձությունների ժամանակ: Նրանք խոնարհություն էին ցուցաբերում: Նրանք փոխեցին առաջին և երկրորդ պատգամները և մատնացույց արեցին, որ այդ իրադարձությունները տեղի կունենան ապագայում: Մինչդեռ այլը հիշատակում էին հեռավոր անցյալը՝ ասելով, որ ամեն ինչ վաղուց կատարվել է: Այդ անհատները շեղում էին անփորձների մտքերը և թուլացնում նրանց հավատը: Որոշ մարդիկ ուսումնասիրում էին Աստվածաշունչը՝ փորձելով կառուցել իրենց անձնական

հավատը եկեղեցուց անկախ: Այս ամենից սատանան ցնծություն էր ապրում, քանի որ գիտեր, որ նրանց, ովքեր կորցրել են խարսխի հետ կապը, կարող էր հեշտությամբ խաբել տարբեր սխալներով և տատանել տարբեր դավանանքների քամուց: Նրանցից շատերը, ովքեր հավատում էին առաջին և երկրորդ պատգամներին, մերժեցին դրանք: Եկեղեցում բաժանություն և նոսրացում տեղի ունեցավ: Այնուհետև ես տեսա Ուիլյամ Միլլերին: Թվում էր՝ Նա անհանգստացած էր իր ժողովրդի վշտով և տառապանքներով: Նա տեսավ մի խումբ, որը 1844 թվականին միավորված էր Աստծո սիրով: Մինչդեռ այժմ նրանք կորցնում էին իրար նկատմամբ սերն ու ընդդիմանում էին միմյանց: Նա տեսավ նրանց կրկին սառը, անտարբեր ու նահանջի վիճակում: Տրամությունը սպառել էր նրա ուժերը: Ես տեսա հետևորդների, ովքեր հետևում էին Ուիլյամին՝ վախենալով, թե նա կընդունի երրորդ հրեշտակի պատգամը և Աստծո պատվիրանները: Եվ քանի որ նա պետք է խոնարհվեր երկնային լույսի առջև, այդ մարդիկ առաջարկեցին որոշ ծրագրեր՝ շեղելու նրա մտքերը: Ես տեսա մարդկային ներգործություն, որը դրսևորվեց նրա միտքը խավարում պահելու և նրա ազդեցությունն այլոց վրա ապահովելու համար: Վերջապես Ուիլյամ Միլլերն իր ձայնը բարձրացրեց երկնային լույսի դեմ: Նա ձախողվեց լուրն ընդունելիս, որը նրան լիովին կազատագրեր հիասթափությունից և կարող էր լուսավորել ու փառավորել անցյալը, որը կվերածներ նրա սպառված եռանդը, նրան հույս կտար և կդրդեր փառաբանել Աստծուն: Սակայն աստվածային իմաստության փոխարեն՝ նա խոնարհվեց մարդկային իմաստության առջև՝ Իր Տիրոջ համար ծանրագույն ջանքեր գործադրելով և տարիքի պատճառով չլինելով այնքան պատասխանատու, որքան նրանք էին, ովքեր նրան հեռու էին պահել ճշմարտությունից: Նրանք պատասխանատու էին դրա համար, և մեղքը դրվեց նրանց վրա: Եթե Ուիլյամ Միլլերը կարողանար տեսնել երրորդ պատգամի լույսը, շատ հարցեր, որոնք նրան մութ և խորհրդավոր էին թվում, կպարզաբանվեին: Նրա եղբայրներն այնպիսի մեծ սեր և հետաքրքրություն էին ցուցաբերել նրա նկատմամբ, որ Միլլերը մտածում էր, թե չի կարող ազատվել նրանց ազդեցությունից: Նրա սիրտը ձգտում էր ճշմարտությանը, սակայն նա նայում էր իր եղբայրներին, ովքեր հակառակվում էին իրեն: Կարո՞ղ էր արդյոք նա ազատվել նրանցից, ովքեր կանգնած էին իր կողքին և ուս ուսի ազդարարում էին Հիսուսի գալուստը: Նա կարծում

էր, որ նրանք իրեն երբեք չեն շեղի ճշմարիտ ճանապարհից:

Աստված թույլ տվեց նրան գտնվել սատանայի և մահվան իշխանության ներքո, որոնք սկսեցին իշխել նրան: Նա գերեզմանում քաքցրեց իրեն՝ հեռու նրանցից, ովքեր մշտապես հեռացնում էին իրեն Աստծուց: Մովսեսը Նրա պես սխալվեց, երբ պատրաստվում էր մտնել ավետյաց երկիրը: Ես նաև տեսա, որ Ուիլյամ Միլլերը սխալվեց՝ իր ազդեցությունն ուղղելով ճշմարտության դեմ, մինչդեռ նա արդեն երկնային Քանանի ճամփին էր: Պատասխան կտան նրանք, ովքեր նրան դրդեցին այդ քայլին: Սակայն հրեշտակները պահպանում են Աստծո այս ծառայի թանկարժեք փոշին, և նա հարություն կառնի վերջին փողի ժամանակ:

Տե՛ս Ելից 20.1-17-ը, 31.18-ը, Ա Թեսաղոնիկեցիս 4.16-ը, Հայրնություն 14.9-12-ը:

ԱՄՈՒՐ ՀԱՐԹԱԿ

Ես տեսա մարդկանց մի խումբ, ովքեր պաշտպանված էին, ամուր կանգնած և հավանության չէին արժանացնում նրանց, ովքեր խարխալում էին եկեղեցու հավատի հիմքը: Աստված բարեհաճությամբ էր նայում նրանց: Ինձ ցույց տրվեցին երեք քայլեր՝ առաջին, երկրորդ և երրորդ հրեշտակների պատգամները: Հրեշտակն ասաց. «Վա՛յ նրան, ով պատնեշ կղնի կամ արգելք կհանդիսանա այս պատգամներին: Այս պատգամների ճշմարիտ ըմբռնումն ունի կենսական կարևոր նշանակություն: Հոգիների ճակատագիրը կախված է նրանից, թե ինչպես կընդունեն դրանք»: Ես կրկին տարվեցի այդ պատգամների միջով և տեսա, թե որքան թանկ էր Աստծո ժողովուրդը գնահատում իր փորձառությունը: Այն ձեռք էր բերվել մեծ տառապանքների և լուրջ պայքարի գնով: Բայլ առ քայլ Աստված առաջնորդում էր նրանց, քանի դեռ նրանք չէին հաստատվել ամուր, հուսալի հիմքի վրա: Այնուհետև ես տեսա մարդկանց, ովքեր, մոտենալով հարթակին՝ մինչ դրա վրա բարձրանալը, սկսեցին հետագոտել դրա հիմքը: Ոմանք ուրախությամբ անհապաղ կանգնեցին նրա վրա: Ուրիշներն սկսեցին սխալներ փնտրել հարթակի հիմքի ամրության մեջ: Նրանք ցանկանում էին կատարելագործել այն, որպեսզի հարթակն առավել հուսալի դառնար, իսկ մարդիկ՝ առավել երջանիկ: Ոմանք իջան հարթակից և փորձարկեցին այն. նրանում թերություններով զտնելով՝ հայտարարեցին, որ այն սխալ էր կառուցված: Ես տեսա, որ գրեթե բոլորն ամուր կանգնած էին հարթակի վրա և կոչ էին անում հարթակից իջածներին՝ դադարեցնել բողոքները, քանի որ Աստված է եղել շինարարը, և ուրեմն պայքարում էին Աստծո դեմ: Նրանք պատմեցին Աստծո հիասքանչ աշխատանքի մասին, ինչը նրանց կայուն հարթակի վրա է կանգնեցրել, և գրեթե բոլորն իրենց աչքերն ուղղեցին երկինք

ու բարձրաձայն փառաբանում էին Աստծուն: Դա ազդեց նրանցից ոմանց վրա, ովքեր բողոքում էին և լքում հարթակը, և նրանք կրկին խոնարհ հայացքով կանգնեցին հարթակի վրա:

Ես տեղափոխվեցի Քրիստոսի առաջին գալստյան ազդարարման ժամանակները: Հովհաննեսն ուղարկվել էր Եղիայի հոգով և գորուքյամբ՝ ճանապարհ պատրաստելու Հիսուսի գալստյան համար: Նրանց համար, ովքեր մերժել էին Հովհաննեսի վկայությունը, անօգուտ էին նաև Հիսուսի պատգամները: Նրա առաջին գալստյան ազդարարման հանդեպ ցուցաբերած ընդդիմությամբ նրանք հայտնվեցին այնպիսի իրավիճակում, որ չէին կարող պատրաստակամությամբ ընդունել Հիսուսի՝ Մեսիա լինելու ամենավառ վկայությունը: Նրանց, ովքեր չէին հավատացել Հովհաննեսի լուրին, ստանան դրդում էր առաջ ընթանալ, մերժել Հիսուսին և խաչել Նրան: Այդպես վարվելով՝ նրանք ուղևորվեցին այնտեղ, ուր Պենտեկոստեի օրը չէին կարող ստանալ այն օրհնությունը, որը ցույց կտար նրանց դեպի երկնային սրբարան տանող ուղին: Տաճարի վարագույրի պատռվելը ցույց տվեց, որ հրեական գոհաբերությունները և կանոններն այլևս ընդունելի չեն: Մեծագույն Չոհաբերությունը կատարվել էր և ընդունվել, և Սուրբ Հոգին, ով իջել էր Պենտեկոստեի օրը, աշակերտների միտքը երկրային սրբարանից ուղղեց դեպի երկնայինը, ուր Հիսուսն Իր արյունով մուտք գործեց և Իր աշակերտների վրա թափեց քավության օրհնությունները: Հրեաները թողնվեցին կատարյալ մոլորության և խավարի մեջ: Նրանք կորցրին ողջ լույսը, որը կարող էին ստանալ փրկության ծրագրից, և շարունակում էին հավատալ իրենց անօգուտ գոհերին և ընծաներին: Նրանք չէին կարող օգուտ քաղել սրբարանում Քրիստոսի միջնորդությունից: Երկնային սրբարանը փոխարինել էր երկրայինին, սակայն նրանք դեռևս տեղյակ չէին երկնային ուղուց:

Շատերը սարսափով էին նայում հրեաների կողմից Հիսուսին ուղղված հետապնդումներին, ու Նրա խաչելությանը: Եվ երբ նրանք կարողում էին այդ ամոթալի վիրավորանքների պատմությունը, կարծում էին, թե սիրում են Քրիստոսին, Պետրոսի պես չէին ուրանա Նրան կամ հրեաների պես չէին խաչի: Սակայն Աստված, ով վկայել է Իր Որդու նկատմամբ նրանց բացահայտ կարեկցանքի մասին, փորձել է նրանց սերը:

Ողջ երկինքը խորունկ հետաքրքրությամբ հետևում էր, թե ինչպես էին ընդունում այդ լուրը: Սակայն շատերը, ովքեր պնդում էին, որ

սիրում են Հիսուսին և կարդալով խաչի պատմությունը՝ արցունք էին թափում, ստացված լուրից ուրախանալու փոխարեն՝ կատաղությամբ լի ծաղրում էին Հիսուսի գալստյան բարի լուրը և հայտարարում, թե այն մոլորություն է: Նրանք ոչ միայն չէին ցանկանում շփվել նրանց հետ, ովքեր հավատացել էին Հիսուսի գալստյանը, այլև ատում էին նրանց և վտարում եկեղեցիներից: Նրանք, ովքեր մերժել էին առաջին պատգամը, չէին կարող վայելել երկրորդը և օգուտ քաղել կեսգիշերային աղաղակից, որը նրանց պետք է պատրաստեր Հիսուսի հետ երկնային սրբարանի Սուրբ սրբոց հավատով մուտք գործելուն: Մերժելով նախկին երկու պատգամները՝ նրանք չէին կարող տեսնել երրորդ հրեշտակի պատգամի լույսը, որը ցույց էր տալիս Սուրբ սրբոց տանող ուղին: Ես տեսա, որ եկեղեցիները խաչեցին այդ պատգամները, ինչպես հրեաները խաչեցին Հիսուսին, այդ պատճառով նրանք տեղյակ չէին երկնքում կատարված իրադարձությունների և Սուրբ սրբոց տանող ուղու մասին և չէին կարող օգուտ քաղել Հիսուսի միջնորդական ծառայությունից: Հրեաների պես, ովքեր մատուցում էին իրենց անօգուտ զոհաբերությունները, նրանք իրենց անօգուտ աղոթքներն էին հղում դեպի այն վայրը, որը լքել էր Հիսուսը: Իսկ սատանային դուր էր գալիս Քրիստոսի կարծեցյալ հետևորդներին խաբեությամբ իր թակարդը գցելը: Ընդունելով հոգևոր բնություն՝ սատանան այս կեղծ քրիստոնյաների մտքերն ուղղեց դեպի իրեն, որպեսզի գործի իր ողջ զորությամբ, նշաններով և սուտ հրաշքներով: Ոմանց նա մոլորեցնում էր մի ձևով, մյուսներին՝ մեկ այլ: Նա տարատեսակ խաբեություններ էր պատրաստել՝ մոլորեցնելու շատերին: Ոմանք չէին տրվում մեկ խաբեության, մինչդեռ կարող էին տրվել մեկ այլ խաբեության: Սատանան ոմանց ոգեհարցությամբ էր մոլորեցնում: Նա գալիս էր լույսի հրեշտակի տեսքով և իր ազդեցությունը տարածում ողջ երկրում: Ես ամենուր կեղծ բարենորոգություններ տեսա: Եկեղեցիները ցնծում էին և կարծում, թե Աստված հրաշալի աշխատանք է կատարել իրենց համար, այն դեպքում, երբ այն այլ հոգի էր: Այն կթոռածի և կլքի աշխարհը, իսկ եկեղեցին կմնա առավել վատ վիճակում, քան նախկինում էր:

Ես տեսա, որ Աստված անկեղծ գավակներ ունի նաև անվանական աղվենախստների և անկյալ եկեղեցիների շարքերում, և այդ ծառայողներն ու ժողովուրդը կկանչվեն այդ եկեղեցիներից, մինչ կթափվեն պատուհասները, և նրանք հաճույքով կտեսնեն ճշմարտու-

թյունը: Սատանան գիտեր այդ մասին, և երբորդ հրեշտակի բարձր ձայնից առաջ նա հուզումներ առաջացրեց այդ կրոնական կազմակերպությունների շարքերում, որպեսզի նրանք, ովքեր անտեսել են ճշմարտությունը, կարծեն, թե Աստված իրենց հետ է: Նա հույս ուներ խաբել ազնիվ մարդկանց և ստիպել նրանց կարծել, թե Աստված դեռևս աշխատում է հանուն եկեղեցիների: Սակայն լույսը կշողա, և ազնիվ մարդկանցից յուրաքանչյուրը կլքի անկյալ եկեղեցիները և կմիանա մնացորդին:

*Տե՛ս Մատթեոս 3-րդ գլուխը, Գործք առաքելոց 2-րդ գլուխը,
Բ Կորնթացիս 11.14-ը, Բ Թեսաղոնիկեցիս 2.9-12-ը, Հայրնություն
14.6-12-ը:*

ՈԳԵՎՐՅՈՒԹՅՈՒՆ

Ես ականատես եղա մեծագույն մոլորության: Սատանան գործություն ունի մեր առջև հայտնվել մեր բարեկամների և ընկերների կերպարանքով, ովքեր այժմ ննջում են Հիսուսով: Կարծես մեր հարագատները ներկա են, բառերն

արտասանում են այն նույն հարագատ ձայնով և այնպիսի տոնայնությամբ, ասես ականջը կենդանի ձայն է ընկալում: Այս ամենն աշխարհը խաբելու և մարդկանց այս պատրանքին հավատացնելու միջոց է:

Ես տեսա, որ սուրբերը պետք է ամբողջապես հասկանան առօրյա ճշմարտությունները, որոնք նրանք կգտնեն Սուրբ Գրքում: Նրանք պետք է հասկանան մահացածների վիճակը, քանի որ չար ոգիները կհայտնվեն նրանց՝ ձևանալով իբրև նրանց սիրելի ընկերներ և բարեկամներ և նրանց կհայտնեն ոչ աստվածաշնչյան սկզբունքներ: Նրանք կանեն ամեն հնարավորը, ինչն իրենց իշխանության ներքո է, որպեսզի բարեհաճություն առաջացնեն իրենց հանդեպ. նրանց առջև կկատարեն հրաշքներ՝ հաստատելու այն, ինչ հայտարարում են: Աստծո ժողովուրդը պետք է պատրաստ լինի աստվածաշնչյան ճշմարտությամբ ընդդիմանալ, քանի որ հանգուցյալները ոչինչ չգիտեն, և դրանք միայն չար ոգիներ են:

Ես տեսա, որ մենք պետք է շատ լավ ուսումնասիրենք մեր հույսի հիմքը, քանի որ պարտավոր ենք այդ երևույթները բացատրել Սուրբ Գրքի հիման վրա: Երբ մենք ականատես լինենք այդ մոլորությունների տարածմանը պետք է երես առ երես պայքարենք դրա դեմ: Եվ եթե մենք չենք պատրաստվում դրան, ապա կընկնենք թակարդը և կհաղթվենք: Սակայն եթե մենք մեր կողմից անենք ամեն հնարավորը պատրաստվելու ապագա հակամարտությանը, Աստված կկատարի

Իր մասը, և Նրա ամենագոր ձեռքը կապշտպանի մեզ: Նա ավելի շուտ կուղարկի փառքի բոլոր հրեշտակներին՝ պաշտպանելու Իրեն նվիրված հոգիներին, քան թույլ կտա, որ նրանք խաբվեն և հմայվեն սատանայի սուտ հրաշքներով:

Ես տեսա, թե ինչպիսի արագությամբ էր տարածվում այդ մոլորությունը: Ինձ ցույց տրվեց կայծակի արագությամբ սլացող զնացք: Հրեշտակն ինձ առաջարկեց ուշադրությամբ զննել: Ես իմ հայացքը հառեցի զնացքին: Թվում էր՝ ողջ աշխարհն այնտեղ էր: Այնուհետև նա ինձ ցույց տվեց ուղեկցորդին, ով պատվարժան, արդարամիտ մարդ էր հիշեցնում, ում բոլոր ուղեւորները հարգանքով էին վերաբերվում: Ես անհանգստացած էի և հարցրի իմ հրեշտակին, թե ով է նա: Նա ասաց. «Նա սատանան է: Նա ուղեկցորդն է՝ լույսի հրեշտակի տեսքով: Նա աշխարհին գերի է առել: Մարդիկ մեծագույն մոլորության են մատնված, հավատում են այն խաբեությանը, որ իրենք չեն կարող դատապարտվել: Նրա օգնականը՝ նրանից հետո ամենամեծը, իր ճարտարագետն է, իսկ նրա մյուս օգնականները կատարում են տարբեր աշխատանքներ, որոնց կարիքն ունի նա, և նրանք բոլորը կայծակնային արագությամբ սլանում են դեպի կործանում»: Ես հարցրի հրեշտակին՝ արդյոք ոչ ոք չի՞ մնացել: Նա առաջարկեց նայել հակառակ ուղղությամբ, և ես տեսա մի փոքր խումբ, որը ճանապարհորդում էր նեղ արահետով: Թվում էր՝ ամեն ինչ սերտորեն միավորված և կապված էր ճշմարտության հետ:

Այդ փոքր խումբը հոգսերից տանջված էր թվում: Երևում էր՝ նրանք անցել էին լուրջ փորձությունների և բախումների միջով: Եվ թվում էր՝ արեգակը քիչ առաջ էր ծագել ամպերի միջից և փայլում էր նրանց դեմքին ու հաղթական տեսք տալիս, ասես, հաղթությունը մոտ էր:

Ես տեսա, որ Աստված աշխարհին հնարավորություն էր տվել բացահայտել թակարդը: Նույնիսկ այս մեկ վկայությունը բավարար էր քրիստոնյաներին:

Թոմաս Փեյնը, ում մարմինը փոշու էր վերածվել, և ով պետք է կանչվեր երկրորդ գալստյան ժամանակ, հազարամյակի ավարտին՝ ստանալու արժանի հատուցում և տեսնելու երկրորդ մահը, սատանայի միջոցով պետք է տարվեր երկինք և մեծ պատվի արժանանար այնտեղ: Սատանան երկրի վրա նրան այնքան երկար օգտագործեց, որքան միայն կարող էր, և այժմ էլ շարունակում էր նույն աշխատանքը՝ տեղեկատվություն տարածելով, թե Թոմաս Փեյ-

նը մեծարվել և պատվի է արժանացել: Սատանան ներկայացնում է, թե իբր ինքն ինչպես որ սովորեցրել է երկրի վրա, այնպես էլ սովորեցնում է երկնքում: Երկրաբնականներից ոմանք, ովքեր սարսափով էին հետևում նրա կյանքին, մահվանը ու նրա խեղաթյուրված ուսմունքին, այժմ պատրաստ էին սովորել նրանից, չնայած նա ամենանողկալի և այլասերված մարդկանցից մեկն էր, որ ծաղրում էր Աստծուն և Նրա օրենքը:

Նա՝ ստուքյան հայրը, կուրացնում և մոլորեցնում է աշխարհը՝ ուղարկելով իր հրեշտակներին, որպեսզի նրանք խոսեն առաքյալների անունից՝ ներկայացնելով, թե իրենք հակասում են այն խոսքերին, ինչ գրել են Սուրբ Հոգու թելադրանքով, երբ երկրի վրա էին: Այս չար հրեշտակներն առաքյալներին ներկայացնում են իբրև իրենց ուսմունքը խեղաթյուրողներ և հայտարարում, որ նրանք կեղծ են: Այդպիսով, այն ձևական քրիստոնյաներին, ովքեր, թվում է՝ կենդանի են, սակայն իրականում մեռած են, և ողջ մնացյալ աշխարհին նա կարող է համոզել Աստծո Խոսքի անստուգության մեջ, քանի որ, հակառակ դեպքում այն փակուղի կդառնա նրա ճամփին և կխափանի նրա ծրագրերը: Այդ պատճառով նա կասկածի տակ է առնում Սուրբ Գրքի աստվածային ծագումը, այնուհետև անհավատ Թոմաս Փեյնին այնպես է ներկայացնում, թե իբր վերջինս մահվանից հետո հայտնվել է երկնքում և միաբանվել սուրբ առաքյալների հետ, ում նա ատում էր երկրի վրա, և հայտնվել է՝ ուսուցանելու աշխարհին:

Սատանան իր հրեշտակներից յուրաքանչյուրին հանձնարարում է աշխատանքի իրենց մասը: Նա հրամայել է նրանց լինել նենգ, ճարպիկ և խորամանկ, ոմանց պատվիրել է նմանվել առաքյալներին և խոսել նրանց անունից, իսկ մյուսները պետք է կատարեն անհավատների և մեղավոր մարդկանց դեբը, որ մահացել էին՝ անիծելով Աստծուն, մինչդեռ հիմա դարձել են նվիրված հավատացյալներ: Ոչ մի տարբերություն չկա ամենասուրբ առաքյալների և ամենանողկալի անհավատի միջև: Երկուսն էլ պետք է միևնույնն ուսուցանեն: Տարբերություն չկա, թե ում միջոցով է խոսում սատանան, եթե իր մտահղացումն իրականանում է: Նա երկրի վրա այնքան սերտ հարաբերություններ ուներ Փեյնի հետ և այնքան էր օգնում նրան, որ իր համար հեշտ էր իմանալ նրա օգտագործած ամեն մի բառը և նրա նվիրյալ զավակներից մեկի ձեռագիրը, ով իրեն ծառայել էր մեծագույն անկեղծությամբ և հաջողությամբ իրագործել շատ ծրագրեր:

Սատանան թելադրում էր նրա գրություններից շատերը, և այժմ նրա համար շատ հեշտ էր իր զգացմունքները թելադրել չար հրեշտակների միջոցով և ցույց տալ, որ դրանք բխում են Թոմաս Փեյնից: Սակայն սա սատանայի վարպետությունն էր: Բոլոր այս ուսմունքները, որոնք, թվում էր՝ բխում էին առաքյալներից, սրբերից և մեղավոր հանգուցյալ մարդկանցից, ուղղակիորեն ծագում են նրա սատանայական մեծափառությունից:

Թոմաս Փեյնի օրինակը բավական էր, որ սատանան ասեր աշխարհին.. «Կարևոր չէ, թե որքան մեղավոր եք դուք, կարևոր չէ՝ դուք հավատո՞ւմ եք Աստծուն կամ Աստվածաշնչին, թե՞ ոչ: Ապրեք, ինչպես հաճո է ձեզ, երկինքը ձեր տունն է, և յուրաքանչյուր ոք պետք է իմանա, որ Թոմաս Փեյնը գտնվում է երկնքում՝ փառահեղ վիճակում: Դա այնքան ակնհայտ է, որ բոլորը կարող են տեսնել, եթե ցանկանում են»: Սատանան այժմ վարվում է այնպես, ինչպես վարվել է իր անկումից հետո, և դա անում է Թոմաս Փեյնի պես մարդկանց միջոցով: Իր գործքամբ և կեղծ հրաշքներով նա խարխլում է քրիստոնեական հույսի հիմքը և ծածկում արեգակը, որը պետք է լուսավորեր դեպի երկինք տանող նեղ ճանապարհը: Նա հավատացնում է աշխարհին, թե Աստվածաշունչն ավելին չէ, քան հեքիաթների մի հավաքածու, այն ոգեշնչված գիրք չէ, մինչդեռ փոխարենն առաջարկում է բաներ, որոնք կոչվում են Հոգևոր Ապացույցներ:

Սա այլք է, որն ամբողջովին նվիրված է սատանային, գտնվում է նրա ղեկավարության ներքո և կարող է աշխարհին ստիպել հավատալ այն բանին, ինչ ինքն է կամենում: Գիրքը, որը կարող էր դատապարտել սատանային և նրա հետևորդներին, նա թողել է ստվերում՝ այնտեղ, ուր ինքն է ցանկանում: Աշխարհի Փրկչին նա ներկայացնում է իբրև հասարակ մարդ, և ոչ ավելին: Ինչպես հռոմեական պահակախումբը, որը պահպանում էր Հիսուսի գերեզմանը, տարածում էր այն սուտը, որը քահանայապետերը և ծերերն էին դրել նրանց շուրթերին, այնպես էլ այդ հոգևոր դրսևորումների խեղճ մոլորված հետևորդներն են ձգտում հավատացնել, թե ոչ մի հրաշք էլ չկա մեր Փրկչի ծննդյան, մահվան և հարության մեջ: Նրանք Հիսուսին Աստվածաշնչի հետ միասին թողել են ստվերում և աշխարհի ուշադրությունը հրավիրել իրենց անձերի, կեղծ հրաշքների և նշանների վրա, որոնք, իրենց կարծիքով, գերազանցում են Քրիստոսի կատարած գործին: Եվ այսպես, աշխարհն ընկավ թակարդը և ապահո-

վորթյան մեջ ժամանակավոր հանգիստ առավ՝ այս ահավոր խաբեությունը չբացահայտելով այնքան ժամանակ, մինչև կթափվեն վերջին յոթ պատուհասները: Սատանան ծիծաղում է՝ տեսնելով, որ իր ծրագիրն այսքան մեծ հաջողություն ունեցավ, և ողջ աշխարհը գտնվում է ծուղակում:

Տես Ժողովող 9.5-ը, Հովհաննես 11.1-45-ը, Բ Թեսաղոնիկեցիս 2.9-12-ը, Հայրնություն 13.3-14-ը:

ԸՆԶԱԲԱՂՅՈՒԹՅՈՒՆ

Ես տեսա, որ սատանան և նրա հրեշտակները խորհրդակցում էին միմյանց հետ: Սատանան իր հրեշտակներին առաջարկեց գնալ և թակարդներ պատրաստել հատկապես նրանց համար, ովքեր սպասում էին Քրիստոսի երկրորդ գալստյանը և պահում Աստծո պատվիրանները: Սատանան իր հրեշտակներին ասաց, որ բոլոր եկեղեցիները քնած են: Ավելացնելով իր գործությունը և կեղծ հրաշքների ծավալը՝ նա կկարողանար գայթակղել եկեղեցիներին: «Սակայն շաբաթապահներին մենք ատում ենք: Նրանք անդադար գործում են մեր դեմ և մեզանից խլում մարդկանց՝ Աստծո այդ ատելի օրենքը պահելու համար»:

«Գնացեք և կալվածատերերին ու հարուստներին արբեցրեք հոգսերով: Եթե դուք կարողանաք ստիպել նրանց դա ամենից բարձր գնահատել, կկարողանաք դեկավարել նրանց: Նրանք կարող են դավանել այն, ինչ իրենց դուր է գալիս, միայն թե նրանց դարձրեք հոգացող առավելապես դրամների, քան Քրիստոսի Արքայության կամ ճշմարտության տարածման մասին, որը մենք ատում ենք: Աշխարհը նրանց ներկայացրեք ամենահմայիչ լույսի ներքո, որպեսզի նրանք սիրեն և պաշտեն այն: Մենք պետք է օգտագործենք մեզ հասանելի բոլոր միջոցները: Որքան շատ միջոցներ ունենան նրանք, այնքան շատ կվնասեն մեր թագավորությունը՝ գողանալով մեր մարդկանց: Եթե նրանք հանդիպումներ կազմակերպեն այլևայլ վայրերում, մենք վտանգի կենթարկվենք: Արթուն եղեք: Մարդկանց ուշադրությունը շեղեք ցանկացած միջոցներով: Կործանեք միմյանց նկատմամբ նրանց սերը: Հիասթափեցրեք և հուսահատության մատնեք նրանց ծառայողներին, քանի որ մենք ատում ենք նրանց: Առաջադրեք ցանկացած հնարավոր արդարացում նրանց համար, ովքեր միջոցներ ունեն,

որպեսզի չտրամադրեն դրանք: Գեկավարեք դրամական հարցերը, եթե կարող եք, և ստիպեք նրանց ձգտել և անհանգստանալ գումարների մասին: Դա կթուլացնի նրանց քաջությունը և ձգտումը: Պայքարեք հողի յուրաքանչյուր ֆունտի համար: Ընչաքաղցությունն ու երկրային գանձերի նկատմամբ սերը դարձրեք նրանց բնավորության հիմնական գիծը: Այնքան ժամանակ, որքան կիշխի այս բնավորությունը, փրկությունը և շնորհը կմնան դրսում: Նրանց շուրջը հավաքեք այն ամենը, ինչը կգայթակղեցնի նրանց, և նրանք անվերապահորեն կլինեն մերը: Ավելին, մենք վստահ պետք է լինենք, որ նրանց ատելի ազդեցությունը մյուսների վրա թույլ չի տա երկինք մտնել նրանց: Եվ նրանց, ովքեր կարող են միջոցներ գոհաբերել, դուք պետք է դարձնեք ազահ, ժլատ ու արծաթասեր, որպեսզի խնայեն գումարները»:

Ես տեսա, որ սատանան լավ էր իրականացնում իր ծրագրերը: Եվ երբ Աստծո ծառաները հանդիպումներ էին նշանակում, սատանան ու նրա հրեշտակները հասկանում էին նրանց մտահղացումները և նրանց կողքին էին, որպեսզի խոչընդոտեն Աստծո աշխատանքին՝ մշտապես ինչ-որ գաղափարներ ներդնելով Աստծո ժողովրդի մտքերում: Ումանց նա առաջնորդում էր մի ճանապարհով, մյուսներին՝ այլ՝ մշտապես օգուտ քաղելով եղբայրների և քույրերի չար առանձնահատկություններից՝ դրդելով և գրգռելով նրանց բնածին թերությունները: Եթե նրանք եսասեր և ընչաքաղց էին, սատանան հաճույքով կանգնած էր նրանց կողքին և իր ողջ գործությամբ դրդում էր նրանց զանազան մեղքերի: Եթե Աստծո շնորհը և ճշմարտության լույսն այդ ժլատ և եսասեր անձանց ստիպում էր որոշ չափով փոխվել, սատանան գալիս և թուլացնում էր յուրաքանչյուր մեծահոգի և առատաձեռն սկզբունք այնպես, որ նրանք կարծում էին, թե իրենցից առավել շատ է ակնկալվում: Մարդիկ հոգնել էին բարի գործերից և մոռացել Քրիստոսի մեծագույն գոհաբերության մասին, որը կատարվել էր հանուն իրենց և ճանապարհի հարթել սատանայի ճիրաններից ազատվելու համար:

Սատանան օգտվեց Հուդայի ընչաքաղց, եսասեր բնավորության առավելությունից և դրդեց իր դժգոհությունը հայտնել Մարիամի ընծայի հանդեպ, որը նվիրված էր Հիսուսին: Հուդան դա մեծ ծախս էր համարում. իբր թե այն կարող էր վաճառվել և տրվել աղքատներին: Նա չէր հոգում աղքատների մասին, սակայն Հիսուսին ուղղված ընծան համարեց վատնում: Հուդան իր Տիրոջը վաճառեց արծաթի ըն-

դամենը մի քանի կտորով: Եվ ես տեսա, որ ևս կային Հուդայի մման մարդիկ Տիրոջը սպասողների շարքերում: Սատանան վերահսկում էր նրանց, մինչդեռ նրանք անտեղյակ էին դրանց: Աստված չի կարող բարյացակամորեն վերաբերվել ժլատության և եսասիրության դրսևնորումներին: Նա ասում է դա և մերժում նրանց աղոթքներն ու խընդրանքներն, ովքեր ունեն այդպիսի հատկանիշներ: Սատանան տեսնում է, որ իրեն քիչ ժամանակ է մնացել, ուստի դողում է մարդկանց լինել ավելի ու ավելի եսասեր, ավելի ժլատ, և ցնծում է, երբ տեսնում է, որ վերջիններս դառնում են առավել գծուծ, եսամոլ և կենտրոնացած միայն իրենց վրա: Եթե նրանց աչքերը բաց լինեին, նրանք կտեսնեին, թե ինչպես է սատանան դժոխային հրճվանքով ցնծում և ուրախանում այն մարդկանց հիմարությունից, ովքեր ընդունել են իր առաջարկները և ընկել իր որոգայթը: Այնուհետև նա իր հրեշտակների հետ միասին այդ մարդկանց ընչաքաղցությունը ներկայացրեց Հիսուսին և սուրբ հրեշտակներին՝ դատապարտությամբ ասելով. «Սրանք են Քրիստոսի հետևորդները: Նրանք պատրաստվում են իրենց համբարձմանը»: Սատանան մատնանշեց նրանց ոչ քրիստոնեական արարքները և այնուհետև դրանք համեմատեց Աստվածաշնչի հետ, որն ակնհայտորեն դատապարտում էր մման վարքագիծը, իսկ հետո երկնային հրեշտակներին բարկացնելու համար ասաց. «Նրանք հետևում են Քրիստոսին և Նրա խոսքին: Նրանք Քրիստոսի զոհի և փրկագնման պտուղներն են»: Հրեշտակները զզվանքով երես թեքեցին: «Աստված Իր ժողովրդից պահանջում է Իր պատվիրանների մշտական կատարում, և երբ նրանք հոգնում են բարի և առատաձեռն լինել, Նա էլ հոգնում է նրանցից»: Ես տեսա, որ Աստված բարկացած էր Իր ժողովրդի եսասիրության վրա, հանուն որոնց Հիսուսը շինայեց Իր թանկարժեք կյանքը: Յուրաքանչյուր եսասեր, ժլատ անձնավորություն կընկնի ճանապարհին: Հուդայի պես, ով վաճառեց իր Տիրոջը հանուն երկրային շահի, նրանք կվաճառեն իրենց լավ սկզբունքները և վսեմ, առատաշնորհ էությունը: Նրանք, ովքեր տենչում են դեպի երկինք, պետք է իրենց ողջ եռանդով հետևեն երկնային սկզբունքներին: Եվ եսասիրությամբ իրենց հոգիները կործանելու փոխարեն՝ նրանք պետք է զարգացնեն իրենց բարյացակամությունն ու պատրաստակամությունը: Յուրաքանչյուր հնարավորություն պետք է օգտագործվի բարիք գործելու և երկնային սկզբունքների մեջ աճելու և զորանալու նպատակով: Հիսուսն ինձ ցույց տրվեց

որպես կատարյալ Օրինակ: Նրա կյանքը զերծ էր եսասիրական հետաքրքրություններից և լի էր առատաձեռնությամբ:

Տե՛ս Մարկոս 14.3-11-ը, Ղուկաս 12.15-40-ը, Կողոսացիս 3.5-16-ը, Ա Հովհաննես 2.15-17-ը:

ՄԱՂՈՒՄ

Ես տեսա մարդկանց, ովքեր ամուր հավատով և հոգեվարքային ճիշերով դիմում էին Աստծուն: Նրանց դեմքերը գունատ էին և խորն անհանգստությամբ լի, ինչն արտահայտում էր նրանց հոգու մաքառումը: Նրանց մեջ հաստատակամություն և մեծագույն լրջություն տեսա, երբ նրանց ճակատից գորվում և ցած էին հոսում քրտինքի մեծ կաթիլներ: Ժամանակ առ ժամանակ նրանց դեմքերը պայծառանում էին Աստծո հավանության կնիքով, սակայն նույն սուրբ, լուրջ և անհանգստացած հայացքը կրկին հայտնվում էր նրանց դեմքերին:

Չար հրեշտակները խմբվել էին այդ մարդկանց շուրջը՝ իրենց խավարով պատելով նրանց՝ Հիսուսին հեռացնելու նրանց հայացքից և նրանց միտքը կենտրոնացնելու իրենց շրջապատող խավարի վրա, որպեսզի նրանք դադարեն վստահել Աստծուն և տրտնջան Նրա դեմ: Նրանց միակ փրկությունն իրենց աչքերը դեպի վեր հառելն էր: Հրեշտակներն ազդեցություն ունեին Աստծո ժողովրդի վրա, և այդ չար հրեշտակներից բխող թունավոր մթնոլորտը ցրվում էր նրանց շրջապատող հրեշտակների թևերի թափահարումից, որպեսզի լիովին ցրի նրանց պարուրած խավարի լայն շերտը:

Ես տեսա, որ ոչ բոլորն էին մասնակից այդ հոգեվարքին և խնդրանքին: Նրանք անտարբեր և անհոգ էին և չէին ընդդիմանում իրենց պատող խավարին, մինչև այն ծածկեց նրանց: Աստծո հրեշտակները քեցին նրանց և ուղևորվեցին օգնելու լրջորեն աղոթող մարդկանց: Ես տեսա, որ Աստծո հրեշտակն օգնում էր միայն նրանց, ովքեր իրենց ողջ եռանդով պայքարում էին՝ ընդդիմանալով չար հրեշտակներին և համառորեն կանչելով Աստծուն: Սակայն հրեշտակները քեցին նրանց, ովքեր ոչ մի ջանք չէին գործադրում իրենց փրկության համար, և ես կորցրի նրանց իմ տեսադաշտից:

Քանի որ աղոթող մարդիկ շարունակում էին իրենց աղաղակները, ժամանակ առ ժամանակ Հիսուսից ճառագող լույսը հասնում էր նրանց, քաջալերում նրանց սրտերը և լուսավորում նրանց երեսը:

Ես հարցրի այն մաղման պատճառի նշանակության մասին, որին ականատես էի եղել: Ինձ ցույց տրվեց, որ դրա պատճառը Լատդիկեի եկեղեցուն ուղղված Ճշմարիտ Վկայի կողմից տրված խորհրդի հզոր վկայությունն էր: Այն կազդի այն սրտերի վրա, ովքեր ընդունել են վկայությունը, և այն կուղղորդի նրանց չափանիշների վերականգնմանը և բացարձակ ճշմարտության հեղմանը: Ոմանք չեն ընդունի այս բացարձակ վկայությունը: Նրանք ոտքի կելնեն նրա դեմ, և դա կդառնա Աստծո ժողովրդի մաղման պատճառը:

Ես տեսա, որ Ճշմարիտ Վկայի հավաստումը նույնիսկ կիսով չափ չընդունվեց: Այն հանդիսավոր վկայությանը, որից կախված էր եկեղեցու ճակատագիրը, շատ քիչ ուշադրություն դարձվեց, եթե չասենք մերժվեց: Այդ վկայությունը պետք է խորը ապաշխարության դրդեր, մաքրեր ու սրբեր այն լսողներին:

Հրեշտակն ասաց. «Տե՛ս»: Շուտով ես լսեցի ձայնը, որը հնչում էր և ներդաշնակությամբ ընտրված բազում երաժշտական գործիքների պես: Այն գերազանցում էր երբևէ իմ կողմից լսված բոլոր մեղեդիներին: Այն լի էր ողորմածությամբ, կարեկցանքով և վսեմաշուք սուրբ ուրախությամբ և խորապես ցնցեց իմ ողջ էությունը: Հրեշտակն ասաց. «Տե՛ս»: Այդժամ իմ ուշադրությունն ուղղվեց այն մարդկանց խմբին, ում ես նախկինում տեսել էի դառնագին լալիս: Ես տեսա, որ նրանց շրջապատող պահապան հրեշտակների թիվը կրկնապատկվեց. նրանք զրահապատ էին: Հրեշտակները տեղաշարժվում էին, խիստ հերթականությամբ՝ զինվորների խմբի պես: Նրանց դեմքն արտահայտում էր այն լուրջ բախումը, որը նրանք հաղթահարել էին, տանջալից պայքարը, որի միջով անցել էին: Ծանր ներքին տանջանքով դրոշմված նրանց էությունն այժմ շողում էր հրաշալի երկնային լույսից և փառքից: Նրանք հաղթանակ տարան, և այն խորը երախտագիտություն և սուրբ ուրախություն պարզեց նրանց:

Այդ խմբում մարդկանց թիվը նվազում էր: Ոմանք մաղվեցին և մնացին ճանապարհին: Անհոգ և անտարբեր մարդիկ, ովքեր չէին միաբանվել նրանց հետ ու այնպես էին գնահատում հաղթանակը և փրկությունը, որ վերապրեն տանջանքը և համառորեն շարունակեն պայքարել, ոչինչ չստացան և մնացին խավարում: Սակայն նրանց

քիվն անհապաղ լրացվեց մարդկանցով, ովքեր հետևում էին ճշմարտությանը: Չար հրեշտակները շրջապատել էին նրանց, սակայն ոչ մի ազդեցություն չկարողացան գործել այդ մարդկանց վրա:

Ես լսեցի, որ գրահապատ հանդերձներով մարդիկ ճշմարտությունը քարոզում էին մեծագույն գորությամբ: Եվ դա ազդեցություն ունեցավ: Ես տեսա մարդկանց, ովքեր կապված էին. որոշ կանայք կապված էին իրենց ամուսինների, երեխաները՝ ծնողների կողմից: Անկեղծ մարդիկ, ում նախկինում արգելված էր լսել ճշմարտությունը, այժմ անհամբերությամբ ունկնդրում էին այն: Բարեկամների վախճանացավ: Ճշմարտությունը վեր հանվեց նրանց կողմից: Այն առավել քանկ էր, քան նրանց կյանքը: Նրանք ծարավ էին ճշմարտության: Ես հարցրի, թե ինչն այսպիսի փոփոխություններ առաջացրեց: Հրեշտակը պատասխանեց. «Սա վերջին անձրևն է, Աստծո ներկայության նորոգությունը, երրորդ հրեշտակի բարձր աղաղակը»:

Մեծագույն գորությունն ուղեկցում էր այդ ընտրյալ մարդկանց: Հրեշտակն ասաց. «Տես»: Իմ ուշադրությունն ուղղվեց մեղավորներին և անհավատներին: Նրանք բոլորը շարժման մեջ էին: Աստծո ժողովրդի գորությունն ու ձգտումը գրգռում և զայրացնում էր նրանց: Անկարգություն, ամենուր անկարգություն էր տիրում: Ես տեսա Աստծո գորությունն ու լույսն ունեցող այդ խմբի նկատմամբ կիրառված գործողությունները: Խավարը թանձրացել էր նրանց շուրջը, սակայն նրանք կանգնել էին այնտեղ՝ ընդունված Աստծուց և վատահելով Նդրան: Ես տեսա, որ նրանք ապշած էին: Այնուհետև ես լսեցի Աստծուն ուղղված նրանց անկեղծ աղաղակը: Օր ու գիշեր նրանց աղաղակը չէր դադարում: Ես լսեցի այս խոսքերը. «Օ՛, Տեր, Քո կամքը թող լինի: Եթե դա կփառավորի Քո անունը, ցույց տուր Քո ժողովրդի փրկության ուղին: Ազատիր մեզ շրջապատող հեթանոսներից: Նրանք մեզ մահվան են մատնել, սակայն Քո ձեռքը կարող է փրկություն պարգևել»:

Ահա բոլոր այն բառերը, որ ես կարողացա հիշել: Թվում էր՝ նրանցում իրենց անարժանության զգացման խորն արտահայտություն կար, և մարդիկ Աստծո կամքին լիարժեք հնազանդություն էին դրսևորում: Թերևս բոլորը, առանց բացառության, անկեղծորեն բարեխոսում էին և Հակոբի պես պայքարում հանուն իրենց փրկության:

Շուտով, երբ նրանք սկսեցին ավելի բարձր աղաղակել, հրեշտակները կարեկցանքով պատրաստվեցին գնալ և փրկել նրանց: Սակայն բարձրահասակ հրամանատար հրեշտակը թույլ չտվեց: Նա

ասաց նրանց. «Աստծո կամքը դեռևս չի կատարվել: Նրանք պետք է խմեն բաժակից և պետք է սրբագործվեն մկրտությամբ»:

Շուտով ես լսեցի Աստծո ձայնը, որը ցնցեց երկինքն ու երկիրը: Տեղի ունեցավ հզոր երկրաշարժ: Շենքերը քանդվեցին և տարբեր կողմեր ընկան: Այդժամ ես լսեցի հաղթանակի հանդիսավոր ճիչը՝ բարձր, մեղեդային և պարզ: Ես նայեցի այդ խմբին, որը մինչ այդ կարճ ժամանակով շատ աղետալի վիճակում և կապված էր: Փառավոր լույսը շողում էր նրանց վրա: Որքա՞ն գեղեցիկ տեսք ունեին նրանք: Անցել էր ողջ հոգնածությունը և հոգսերի կնիքը: Նրանք առողջ և գեղեցիկ տեսք ունեին: Նրանց թշնամիները՝ հեթանոսները, ընկնում էին նրանց կողքին մեռյալների պես: Նրանք չէին կարող դիմանալ այն լույսին, որը շողում էր փրկված սուրբերի վրա: Այդ լույսը և փառքը պարուրել էին նրանց, մինչև Հիսուսը հայտնվեց երկնային ամպերում, և հավատարիմ ու փորձությունը հաղթահարած մարդկանց խումբը մի ակընթարթում փոխվեց փառքից դեպի փառք: Գերեզմանները բացվեցին, և սուրբերը դուրս եկան այնտեղից՝ անմահություն հագած: Նրանք ազդարարում էին մահվան ու գերեզմանի նկատմամբ տարած հաղթանակը և կենդանի սուրբերի հետ հափշտակվեցին երկինք՝ օդում իրենց Տիրոջը դիմավորելու: Նրանցից յուրաքանչյուրի անմահ և սուրբ շուրթերից հնչում էին փառքի և հաղթանակի աղաղակներ:

Տե՛ս Սաղմոս 86-րդ գլուխը, Ովսե 6.3-ը, Անգե 2.21-23-ը, Մատթեոս 10.35-39-ը, 20.23-ը, Եփեսացիս 6.10-18-ը, Ա Թեսաղոնիկեցիս 4.14-18-ը, Հայտնություն 3.14-22-ը:

ԲԱԲԵԼՈՍԻ ՄԵՂՔԵՐԸ

Ես տեսա տարբեր եկեղեցիների վիճակը, երբ երկրորդ հրեշտակն ազդարարեց նրանց անկման մասին: Նրանք ավելի ու ավելի էին այլասերվում, սակայն իրենց դեռևս Քրիստոսի հետևորդներ էին կոչում: Հնարավոր չէր նրանց տարանջատել աշխարհից: Նրանց ծառայողներն Աստվածաշնչից վերցնում էին խոսքը, սակայն քարոզում էին միայն հաճելի գաղափարներ: Հասարակ սրտերն այդտեղ ոչ մի դատապարտելի արարք չեն տեսնում: Միայն ճշմարտության և Քրիստոսի փրկության հոգին ու զորությունն են ատելի մարդկային սրտին: Այդ հայտնի քարոզներում չկար ոչինչ, որը կգրգռեր աստանայի բարկությունը և մեղավորին կստիպեր դողալ կամ սրտին և խղճին կներկայացներ մոտալուտ դատաստանի ահավոր իրականությունը: Մեղավոր մարդիկ հիմնականում գոհ էին առանց ճշմարիտ աստվածահաճության, նրանք օգնում ու օժանդակում էին այդպիսի կրոնին: Հրեշտակն ասաց. «Միայն ճշմարտության մի ողջ բանակ կարող է հաղթահարել խավարը և հաղթանակ տոնել նրա հանդեպ»: Սատանան իր ձեռքն էր վերցրել բոլոր եկեղեցիների լիակատար կառավարումը: Աստծո Խոսքի պարզ և թափանցող ճշմարտությունների փոխարեն՝ նրանցում բնակվում էին մարդկանց խոսքերը և գործողությունները: Հրեշտակն ասաց. «Ողջ աշխարհի հետ ընկերությունը և աշխարհի հոգին պայքարում են Աստծո դեմ: Երբ ճշմարտությունն իր պարզությամբ և զորությամբ, ինչպիսին առկա է Հիսուսում, խոսում է աշխարհի հոգու դեմ, այն անվերապահորեն հետապնդման հոգի է ծնում: Շատերը, ովքեր պնդում են, թե իրենք քրիստոնյա են, չեն ճանաչում Աստծուն: Սրտի բնածին էությունը չի փոխվել, և նրանց մեղավոր միտքը Աստծո հետ թշնամի է մնում: Նրանք աստանայի սեփական նվիրյալ ծառաներն են, թեև իրենց այլ

կերպ են կոչում»:

Ես տեսա, որ երբ Հիսուսը թողեց երկնային սրբարանի Սրբությունը և մուտք գործեց երկրորդ սրահը, եկեղեցիները թողնվեցին, ինչպես երբեմնի հրեաները, և լցվեցին ամեն անմաքրությամբ և ատելությամբ: Ես մեծագույն անարդարություն և նողկանք տեսա եկեղեցիներում, բայց, միևնույնն է, նրանք պնդում էին, թե իրենք քրիստոնյաներ են: Նրանց գործողությունները, նրանց աղոթքները և քարոզները Աստծո մոտ նողկանք էին հարուցում: Հրեշտակն ասաց. «Աստված չի խոչընդոտի նրանց հավաքներին»: Եսասիրությունը, նենգությունն ու խաբեությունը տիրել էին նրանց: Եվ այս ամեն չարությունը նրանք ծածկում էին կրոնի թիկնոցով: Ինձ ցույց տրվեց կեղծ եկեղեցիների հպարտությունը: Ոչ թե Աստված էր նրանց սրտում, այլ նրանց մեղավոր մտքերը: Նրանք զարդարում էին իրենց խղճուկ մահկանացու մարմինները և այնուհետև հաճույքով և բավականությամբ հիանում իրենցով: Հիսուսը և հրեշտակները բարկությամբ էին նայում նրանց: Հրեշտակն ասաց. «Նրանց մեղքերն ու հպարտությունը երկինք են հասել: Նրանց ճակատագիրը վճռված է: Արդարադատությունը և դատաստանը երկար ննջել են, բայց շուտով կարթնանան: Իմն է վրեժը, և ես կհատուցեմ, ասում է Տերը»: Երրորդ հրեշտակի ահավոր սպառնալիքները պետք է իրականանան, և այդ մարդիկ կճաշակեն Աստծո բարկությունը: Չար հրեշտակների բազմությունը տարածված էր ողջ երկրով մեկ: Եկեղեցիները և կրոնները լի էին նրանցով: Նրանք ցնծությամբ էին նայում կրոնական միություններին, քանի որ կրոնի թիկնոցը ծածկում էր մեծագույն հանցագործություններն ու անարդարությունը:

Ողջ երկինքը վրդովմունքով էր նայում մարդկանց. Աստծո արարչագործության պսակն իջել էր այլասերվածության ամենաստորին աստիճանին: Եվ կեղծ հետևորդները այն թանկագին Փրկչի, Ում կարեկցությունը մշտապես արթնանում էր, երբ Նա տեսնում էր մարդկային վիշտը, եռանդուն մասնակցություն ունեին մեծ ու ցավալի մեղքերի մեջ, ծառա դարձնելով և մարդկային հոգիները: Հրեշտակները գրի էին առնում այդ ամենը: Կրոնապաշտ ստրկացված տղամարդկանց և կանանց, հայրերի, մայրերի և երեխաների, եղբայրների և քույրերի արցունքները կուտակված են երկնքում: Աստված կզսպի Իր բարկությունը, բայց ոչ երկար: Նրա զայրույթ բորբոքված է հատկապես այն կրոնական կազմակերպությունների

դեմ, որոնք ներքաշված են աններելի առևտրի մեջ: Անարդարությունը, հարստահարումը, հեզ և խոնարհ Հիսուսի շատ կեղծ հետևորդներ կարող են թույլ տալ անսիրտ անտարբերությամբ: Այս ամենով հանդերձ՝ նրանք դեռ համարձակվում են երկրպագել Աստծուն: Դա սուկալի ծաղր է: Սատանան ցնծում է և հանդիմանում Հիսուսին և Նրա հրեշտակներին՝ ասելով. «Այսպիսին են Քրիստոսի հետևորդները»:

Քրիստոնյաները կարողում էին նահատակների տառապանքների մասին, և արցունքները հոսում էին նրանց այտերից: Նրանք զարմացած էին, որ մարդիկ կարող են այդքան կարծրացնել իրենց սրտերը և անմարդկային դաժանություններ կիրառել ճշմարիտ քրիստոնյաների նկատմամբ, ինչը շատ նման է Քրիստոսի հետևորդների նկատմամբ պապականության և հեթանոսների դաժանությանը: Հրեշտակն ասաց. «Աստծո դատաստանի օրը ավելի ընդունելի կլինի հեթանոսների և պապականության հետևորդների, քան այս մարդկանց համար»: Հարստահարվածների աղաղակներն ու տառապանքները հասել էին երկինք, և հրեշտակներն ապշել էին իրենց Արարչի պատկերով ստեղծված մարդկանց, անասելի տառապանքների վրա: Հրեշտակն ասաց. «Նրանց անունները գրված են արյունով, խաչված՝ մտրակներով և լի՝ տանջանքի արցունքներով: Աստծո բարկությունը չի դադարի, քանի դեռ Նա չի ստիպել ողջ երկրին խմել Իր բարկության բաժակից և քանի դեռ կրկնակի չի հատուցել Բաբելոնին: Կհատուցի նրան, ինչպես նա է հատուցել, կհատուցի իր գործերին համապատասխան բաժակը, որը նա լցրել է, կրկնակի կլցվի»:

Ես տեսա, որ ծառայի տերը պետք է պատասխան տա իր ծառայի հոգու համար, ում նա տգիտության է մատնել, և ծառայի բոլոր մեղքերը կդրվեն տիրոջ վրա: Աստված չի կարող երկինք տանել ծառային, ով մնացել է անզեղ վիճակում՝ ոչինչ չիմանալով Աստծո կամ Աստվածաշնչի մասին, չվախենալով ոչնչից, բացի միայն իր տիրոջ մտրակից: Նա ավելի բարձր դիրք չի զբաղեցրել, քան իր տիրոջ կենդանիները: Սակայն նա արել է լավագույնը, ինչը կարող էր անել կարեկից Տերը: Նա թույլ կտա, որպեսզի ծառան լինի այնպիսին, ինչպիսին երբեք չի եղել՝ այն դեպքում, երբ նրա տերը կկրի վերջին յոթ պատուհասների տառապանքները և երկրորդ հարության ժամանակ՝ կարժանանա երկրորդ՝ ամենադաժան մահվանը:

Տե՛ս Ամոն 5.21-ը, Հռոմեացիս 12.19-ը, Հայրնություն 14.9,10-ը, 18.6-ը:

ԲԱՐՁՐ ԱՂԱՂԱԿ

Ես տեսա հրեշտակների, ովքեր երկնքում այս ու այն կողմ էին շտապում: Նրանք իջնում էին երկիր և կրկին բարձրանում երկինք՝ պատրաստվելով ինչ-որ կարևոր իրադարձության: Այնուհետև ես տեսա մեկ այլ գորեղ հրեշտակի, ով լիագորոված էր իջնել երկիր և իր ձայնը միավորել երրորդ հրեշտակի ձայնին և գորություն ու իշխանություն տալ այդ լուրին: Մեծ գորությունը և փառքը տրվեցին այդ հրեշտակին, և երբ նա իջավ, երկիրը պայծառացավ նրա փառքից: Լույսը, որը տարածվում էր այս հրեշտակի առջևից և ետևից, թափանցում էր ամենուր, երբ նա գորեղ ձայնով աղաղակեց. «Ընկա՛վ, ընկա՛վ Բաբելոն մեծ քաղաքը, և եղավ դևերի բնակություն և ամեն պիղծ հոգու արգելանոց, և ամեն անսուրբ և ատելի թռչնի վանդակ»:

Երկրորդ հրեշտակի կողմից տրված Բաբելոնի կործանման լուրը կրկին հռչակվեց այն խեղաթյուրումների մասին փոփոխություններով, որոնք տեղի էին ունեցել եկեղեցիներում՝ սկսած 1844 թվականից: Այս հրեշտակի աշխատանքը ճիշտ ժամանակին էր և միավորվեց երրորդ հրեշտակի պատգամի վերջին մեծ աշխատանքին, քանզի այն ավելի բարձրաձայն էր հնչում: Եվ Աստծո ժողովուրդը պատրաստվեց՝ հաստատուն կերպով կանգնելու փորձության ժամին, որը շուտով հասնելու էր: Ես տեսա մեծագույն լույսը մարդկանց վրա, ովքեր միավորվել էին պատգամի շուրջը և անվախորեն մեծ գորությամբ ազդարարում էին երրորդ հրեշտակի պատգամը:

Հրեշտակներն ուղարկված էին օժանդակելու երկնային գորեղ հրեշտակին, և ես լսեցի ձայներ, որոնք, թվում էր, ամենուր էին հընչում. «Դուրս եկեք դրանից, ով իմ ժողովուրդ, որ մասնակից չլինեք դրա մեղքերին և դրա պատուհասից չընդունեք. վասնզի դրա մեղքերը հասան մինչև երկինք, և Աստված հիշեց դրա անիրավությունները»:

րը»: Թվում էր՝ այս լուրը երրորդ հրեշտակի պատգամի հավելումն էր, և միավորվեց նրա հետ, ինչպես կեսգիշերի աղաղակը միավորվեց 1844 թվականի երկրորդ հրեշտակի պատգամին: Աստծո Հոգին դիպավ հնազանդ, սպասող սրբերին, և նրանք աներկյուղ տարածեցին վերջին հանդիսավոր նախազգուշացումը՝ ազդարարելով Բաբելոնի կործանման մասին և Աստծո ժողովրդին կոչ անելով դուրս գալ նրանից, որպեսզի կարողանան փրկվել ահավոր կործանումից:

Լույսը հասավ ամենուր ցրված սպասողներին՝ և՛ նրանց, ովքեր լույս ունեին եկեղեցում, և նրանց, ովքեր չէին լսել և չէին մերժել այդ երեք պատգամները: Մարդիկ արձագանքեցին կոչին և թողեցին անկյալ եկեղեցիները: Շատերը եկան պատասխանատու այն տարիներին, երբ տրվեցին այդ պատգամները. լույսը շողում էր նրանց վրա, և նրանք առավելություն ունեին ընտրել կյանքը կամ մահը: Ոմանք ընտրեցին կյանքը և որոշեցին փնտրել Աստծուն և հետևել Նրա բոլոր պատվիրաններին: Երրորդ պատգամը պետք է կատարեր իր գործը. բոլորը պետք է փորձվեին, և թանկագին հոգիները պետք է կանչվեին կրոնական կազմակերպությունների կողմից: Անհաղթահարելի գորությունը դրդում էր անկեղծ մարդկանց, մինչդեռ Աստծո գործյան դրսևորումը ահի և վտանգի մեջ էր պահում նրանց բարեկամներին և ընկերներին: Նրանք չէին համարձակվում, և ոչ էլ գործություն ունեին խոչընդոտել նրանց, ովքեր զգում էին իրենց հանդեպ Աստծո Հոգու կատարած աշխատանքը: Վերջին կանչը վերաբերում էր նույնիսկ խեղճ ստրուկներին. նրանցից աստվածապաշտները կարող էին խոնարհությամբ երգել իրենց ապագա երջանիկ ազատագրման ցնծալի երգերը, և նրանց տերերը չէին կարող լռեցնել նրանց, քանզի վախը և զարմանքը ստիպել էին տերերին լռել: Տեղի ունեցան գորեղ հրաշքներ. հիվանդները բժշկվեցին, նշաններն ու հրաշքներն ուղեկցում էին հավատացյալներին: Աստված գործում էր, և յուրաքանչյուր սուրբ առանց վախի հետևում էր իր սեփական խղճի թելադրանքին և միաբանվում նրանց հետ, ովքեր հետևում էին Աստծո պատվիրաններին, և նրանք միասին գործյամբ ազդարարում էին երրորդ պատգամը: Ես տեսա, որ երրորդ պատգամը կավարտվի իշխանությամբ և գործյամբ՝ գերազանցելով կեսգիշերյա աղաղակին:

Ի վերուստ օժտված գործյամբ՝ Աստծո ծառաներն իրենց պայծառ դեմքերով և սուրբ նվիրվածությամբ առաջ գնացին՝ կատարելով

իրենց աշխատանքը և ազդարարելով երկնային լուրը: Այն հոգիները, ովքեր ցրված էին տարբեր կրոնական կազմակերպություններում, արձագանքեցին կանչին և շտապեցին դուրս գալ դատապարտված եկեղեցիներից, ինչպես Ղովտը շտապեց դուրս գալ Սողոմից՝ մինչ այն կկործանվեր: Աստծո ժողովուրդը ոգևորված և ամրապնդված էր հիասքանչ փառքով, որն իջել էր հարուստ առատությամբ՝ նրան պատրաստելով հաղթահարել փորձության ժամը: Չայնը, որ ես լսեցի, ամենուր ազդարարում էր. «Այստեղ է սուրբերի համբերությունը, այստեղ են Աստծո պատվիրանները և Հիսուսի հավատը պահողները»:

Տե՛ս Ծննդոց 19-րդ գլուխը, Հայրնություն 14.12-ը, 18.2-5-ը:

ԵՐՐՈՐԳ ՊԱՏՊԱՄՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

Ես տեղափոխվեցի այն ժամանակաշրջանը, երբ ավարտվում էր երրորդ հրեշտակի պատգամը: Աստծո գործությունը հանգչում էր Իր ժողովրդի վրա: Նրանք կատարում էին իրենց աշխատանքը և պատրաստ էին իրենց սպասվող փորձության ժամին: Նրանք ստացել էին վերջին անձրևը կամ Աստծո ներկայության թարմությունը և վերածնված կենդանի վկայությունը: Վերջին մեծագույն նախագգուշացումը հնչել էր ամենուր և բոբբոբել ու զայրացրել այն երկրաբնակներին, ովքեր չէին ստացել լուրը:

Ես տեսա երկնքում այսուայնկողմ շտապող հրեշտակին: Հրեշտակը երկրից վերադարձավ գրչով և Հիսուսին զեկուցեց, որ իր աշխատանքը կատարված է. սուրբերը հաշվված և կնքված են: Այնուհետև ես տեսա Հիսուսին, ով ծառայում էր Տասը պատվիրանները պարունակող տապանակի առջև. Նա բուրվառը ցած նետեց, բարձրացրեց վեր Իր ձեռքերը և բարձր ձայնով ասաց. «Կատարվեց»: Բոլոր հրեշտակներն իջեցրին իրենց պսակները, երբ Հիսուսը հանդիսավորապես հայտարարեց. «Անիրավություն գործողը թող է՛լ անիրավանա, և կեղտոտը թող է՛լ կեղտոտվի, և արդարը թող է՛լ արդարանա, և սուրբը թող է՛լ սրբվի»:

Ես տեսա, որ յուրաքանչյուր դեպք որոշվեց կամ դեպի կյանք, կամ դեպի մահ: Հիսուսը ջնջեց Իր ժողովրդի մեղքերը: Նա ստացավ Իր թագավորությունը, և քավություն կատարվեց Նրա արքայության բոլոր բնակիչների համար: Մինչ Հիսուսը ծառայություն էր կատարում սրբարանում, ընթանում էր մեռած արդարների, այնուհետև՝ կենդանի արդարների դատը: Արքայության բնակիչները պատրաստվեցին: Գառի հարսանիքն ավարտված էր: Ե՛վ արքայությունը, և՛ արքայության մեծությունը ողջ երկնքի տակ տրվեցին Հիսուսին և փրկության

ժառանգներին, և Հիսուսը պետք է թագավորեր որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր:

Երբ Հիսուսը դուրս եկավ Սուրբ սրբոցից, ես լսեցի Նրա հագուստների զանգակների դողանջը, և երբ Նա գնաց, խավարի ամպերը պատեցին երկրաբնակներին: Այդժամ որևէ միջնորդ չկար մեղավոր մարդու և անարգված Աստծո միջև: Երբ Հիսուսը կանգնած էր Աստծո և մեղավոր մարդու միջև, մարդիկ պաշտպանված էին, սակայն երբ Հիսուսը դադարեցրեց մարդու և Հոր միջև միջնորդությունը, արգելապատնեշը հեռացվեց, և աստանան էր կառավարում մարդուն: Պատուհասները չէին կարող թափվել, քանի դեռ Հիսուսը ծառայում էր սրբարանում, սակայն երբ ավարտվեց Նրա աշխատանքը և միջնորդությունը, ոչինչ չէր խոչընդոտում Աստծո բարկությանը, և այն մոլեգնությամբ թափվեց անպաշտպան մեղավորների գլխին, ովքեր արհամարհել էին փրկությունը և ատել հանդիմանությունը: Սուրբերն այդ ահավոր ժամին՝ Հիսուսի միջնորդության ավարտից հետո, սուրբ Աստծո առջև ապրում էին առանց միջնորդի: Հիսուսը մի պահ կանգ առավ երկնային սրբարանի ներքին սրահում, և այն մեղքերը, որոնք քավվել էին, երբ Նա Սուրբ սրբոցում էր, դրեց մեղքի հեղինակի՝ աստանայի վրա: Նա պետք էր կրեր այդ մեղքերի պատիժը:

Այնուհետև ես տեսա, որ Հիսուսը վայր դրեց Իր քահանայական հագուստները և հագավ Իր ամենաթանկարժեք արքայական հանդերձները: Նրա գլխին կային բազում թագեր՝ պսակ պսակի մեջ, և հրեշտակներով շրջապատված՝ Նա լքեց երկինքը: Պատուհասները թափվում էին երկրի բնակիչների վրա: Ոմանք քննադատում էին Աստծուն և հայհոյում Նրան: Ուրիշները շտապում էին Աստծո ժողովրդի մոտ և ցանկանում էին իմանալ, թե ինչպես կարող էին խուսափել Աստծո դատաստանից: Սակայն սուրբերը ոչինչ չունեին նրանց համար: Հանուն մեղավորների՝ թափվել էր վերջին արցունքը, հոգեվարքի մեջ կատարվել էր վերջին աղոթքը, կրել էին վերջին բեռը: Ողորմածության քաղցր ձայնը այլևս չէր հրավիրում նրանց: Տրվել էր վերջին նախագգուշացումը: Երբ սուրբերը և ողջ երկինքը հետաքրքրված էին նրանց փրկության հարցում, նրանք անտարբեր էին: Կյանքը և մահը դրված էին նրանց առջև: Շատերը ցանկանում էին կյանքը, սակայն ոչ մի ջանք չգործադրեցին այն ստանալու համար: Նրանք չընտրեցին կյանքը, և այժմ չկար ոչ մի քավչարար արյուն, որը կսրբեր մեղավորին: Չկար կարեկից Փրկիչը, որպեսզի

աղաչեր նրանց համար. «Խնայեք, խնայեք մեղավորին ևս մի քիչ»։ Ողջ երկինքը միավորվեց Հիսուսի հետ, երբ լսեցին ահավոր խոսքերը. «Կատարվեց: Վերջացավ»: Կատարվեց փրկության ծրագիրը: Մակայն քչերը ցանկացան ընդունել այդ ծրագիրը: Եվ երբ ողորմած քաղցր ձայնը լռեց, ահն ու սարսափը պատեցին նրանց: Չարհուրելի հստակությամբ նրանք լսեցին. «Շատ ուշ է: Շատ ուշ է»:

Նրանք, ովքեր չունեին Աստծո Խոսքի լույսը, այսուայնկողմ էին շտապում: Նրանք թափառում էին ծովից ծով, հյուսիսից արևելք՝ փնտրելով Աստծո խոսքը: Հրեշտակն ասաց. «Նրանք չեն գտնի այն: Սով երկրի վրա, ոչ թե հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու: Ի՞նչ կվճարեին նրանք Աստծուց հավանության մեկ խոսք լսելու համար: Բայց ոչ, նրանք կքաղցեն և կծարավեն: Նրանք շարունակ մերժում էին փրկությունը և գնահատում երկրային հաճույքները և երկրային հարստությունն ավելի, քան ցանկացած երկնային դրոշմ և գանձ: Նրանք մերժեցին Հիսուսին և ծաղրեցին Նրա սուրբերին: Կեղտոտը հավերժ կեղտոտ կմնա»:

Չար մարդկանց մեծ մասը շատ բարկացած էր, երբ նրանք կրում էին պատուհասների հետևանքները: Դա ահավոր հոգեվարքի տեսարան էր: Ծնողները դաժանորեն հանդիմանում էին իրենց երեխաներին, իսկ երեխաները՝ ծնողներին, եղբայրները՝ քույրերին, քույրերն՝ իրենց եղբայրներին: Բարձրաձայն հնչող աղաղակները լսելի էին ամենուր. «Այդ դուք խանգարեցիք ինձ ընդունել ճշմարտությունը, որը կարող էր փրկել ինձ այս ահավոր ժամից»: Մարդիկ դաժան ստեղծությամբ դիմեցին ծառայողներին և հանդիմանում էին նրանց՝ ասելով. «Դուք չզգուշացրիք մեզ: Դուք ասացիք, որ ողջ երկիրը կփոխվի և աղաղակում էիք՝ խաղաղություն, խաղաղություն՝ վերացնելու մեր ներսում հայտնվող վախը: Դուք չասացիք մեզ այդ ժամի մասին, իսկ նրանց, ովքեր մեզ նախազգուշացնում էին, դուք անվանում էիք չար և ծայրահեղական»: Ես տեսա, որ ծառայողները նույնպես չխուսափեցին Աստծո բարկությունից: Նրանց տանջանքները տասնապատիկ ավելի էին, քան իրենց ժողովրդինը:

Տե՛ս Եզեկիել 9.2-11-ը, Դանիել 7.27-ը, Ովսե 6.3-ը, Ամովս 8.11-13-ը, Հայրնություն 16.17.14-ը:

ՀԱՎՈՐԻ ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Ես տեսա, որ սուրբերը լքում են քաղաքները և գյուղերը, և խմբերով միաբանվելով՝ բնակվում ամենամեկուսի վայրերում: Հրեշտակները նրանց ապահովում էին սննդով և ջրով, սակայն չարամիտները տառապում էին քաղցից և ծարավից: Այնուհետև ես տեսա, որ երկրի առաջնորդները խորհրդակցում էին, և սատանան ու նրա հրեշտակներն աշխատում էին նրանց շուրջը: Ես տեսա ուղերձը, և նրա պատճեններն ուղարկվեցին երկրի տարբեր մասերը, որտեղ կար հրաման, որ եթե սուրբերը չդադարեն պահել իրենց յուրահատուկ հավատը՝ սրբելով շաբաթը, և չսկսեն սուրբ պահել առաջին օրը, ապա որոշ ժամանակ անց կմատնվեն մահվան: Սակայն այդ ժամանակ սուրբերը լուռ ու հանգիստ էին՝ վատահելով Աստծուն և հուսալով Նրա խոստմանը: Մինչ այդ օրենքը կկիրառվեր՝ որոշ վայրերում չարամիտները ձգտում էին ոչնչացնել բոլոր սուրբերին, սակայն հրեշտակները զինվորականների տեսքով պատերազմում էին նրանց դեմ: Սատանան ցանկանում էր արտոնություն ստանալ Բարձրյալի սուրբերին ոչնչացնելու համար, սակայն Հիսուսն Իր հրեշտակներին պատվիրեց հսկել նրանց, քանզի Աստված պատվի կարժանանար՝ ուխտ կապելով նրանց հետ, ովքեր շրջապատող հեթանոսների մեջ պահում էին Իր օրենքը: Իսկ Հիսուսը կպատվվեր՝ փառավորելով Իրեն սպասող հավատարիմ մարդկանց, ովքեր, առանց մահ ճաշակելու, այդքան երկար ժամանակ սպասում էին Նրան:

Շուտով ես տեսա սուրբերին, ովքեր տառապում էին հոգեկան մաքառումից: Թվում էր՝ նրանք շրջապատված էին երկրի չարամիտ բնակիչներով: Ամեն ինչ նրանց դեմ էր: Ոմանք սկսեցին վախենալ, թե Աստված թողել է իրենց՝ կործանվելու չարամիտների ձեռքով: Սակայն եթե նրանք կարողանային բացել իրենց աչքերը, կտեսնեին,

որ շրջապատված են Աստծո հրեշտակներով: Այնուհետև ժամանեց բարկացած չարամիտների բազմությունը, իսկ հետո՝ չար հրեշտակների խումբը: Նրանք չարամիտներին շտապեցնում էին սպանել սուրբերին: Սակայն եթե նրանք փորձեին մոտենալ սուրբերին, ապա նախ պետք է հաղթահարեին հզոր սուրբ հրեշտակների դիմադրությունը, ինչն անհնար էր: Աստծո հրեշտակները սուրբերին ստիպում էին նահանջել, նրանք ստիպում էին ընկրկել նաև նրանց շրջապատող չար հրեշտակներին: Դա սուրբերի, զարհուրելի հոգեվարքի ժամն էր: Նրանք օր ու գիշեր աղաչում էին Աստծուն ազատագրման համար: Սակայն թվում էր՝ փրկության այլևս ոչ մի հնարավորություն չկա: Չարամիտներն արդեն սկսեցին ցնծալ և տոնել հաղթանակը՝ աղաղակելով. «Ինչո՞ւ Աստված չի փրկում ձեզ մեր ձեռքից: Ինչո՞ւ դուք չեք համբարձվում և փրկում ձեր կյանքը»: Սուրբերը նրանց վրա ուշադրություն չդարձրին: Նրանք Հակոբի պես պայքարում էին Աստծո հետ: Հրեշտակները ձգտում էին ազատել նրանց, սակայն մարդիկ պետք է դեռևս սպասեին, խմեին բաժակը և մկրտվեին: Իրենց առաքելությանը հավատարիմ հրեշտակները շարունակում էին հսկել նրանց: Եկել էր ժամանակը, երբ Աստված պետք է ցույց տար Իր հզոր ուժը և փառքով ազատագրեր նրանց: Աստված այլևս թույլ չէր տա հեթանոսներին Իր Անունն անարգել: Իր Անվան փառքի համար Նա կազատագրեր բոլոր նրանց, ովքեր համբերությամբ սպասել էին Իրեն, և ում անունները գրված էին գրքում:

Ես տեղափոխվեցի հետ՝ նվիրյալ Նոյի ժամանակաշրջանը: Թափվում էր անձրևը, մոտենում էր ջրհեղեղը: Նոյը և նրա ընտանիքը մտան տապանը, և Աստված փակեց նրանց այնտեղ: Նոյն անկեղծորեն զգուշացնում էր հին աշխարհի բնակիչներին, մինչդեռ նրանք ծաղրում էին նրան և ծիծաղում նրա վրա: Եվ երբ ջրերը ծածկեցին երկիրը, և նրանք մեկը մյուսի հետևից խորտակվում էին, տեսան ջրերի վրայով անվտանգ լողացող և Նոյի ու նրա ընտանիքի կյանքը մահից փրկող այն տապանը, որը նրանք ծաղրի առարկա էին դարձրել: Ես տեսա, որ Աստծո ժողովուրդը, որ աշխարհին նախազգուշացրել էր Աստծո վերահաս զայրույթի մասին, կփրկվի: Նրանք հավատարմությամբ նախազգուշացրել էին երկրաբնակներին, և Աստված չարամիտներին թույլ չի տա կործանել սուրբերին, ովքեր սպասում էին այլակերպությանը, և ովքեր չէին երկրպագել զազանի օրենքին և չէին ընդունել նրա դրոշմը: Ես տեսա, որ եթե չարամիտ-

ներին թույլ տրվեր ոչնչացնել սուրբերին, ապա սատանան և նրա չար հրեշտակները, և բոլորը, ովքեր ատում են Աստծուն, բավարարված կլինեին: Օ՛հ, ինչպիսի՜ ցնծություն էր սատանայական մեծափառության համար վերջին պայքարի ժամանակ իշխանություն ունենալ նրանց նկատմամբ, ովքեր այդքան երկար սպասում էին Հիսուսին, ում այդքան սիրում էին: Նրանք, ովքեր ծաղրել էին քրիստոնյաների համբարձման գաղափարը, կվկայեն Իր ժողովրդի նկատմամբ Աստծո հոգատարության և նրանց փառասեղ ազատագրման մասին:

Երբ սուրբերը թողեցին քաղաքները և գյուղերը, չարամիտներն սկսեցին հետապնդել նրանց: Նրանք բարձրացրին իրենց սուրերը՝ սպանելու սուրբերին, սակայն դրանք կոտրվեցին և ծղոտի պես անզոր վայր ընկան: Աստծո հրեշտակները պաշտպանում էին սուրբերին: Եվ քանի որ նրանք օր ու գիշեր աղոթում էին ազատագրման մասին, նրանց աղոթքները հասան Աստծուն:

Տե՛ս Ծննդոց 6-րդ և 7-րդ գլուխները, Ծննդոց 32.24-28-ը, Սաղմոս 91-ը, Մատթեոս 20.23-ը, Հայրնություն 13.11-17-ը:

ՍՈՒՐԲԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Կեսգիշեր էր, երբ Աստված որոշեց ազատագրել Իր ժողովրդին: Երբ չարամիտները շրջապատեցին նրանց, անսպասելիորեն հայտնվեց արեգակը՝ շողալով իր ողջ պայծառությամբ, իսկ լուսինը դեռևս շարունակում էր փայլել: Չարամիտներն ականատես եղան այդ զարմանահրաշ տեսարանին: Նշանները և հրաշքներն արագ հաջորդում էին միմյանց: Թվում էր՝ ամեն ինչ շեղվել է իր բնական հունից: Սուրբերը հանդիսավոր ուրախությամբ ականատես եղան իրենց ազատագրմանը:

Վտակները դադարեցին հոսել: Խավարը, ծանր ամպերը պատեցին ողջ երկինքը: Սակայն կար մի պարզ փառքով լի տեղ, որտեղից հնչում էր Աստծո ձայնը՝ նման բազմաթիվ ջրերի, որը ցնցում է երկինքն ու երկիրը: Տեղի ունեցավ հզոր երկրաշարժ: Գերեզմանները բացվեցին, և նրանք, ովքեր մահացել էին՝ սուրբ պահելով շաբաթը, իրենց փոշոտ գերեզմաններից փառահեղորեն դուրս եկան՝ լսելու խաղաղության ուխտը, որն Աստված ցանկանում էր կապել նրանց հետ, ովքեր կատարել էին Իր օրենքը:

Երկինքը բացվում և փակվում էր. այն խռովված էր: Սարերը տատանվում էին, ինչպես եղեգը՝ քամուց: Ծովը կաթսայի պես եռում էր և քարեր արտանետում երկրի վրա: Եվ երբ Աստված ազդարարեց Հիսուսի գալստյան և Իր ժողովրդի հետ հավերժական ուխտ կապելու օրը և ժամը, Նա ասաց մեկ նախադասություն և այնուհետև դադար տվեց՝ մինչ խոսքերը կտարածվեին ողջ երկրագնդով մեկ: Աստծո Իսրայելը կանգնած էր դեպի վեր հառած աչքերով՝ լսելով խոսքերը, որոնք բխում էին Եհովայից և տարածվում ողջ երկրագնդով մեկ՝ հզորագույն որոտի ձայնի պես: Այն սարսափելիորեն հանդիսավոր էր: Յուրաքանչյուր նախադասության ավարտին սուրբերը բացականչում

էին. «Փա՛ռք: Ալելուիա՛»: Նրանց դեմքերը լուսավորված էին Աստծո փառքով, նրանք շողում էին այնպես, ինչպես և Մովսեսի դեմքը, երբ նա իջավ Սինայից: Չարամիտները չէին կարող նայել նրանց: Եվ երբ հավերժական օրհնությունն ազդարարվեց նրանց համար, ովքեր պատվել էին Աստծուն և պահել Նրա սուրբ շաբաթը, հնչեց գազանի և նրա դրոշմի նկատմամբ տարած հաղթանակի հուժկու աղաղակը:

Այնուհետև սկսվեց հոբելյանը, երբ երկիրը պետք է հանգստանար: Ես տեսա աստվածապաշտ ծառաներին՝ հաղթական փառքով հարություն առած, որ նետել էին իրենց պատող կապանքները: Մինչդեռ նրանց չարամիտ տերը շփոթված էր և չգիտեր ինչ անել, քանզի չարամիտները չէին կարող ըմբռնել Աստծո ձայնը: Շուտով հայտնվեց մեծագույն սպիտակ ամպը: Նրա վրա նստած էր մարդու Որդին:

Երբ դեռ նոր էր հայտնվել հեռվում՝ այդ ամպը շատ փոքր էր երևում: Հրեշտակն ասաց, որ դա մարդու Որդու նշանն էր: Սակայն երբ ամպը մոտեցավ երկրին, մենք կարողացանք տեսնել Հիսուսի հիասքանչ փառքն ու մեծությունը, քանզի Նա եկել էր հաղթելու: Ճանապարհին Նրան ուղեկցում էր հրեշտակների սուրբ շքախումբը՝ գլուխներին պայծառ, փայլուն պսակներ: Ոչ մի լեզու չէր կարող նկարագրել այդ տեսարանի փառքը: Մեծափառության և անգերազանցելի փառքի կենդանի ամպն ավելի մոտեցավ, և մենք կարողացանք պարզորոշ տեսնել Հիսուսին: Նրա սուրբ գլուխը ոչ թե փշե պսակը, այլ փառքի թագն էր զարդարում: Նրա հագուստի և գոտու վրա գրված էր. «ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ՏԵՐԵՐԻ ՏԵՐ»: Նրա աչքերը ասես կրակի բոց լինեին, ոտքերը՝ շիկացած պղինձ, և Նրա ձայնը հնչում էր իբրև քաղցր մեղեդի: Նրա դեմքը պայծառ էր միջօրեի արեգակի պես: Երկիրը դողում էր Նրա առջև, և երկինքները դարձան մազադաթի պես պարուրված, սարերն ու կղզիները շարժվեցին իրենց տեղերից: Երկրային թագավորները և մեծամեծները, հարուստները և գորավորները, հզորները և ծառաները՝ բոլորն իրենց անձերը թաքցրին այրերում և սարերի անձավներում: Եվ ասում էին սարերին և քարերին. «Վայր ընկեք մեզ վրա, և ծածկեք մեզ աթոռի վրա նստողի երեսից, և Գառի բարկությունից, որ նրա բարկության մեծ օրը եկել է, և ո՞վ կարող է կանգնել»:

Նրանք, ովքեր մոտ անցյալում ցանկանում էին երկրի երեսից ոչնչացնել Աստծո մվիրյալ զավակներին, վկայեցին Աստծո փառքը,

որը հանգչում էր նրանց վրա: Նրանք տեսան նրանց փառավորված: Եվ բոլոր զարհուրելի իրադարձությունների ընթացքում նրանք լսեցին քրիստոնյաների ուրախ ձայնը. «Ահա մեր Աստվածը, ում մենք հուսացել ենք, և նա մեզ փրկեց»: Երկիրը ուժգին տատանվում էր, երբ Աստծո Որդու ձայնը կանչեց ննջած սուրբերին: Նրանք արձագանքեցին հրավերին և դուրս եկան՝ հագած հիասքանչ անմահությունը: Լավում էր նրանց աղաղակը. «Հաղթանակ: Մահն ընկղմվեց հաղթության մեջ: Ո՛վ մահ, ո՞ր է քո խայթոցը, գերեզման, ո՞ր է քո հաղթությունը»: Այնուհետև կենդանի սուրբերը և հարություն առածները միասին բարձրացրին իրենց ձայնը հաղթանակի ազդարարման երկար գոչյունով: Հիվանդ մարմինները, որոնք իջել էին գերեզման, վեր ելան՝ միանգամայն առողջ և եռանդուն: Կենդանի սուրբերը մի ակնթարթում փոխվեցին, հասան հարություն առածներին, և նրանք միասին Տիրոջը դիմավորեցին օդում: Ինչպիսի՜ փառահեղ հանդիպում: Ընկերները, ում բաժանել էր մահը, միաբանվեցին, որպեսզի երբեք այլևս չբաժանվեն:

Երկնային կառքի երկու կողքերին կային թևեր, ավելի ներքևում կային կենդանի կառքեր, և երբ երկնային կառքը վեր էր բարձրանում, անիվները բացականչում էին. «Սո՛ւրբ», և երբ շարժվում էին թևերը, բացականչում էին. «Սո՛ւրբ», ամպը շրջապատող հրեշտակների շքախումբը բացականչում էր. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ է Ձոռաց Տերը»: Եվ ամպի վրա սուրբերը բացականչում էին. «Փա՛ռք, ալելուիա՛»: Եվ կառքը վեր բարձրացավ դեպի սուրբ քաղաքը: Սուրբ քաղաք մտնելիս սուրբերը դասավորվեցին կատարյալ քառակուսու տեսքով, որի կենտրոնում Հիսուսն էր: Նրա գլուխն ու ուսերն ավելի բարձր էին, քան սուրբերինն ու հրեշտակներինը: Նրա փառահեղ տեսքը և հիասքանչ դեմքը տեսանելի էր բոլորին:

Տե՛ս Գ.Թազավորաց 2.11-ը, Եսայիա 25.9-ը, Ա Կորնթացիս 15.51-55-ը, Ա Թեսաղոնիկեցիս 4.13-17-ը, Հայրնություն 1.13-16-ը, 6.14-17-ը, 19.16-ը:

ՍՈՒՐԲԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Այնուհետև ես տեսա, որ հրեշտակների մեծ բազմությունը քաղաքից բերեց փառահեղ պսակներ՝ յուրաքանչյուր սուրբի համար իր անվամբ պսակ, և երբ Հիսուսը պահանջեց պսակները, հրեշտակները դրանք ներկայացրին Նրան, և Հիսուսն Իր աջ ձեռքով պսակները դրեց սուրբերի գլխին: Նույն կերպ հրեշտակները բերեցին նաև քնարները, և Հիսուսը դրանք նույնպես նվիրեց սուրբերին: Հրամանատար հրեշտակները հնչեցրին առաջին հնչյունը, և այնուհետև յուրաքանչյուր ձայն բարձրացավ շնորհակալ և երջանիկ փառաբանությամբ, և յուրաքանչյուր ձեռք հմտորեն նվագեց քնարի լարերի վրա՝ մեղեդային երաժշտություն հնչեցնելով հարուստ և կատարյալ շարժումներով: Այնուհետև ես տեսա, որ Հիսուսը սուրբերի փրկված խմբին ուղեկցեց քաղաքի դարպասի մոտ: Նա բացեց դարպասը՝ հետ տանելով այն փայլուն հիմների վրա, և ճշմարտությանը հետևող ժողովրդին առաջարկեց մտնել ներս: Քաղաքում կար այն ամենը, ինչ միայն կարող էր աչք շոյել: Ամենուր նրանք տեսնում էին Աստծո փառքը: Այնուհետև Հիսուսը նայեց փրկված սուրբերին. նրանց դեմքերը փայլում էին փառքից, և Հիսուսը սիրով լի Իր աչքերն ուղղեց նրանց՝ իր հաճելի, մեղեդային ձայնով ասելով. «Ես նայում եմ Իմ հոգու ծանր աշխատանքին և Ես բավարարված եմ: Այս շքեղ փառքը ձերն է, որպեսզի հավերժ վայելեք այն: Ձեր տխրությանը վերջ է տրվել: Մահն այլևս չի լինի, ո՛չ սուգ և ո՛չ աղաղակ, և ո՛չ ցավ այլևս չի լինի»: Ես տեսա, որ փրկվածները խոնարհվեցին և իրենց պսակները դրեցին Հիսուսի ոտքերի մոտ, իսկ հետո, երբ Նրա սիրելի ձեռքը վեր բարձրացրեց նրանց, նրանք դիպան իրենց ոսկե քնարներին և ողջ երկինքը լցրեցին Գառին նվիրված իրենց երգերով:

Այնուհետև ես տեսա Հիսուսին, ով փրկվածներին ուղեկցում էր

դեպի կյանքի ծառը, և կրկին մենք լսեցինք Նրա հիասքանչ ձայնը՝ ավելի հարուստ, քան որևէ այլ մեղեդի, որ երբևէ լսել է մահկանացու ականջը. «Այս ծառի տերևներն ազգերի բժշկության համար են: Կերեք այն»: Կյանքի ծառի վրա կային շատ գեղեցիկ պտուղներ, որոնք սուրբերն ազատորեն կարող էին համտեսել: Քաղաքում էր ամենափառահեղ գահը, և գահից ներքև հոսում էր կյանքի ջինջ գետը՝ այնքան վճիտ, որքան բյուրեղը: Այդ գետի երկու ափերին կյանքի ծառն էր: Գետի ափերին կային շքեղ ծառեր, որոնք համեղ պտուղներ էին տալիս: Լեզուն տկար է, որպեսզի փորձի նկարագրել երկինքը: Երբ այդ տեսարանը հայտնվում է իմ առջև, ես շփոթվում եմ հիացմունքից, և հիասքանչ փայլից ու կատարյալ փառքից հրապուրված՝ բացականչում եմ. «Օ՛, ինչպիսի սեր: Ինչպիսի՛ զարմանահրաշ սեր»: Ոչ մի ճարտասան լեզու չի կարող նկարագրել երկնքի փառքը և Փրկչի սիրո անհամեմատելի խորությունները:

Տե՛ս Եսայիա 53.11-ը, Հայտնություն 21.4-ը, 22.1-2-ը:

ԱՄԱՅԱՅԱՆՔ ԵՐԿԻՐԸ

Այնուհետև ես նայեցի երկրին: Չարամիտները մահացել էին, և նրանց մարմինները տարածված էին երկրի երեսին: Երկրի բնակիչները յոթ վերջին պատուհասներով կրեցին Աստծո բարկությունը: Նրանք ցավից կծում էին իրենց լեզուները և անիծում Աստծուն: Սուտ հովիվները Եհովայի բարկության առանձնահատուկ նշանակակետն էին: Նրանց աչքերն ակնափոսերում սպառվում էին, և լեզուն՝ բերանում, երբ նրանք դեռևս կանգնած էին ոտքերի վրա: Աստծո ձայնով սրբերի ազատագրումից հետո չարամիտ ամբոխի ատելությունն ուղղված էր միմյանց: Թվում էր՝ երկիրը լի է արյամբ, և մեռած մարմիններ են պառկած երկրի մի ծայրից մյուսը:

Երկիրն ամայի վիճակում էր: Երկրաշարժից կործանված քաղաքներն ու գյուղերն աղբի կույտեր էին դարձել: Սարերը տեղափոխվել էին իրենց տեղերից՝ ձևավորելով լայն քարանձավներ: Ծովը երկիր էր նետել հսկա քարեր, և ժայռերը տարածված էին նրա ողջ երկայնքով: Երկիրը վայրի անապատային տեղանք էր հիշեցնում: Մեծ ծառերն արմատախիլ էին եղել և ցրվել ողջ երկրով մեկ: Սա իր չար հրեշտակների հետ աստանայի բնակության վայրն է հազար տարվա ընթացքում: Այստեղ նրանք կբանտարկվեն և վեր ու վար կանեն երկրի ապականված մակերեսին՝ տեսնելով Աստծո օրենքի դեմ իրենց ապստամբության արդյունքը: Սատանան հազար տարի կվայելի իր վաստակած անեծքի հետևանքները: Երկրի վրա մնալով միայնակ՝ նա այլ մոլորակներ տեղափոխվելու հնարավորություն չի ունենա՝ գալթակղելու և անհանգստացնելու նրանց, ովքեր չեն մեղանշել: Այդժամ աստանան ուժգին կտապառի: Իր անկումից հետո նրա չար հատկանիշները մշտապես օգտագործվում էին: Այսուհետև նա զրկված է իր իշխանությունից և թողնվել է գործելու

այնտեղ, որտեղ ընկավ, և ահաբեկված ու սարսռած սպասում է իր զարհուրելի ապագային, երբ պետք է տառապի իր կատարած բոլոր չարությունների համար և պիտի պատժվի բոլոր այն մեղքերի համար, որոնց նա է դրդել մարդկանց:

Այնուհետև ես հաղթանակի աղաղակներ լսեցի հրեշտակներից և փրկված սուրբերից, որոնք հնչում էին տասնյակ հազարավոր երաժշտական գործիքների պես, քանզի նրանք չէին գայթակղվել սատանայից, իսկ այլ մոլորակների բնակիչներն ազատվել էին նրա ներկայությունից և գայթակղությունից:

Այնուհետև ես տեսա գահեր, և Հիսուսն ու փրկված սուրբերը նստած էին դրանց վրա, սուրբերը ղեկավարում էին իբրև թագավորներ և Աստծո քահանաներ: Իսկ մահացած մեղավորները դատապարտվում էին, նրանց գործերը համեմատվում էին օրենսգրքի՝ Աստծո Խոսքի հետ, և նրանք դատապարտվում էին կյանքի ընթացքում կատարած գործերի համար: Սուրբերի հետ միասին Հիսուսը որոշում էր մեղավորների տառապանքների չափը՝ համաձայն իրենց գործերի. դա գրված էր մահվան գրքում և նշագրված նրանց անվան դիմաց: Սատանան և նրա հրեշտակները նույնպես դատապարտվեցին Հիսուսի և սուրբերի կողմից: Սատանայի տառապանքն ավելի մեծ պետք է լիներ, քան նրանից խաբվածներինը: Ի վերջո, երբ նըրանք, ում նա խաբել էր, կմեռնեն, սատանան դեռևս կապրի և ավելի շատ կտառապի:

Երբ հազարամյակի ավարտին վերջացավ մեղավորի դատաստանը, Հիսուսը լքեց քաղաքը, և հրեշտակների խումբը հետևեց Նրան: Սուրբերը նույնպես գնացին Նրա հետևից: Հիսուսն իջավ բարձր և վիթխարի լեռան վրա, և երբ Հիսուսի ոտքը դիպավ նրան, լեռն անմիջապես բաժանվեց և վերածվեց մեծ հարթավայրի: Այդժամ մենք նայեցինք վեր և տեսանք մեծ ու հիասքանչ քաղաքը՝ տասներկու հիմքերով և տասներկու դարպասներով՝ յուրաքանչյուր կողմում երեքական, և մեկական հրեշտակ: Մենք բացականչեցինք. «Քաղա՛քը: Մեծ քաղա՛քը վայր է գալիս երկնքից»: Եվ այն իջավ իր ողջ փայլով ու հիասքանչ փառքով և հիմնվեց հզոր հարթավայրի վրա, որը Հիսուսը պատրաստել էր նրանց համար:

Տե՛ս Չարաբխա 14.4-12-ը, Հայրնություն 20.2-6-ը, 20.12-ը, 21.10-27-ը:

ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Այնուհետև Հիսուսը, հրեշտակների ողջ սուրբ շքախումբը և բոլոր փրկված սուրբերը լքեցին քաղաքը: Սուրբ հրեշտակները շրջապատել էին Հիսուսին և ճանապարհին ուղեկցում էին Նրան, իսկ փրկված սուրբերի շքախումբը հետևում էր նրանց: Այդժամ Հիսուսն ահավոր և զարհուրելի վեհությամբ կանչեց մեռած մեղավորներին, և նրանք հարություն առան այնպիսի տկար, հիվանդ մարմիններով, ինչպես իջել էին գերեզման. ինչպիսի՜ տեսարան, ինչպիսի՜ պատկեր: Առաջին հարության ժամանակ բոլորին անմահություն տրվեց, սակայն երկրորդ հարության ժամանակ անեծքի դրոշմը տեսանելի էր ամենքի վրա: Երկրի թագավորները և ազնվական մարդիկ դուրս եկան՝ միջին և ցածր հասակի, գիտնական և տգետ՝ բոլորը մասին: Բոլորը տեսան մարդու Որդուն, և նրանք, ովքեր ծաղրում էին Հիսուսին և ծիծաղում Նրա վրա, ովքեր հարվածում էին Նրան եղեգով և վշե պսակ հագցնում Նրա սուրբ գլխին, տեսնում են Նրան Իր ողջ թագավորական վեհությամբ: Նրանք, ովքեր թքում էին Նրա դեմքին Իր փորձության ժամին, այժմ երես են թեքում Նրա սևեռուն խորաթափանց հայացքից և Նրա երեսի փառքից: Նրանք, ովքեր գամել էին Նրա ձեռքերը և ոտքերը, այժմ նայում են Նրա խաչելության հետքերին: Նրանք, ովքեր նիզակով խոցել էին Նրա կողը, իրենց դաժանության հետքերն են տեսնում Նրա մարմնի վրա: Նրանք գիտեն, որ իրենց առջև կանգնած է Նա, ում իրենք խաչեցին և ծաղրեցին Իր ահավոր հոգեվարքի ժամին: Եվ այդ պահին հնչում է երկար, տևական հոգեվարքի ճիչ, և նրանք շտապում են, թաքնվելու արքաների Արքայի և տերերի Տիրոջ ներկայությունից:

Բոլորը ձգտում էին թաքնվել ժայռերում և իրենց անձերը պաշտպանել Նրա ահավոր փառքից, ում իրենք ծաղրել էին: Քանզի

բոլոր մեղավորները ցնցված էին և տանջվում էին Նրա մեծությունից ու հիասքանչ փառքից, միաձայն բարձրացրեցին իրենց ձայները և ահեղ պարգույթյամբ աղաղակեցին. «Օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը»:

Այնուհետև Հիսուսը և սուրբ հրեշտակները բոլոր սուրբերի հետ համախմբված, կրկին մտան քաղաք, և դատապարտված մեղավորների դաժան ողբն ու աղաղակը լցրեցին օդը: Հետո ես տեսա, որ սատանան կրկին սկսեց իր աշխատանքը: Նա անցավ իր ենթակաների միջով և թույլերին ու տկարներին գորացրեց: Այնուհետև բոլորին հայտնեց, որ ինքը և իր հրեշտակները գորավոր են: Նա ցույց տվեց այն բազում միլիոններին, ովքեր հարություն էին առել: Նրանք գորեղ ռազմիկներ և թագավորներ էին, ովքեր կարող էին պայքարել, և ովքեր թագավորություններ էին նվաճել: Այնտեղ կային գորեղ հսկաներ և քաջ մարդիկ, ովքեր երբեք ճակատամարտերում չէին պարտվել: Այնտեղ էր հպարտ, փառասեր Նապոլեոնը, ով ստիպում էր դողալ թագավորություններին: Այնտեղ կային շատ բարձրահասակ, վսեմ ու վեհապանծ վարքագծով մարդիկ, ովքեր ընկան պատերազմում: Նրանք ընկան, քանզի ծարավ էին նվաճման: Երբ նրանք բարձրացան իրենց գերեզմաններից, կրկին վերադարձան իրենց մտքերին, որոնք դադարել էին իրենց մահվան պահին: Նրանք տիրապետում էին նվաճման մույն ոգուն, ինչը կառավարում էր նրանց, երբ ընկան: Սատանան խորհրդակցեց նախ՝ իր հրեշտակների, ապա այդ թագավորների, նվաճողների և գորեղ մարդկանց հետ: Այնուհետև նա նայեց հսկայական բանակին և հայտարարեց, որ քաղաքում գտնվող մարդիկ քիչ են և թույլ, իրենք կարող են հաղթել նրանց և գրավել քաղաքը, վտարել նրա բնակիչներին և տիրել նրանց ողջ հարստությանն ու փառքին:

Սատանային հաջողվեց խաբել նրանց, և բոլորն իսկույնեթ սկսեցին պատրաստվել ճակատամարտին: Նրանք պատրաստում էին պատերազմի զենքերը, քանզի այդ բազմաքանակ բանակում շատ գորեղ մարդիկ կային: Եվ այնուհետև սատանայի գլխավորությամբ ամբոխն առաջ շարժվեց: Թագավորները և ռազմիկները գնում էին սատանայից անմիջապես հետո, և նրանցից հետո գնում էր ողջ բանակը: Յուրաքանչյուր խումբ ուներ իր առաջնորդը, ով հետևում էր, թե ինչպես էին նրանք ավերված երկրի վրայով քայլում դեպի սուրբ քաղաքը: Հիսուսը փակեց քաղաքի դարպասները, և այդ

մեծաթիվ բանակը շրջապատեց քաղաքն ու մարտական դիրք գրավեց: Պատերազմի համար նրանք պատրաստել էին բոլոր տեսակի զենքերը՝ կատաղի բախման ակնկալիքով: Նրանք դասավորվեցին քաղաքի շուրջը: Հիսուսը և հրեշտակների ողջ բազմությունն՝ իրենց պապղուն պսակները գլխներին, և բոլոր սուրբերն իրենց փայլուն պսակներով բարձրացան քաղաքի պարսպի վրա: Հիսուսը գործյամբ խոսեց և ասաց. «Նայե՛ք, մեղավորներ, արդարների պարզևր: Եվ տեսե՛ք, Իմ փրկվածներ, մեղավորների հատուցումը»: Քաղաքի պարիսպների վրա մեծաթիվ բազմությունը տեսնում էր արդարների հիասքանչ բանակը: Եվ երբ սատանայի հետևորդները տեսան նրանց պապղուն պսակների փայլը և Հիսուսի պատկերն արտահայտող նրանց շողացող դեմքերը, իսկ հետո՝ թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ անզերազանցելի փառքն ու մեծությունը, նրանց քաջությունը կորավ: Գանձերի և փառքի կորստյան զգացումը պատեց նրանց, և նրանք հասկացան, որ մեղքի վարձքը մահն է: Նրանք տեսան սուրբ, երջանիկ մարդկանց, ում իրենք ծաղրել էին, տեսան նրանց պարուրված փառքով, պատվով, անմահությամբ և հավիտենական կյանքով. մինչդեռ նրանք քաղաքից դուրս էին՝ խղճուկ և նողկալի ու դաժան արարածների հետ:

Տես Մաթթեոս 23.29-ը, Հայտնություն 6.15-16-ը, 20.7-9-ը, 22.12-15-ը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՔՆ

Սատանան առաջ էր շտապում և փորձում էր հսկա ամբոխին գործողությունների դրդել: Սակայն Աստծո կրակը երկնքից թափվեց նրանց վրա, և մեծամեծ, հզոր, ազնվական, աղքատ և թշվառ մարդիկ միասին ոչնչացան: Ես տեսա, որ նրանցից ոմանք ակնթարթորեն ոչնչացան, մյուսները երկար տանջվեցին: Նրանք պատժվեցին իրենց կյանքի ընթացքում կատարած գործերի համար: Հրեշտակն ասաց. «Կյանքի որթը չի մեռնի, նրանց կրակը չի մարի, քանի դեռ կա տառապանքի փոքրագույն մասնիկ»:

Սատանան և նրա հրեշտակները երկար տանջվեցին: Սատանան տանջվում էր ոչ միայն իր մեղքերի ծանրությունից և պատժից. բոլոր փրկվածների մեղքերը դրվեցին նրա վրա, և նա պետք է տառապեր այն հոգիների փոխարեն, որոնց ստիպել էր մեղանչել: Այնուհետև ես տեսա, որ սատանան և բոլոր չարամիտները պատժվեցին. կայացավ Աստծո արդարադատությունը, և բոլոր երկնաբնակներն ու փրկված սուրբերը բարձրաձայն աղաղակեցին. «Ամեն»:

Հրեշտակն ասաց. «Սատանան արմատն է, նրա որդիները՝ ճյուղերը: Այժմ ոչնչացվեցին արմատը և ճյուղերը: Նրանք մեռան հավիտենական մահով: Նրանք այլևս հարություն չեն առնի, և Աստված մաքուր տիեզերք կունենա»: Դրանից հետո ես նայեցի և տեսա այն կրակը, որը լափում էր չարամիտներին՝ այրելով աղբը և մաքրելով երկիրը: Ես կրկին նայեցի և տեսա մաքրված երկիրը: Չկար անեծքի ոչ մի նշույլ: Երկրի խարխլված և անհարթ մակերեսն այժմ լայնարձակ հարթավայր էր հիշեցնում: Աստծո ողջ հսկայական տիեզերքը մաքուր էր, և մեծ պայքարը՝ ընդմիշտ ավարտված: Ամենուր, ուր նայում էինք, ամենը, ինչ տեսնում էր աչքը, գեղեցիկ և սուրբ էր: Եվ բոլոր փրկվածները՝ ծեր և երիտասարդ, մեծ և փոքր, իրենց պսպղուն

պասակները դրեցին Փրկչի ոտքերի մոտ և երկրպագում ու ծառայում էին Նրան, քանզի ապրելու էին հավերժ: Հիասքանչ Նոր Երկիրը՝ իր ողջ փառքով, սուրբերի հավերժական ժառանգությունն էր: Այնուհետև արքայությունը, տիրապետությունը և ողջ երկնային թագավորության մեծափառությունը տրվեցին Ամենաբարձրյալի սուրբերին, ովքեր կտիրապետեն այն հավիտյանս հավիտենից:

Տե՛ս Եսայիա 66.24-ը, Դանիել 7.26-27-ը, Հայրնություն 20.9-15-ը, 21.1-ը, 22.3-ը:

**ՄԵԾ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒ ԻՐ
ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՍԱՏԱՆԱՅԻ ՈՒ ԻՐ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ
ՄԻՋԵՎ**

Էլեն Ուայթ

Գլխավոր խմբագիր՝

Թարգմանությունը և

համակարգչային շարվածքը՝

Վերստուգող՝

Գրական խմբագիր՝

Համակարգչային ձևավորող՝

Պավել Սարգսյան

Սամվել Սարգսյան

Յողիկ Մուրադյան

Ալվարո Մադոյան

Կորյուն Կակոյան